Ա Զ Դ Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

թողարկողի անվանումը

ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, հեռ. (+374 10) 510 910, ֆաքս (+374 10) 538 904, էլ. փոստ bank@aeb.am

արժեթղթերի դասը (տեսակը)՝	սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)
արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
արժեթղթերի քանակը՝	373,135 հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	2,080 ՀՀ դրամ
արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	776,120,800 ՀՀ դրամ

ՏԵՂԱԲԱՇԽՈՂ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Էջ
	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	**4**
Բաժին 1.	**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**	**6**
1	Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ	6
2	Բանկին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը	11
3	Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	12
4	Բանկի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ	13
5	Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	13
6	Առաջարկվող կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության համար նախատեսված արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները	14
7	Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	15
8	Այլ էական տեղեկություններ ըստ բանկի հայեցողության, որոնք նշված չեն նախորդ կետերում	16
9	Ամփոփ ֆինանսական տվյալներ	16
Բաժին 2.	**ԹՈՂԱՐԿՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**	**18**
1	Ռիսկային գործոններ	18
2	Հիմնական տեղեկատվություն	19
3	Տեղեկատվություն կապված առաջարկվող արժեթղթերի հետ	20
4	Առաջարկի ժամկետները և պայմանները	29
5	Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	35
6	Վաճառող բաժնետերերը	35
7	Թողարկման և առաջարկի ծախսերը	35
8	Լրացուցիչ տեղեկատվություն	36
Բաժին 3.	**ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**	**37**
1	Անկախ աուդիտորները	37
2	Ռիսկային գործոններ	37
3	Տեղեկատվություն Բանկի մասին	41
4	Բիզնեսի նկարագիրը	48
5	Բանկի խմբի կառուցվածքը	55
6	Բանկի հիմնական միջոցները	55
7	Բանկի կապիտալ ռեսուրսները (պասիվները)	56
8	Հետազոտական աշխատանքները և զարգացման ուղղությունները	57
9	Արտոնագրերը և լիցենզիաները	57
10	Զարգացման վերջին միտումները	58
11	Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը	59
12	Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	60
13	Վարձատրությունները և պարգևավճարները	70
14	Կառավարման մարմինների գործունեությունը	70
15	Աշխատակիցները	74

16	Խոշոր բաժնետերերը և հսկող անձինք	75
17	Փոխկապակցված անձանց հետ գործարքները	76
18	Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	77
19	Լրացուցիչ տեղեկատվություն	78
20	Էական պայմանագրերը	85
21	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	85
22	Այլ տեղեկատվություն	85
23	Մասնակցությունն այլ անձանց կապիտալում	85
	Հավելված	87

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք՝

Սարիբեկ Սուքիասյան (անուն, ազգանուն)	***Խորհրդի նախագահ*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)
Արամ Խաչատրյան (անուն, ազգանուն)	***Խորհրդի նախագահի տեղակալ*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)
Լուիզա Պետրոսյան (անուն, ազգանուն)	***Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)
Ռուբեն Հայրապետյան (անուն, ազգանուն)	***Խորհրդի անդամ*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)
Հրանտ Սուվարյան (անուն, ազգանուն)	***Խորհրդի անդամ*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)
Պեր Ֆիշեր (անուն, ազգանուն)	***Խորհրդի անդամ*** (պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտակ Առաքելյան (անուն, ազգանուն)	***Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)
Արտաշես Հարությունյան (անուն, ազգանուն)	***Վարչության նախագահի տեղակալ, Ֆինանսական գծով տնօրենի տեղակալ*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)
Օնիկ Չիլյան (անուն, ազգանուն)	***Վարչության նախագահի տեղակալ, Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)
Ռուբեն Բաղալյան (անուն, ազգանուն)	***Վարչության նախագահի տեղակալ, Գործառնական գծով տնօրենի տեղակալ*** (պաշտոն)	(ստորագրություն)	17.04.24թ. (ամսաթիվ)

Վարչության նախագահի տեղակալ, Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ			17.04.24թ.
Աստղիկ Մանրիկյան (անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարչության նախագահի տեղակալ, Տեխնոլոգիաների գծով տնօրենի տեղակալ			17.04.24թ.
Արփինե Փիլոսյան (անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարչության անդամի, Գլխավոր հաշվապահի ժ/պ			17.04.24թ.
Նոնա Գալստյան (անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդաբանության վարչության պետ			17.04.24թ.
Հայկ Ավետիսյան (անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ			
Վրեժ Ջհանգիրյան (անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման վարչության պետ			17.04.24թ.
Կարեն Բաբայան (անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն			17.04.24թ.
Արտակ Առաքելյան (անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն և առաջարկվող բաժնետոմսերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:

Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության համար պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար միայն այն դեպքում, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ www.aeb.am:

Սույն Ազդագրում ներկայացված անձանց անձնական տվյալները ներկայացված են այդ անձանց համաձայնությամբ:

1. Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ

1.1. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

1.2. Բանկի կազմակերպական-իրավական ձևը՝ բաց բաժնետրիրական ընկերություն:

1.3. Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, գրանցման համարը՝ 1:

1.4. Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1,

1.5. Կապի միջոցները՝

հեռ. (+374 10) 510 910

էլ. փոստ bank@aeb.am

ինտերնետային կայք www.aeb.am

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

1.6. Բանկին առնչվող և բաժնետոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապնվել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ռազմավարության և մեթոդաբանության վարչության պետ Հ. Ավետիսյանի հետ հետևյալ հեռախոսահամարով՝ (+374 10) 510 976:

1.7. Թողարկողի համառոտ պատմությունը.

Բանկը (նախկին ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկ) ՀՀ պետական բանկերից առաջինն է վերակազմավորվել բաժնետիրական բանկի:

1991թ. փետրվարի 14-ին ՀՀ Մինիստրների խորհրդի №115 որոշմամբ ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկի հիման վրա ստեղծվել է Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (Հայպետկոմբանկ):

1992թ. նոյեմբերի 16-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու №1 լիցենզիա:

1993թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ ԿԲ վարչության նսիտի որոշմամբ (արձանագրություն №40) Հայպետկոմբանկը վերագրանցվել է Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկի (Հայէկոնոմբանկ) (գրանցում՝ Թիվ 1/35)՝ ստանալով Թիվ 1/35 բանկային գործառնությունների իրականացման Արտոնագիր:

2002թ. Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «B» հարթակում:

2004թ. Բանկի ու ՎԶԵԲ-ի միջև կնքվեց պայմանագիր, որով սկսվեց Բանկի կանոնադրական կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցության գործընթացը, որի արդյունքում ՎԶԵԲ-ի մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կազմել է 25%+1 բաժնետոմս:

2007թ. Փետրվարին Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ Բանկին շնորհեց ֆինանսական կայունության E+ և երկարաժամկետ ՀՀ դրամով ու արտարժույթով ավանդների B1 վարկանիշներ, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

2013թ. Բանկը ստացել է ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր:

2014 թվականի դեկտեմբերի 3-ին ՎԶԵԲ-ը, Սուքիասյան եղբայրները եւ Բանկը կնքել են բաժնտոմսերի գնման պայմանագիր, որով ՎԶԵԲ-ը համաձայնել է վաճառել իր 233,335 սովորական բաժնետոմսերը հինգ հավասար մասնաբաժիններով (46,667 ամեն տրանշ) հինգ տարվա ընթացքում՝ սկսած 2014 թվականի դեկտեմբերից մինչև 2019-ի մարտի 2-ը:

2015 թ. Բանկի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն Բանկին միացնելու նպատակով:

2016թ. ՀՀ ԿԲ որոշման համաձայն «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն միացավ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին, որի արդյունքում Բանկի կապիտալն ավելացավ 5,294,232 հազ. դրամով, իսկ մասնաճյուղային ցանցը՝ 6 մասնաճյուղով:

2018թ. Բանկի էմիսիոն եկամուտներից՝ 33,438,300 դրամ, չբաշխված շահույթից՝ 2,524,160,700 դրամ և Գլխավոր պահուստից՝ 3,000,000,000 դրամ ուղղվեց կանոնադրական կապիտալի ավելացմանը, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 22,266,343,200 դրամ և դրա հաշվին 3,000 դրամի չափով ավելացավ մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը՝ 7,400 դրամից դառնալով 10,400 դրամ:

2019թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 3,369,000.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 25,635,343,200 դրամ: «Moody's Investors Service» միջազգային վարկանիշային ընկերությունը բարելավեց Բանկին շնորհած վարկանիշները՝ սահմանելով երկարաժամկետ գործընկերոջ ռիսկի վարկանիշը՝ **Ba3**, երկարաժամկետ/կարճաժամկետ ավանդի վարկանիշը՝ **B1/NP**, հեռանկարը՝ **կայուն**:

2020թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 320,320.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 25,955,663,200 դրամ:

2021թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 151,892.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 26,107,555,200 դրամ:

2022թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 544,512.8 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը 31.03.2022թ. դրությամբ կազմել է 26,652,068,000 դրամ:

2023թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 1,480,172.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը 20.12.2023թ. դրությամբ

կազմել է 28,132,239,680 դրամ: 2023 թվականի փետրվարի 1-ին «Fitch Ratings»-ը Բանկին շնորհել է շնորհել է «B» երկարաժամկետ արտարժույթով թողարկողի դեֆոլտի վարկանիշ (IDR)՝ կայուն հեռանկարով և «b» կենսունակության վարկանիշ (VR), իսկ փետրվարի 22-ին բարելավել է Բանկի վարկանշի հեռանկարը «Կայուն»-ից «Դրական»-ի և վերահաստատել արտարժույթով երկարաժամկետ թողարկողի դեֆոլտի B կարգի վարկանիշը (Long-Term Foreign-Currency Issuer Default Rating (IDR)): Իրականացվել է բանկի սովորական բաժնետոմսերի բաժանում՝ 1 բաժնետոմսը 5 բաժնետոմս համամասնությամբ (համապատասխանաբար անվանական արժեքը 10,400 դրամից դարձել է 2,080 դրամ):

2024թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 1,407,095.0 հազ. դրամով: Կանոնադրական կապիտալի փոփոխությունը հաստատվել է 16.02.2024թ.-ին կայացած բաժնետերերի արտահերթ ժողովի կողմից, որի արդյունքում կանոնադրական կապիտալը 28.02.2024թ. դրությամբ կազմել է 29,539,334,720 դրամ: 2024 թվականի փետրվարին «Fitch Ratings» միջազգային վարկանշային գործակալությունը բարելավել է Բանկի արտարժույթով երկարաժամկետ թողարկողի դեֆոլտի վարկանիշը (Long-term Issuer Default Rating (IDR)) «B»–ից դարձնելով «B+»՝ կայուն հեռանկարով: Միաժամանակ բարելավվել է նաև Բանկի կենսունակության վարկանիշը (Viability Rating – VR)՝ «b»-ից «b+»-ի:

Սահմանված տեղաբաշխման ժամկետից շուտ՝ 04.03.2024թ., ավարտվել է 607,000 հատ սովորական բաժնետոմսերի (արժեթղթերի ընդհանուր ծավալը (անվանական՝ 2,080 դրամ, արժեքով)՝ 1,262,560,000 ՀՀ դրամ, արժեթղթերի ընդհանուր ծավալը (շուկայական՝ 5,410 դրամ, արժեքով)՝ 3,283,870,000 ՀՀ դրամ) տեղաբաշխման գործընթացը, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործընթացների իրականացումից հետո՝ մինչև 2024թ. մայիս ամիսը, Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի չափը կկազմի 30,801,894,720 ՀՀ դրամ, որը կներառի 11,746,584 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ բաժնետոմս յուրաքանչյուրը 15,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկին տրված լիցենզիաները և արտոնագրերն անժամկետ են:

1.8. Բանկի ռազմավարությունը

Բանկի ռազմավարական թիրախը՝ որպես ունիվերսալ կառույց շարունակական զարգացման ապահովումն է՝ մատուցելով հաճախորդներին միջազգային չափանիշներին համապատասխան բանկային ծառայություններ, ապահովելով Բանկի հաճախորդների և բաժնետերերի շահերի պաշտպանվածությունը:

Նախատեսելով զարգացման բոլոր ոլորտների թե՛ քանակական, թե՛ որակական աճ, շարունակվելու է մեծ ուշադրություն դարձվել ռիսկերի կառավարման համակարգի, ներքին հսկողության համակարգի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, կորպորատիվ կառավարման արժեքների զարգացմանը, բանկային ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների կատարելագործմանը, միջազգային գործառնությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը:

Բանկի ռազմավարության հիմնական խնդիրները բխում են բանկի ֆինանսական քաղաքականության գլխավոր խնդիրներից՝ պահպանել և ավելացնել բանկի ընդհանուր կապիտալը, ապահովել բանկի կայուն իրացվելիությունը, արդյունավետ կառավարելով բանկի ֆինանսական միջոցները, ապահովել եկամուտների այնպիսի

մակարդակ, որը թույլ կտա ոչ միայն փոխհատուցել անհրաժեշտ ծախսերը, այլ նաև ձևավորել բավարար պահուստներ՝ լուծելով բանկի կապիտալիզացիայի խնդիրները:

Բանկն իր առաքելությունը տեսնում է որպես միջազգային չափանիշներով ռիսկերի կառավարման գործուն համակարգով, առաջընթաց տեխնոլոգիաներով զարգացող, օրինապաշտ, թափանցիկ կառույցի զարգացում, որը իր գործունեությամբ նպաստում է ոչ միայն ՀՀ բանկային համակարգի կայունությանը, այլև երկրի տնտեսության զարգացմանը:

1.9. Բանկի կանոնադրական կապիտալը և վերջինիս կառուցվածքը

Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի չափը կազմում է 29,539,334,720 ՀՀ դրամ, որը ներառում է 11,139,584 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ բաժնետոմս յուրաքանչյուրը 15,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հայտարարած տեղաբաշխման ենթակա սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 10,000,000 (երկու միլիոն) սովորական բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 2,080 (երկու հազար ութանասուն) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի հայտարարած տեղաբաշխման ենթակա արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 228,479 (երկու հարյուր քսանութ հազար չորս հարյուր յոթանասունինը) հատ հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր՝ յուրաքանչյուրը 15,000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, յուրաքանչյուրի լուծարային արժեքը անվանական արժեքի չափով, յուրաքանչյուրի համար դրա անվանական արժեքի նկատմամբ տարեկան 14 (տասնչորս) տոկոս վճարվող շահութաբաժնի չափով:

Սահմանված տեղաբաշխման ժամկետից շուտ՝ 04.03.2024թ., ավարտվել է 607,000 հատ սովորական բաժնետոմսերի (արժեթղթերի ընդհանուր ծավալը (անվանական՝ 2,080 դրամ, արժեքով)՝ 1,262,560,000 ՀՀ դրամ, արժեթղթերի ընդհանուր ծավալը (շուկայական՝ 5,410 դրամ, արժեքով)՝ 3,283,870,000 ՀՀ դրամ) տեղաբաշխման գործընթացը, և ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործընթացների իրականացումից հետո՝ մինչև 2024թ. մայիս ամիսը, Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի չափը կկազմի 30,801,894,720 ՀՀ դրամ, որը կներառի 11,746,584 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ բաժնետոմս յուրաքանչյուրը 15,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

31.03.2024թ. դրությամբ բաժնետերերի կողմից վճարված է կանոնադրական կապիտալի 100%-ը:

31.03.2024թ. դրությամբ Բանկի բաժնետոմսերի սեփականատերերի քանակը կազմում է 6,975 բաժնետեր:

1.10. Բանկի բիզնեսի նկարագիրը (մատուցված ծառայությունները)

<u>Համաձայն Բանկի կանոնադրության.</u>

Բանկը կարող է իրականացնել ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված բոլոր ֆինանսական գործառնությունները:

31.03.2024թ. դրությամբ Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 13 բանկերում:

Բանկն անդամակցում է հետևյալ միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերին՝ «MoneyGram», «Ria Money Transfers», «IntelExpress», «Golden Money Transfer» և «MoneyTun»:

1.11. Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացվում է ստորև.



Ազդագրի ներկայացման պահի դրությամբ Բանկն ունի 53 մասնաճյուղ:

1.12. Բանկի տրամադրության տակ եղած ակտիվների համարժեքությունը և պիտանելիությունը.

հազ. դրամ

№	Ցուցանիշի անվանումը	31.12.2023*	31.12.2022	31.12.2021
1	Ակտիվներ, այդ թվում՝	464,882,112	409,339,718	359,864,111
2	Եկամտաբեր ակտիվներ	375,077,790	324,622,170	281,025,373
3	Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	291,399,068	259,413,495	220,889,139
4	Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,926,882	11,448,364	9,497,133
5	Ներդրումային արժեթղթեր	60,201,239	47,378,854	42,807,297
6	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	71,569,317	69,081,631	63,399,890
7	Կանխիկ դրամական միջոցներ	18,735,331	16,556,919	15,508,072
8	Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	-	67	5,053
9	Հակադարձ հետգնման պայմանագրեր	12,464,832	6,381,390	7,826,751
10	Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը (%)	80.68%	79.30%	78.09%

Չստուգված

Արժեզրկված (չաշխատող) վարկերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Բանկի հրապարակվող հաշվետվություններին կից ծանոթագրություններում (Ծանոթագրություն 16, 19 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ):

2. Բանկին և արժեթղթերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

2.1. Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- շուկայական ռիսկ
  - ✓ տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
  - ✓ արտարժութային ռիսկ,
  - ✓ գնային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- գործառնական ռիսկ,
- Համբավի ռիսկ,
- Վարակի ռիսկ,
- Ռազմավարական ռիսկ,
- Օրենսդրական, նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկ,
- Երկրի ընդհանուր և տնտեսական միջավայրի ռիսկ:

Բանկին առնչվող ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունն առավել մանրամասն ներկայացված է սույն Ազդագրի Բաժին 3-ի («Բաժնետոմսեր թողարկողի մասին տեղեկատվություն») 2-րդ կետում («Ռիսկային գործոններ»):

2.2. Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված հնարավոր ռիսկերի ցանկը սպառիչ չէ և հավանական է նաև անկանխատեսելի բնույթի որոշակի այլ ռիսկերի առաջացումը և հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և սպասումներով:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով շուկայում բաժնետոմսերի շրջանառելիության՝ իրացվելիության անկմանը: Բանկի կողմից որպես առավել

էական ռիսկեր դիտարկվում են.

ա) Բաժնետոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով, որի արդյունքում, բաժնետոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը՝ հանգեցնելով դրանց գնի անկմանը: Ներդրողը կարող է շուկայական տվյալ իրավիճակում առկա բաժնետոմսերի ցածր իրացվելիության պատճառով հնարավորություն չունենալ վաճառելու բաժնետոմսերը առանց էական կորուստների կամ ընդհանրապես հնարավորություն չունենալ դրանք վաճառելու:

բ) Արտարժութային ռիսկը, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Բաժնետոմսերը գնանշվելու և վճարվելու են ՀՀ դրամով, ուստի, այն ներդրողների համար, որոնց ֆինանսական հոսքերն այլ արժույթով են, տվյալ բաժնետոմսերը պարունակում են զգալի արտարժութային ռիսկեր:

գ) Տոկոսադրույքի ռիսկը, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, ինչը որպես այլընտրանքային ներդրման ուղղություն, անուղղակիորեն ազդում է բաժնետոմսերի գների վրա:

դ) Բանկի հեղինակության ռիսկը, որը անմիջական ազդեցություն ունի բաժնետոմսերի գրավչության և գնի վրա:

Թողարկվող արժեթղթերին առնչվող ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է սույն Ազդագրի Բաժին 2-ի («Թողարկվող բաժնետոմսերի մասին տեղեկատվություն») 1-ին կետում («Ռիսկային գործոններ»):

3. Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Բանկն իր գործունեությունն իրականացնում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված հեռանկարային զարգացման ծրագրերի՝ դրանցում սահմանված նպատակների, սկզբունքների, գործունեության հիմնական ուղղությունների և խնդիրների լուծման ուղիների:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև ISO/IEC 27001 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Բանկի ֆինանսական վիճակի 2021-2023թ.թ. փոփոխության միտումները ներկայացված են սույն ամփոփաթերթի 1-ին կետի 1.12 ենթակետում և 9-րդ կետում:

Նախատեսելով զարգացման բոլոր ոլորտների թե՛ քանակական, թե՛ որակական աճ, շարունակվելու է մեծ ուշադրություն դարձվել ռիսկերի կառավարման համակարգի, ներքին հսկողության համակարգի, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի, կորպորատիվ կառավարման արժեքների զարգացմանը, բանկային ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների կատարելագործմանը, միջազգային գործառնությունների, ինչպես նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության ընդլայնմանը:

2023թ. դեկտեմբերի 31-ից հետո (մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը) Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել և Բանկը պահպանում է ակտիվների և այլ հիմնական ցուցանիշների աճի միտումները:

Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաներն ուժի մեջ են, դատական հայցեր, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ ունենալու Բանկի ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա առկա չեն, կազմակերպական էական փոփոխություններ չեն սպասվում:

4. Բանկի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին համառոտ տեղեկություններ

Բանկի 2021թ.-ի, 2022թ.-ի և 2023թ.-ի գործունեության աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որի գտնվելու վայրը և կապի միջոցներն են.
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Տնօրեն/բաժնետեր՝ Արմեն Հովհաննիսյան
ՀՀ, ք. Երևան 0015, Գրիգոր Լուսավորիչ 9, «Երևան Պլազա» բիզնես կենտրոն, հեռ. +374(10) 500 964, +374(10) 500 961, www.grantthornton.am:

5. Բանկի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

5.1. Թողարկողի կառավարման մարմնի անդամները.

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- Բաժնետերերի ընդհանուր ժողով (այսուհետ՝ Ընդհանուր ժողով), որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,
- Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ), որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- Բանկի գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե վարչության նախագահն է,
- Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Բանկի խորհուրդը կազմված է վեց անդամներից.

№	անունը, ազգանունը	զբաղեցրած պաշտոնը	փորձառությունը
1	Սարիբեկ Սուքիասյան	Խորհրդի նախագահ	33 տարի
2	Արամ Խաչատրյան	Խորհրդի անդամ, Խորհրդի նախագահի տեղակալ	18 տարի
3	Լուիզա Պետրոսյան	Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար	19 տարի
4	Ռուբեն Հայրապետյան	Խորհրդի անդամ	22 տարի
5	Պեր Ֆիշեր	Խորհրդի անդամ	34 տարի
6	Հրանտ Սուվարյան	Խորհրդի անդամ	43 տարի

Բանկի վարչությունը կազմված է 10 անդամներից.

№	անունը, ազգանունը	զբաղեցրած պաշտոնը	փորձառությունը
1	Արտակ Առաքելյան	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն	19 տարի
2	Արտաշես Հարությունյան	Վարչության նախագահի տեղակալ, Ֆինանսական գծով տնօրենի տեղակալ	17 տարի
3	Ռուբեն Բադալյան	Վարչության նախագահի տեղակալ, Գործառնական գծով տնօրենի տեղակալ	21 տարի
4	Օնիկ Չիչյան	Վարչության նախագահի	22 տարի

		տեղակալ, Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ	
5	Աստղիկ Մանրիկյան	Վարչության նախագահի տեղակալ, Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ	18 տարի
6	Արփինե Փիլոսյան	Վարչության նախագահի տեղակալ, Տեխնոլոգիաների գծով տնօրենի տեղակալ	17 տարի
7	Նոնա Գալստյան	Վարչության անդամի, Գլխավոր հաշվապահի ժ/պ	22 տարի
8	Հայկ Ավետիսյան	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդաբանության վարչության պետ	19 տարի
9	Վրեժ Ջհանգիրյան	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ	17 տարի
10	Կարեն Բաբայան	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման վարչության պետ	17 տարի

5.2. Բանկի աշխատակիցները.

Բանկի աշխատակիցների ընդհանուր թիվը 31.12.23թ. դրությամբ կազմում է 986 աշխատակից:

5.3. Բանկի խոշոր բաժնետերերը.

№	ազգանունը, անունը, հայրանունը	մասնակցությունը սովորական բաժնետոմսերում	մասնակցությունը արտոնյալ բաժնետոմսերում
1	Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	25.40%	49.91%
2	Սուքիասյան Խաչատուր Ալբերտի	13.55%	23.55%
3	Սուքիասյան Էդուարդ Ալբերտի	14.05%	18.84%

6. Առաջարկվող կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության համար նախատեսված արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

արժեթղթերի տեսակը՝ *սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)*
արժեթղթերի քանակը՝ *373,135 հատ*
արժեթղթերի ընդհանուր ծավալը (շուկայական արժեքով)՝ *2,000,003,600 ՀՀ դրամ*
արժեթղթերի ընդհանուր ծավալը (անվանական արժեքով)՝ *776,120,800 ՀՀ դրամ*
արժեթղթերի անվանական արժեքը՝ *2,080 ՀՀ դրամ*
արժեթղթերի արժույթը՝ *ՀՀ դրամ*
արժեթղթերի նպատակը՝ միջոցների ներգրավում

միջոցների օգտագործման նախատեսվող ուղիները՝ *Թողարկողի կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցները հիմնականում ուղղվելու են փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը, սպառողական վարկերի տրամադրմանը և պետական արժեթղթերում ներդրումների իրականացմանը:*

7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Թողարկվող սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է բաց բաժանորդագրության միջոցով՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ միջոցով: Բաժնետոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է դրամով, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163003702772 հաշվեհամարին միանվագ մուտքագրման կամ փոխանցման կարգով: Բաժնետոմսերի ձեռքբերման/բաժանորդագրման նպատակով ներդրողը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ներկայացնում է բաժանորդագրության հայտ և համապատասխան հաշվին կատարված վճարումը կամ փոխանցումը հավաստող փաստաթուղթ: Բանկի բաժնետոմսերում ներդրողն իր կողմից Տեղաբաշխողին ներկայացված բաժանորդագրության հայտի բավարարման մասին տեղեկացվում է բաժանորդագրության հայտի ներկայացման պահին: Գնման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամանակագրական հերթականության՝ սովորական բաժնետոմսերի սեփականատերերի կողմից իրենց նախապատվության իրավունքի իրականացումից հետո:

Թողարկվող արժեթղթերի առաջարկի ժամկետների և պայմանների վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է սույն Ազդագրի Բաժին 2-ի («Թողարկվող բաժնետոմսերի մասին տեղեկատվություն») 4-րդ կետում («Առաջարկի ժամկետները և պայմանները»):

Համաձայն օրենսդրության և բանկի կանոնադրության հայտարարված սովորական բաժնետոմսերի բաց տեղաբաշխման որոշում ընդունվելու դեպքում՝ սովորական բաժնետոմսերի սեփականատերերը ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն տեղաբաշխվող սովորական բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք:

Նախապատվության իրավունքի իրականացման հնարավորության մասին սովորական բաժնետոմսերի սեփականատերերը տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ ծանուցվում են սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման վերաբերյալ՝ ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրենց նախապատվության իրավունքը իրականացնում են սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ Բանկին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա/ բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.

բ/ ձեռք բերվող սովորական բաժնետոմսերի քանակը.

գ/ձեռք բերվող սովորական բաժնետոմսերի քանակին համապատասխան սովորական բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով: Թողարկմանը զուգահեռ բաժնետերերի կողմից տնօրինվող բաժնետոմսերի վաճառք չի նախատեսվում:

8. Այլ էական տեղեկություններ ըստ բանկի հայեցողության, որոնք նշված չեն նախորդ կետերում

Բանկի կանոնադրական հիմնադրամին, բաժնետերերին, շահույթի բաշխմանը և կառավարման մարմիններին վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն կարելի է ստանալ Բանկի կանոնադրության 3-6 գլուխներում:

9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

հազ. դրամ

№	Ցուցանիշի անվանումը	2023**	2022	2021
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	4,719,986	7,111,817	2,956,439
	Սեփական կապիտալի միջին մեծություն*	57,881,550	46,714,026	43,230,620
	Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	8.15%	15.22%	6.84%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	4,719,986	7,111,817	2,956,439
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	438,027,743	388,162,508	337,640,804
	Ակտիվների շահութաբերություն (ROA), %	1.08%	1.83%	0.88%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	4,719,986	7,111,817	2,956,439
	Գործառնական եկամուտ	22,665,029	20,791,499	16,229,746
	Զուտ շահույթի մարժա (NPM), %	20.82%	34.21%	18.22%
	Գործառնական եկամուտ	22,665,029	20,791,499	16,229,746
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	438,027,743	388,162,508	337,640,804
	Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	5.17%	5.36%	4.81%
	Ընդհանուր ակտիվների միջին մեծություն*	438,027,743	388,162,508	337,640,804
	Սեփական կապիտալի միջին մեծություն*	57,881,550	46,714,026	43,230,620
	Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	7.57	8.31	7.81
	Զուտ տոկոսային եկամուտ	15,563,293	12,871,216	11,730,780
	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն*	355,204,450	309,765,059	267,437,814
	Զուտ տոկոսային մարժա (NIM)	4.38%	4.16%	4.39%
	Տոկոսային եկամուտ	39,155,700	32,690,014	27,099,448

	Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն*	355,204,450	309,765,059	267,437,814
	Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	11.02%	10.55%	10.13%
	Տոկոսային ծախսեր	23,592,407	19,818,798	15,368,668
	Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր*	373,320,086	337,462,197	290,684,518
	Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	6.32%	5.87%	5.29%
	Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	4,719,986	7,111,817	2,956,439
	Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	9,998,567	1,941,258	1,894,937
	Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	0.47	3.66	1.56
	Սպրեդ	4.70%	4.68%	4.85%

միջին եռամսյակային

<u>**Չսպուգված**</u>

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բաժնետոմսերի թողարկման սույն առաջարկը նպատակ է հետապնդում ավելացնել Բանկի կանոնադրական կապիտալը՝ բարձրացնելով բանկի, որպես ֆինանսական կառույցի, գործունեության հուսալիությունը և արդյունավետությունը, սուր մրցակցության պայմաններում առկա մարտահրավերներին դիմակայման և մրցունակության բարձրացման հնարավորությունները:

Բաժնետոմսերում ներդրումները կապված են որոշակի հավանական ռիսկերի հետ, ուստի ներդրում կատարելու վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ ներդրողները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն և վերլուծեն ներդրման հետ կապված և Ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը: Անհրաժեշտ է, այնուամենայնիվ, հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Ազդագրում ներկայացված հնարավոր ռիսկերի ցանկը սպառիչ չէ և հավանական է նաև անկանխատեսելի բնույթի որոշակի այլ ռիսկերի առաջացումը և հետևաբար ներդրողը ներդրման վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և սպասումներով:

Բանկը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի նվազեցնի ստորև նշված ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը: Այնուամենայնիվ, քանի որ շատ դեպքերում նշված ռիսկային գործոնները Բանկի հսկողությունից դուրս են, ապա այս ցուցակով չսահմանափակվող ռիսկերի բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը չի երաշխավորվում Բանկի կողմից:

Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է որոշակի բացասական ազդեցություն ունենալ ինչպես Բանկի վիճակի, այնպես էլ շուկայում առկա իրավիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով շուկայում բաժնետոմսերի շրջանառելիության՝ իրացվելիության անկմանը, Բանկի եկամուտների կրճատմանը և ծախսերի ավելացմանը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել բաժնետոմսերի գների իջեցմանը: Բանկի կողմից որպես առավել էական ռիսկեր դիտարկվում են.

ա) Բաժնետոմսերի իրացվելիության ռիսկը, որը կարող է առաջանալ շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով, որի արդյունքում, բաժնետոմսերը կարող են կորցնել իրենց գրավչությունը՝ հանգեցնելով դրանց գնի անկմանը: Ներդրողը կարող է շուկայական տվյալ իրավիճակում առկա բաժնետոմսերի ցածր իրացվելիության պատճառով հնարավորություն չունենալ վաճառելու բաժնետոմսերը առանց էական կորուստների կամ ընդհանրապես հնարավորություն չունենալ դրանք վաճառելու:

բ) Արտարժութային ռիսկը, որը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների հետևանքով, որոնք կարող են էապես ազդել ինչպես Բանկի, այնպես էլ արժեթղթերի շուկայի վրա: Բաժնետոմսերը գնանշվելու և վճարվելու են ՀՀ դրամով, ուստի, այն ներդրողների համար, որոնց ֆինանսական հոսքերն այլ արժույթով են, տվյալ բաժնետոմսերը պարունակում են զգալի արտարժութային ռիսկեր:

գ) Տոկոսադրույքի ռիսկը, որը կարող է հետևանք լինել շուկայում գործող տոկոսադրույքների կտրուկ փոփոխության, ինչը որպես այլընտրանքային ներդրման ուղղություն, անուղղակիորեն ազդում է բաժնետոմսերի գների վրա:

դ) Բանկի հեղինակության ռիսկը, որը անմիջական ազդեցություն ունի բաժնետոմսերի գրավչության և գնի վրա:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2.1. Կապիտալիզացիա և պարտավորություններ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կապիտալիզացիան 31.03.24թ. դրությամբ.

հազ. դրամ

ա.	կանոնադրական կապիտալ	29,539,335
բ	էմիսիոն եկամուտ	4,517,781
գ.	կուտակված շահույթ (վնաս)	21,212,145
դ.	սեփական կապիտալ	66,027,576

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պարտավորությունները 31.03.24թ. դրությամբ.

հազ. դրամ

ե.	երկարաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս, այդ թվում՝	123,013,007
	երաշխավորված պարտավորություններ	12,517,242
	չերաշխավորված պարտավորություններ	110,495,765
	ապահովված պարտավորություններ	0
	չապահովված պարտավորություններ	123,013,007
զ.	կարճաժամկետ պարտավորություններ, որոնք ենթադրում են տոկոսային ծախս, այդ թվում՝	249,520,247
	երաշխավորված պարտավորություններ	64,346,175
	չերաշխավորված պարտավորություններ	185,174,072
	ապահովված պարտավորություններ	49,131,547
	չապահովված պարտավորություններ	200,388,700
է.	արտահաշվեկշռային և պայմանական պարտավորություններ, այդ թվում՝	15,188,359
	երաշխավորված պարտավորություններ	0
	չերաշխավորված պարտավորություններ	15,188,359
	ապահովված պարտավորություններ	0
	չապահովված պարտավորություններ	15,188,359

2.2. Առաջարկի նպատակը և ներգրավվող միջոցների օգտագործումը

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերի հերթական 24-րդ թողարկման և տեղաբաշխման հիմնական նպատակը Բանկի կանոնադրական կապիտալի ավելացումն է ՀՀ արժեթղթերի շուկայում միջոցների ներգրավմամբ՝ բարձրացնելով բանկի, որպես ֆինանսական կառույցի, գործունեության հուսալիությունը և արդյունավետությունը, սուր մրցակցության պայմաններում առկա մարտահրավերներին դիմակայման և մրցունակության բարձրացման հնարավորությունները: Թողարկողի կողմից բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցները հիմնականում ուղղվելու են փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը, սպառողական վարկերի տրամադրմանը և պետական արժեթղթերում ներդրումների իրականացմանը:

Հնարավոր ներգրավվող համախառն գումարների մեծությունը Բանկի գնահատմամբ կկազմի 2,000,003,600 ՀՀ դրամ:

Հնարավոր ներգրավվող գումարների մեծությունը ենթակա է տեղաբաշխման ըստ օգտագործման հետևյալ նախատեսվող ուղղությունների (ըստ առաջնահերթության).

- ✓ փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորում,
- ✓ սպառողական վարկեր,
- ✓ հիփոթեքային վարկեր,
- ✓ պետական արժեթղթեր,
- ✓ այլ:

Հնարավոր ներգրավվող գումարները չեն նախատեսվում օգտագործվել Բանկի բնականոն գործունեության շրջանակներից դուրս ակտիվների ձեռքբերման համար, այլ բիզնեսների հայտարարված ձեռքբերումների նպատակով կամ պարտավորությունների գծով հատուցումների, պարտավորությունների մարման կամ վերաֆինանսավորման նպատակով:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԿԱՊՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԵՏ

ա. Արժեթղթերի տեսակը և դասը, ներառյալ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր (առկայության դեպքում).

- ✓ առաջարկվող արժեթղթերի դասը (տեսակը)՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ),
- ✓ բանկի սովորական բաժնետոմսերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN)՝ AMHEZBS10ER5

բ. Երկիրը, որի օրենսդրության համաձայն են թողարկվել տվյալ արժեթղթերը,

Բանկի սովորական բաժնետոմսերը թողարկվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, և դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

գ. Արժեթղթերի ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային): Ոչ փաստաթղթային արժեթղթերի դեպքում պետք է նշել այն իրավաբանական անձի անվանումը, որը վարում է այդ ոչ փաստաթղթային արժեթղթերի ռեեստրը.

ոչ փաստաթղթային, «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերություն, «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատոր՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ:

դ. Մեկ արժեթղթի անվանական արժեքը և քանակը (առկայության դեպքում).

Մեկ արժեթղթի անվանական արժեքը՝ 2,080 ՀՀ դրամ

Քանակը 373,135 հատ:

ե. Թողարկման արժույթը՝ ՀՀ դրամ

զ. Արժեթղթերից բխող ներքոհիշյալ իրավունքների նկարագրությունը (ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները) և այդ իրավունքների իրականացման գործընթացը, մասնավորապես՝

1. Շահութաբաժնի սպացման իրավունքները (շահութաբաժնի սպացման կոնկրետ օրերը, շահութաբաժին սպանալու սահմանափակումները և ոչ ռեզիդենտների կողմից սպացման գործընթացը, շահութաբաժնի հաշվարկման մեթոդները, վճարման պարբերականությունները և մեթոդները).

<u>Համաձայն Բանկի կանոնադրության .</u>

1. ԲԱՆԿԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

- ✓ Իր գործունեության արդյունքում Բանկի ստացած շահույթը ենթակա է հարկման՝ օրենսդրության համաձայն: Բանկը կարող է շահութաբաժիններ վճարել միայն տարեկան արդյունքներով:

- ✓ Օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր մյուս վճարումները կատարելուց հետո ձևավորվում է Բանկի տրամադրության տակ մնացած շահույթը, որի բաշխումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ շահութաբաժինների վճարման, կանոնադրությամբ սահմանված ֆոնդերի համալրման, Բանկի զարգացման նպատակով:
- ✓ Բանկի բաժնետերերի տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, որով սահմանվում են վճարման չափը և ժամկետները: Շահութաբաժինների վճարումը կատարվում է համաձայն Բանկի խորհրդի հաստատած կարգի (կարգը տեղադրված է բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am, **«Սեփականատերեր»** բաժնում):
- ✓ Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են այդ պահին Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին կամ գերազանցում են այն:
- ✓ Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել բանկի կողմից շահութաբաժիններ բաշխելը, այդ թվում՝ արտոնյալ բաժնետերերին կամ բանկի այլ մասնակիցների այլ ձևով որևէ եկամուտներ (հատուցումներ) վճարելը, եթե՝
  - o շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, և (կամ)
  - o շահութաբաժինների բաշխման հետևանքով բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ, և (կամ)
  - o բանկը խախտել է կամ շահութաբաժինների բաշխման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը):

  Կենտրոնական բանկի կողմից կարող է սահմանվել շահութաբաժինների բաշխումը սահմանափակելու կարգ, ինչպես նաև շահութաբաժինների վճարման մասին Կենտրոնական բանկին նախապես ծանուցելու կարգ և պայմաններ:
- ✓ Շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

<u>Համաձայն «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ տարեկան արդյունքներով շահութաբաժինների վճարման» կարգի.</u>

Բանկը տարեկան շահութաբաժիններ է վճարում Բանկի գործունեության տարեկան արդյունքներով, ընդ որում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին կարող են վճարվել եռամսյակային վճարներ (շահութաբաժիններ): Տարեկան շահութաբաժինների վճարման չափը, կարգը և ժամկետները սահմանվում են տարեկան ժողովի որոշմամբ՝ Բանկի Խորհրդի ներկայացմամբ: Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Բանկի զարգացման խնդիրները: Տարեկան շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեն տվյալ տարվա տարեկան ընդհանուր ժողովի մասնակիցների ցուցակում ընդգրկված Բանկի բաժնետերերը՝ Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից: Տարեկան շահութաբաժինները վճարվում են Բանկի զուտ (կուտակված) շահույթից:

Բաժնետերերը շահութաբաժինները ստանում են հետևյալ կարգով.

- ✓ Հաշվետեր բաժնետերը շահութաբաժինները ստանալու համար ներկայանում է Բանկ և ստորագրում շահութաբաժնի գումարը հաշվին փոխանցելու պարբերական դիմում-հանձնարարական:

- ✓ Ոչ հաշվետեր բաժնետերը շահութաբաժինները ստանալու համար ներկայանում է Բանկ և.
    - Բանկում գործող կարգի համաձայն նրա համար բացվում է բանկային (քարտային) հաշիվ (Բանկում գործող հաշիվ չունենալու դեպքում), և բաժնետերը ստորագրում է շահութաբաժնի գումարը տվյալ հաշվին կամ բանկում գործող այլ հաշվին փոխանցելու պարբերական դիմում-հանձնարարական կամ
    - բաժնետիրոջ ցանկությամբ շահութաբաժինների վճարման համար վերջինս պարբերական դիմում-հանձնարարականի միջոցով տրամադրում է այլ բանկում գործող հաշվեհամար՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.
        - ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ,
        - իրավաբանական անձի դեպքում՝ պետ. ռեգիստրի գրանցման վկայականի պատճենը կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը (տվյալ փաստաթղթերը կարող են չպահանջվել, եթե Բանկը սահմանված կարգով ստացել է տվյալ տեղեկատվությունը էլեկտրոնային տարբերակով):

Ոչ ռեզիդենտ (ոչ հաշվետեր հանդիսացող) բաժնետերերը տնօրինում են իրենց շահութաբաժինը համապատասխան գրավոր տրված պարբերական դիմում-հանձնարարականով:

Ֆիզիկական անձի անվամբ հաշվառվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել նաև լիազորված անձին օրենքով սահմանված նոտարի վավերացմամբ տրված լիազորագրով կամ ժառանգորդին՝ ժառանգումը հիմնավորող փաստաթղթերով (նոտարական, կտակով և այլն):

Իրավահաջորդության դեպքում ներկայացվում են օրենքով պահանջվող բոլոր հիմնավորող փաստաթղթերը:

Մինչև տասնչորս տարեկան անչափահասի անվամբ հաշվառվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել անչափահասի օրինական ներկայացուցիչներին՝ ծնողներին, որդեգրողներին կամ խնամակալին՝ նրանց անձը հաստատող փաստաթղթով: Այն դեպքում, երբ մինչև տասնչորս տարեկան անչափահասի բաժնետոմսերի շահութաբաժինները ցանկանում է ստանալ ծնողներից որևէ մեկը, ապա վերջինս պետք է ներկայացնի նաև մյուս ծնողի կողմից իրեն տրված գրավոր լիազորագիրը (նոտարի հաստատումով կամ Բանկում՝ լիազորագրերի տրման համար սահմանված կարգով տրված):

Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների անվամբ հաշվառվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել այդ անչափահասին՝ նրա անձը հաստատող փաստաթղթով (մինչև տասնվեց տարեկանի համար ծննդյան վկայական և անձնագիր կամ նույնականացման քարտ, իսկ տասնվեց տարեկանը լրացած անչափահասի համար անձնագիր կամ նույնականացման քարտ), անձը հաստատող փաստաթուղթ չունենալու դեպքում՝ նույնականացումը պետք է կատարվի ծնողներից մեկի հավաստող ստորագրությամբ: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի բաժնետոմսերի շահութաբաժինները միանձնյա ստացող ծնողը պետք է ներկայացնի այդ անչափահասի կողմից ծնողներից երկուսի համաձայնությամբ տրված լիազորագիրը (նոտարի հաստատումով կամ Բանկում՝ լիազորագրերի տրման համար սահմանված կարգով տրված):

Բաժնետերերը կարող են դիմում-հանձնարարականի միջոցով փոխել շահութաբաժնի ստացման հաշվեհամարը:

2. Ձայնի իրավունքները.

Համաձայն Բանկի կանոնադրության.

1. Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի.

- ✓ մասնակցել Բանկի ընդհանուր ժողովին վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- ✓ մասնակցել Բանկի կառավարմանը,
- ✓ ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձին,
- ✓ հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,
- ✓ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

2. Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

Համաձայն կանոնադրության՝ արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին, եթե ժողովում քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցեր, կամ Բանկի կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը: Սույն ենթակետով սահմանված հարցերով ժողովին մասնակցությունը տեղաբաշխված մեկ արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

3.Անձը կամ փոխկապակցված անձինք Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են օրենքով սահմանված կարգով նշանակալից (ուղղակի և անուղղակի) և այլ մասնակցություն (ոչ նշանակալից) ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Տվյալ անձը պետք է բավարարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

3. Նույն դասի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունքները.

Նույն դասի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունքները կարգավորվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի Հոդված 47-ով.

Համաձայն օրենսդրության և բանկի կանոնադրության հայտարարված սովորական բաժնետոմսերի բաց տեղաբաշխման որոշում ընդունվելու դեպքում՝ սովորական բաժնետոմսերի սեփականատերերը ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն տեղաբաշխվող սովորական բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք:

Նախապատվության իրավունքի իրականացման հնարավորության մասին սովորական բաժնետոմսերի սեփականատերերը տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ ծանուցվում են սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման վերաբերյալ՝ ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրենց նախապատվության իրավունքը իրականացնում են սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսվելու օրվանից ոչ ուշ,

քան մեկ օր առաջ Բանկին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա/ բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.

բ/ ձեռք բերվող սովորական բաժնետոմսերի քանակը.

գ/ձեռք բերվող սովորական բաժնետոմսերի քանակին համապատասխան սովորական բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով: Թողարկմանը զուգահեռ բաժնետերերի կողմից տնօրինվող բաժնետոմսերի վաճառք չի նախատեսվում:

4. Լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքները.

<u>Համաձայն Բանկի կանոնադրության.</u>

<u>Համաձայն ՀՀ օրենսդրության և Բանկի կանոնադրության</u> սովորական և արտոնյալ բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը:

<u>Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի Հոդված 31-ի՝ սնանկ ճանաչված բանկի լուծարման դեպքում</u> Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.

բ) երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.

գ) երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ, իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները, որոնք բավարարվում են սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված հերթականությամբ.

դ) չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.

ե) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

ե.1) վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

զ) յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:

Բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության «գ», «դ» և «ե.1» ենթակետերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են «զ» ենթակետով սահմանված հերթում:

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Հոդված 75[1]-ի բանկի լուծարման դեպքում Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

առաջին հերթին՝ լուծարային հանձնաժողովի անդամների կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը.

երկրորդ հերթին՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ.

երրորդ հերթին՝ չորրորդ, հինգերորդ և վեցերորդ հերթերում չընդգրկված՝ բանկի այլ պարտավորությունները.

չորրորդ հերթին՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ.

հինգերորդ հերթին՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

վեցերորդ հերթին՝ բանկի մասնակիցների պահանջները:

Սույն մասով սահմանված՝ բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության երկրորդ, երրորդ և հինգերորդ հերթերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են վեցերորդ հերթին:

5. Հետգնման պահանջի իրավունքները

Համաձայն Բանկի կանոնադրության.

Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի ձեռք բերել իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք, եթե՝

- ✓ որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.
- ✓ կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել է նշված բաժնետերի իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել այդ հարցի քվեարկությանը:

6. Փոխարկման իրավունքները.

Առաջարկվող արժեթղթերը փոխարկման իրավունքներ չեն ենթադրում:

է. Եթե առաջարկվող արժեթղթերը նոր թողարկում են, ապա իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը այդ նոր թողարկման մասին.

Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ընթացակարգի վերաբերյալ որոշումն ընդունել է Բանկի Խորհուրդը: Համաձայն Բանկի Խորհրդի 10/02-16.04.2024թ. որոշման՝ որոշում է կայացվել թողարկել 373,135 հատ 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսեր և տեղաբաշխել դրանք յուրաքանչյուրը 5,360 ՀՀ դրամ գնով (տեղաբաշխման գինը հաշվարկված է հիմք ընդունելով 2024թ. 1-ին եռամսյակի «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ֆինանսական հաշվետվությունների տվյալները):

ը. Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումների նկարագրությունը.

Ձեռքբերման հետ կապված սահմանափակումները հետևյալն են.
Անձը կամ փոխկապակցված անձինք Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են օրենքով սահմանված կարգով նշանակալից (ուղղակի և անուղղակի) մասնակցություն ձեռք բերել միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Տվյալ անձը պետք է բավարարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դիմումի մերժման հիմք են հանդիսանում հետևյալ փաստերի առկայությունը.

ա/ անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունի.

բ/ անձն օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

գ/ անձը սնանկ է ճանաչվել և չմարված (չներված) պարտավորություններ ունի.

դ/ անձի գործողությունները նախկինում հանգեցրել են Բանկի կամ այլ անձի սնանկացմանը.

ե/ տվյալ անձը կամ փոխկապակցված անձինք անցյալում կատարել են այնպիսի արարք, որը ՀՀ Կենտրոնական բանկի հաստատած ուղեցույցով հիմնավորված՝ ՀՀ Կենտրոնական բանկի կարծիքով հիմքեր կան կասկածելու, որ տվյալ անձի՝ որպես բանկի բարձրագույն կառավարման մարմնի որոշումների կայացման ժամանակ ձայնի իրավունք ունեցող անդամի, գործողությունները կարող են հանգեցնել Բանկի սնանկացման կամ ֆինանսական վիճակի վատթարացման, կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկման.

զ/ տվյալ գործարքն ուղղված է կամ հանգեցնում է, կամ կարող է հանգեցնել ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը.

է/ տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձինք ՀՀ բանկային շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող դիրք, որն իրենց հնարավորություն է տալիս կանխորոշել օրենսդրությամբ Բանկին թույլատրված գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագները կամ պայմանները.

ը/ փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած ձևի և կարգի խախտումներով կամ ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում արտացոլվել են կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ.

թ/ տվյալ գործարքի հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակիցը կամ նրա հետ փոխկապակցված անձը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում կամ նշանակալից մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձանց ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է պատճառ հանդիսանալ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից

մասնակցություն ձեռք բերող անձանց և (կամ) նրանց հետ փոխկապակցված անձանց գործունեությունը կամ Բանկի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը ՀՀ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով կարող է խոչընդոտել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը կամ թույլ չի տալիս բացահայտելու կամ արդյունավետ կառավարելու Բանկի ռիսկերը.

ժ/ անձը չի ներկայացնում իր կողմից ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն).

Սույն կետով սահմանված սահմանափակումները չեն տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող բանկի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման վրա, եթե դա կատարվել է ֆոնդային բորսայում և չի գերազանցում բանկի կանոնադրական հիմնադրամի 20 տոկոսը, իսկ գերազանցելու դեպքում ձեռք է բերվում ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արժեթղթերի ազատ շրջանառելիության սահմանափակումները հետևյալն են.

Թողարկվող (սույն ազդագրով վաճառքի առաջարկվող) արժեթղթերը ֆոնդային բորսայում կարող են շրջանառվել ֆոնդային բորսայում առևտրին թույլտվություն ստանալուց հետո: Արտաբորսայական շուկայում արժեթղթերը կարող են օտարվել մասնավոր գործարքի միջոցով:

Շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերով գործարքների իրականացման վերաբերյալ սահմանափակումները սահմանված են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Հոդված 129-ով և ՀՀ Կենտրոնական բանկի 2012թ. թիվ 331Ն որոշմամբ: Մասնավորապես.

Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1. մասնավոր գործարքների դեպքում, որոնց կողմերը նախապես հայտնի են.
   - ✓ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,
   - ✓ թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,
   - ✓ արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները:
2. արժեթղթերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների դեպքում,
3. շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերում:

թ. Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորության նկարագրությունը, ինչպես նաև այն դեպքերի նկարագրությունը, երբ նման պարտավորությունը բացակայում է.

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պարտավորությունը, ինչպես նաև նման պարտավորության բացակայության դեպքերը կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Գլուխ 15-ով:

Յուրաքանչյուր անձ, որը թողարկողի բաժնային արժեթղթով մեկ կամ ավելի գործարքի հետևանքով դառնում է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր,

պարտավոր է տվյալ դասի բոլոր արժեթղթերն իրեն հանձնելու առաջարկ անել: Նշված պահանջը տարածվում է նաև այն դեպքի վրա, երբ Հաշվետու թողարկողի դիմումի հիման վրա օպերատորի կողմից դադարեցվել է թողարկողի արժեթղթերի առևտուրը կարգավորվող շուկայում: Այս դեպքում արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկը պետք է ներկայացվի թողարկողի այն բաժնետերերի կողմից, որոնք կողմ են քվեարկել կարգավորվող շուկայում թողարկողի արժեթղթերի առևտրի թույլտվության դադարեցման որոշմանը: Ընդ որում, կարգավորվող շուկայում թողարկողի արժեթղթերի առևտրի թույլտվության դադարեցման որոշմանը կողմ քվեարկած բաժնետերերը ընտրում են ներկայացուցիչ, որը կիրականացնի արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկն իրենց անունից:

Անձը պարտավոր է արժեթղթերը հանձնելու առաջարկի հայտարարագիրը Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան գործարքի կատարմանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, որի արդյունքում անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր:

Արժեթղթերը հանձնելու պարտադիր առաջարկ անելու պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ՝

- ✓ անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր տվյալ ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման արդյունքում.
- ✓ անձը դարձել է տվյալ դասի արժեթղթերի ավելի քան 75 տոկոսի սեփականատեր՝ իր կողմից տվյալ դասի բոլոր արժեթղթերի համար արժեթղթերը հանձնելու ոչ պարտադիր առաջարկի արդյունքում.
- ✓ արժեթղթերը ձեռք են բերվել ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից տեղաբաշխման նպատակով.
- ✓ անձը տվյալ դասի արժեթղթերի 75 տոկոսը գերազանցող մասը դրանց ձեռքբերման օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, օտարում է այն անձին, որը «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 151-րդ հոդվածի համաձայն չի համարվում համատեղ գործելու համաձայնությամբ հանդես եկող անձ և պայմանով, որ այդ ժամկետի ընթացքում տվյալ արժեթղթերի թողարկողի բաժնետերերի ընդհանուր ժողով չի գումարվում:

ժ. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը.

Ռեզիդենտ իրավաբանական անձանց համար բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է ՀՀ Հարկային օրենսգրքի Հոդված 4-ի, Հոդված 104-ի, Հոդված 105-ի, Հոդված 107-ի, Հոդված 110-ի և Հոդված 123-ի համաձայն: Մասնավորապես.

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի ստացած շահաբաժինների գումարի չափով, այսինքն՝ շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները) չեն հարկվում շահութահարկով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց դեպքում հարկումը կատարվում է՝ ՀՀ Հարկային օրենսգրքի Հոդված 4-ի, Հոդված 104-ի, Հոդված 105–ի, Հոդված 107–ի, Հոդված 109-ի, Հոդված 110-ի, Հոդված 125-ի, Հոդված 126-ի և Հոդված 132-ի համաձայն: Մասնավորապես.

Այս դեպքում շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները), բացառությամբ ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ենթակա են շահութահարկով հարկման որպես պասիվ եկամուտներ՝ 5%

դրույքաչափով: Հարկումը կատարվում է հարկային գործակալի (բանկի) կողմից՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ (ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից):

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների (բաժնետոմսերից ստացվող եկամուտների) մասով ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք ազատվում են շահութահարկի վճարումից:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է ՀՀ Հարկային օրենսգրքի Հոդված 4-ի, Հոդված 140-ի, Հոդված 141-ի, Հոդված 143-ի, Հոդված 144-ի, Հոդված 147-ի, Հոդված 149-ի և Հոդված 150-ի համաձայն: Մասնավորապես.

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վճարվող շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները), բացառությամբ ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ենթակա են եկամտահարկով հարկման որպես պասիվ եկամուտներ՝ 5% դրույքաչափով: Հարկումը կատարվում է հարկային գործակալի (բանկի) կողմից՝ եկամտի վճարման աղբյուրի մոտ (վճարվող եկամտի ընդհանուր գումարից):

ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտներ) հարկման բազան որոշելիս նվազեցվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց եկամուտներից:

4. ԱՌԱՋԱՐԿԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1) Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար.

ա. Թողարկման և (կամ) առաջարկի ընդհանուր ծավալը.

Առաջարկի ծավալն ամբողջությամբ բաղկացած է թողարկվող 373,135 հատ սվորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնց ընդհանուր գումարային ծավալը շուկայական արժեքով կազմում է 2,000,003,600 ՀՀ դրամ (յուրաքանչյուրը 5,360 ՀՀ դրամ շուկայական գնով), անվանական արժեքով՝ 776,120,800 ՀՀ դրամ (յուրաքանչյուրը 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով), որն ամբողջությամբ ենթակա է բաժանորդագրության:

բ. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը (ներառյալ՝ ժամկետների ցանկացած հնարավոր փոփոխություններ).

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկիզբ է համարվում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սույն Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 45-րդ օրվա ժամը 09:00-ն, իսկ ավարտ՝ ս.թ. հոկտեմբերի 31-ի ժամը 16:00-ն: Մինչև նշված ժամկետը բաժնետոմսերի ամբողջ ծավալի բաժանորդագրության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

Ազդագիրը կհրապարակվի տեղաբաշխումից առնվազն 40 օր առաջ՝ Բանկի կայքում www.aeb.am:

Տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Բանկի խորհրդի որոշմամբ:

գ. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի մանրամասն նկարագրություն.

Բաժնետոմսերի դիմաց վճարումը կատարվում է դրամով, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163003702772 հաշվեհամարին միանվագ մուտքագրման կամ փոխանցման կարգով: Մինչև կապիտալի ավելացումը ՀՀ Կենտրոնական բանկում գրանցելը գումարը փոխանցվում է ՀՀ Կենտրոնական բանկում կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով բացված թիվ 103002431635 կուտակային հաշվի վրա:

Բաժնետոմսերի ձեռքբերման/բաժանորդագրման նպատակով ներդրողը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ներկայացնում է բաժանորդագրության հայտ (այսուհետ՝ հայտ) և համապատասխան հաշվին կատարված վճարումը կամ փոխանցումը հավաստող փաստաթուղթ:

Բաժնետոմսերի ձեռքբերման/բաժանորդագրման նպատակով հայտը ներկայացվում է տեղաբաշխման սահմանված ժամանակահատվածի ընթացքում՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սույն Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 45-րդ օրվա ժամը 09:00-ից մինչև ս.թ. հոկտեմբերի 31-ի ժամը 16:00-ն:

Հայտն առնվազն պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ✓ Ներդրողի անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, բնակության վայրը, ստորագրությունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավասու (լիազորված) անձի ստորագրությունը),
- ✓ ձեռքբերվող բաժնետոմսերի քանակը,
- ✓ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից բացված անձնական հաշվի համարը:

Հայտին կից ներկայացվում են.

- ✓ ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի (առկայության դեպքում սոցիալական քարտի կամ հանրային ծառայության համարանիշ պարունակող փաստաթղթի) պատճենները (կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ)
- ✓ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականը (ՀՀ պետական ռեգիստրում գրանցված ռեզիդենտ իրավաբանական անձի, ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց ՀՀ-ում ստեղծված մասնաճյուղերի և ներկայացուցչությունների դեպքում նաև գործող ղեկավարի գրանցման ներդիրը) կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածքը, լիազորված անձի դեպքում նաև լիազորագիրը:

Հայտ ներկայացրած անձինք գրանցվում են հատուկ այդ նպատակով բացված գրանցամատյանում, իսկ վավեր Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

Բաժանորդագրման հայտը կհամարվի վավեր միայն ձեռք բերվող բաժնետոմսերի դիմաց լրիվ վճարման պահից:

դ. Այն հանգամանքները, որոնց դեպքում առաջարկը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել.

Առաջարկի հետաձգման կամ չեղյալ հայտարարման դեպքերը կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի Հոդված 20-ով և Հոդված 21-ով:

1. Եթե տեղաբաշխողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել

բաժանորդագրության ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը՝ առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով:

Հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը սահմանվում է 5 աշխատանքային օր՝ ազդագրի լրացման հրապարակումից հետո:

Արժեթղթերի հետգնումը և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են պահանջը ներկայացնելուց հետո՝ առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Կենտրոնական բանկն իր որոշմամբ կասեցնում է տեղաբաշխման ընթացքը, եթե՝
   - ✓ տեղաբաշխման ընթացքում խախտվել են օրենքի և (կամ) հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները.
   - ✓ տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
   - ✓ ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ, կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

3. Տեղաբաշխումը կասեցնելու որոշումը պետք է պարունակի հայտնաբերված խախտումները և բացթողումները վերացնելու հանձնարարական և դրա կատարման ժամկետները, որի կատարումից հետո Կենտրոնական բանկի թույլտվությամբ տեղաբաշխումը կարող է շարունակվել:

4. Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10 աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Տեղաբաշխողը պարտավոր է տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել առնվազն այն միջոցներով, որոնցով հրապարակվել է հրապարակային առաջարկի մասին հայտարարությունը:

Առաջարկի հետաձգման կամ չեղյալ հայտարարման դեպքում գումարների հետ վերադարձն իրականացվում է բաժանորդագրության հայտ ներկայացրած անձի դիմումի հիման վրա, դիմումում նշված եղանակով՝ կանխիկ կամ անկանխիկ՝ փոխանցելով դիմումում նշված հաշվեհամարին:

ե. Բաժանորդագրության նվազեցման հնարավորությունը, ինչպես նաև այդ պարագայում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները հետ վերադարձնելու եղանակը և ձևը.

Տեղաբաշխումն իրականացվելու է հետևյալ պայմաններով.

Բաժանորդագրությունը համարվում է կայացած տեղաբաշխման ցանկացած ծավալների ապահովման դեպքում:

Հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամանակագրական հերթականության: Բանկի բաժնետոմսերում ներդրողն իր կողմից Տեղաբաշխողին ներկայացված Հայտի բավարարման մասին տեղեկացվում է Հայտի ներկայացման պահին:

Հայտ ներկայացրած ներդրողների բաժանորդագրության նվազեցումն իրականացվում է հետևյալ կերպ.

- եթե ամփոփման արդյունքում ներկայացված բոլոր հայտերում նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակը, ապա առաջնայնությունը տրվում է ավելի վաղ ներկայացված հայտերին:
- տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակին համապատասխան քանակությունը լրացնող վերջին հայտը կարող է բավարարվել մասնակիորեն:

Այս դեպքում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարները վերադարձվում են դիմորդին՝ նրա կողմից Բանկ ներկայացված դիմումի հիման վրա:

գ. Այն նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել ձեռքբերման (բաժանորդագրության) հայտերում: Այդ սահմանաչափերը կարող են նշվել կամ որպես արժեթղթերի նվազագույն և առավելագույն թույլատրելի քանակներ, կամ որպես ձեռքբերման նվազագույն և առավելագույն թույլատրելի համախառն գումարներ.

Բաժնետոմսերի բաժանորդագրության նվազագույն և առավելագույն մեծությունների (Գնման հայտերում նշվող գումարների) վերաբերյալ սահմանափակումներ չկան:

է. Այն ժամանակաշրջանը, որի ընթացքում հայտը կարելի է հետ կանչել՝ նախատեսելով, որ ներդրողները կարող են հետ ստանալ բաժանորդագրության վճարները.

Ներդրողների կողմից ներկայացված հայտերը հետկանչման ենթակա չեն:

ը. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը.

Բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են՝ մուտքագրվելով կամ փոխանցվելով Բանկում բացված 163003702772 հաշվեհամարին:

Բաժնետոմսերի սեփականության իրավունքը գրանցվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության կողմից, իսկ սեփականության իրավունքը հավաստող քաղվածքները տրամադրվում են «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպության կողմից հաստատված կարգով և ժամկետներում: Ներդրողը սեփականության իրավունքի գրանցման, ինչպես նաև սեփականության իրավունքը հավաստող քաղվածքի տրամադրման դիմաց վճարում է համաձայն «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից սահմանված սակագների: Գնորդի՝ բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում կամ ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված ցանկացած այլ պահառուի մոտ գնորդի անունով այդ բաժնետոմսի գրանցման պահից, սակայն դրանից բխող իրավունքները գնորդը կարող է իրացնել տեղաբաշխման ամբողջ գործընթացի ավարտից ու Բանկի ընդհանուր ժողովի կողմից տեղաբաշխման արդյունքներն ամփոփելուց և լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման հետևանքով Բանկի կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը (նոր խմբագրությամբ կանոնադրությունը) ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո:

Բաժնետոմսերը գնորդի հաշվին փոխանցում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն Բանկի կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը (նոր խմբագրությամբ կանոնադրությունը) ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

թ. Առաջարկի արդյունքների հրապարակման ձևի և ժամկետների ամբողջական նկարագրությունը.

Բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

ժ. Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը.

Համաձայն օրենսդրության և բանկի կանոնադրության հայտարարված սովորական բաժնետոմսերի բաց տեղաբաշխման որոշում ընդունվելու դեպքում՝ սովորական բաժնետոմսերի սեփականատերերը ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն տեղաբաշխվող սովորական բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք:

Նախապատվության իրավունքի իրականացման հնարավորության մասին սովորական բաժնետոմսերի սեփականատերերը տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն 30 օր առաջ ծանուցվում են սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման վերաբերյալ՝ ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրենց նախապատվության իրավունքը իրականացնում են սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումը սկսվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ Բանկին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա/ բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.

բ/ ձեռք բերվող սովորական բաժնետոմսերի քանակը.

գ/ձեռք բերվող սովորական բաժնետոմսերի քանակին համապատասխան սովորական բաժնետոմսերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերի կողմից իրենց նախապատվության իրավունքի իրականացումից հետո գնման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամկետի հերթականության:

2) Տեղաբաշխման պլանը

ա. Բաժնետոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Բանկի բաժնետոմսերի առաջարկն իրականացվելու է բաց բաժանորդագրության և ազատ վաճառքի սկզբունքով՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ միջոցով:

բ. Բանկի խոշոր բաժնետերերի, կառավարման մարմնի անդամների կամ որևէ այլ անձի կողմից նախատեսվող 5 և ավելի տոկոս բաժանորդագրության վերաբերյալ Բանկը տեղեկություններ չունի:

գ. Բանկի բաժնետոմսերում ներդրողն իր կողմից Տեղաբաշխողին ներկայացված Հայտի բավարարման մասին տեղեկացվում է Հայտի ներկայացման պահին:

դ. Մանր ներդրողների, ինստիտուցիոնալ ներդրողների կամ թողարկողի աշխատակիցների համար առանձին տրանշ նախատեսված չէ:
ե. Գնման հայտերը բավարարվում են ըստ ներկայացման ժամանակագրական հերթականության՝ սովորական բաժնետոմսերի սեփականատերերի կողմից իրենց նախապատվության իրավունքի իրականացումից հետո:

Եթե ամփոփման արդյունքում ներկայացված բոլոր հայտերում նշված բաժնետոմսերի քանակը գերազանցում է տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակը, ապա առաջնայնությունը տրվում է ավելի վաղ ներկայացված հայտերին:

Տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակին համապատասխան քանակությունը լրացնող վերջին հայտը կարող է բավարարվել մասնակիորեն:

Հայտը կարող է մերժվել հետևյալ դեպքերում.

- ✓ Բաժնետոմսերի ձեռքբերման/բաժանորդագրման նպատակով ներդրողի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են կամ կեղծ,
- ✓ տվյալ ներդրման համար օրենսդրությամբ պահանջվում է ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության ստացում և Կենտրոնական բանկը մերժել է նախնական համաձայնության տրամադրումը,
- ✓ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակն սպառվել է:

Այս դեպքում դիմորդների (հայտ ներկայացրած ներդրողների) կողմից վճարված գումարների հետ վերադարձման նպատակով Տեղաբաշխողի հաշվից համապատասխան գումարը վճարվում է ներդրողին:

3) Առաջարկի գինը

ա. Բանկի խորհրդի կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկվող բաժնետոմսերի տեղաբաշխման գինը սահմանված է 5,360 ՀՀ դրամ (տեղաբաշխման գինը հաշվարկված է հիմք ընդունելով 2024թ. 1-ին եռամսյակի «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ֆինանսական հաշվետվությունների տվյալները):

Բաժանորդագրության ընթացքում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից մատուցվող խորհրդատվական և բաժանորդագրության գործընթացի հետ կապված այլ ծառայությունների դիմաց ներդրողը որևիցե ծախս չի կատարում: «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից սահմանված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ www.amx.am:

բ. Առաջարկի գինը ներդրողին հասանելի է դառնում սույն ազդագրի միջոցով:

4) Տեղաբաշխումը

ա. Բաժնետոմսերի երաշխավորված տեղաբաշխում (անդերռայթինգ) չի իրականացվելու:

բ. այն անձանց անվանումները և գտնվելու վայրերը, որոնք համաձայնել են իրականացնել չերաշխավորված տեղաբաշխում, այդ թվում՝ լավագույն ջանքերի սկզբունքով տեղաբաշխում.

Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխումն իրականացվելու է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից:

« ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ » ԲԲԸ,
ՀՀ, ք. Երևան 0002, Ամիրյան 23/1:

գ. երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները և տեղաբաշխման համար գանձվող միջնորդավճարները: Եթե

երաշխավորված տեղաբաշխման պայմանագիրը թողարկման ոչ լրիվ ծավալն է ընդգրկում, ապա պետք է նշել թողարկման այն մասը, որը չի ծածկում այդ պայմանագիրը: Այստեղ պետք է նշել նաև յուրաքանչյուր տեղաբաշխողի մասը տեղաբաշխման ընդհանուր ծավալում.

Բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխումն իրականացվելու է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կողմից:

դ. երբ է կնքվել կամ երբ է նախատեսվում կնքել երաշխավորված տեղաբաշխման (անդերռայթինգի) պայմանագիրը.

Բաժնետոմսերի երաշխավորված տեղաբաշխում (անդերռայթինգ) չի իրականացվելու:

ե. Բաժնետոմսերի բաժանորդագրության դիմաց վճարումները կատարվում են դրամով, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 163003702772 հաշվեհամարին միանվագ մուտքագրման կամ փոխանցման կարգով: Բաժնետոմսերի գրանցման և հաշվառման նպատակով արժեթղթերի համապատասխան հաշիվները բացվում են «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորների միջոցով, որոնց ցանկը և հասցեները տեղադրված են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ պաշտոնական ինտերնետային կայքում www.amx.am:

5. ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ «B» հարթակում (ցուցակում) առևտրին թույլտվություն: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Առևտրին թույլտվության հայցը ներկայացվելու է տեղաբաշխման ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:
Արժեթղթերի ցուցակման մասին որոշման կայացման գործընթացը կանոնակարգված է «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» կանոնների 16-րդ գլխով:

2) Բանկի սովորական բաժնետոմսերը ցուցակված են «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ «B» հարթակում (ցուցակում):
3) Առաջարկվող կամ առևտրին թույլտվության առարկա արժեթղթերի մասով երկրորդային շուկայում իրացվելիություն ապահովելու (շուկա ստեղծող հանդիսանալու) պարտավորություն ունեցող անձինք չկան:
4) Գնի կայունացմանն ուղղված միջոցառումներ չեն նախատեսվում:

6. ՎԱՃԱՌՈՂ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

Սույն ազդագրի միջոցով ներկայիս բաժնետերերին պատկանող բաժնետոմսերի վաճառքի առաջարկ չի նախատեսվում: Առաջարկը վերաբերում է միայն Բանկի կողմից լրացուցիչ տեղաբաշխվող սովորական անվանական բաժնետոմսերին:

7. ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿԻ ԾԱԽՍԵՐԸ

Հնարավոր ներգրավվող զուտ գումարների մեծությունը հաշվարկվում է որպես հավաքագրված համախառն գումարների և հավաքագրման նպատակով կատարված ծախսերի տարբերություն: Հնարավոր հավաքագրվող համախառն գումարները Բանկի

գնահատմամբ կկազմեն 2,000,003,600 ՀՀ դրամ: Հավաքագրման նպատակով կատարված ծախսերը հետևյալն են՝ ազդագրի գրանցման պետական տուրքը՝ 50.0 հազ. դրամ:

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1) ներկայացվող տեղեկատվության հետ կապված խորհրդատուներ չեն ներգրավվել:
2) Անկախ աուդիտորի կողմից սույն բաժնի տվյալները առանձին աուդիտի ենթարկված չեն:
3) Փորձագետ կամ խորհրդատու, որի կարծիքը օգտագործվել է հայտարարագրում կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն՝ առկա չէ:

ԲԱԺԻՆ 3. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԸ

1) Բանկի 2021թ.-ի, 2022թ.-ի և 2023թ.-ի գործունեության աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, որի գտնվելու վայրը և կապի միջոցներն են.
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ
Տնօրեն/բաժնետեր՝ Արմեն Հովհաննիսյան
ՀՀ, ք. Երևան 0015, Գրիգոր Լուսավորիչ 9, «Երևան Պլազա» բիզնես կենտրոն, հեռ. +374(10) 500 964, +374(10) 500 961, www.grantthornton.am:
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի» անդամ:

2) Եթե պատմական ֆինանսական ժամանակաշրջանում բանկի աուդիտորները փոփոխվել են, հեռացվել են կամ նորից չեն ընտրվել որպես աուդիտոր, ապա նշել դրա հիմնական պատճառները.

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում բանկի աուդիտորները չեն փոփոխվել:

2. ՌԻՍԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բանկում ներդրված ռիսկերի կառավարման ճկուն համակարգը ենթարկվում է շարունակական կատարելագործման՝ ելնելով կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով գործունեության ծավալման նպատակներից: Բանկում ձևավորված ռիսկերի կառավարման համակարգի զարգացման և կատարելագործման հերթական փուլը Բանկի գործունեության և այն կանոնակարգող ներքին իրավական ակտերի համապատասխանեցումն էր ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) միջազգային ստանդարտի պահանջներին:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Ակտիվների և պասիվների կառավարման գործընթացի հիմքում ընկած են մշակված և շարունակաբար կատարելագործվող մաթեմատիկական մոդելների միջոցով իրականացվող վերլուծությունները՝ ուղղված կառավարման արդյունավետության բարձրացմանը և ռիսկերի զսպման մեխանիզմների կիրառմանը: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները: Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները սահմանված են բանկի ներքին իրավական ակտերում՝ զուգակցելով դրանք բանկի համախառն ռիսկի գնահատման և դրա օպտիմալ կառավարման միջոցառումների սահմանմամբ: Բանկի ռիսկերի կառավարման

համակարգը ներքին և արտաքին միջավայրերում տեղի ունեցող փոփոխություններին, բանկի ռազմավարական խնդիրներին և իրականացվող գործառնությունների ծավալային և որակական բնութագրերին համապատասխանեցնելու նպատակով ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերը պարբերաբար վերանայվում են:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- **<u>վարկային ռիսկ</u>**: Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգ՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման, գրավի արժեզրկման և նման այլ պատճառներով, որի արդյունքում Բանկը կարող է ֆինանսական կորուստներ կրել:
- **<u>շուկայական ռիսկ</u>**
  - **<u>տոկոսադրույքների փոփոխման ռիսկ</u>**: Տոկոսադրույքի փոփոխման ռիսկը շուկայում տոկոսադրույքների փոփոխության բացասական ազդեցության հավանականությունն է Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի տնտեսական արժեքի վրա:
  - **<u>արտարժութային ռիսկ</u>**: Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:
  - **Գնային ռիսկը** որևէ բորսայում(ներում) ցուցակված, բանկի հաշվեկշռում շուկայական ընթացիկ գներով արտացոլվող կապիտալի գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով Բանկի կողմից ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ կապիտալի գործիքի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):
- **<u>իրացվելիության ռիսկ</u>**: Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու:
- **<u>գործառնական ռիսկ</u>**: Գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ՝ առաջացած կամ պայմանավորված Բանկի անձնակազմի ոչ համարժեք /արհեստավարժության պակաս/, կամ սխալ /պատահական, միտումնավոր/ գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով /սարքավորումների տեխնիկական անսարքություն, ընթացակարգերի անկատարություն/, ինչպես նաև անբարենպաստ արտաքին միջավայրի գործողություններով և իրավիճակներով /խարդախություն, տարերային աղետ/:
- **Համբավի ռիսկը** Բանկի բարի համբավի, հասարակական կարծիքի և հաճախորդների և/կամ գործընկերների կողմից վերաբերմունքի վատթարացման հետևանքով հնարավոր կորուստների վտանգն է:

- **Վարակի ռիսկը** որևէ տնտեսվարող սուբյեկտի մոտ կամ տնտեսության ոլորտում առաջացած խնդիրների հնարավոր շղթայական ազդեցությունն է այլ տնտեսվարող սուբյեկտ(ներ)ի կամ տնտեսության ոլորտ(ներ)ի վրա, որը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա:
- **Ռազմավարական ռիսկը** հեռանկարային զարգացման ուղղության սխալ ընտրության և սխալ ռազմավարական որոշումների կայացման ռիսկն է, որի արդյունքում ռազմավարական զարգացման նպատակների իրականացումը կարող է հանգեցնել կորուստների կամ չի կարող ապահովել կանխատեսվող արդյունքները:
- **Օրենսդրական, նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկը** կարող է ոչ բարենպաստ ազդեցություն ունենալ Բանկի գործունեության վրա, խստացնելով կամ բարդացնելով գործընթացները, ներառյալ հարկային դաշտի փոփոխությունը իր երկակի ազդեցությամբ՝ թե՛ Բանկի հաճախորդների, թե՛ Բանկի հարկման ռեժիմի փոփոխության առումով:
- **Երկրի ռիսկը** այլ երկրում տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և/կամ քաղաքական պայմանների կամ իրադարձությունների բացասական ազդեցությունն է Բանկի ռիսկի պրոֆիլի, իրացվելիության, կապիտալի և/կամ շահույթի վրա:

Բանկում ներդրված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս գնահատել և օպտիմալ կառավարել **վարկային ռիսկը՝** որպես էկզոգեն փոփոխականներ ներառելով նաև էքսպերտային գնահատականները և նպաստելով վարկերի տրամադրման հիմնավորված որոշումների կայացմանը: Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում է սթրես թեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

Տոկոսադրույքների փոփոխության ռիսկը գնահատվում է միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի» միջոցով՝ տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի և ժամկետայնության ճեղքվածքների վերլուծության հիման վրա: «Դյուրացիայի մոդելի» հիման վրա տոկոսադրույքի փոփոխման ռիսկը գնահատվում է ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ցուցանիշների կիրառմամբ՝ դիտարկելով դյուրացիան որպես տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների զգայունության գնահատման գործիք: Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա դրանց տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից: Նշված մոդելները հնարավորություն են տալիս իրականացնել ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարում՝ հեջավորելով տոկոսադրույքի ռիսկը:

Բանկում **իրացվելիության ռիսկի** կառավարումն իրականացվում է ակտիվա-պասիվային գործառնությունների՝ ըստ ժամկետների և ծավալների տեղաբաշխվածության կարգավորման և օրական դրամական հոսքերի համապատասխանեցման միջոցով՝ պահպանելով իրացվելիության և շահութաբերության օպտիմալ հարաբերակցությունը: Ժամկետայնության ճեղքվածքների հիմնադրույթի կիրառման հիման վրա Բանկում

ներդրված իրացվելիության ցուցանիշների գնահատման և կառավարման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում հաշվարկված ակնթարթային, մինչև 90 օր և մինչև 1 տարի կուտակային իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ազդեցությունը Բանկի իրացվելիության վրա, որը հիմք է հանդիսանում ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար: Սթրես թեստավորման սցենարային մոդելը հնարավորություն է տալիս գնահատել իրացվելիության նորմատիվների վրա շոկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցությունը: Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը, քվանտիլային վերլուծության հիման վրա, հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների կենտրոնացումների մակարդակները՝ կիրառելով մշակված կենտրոնացումների գործակիցները և հաճախորդների միջև ավանդների բաշխվածության վերլուծական գրաֆիկները:

Բանկում **արտարժութային ռիսկի** կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա: Բանկի արտարժութային քաղաքականությունը միտված է արտարժութային դիրքերի արդյունավետ կառավարման ապահովմանը՝ զուգակցելով այն արդարացված ռիսկի մակարդակի հետ:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- ✓ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,
- ✓ հնարավոր կորուստների գնահատում,
- ✓ հեջավորման գործիքների կիրառում,
- ✓ ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- ✓ կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Բանկային հիմնական և օժանդակ բիզնես-գործընթացների յուրաքանչյուր բաղադրիչ գործառնությունը պարունակում է որոշակի մակարդակի **գործառնական ռիսկ**, որը կարող է հանգեցնել ինչպես փոքր, այնպես էլ Բանկի համար էական չափերի հասնող կորուստների, որով էլ պայմանավորված է գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման կարևորությունը և առաջնային նշանակությունը բանկերի համար: Գործառնական ռիսկի հսկողության արդյունավետ համակարգի կիրառումն այդ ռիսկի օպտիմալ կառավարման կարևորագույն գործոններից է, որն ապահովվում է օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառույթների վերհանման, հնարավոր ռիսկերի բացահայտման և պատասխանատու մարմիններին դրանց մասին տեղեկացման միջոցով:

Հեղինակության ռիսկն արտահայտվում է ֆինանսական և բիզնես ռիսկերի ազդեցության ներքո Բանկի հեղինակության վատթարացմամբ: Ֆինանսական և բիզնես ռիսկերը կառավարելիս հաշվի է առնվում դրանց պոտենցիալ ազդեցությունը հեղինակության ռիսկի վրա: **Վարկի ռիսկը** գնահատվում է արտարժութային, վարկային, իրացվելիության,

տոկոսադրույքի փոփոխման և գնային ռիսկերի համատեղ դիտարկման միջոցով: Վարակի ռիսկի գնահատման համար կիրառվում է սթրես թեստավորում, որի սթրես թեստերի սցենարները (շոկային վիճակի լրջությունը, ռիսկատեսակների միջև փոխկապվածությունը և այլն) կազմվում են էքսպերտային եղանակով:

Օրենսդրական, նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկի կառավարումը ենթադրում է իրավասու մարմինների հետ համագործակցություն և համապատասխան վերլուծական տեղեկանքների պատրաստում, Բանկի արագ և ճկուն արձագանքման միջոցառումների իրականացում:

Ռիսկերի վերաբերյալ առավել մանրամասն բացահայտումները ներկայացված են Բանկի հրապարակվող հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

1) Բանկի պատմությունը և զարգացումը

ա. բանկի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցված ապրանքանիշերը: Եթե բանկի կանոնադրությամբ տրված են բանկի անվանման տարբերակներ օտար լեզուներով, նշվում են նաև դրանք: Եթե բանկի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը կամ բանկը վերակազմակերպվել է, ապա ներկայացնել այդ մասին տեղեկատվություն.

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է.
հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱԺ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
անգլերեն՝ «ARMENIAN ECONOMY DEVELOPMENT BANK» OPEN JOINT STOCK COMPANY
ռուսերեն՝ «БАНК РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ АРМЕНИИ» ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է

հայերեն՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

անգլերեն՝ «ARMECONOMBANK» OJSC
ռուսերեն՝ «АРМЭКОНОМБАНК» ОАО

Բանկի կազմակերպական-իրավական ձևը՝ բաց բաժնետրիրական ընկերություն:

Բանկի գրանցված ապրանքանիշ՝ Բանկի ապրանքային նշանը (Մտավոր սեփականության գործակալության գրանցման վկայագիր № 13637):

1987թ. ստեղծված նախկին ԽՍՀՄ Բնակսոցբանկի Հայկական Հանրապետական Բանկի հիման վրա ՀՀ Նախարարների խորհրդի 14.02.91թ. թիվ 115 որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանարապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (1991-93թթ. «Հայպետառբանկ» ՓԲԸ) 1993 թվականի դեկտեմբերի 28-ն վերագրանցվել է որպես «Հայաստանի Էկոնոմիկայի զարգացման բաժնետրիական բանկ»: Հայէկոնոմբանկի բաժնետերերի 1995թ. մարտի 14-ին կայացած ընդհանուր ժողովի որոշմամբ այն վերակազմավորվել է «Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ):

<<ԲՏԱ բանկ>> ՓԲԸ–ն հանդիսացել է <<ԲՏԱ ԻնվեստԲանկ>> ՓԲԸ իրավահաջորդը (ֆիրմային անվանումը փոխվել է <<ԲՏԱ ԻնվեստԲանկ>> ՓԲԸ բաժնետերերի

ընդհանուր ժողովի 13.08.2008թ. թիվ 3 արձանագրությամբ), որն իր հերթին հանդիսացել է <<Միջազգային Ինվեստիցիոն Բանկ>> ՓԲԸ իրավահաջորդը (ֆիրմային անվանումը փոխվել է <<Միջազգային Ինվեստիցիոն Բանկ>> ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի 16.05.2005թ. թիվ 1 արձանագրությամբ) <<Միջազգային Ինվեստիցիոն Բանկ>> ՓԲԸ-ն իր հերթին հանդիսացել է վերակազմավորված <<Սևան Բանկ>> ՓԲԸ իրավահաջորդը, որը կազմավորվել է <<Սևան Բանկ>> ՓԲԸ հիմնադիրների (փայատերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ՝ 01.06.1991թ. Հիմնադիր պայմանագրի համաձայն:

Բանկի և <<ԲՏԱ բանկ>> ՓԲԸ–ի բաժնետերերի 18.03.2016թ. ընդհանուր ժողովների որոշումների համաձայն երկու բանկերի միջև 06.06.2016թ. ստորագրվել և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 14.06.2016թ. հաստատվել է <<ԲՏԱ Բանկ>> ՓԲԸ–ի Բանկին միացման պայմանագիր, երկու բանկերի բաժնետերերի 13.08.2016թ. համատեղ ժողովի կողմից հաստատվել և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 24.08.2016թ. գրանցվել է փոխանցման ակտը և միացման արդյունքում որպես պահպանվող բանկ ու <<ԲՏԱ բանկ>> ՓԲԸ–ի իրավահաջորդ է համարվում Բանկը:

բ. Բանկի պետական գրանցման վայրը և համարը.

Բանկի պետական գրանցման վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1, գրանցման համարը՝ 1:

գ. ստեղծման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու ժամանակահատվածը (եթե հնարավոր է որոշել).

Բանկը /նախկին ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկ/ Հայաստանի Հանրապետության պետական բանկերից առաջինն է վերակազմավորվել բաժնետիրական բանկի.

1991թ. փետրվարի 14-ի ՀՀ Մինիստրների խորհրդի No115 որոշմամբ ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկի հիման վրա ստեղծվել է Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկ (Հայպետկոմբանկ):

Բանկը փաստացի գործունեությունն սկսել է իրականացնել 1987թ.-ից մինչ օրս՝ շուրջ 37 տարի:

դ. բանկի գտնվելու վայրը, օրենսդրությունը, որի ներքո բանկը գործունեություն է ծավալում, բանկի հիմնադրման երկիրը, կանոնադրությամբ նշված գտնվելու վայրը, փաստացի գործունեություն ծավալելու վայրը, եթե տարբերվում է կանոնադրությամբ նշված գտնվելու վայրից, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ), ինտերնետային կայքը,

Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 23/1:
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:
Օրենսդրությունը, որի ներքո թողարկողը գործունեություն է ծավալում՝ ՀՀ օրենսդրություն:
Կապի միջոցները՝

հեռ. (+374 10) 510 910
էլ. փոստ bank@aeb.am
ինտերնետային կայք www.aeb.am

Բանկն ունի 53 մասնաճյուղ:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է մասնաճյուղերի գործունեության հասցեները.

N	ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ	ՀԱՍՑԵ
1	ՇԵՆԳԱՎԻԹ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0026, ք. Երևան, Գարեգին Նժդեհի փող 28
2	ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0001, ք. Երևան, Աբովյան փող. 22
3	ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0056, ք. Երևան, Նորքի 1-ին մ/շ 14/15 շենք
4	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0057, ք. Երևան Կոմիտասի փող. 57 շենքի, թիվ 23 շինություն
5	ԷՐԵԲՈՒՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0005, ք. Երև ան, Արցախի փող. 24
6	ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0025, ք. Երևան, Իսահակյան փող. 12
7	ՇԱՀՈՒՄՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0088, ք. Երևան, Մազմանյան փող. հ.5
8	ՄԵՏԱՔՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0065, ք. Երևան, Սեբաստիայի փող. 23ա
9	ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0018, ք. Երևան, Տիգրան Մեծի փ., թիվ 49 և թիվ 49 շինություն1
10	ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0010, ք. Երևան, Արամի փ., թիվ 3 և 5 շենք
11	ԷՐԵԲՈՒՆԻ-1 ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0087, ք. Երևան, Տիտոգրադյան փ. 14
12	ՆԱԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0015, ք. Երևան, Պարոնյան փ. 21
13	ԱՋԱՓՆՅԱԿ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0078, ք. Երևան, Աջափնյակ,Մարգարյան փողոց 14 շենք,57 տարածք
14	ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0047, ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորքի Այգիներ փողոց, N 238 բնակելի տուն
15	ՌՈՍԻԱ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0010, ք. Երևան,Տիգրան Մեծի պող. N16
16	ՋԵՅԹՈՒՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0069, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Դ. Անհաղթի փ. թիվ 11/1 և 11/2
17	ՍԱՐԱՋՈՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի փ. 25 շենք թիվ 27 շինություն և Տիգրան Մեծի փ. 25 շենք թիվ 24 շինություն
18	ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0071, ք. Երևան, Նուբարաշեն 7 փողոց, համար 2
19	ԳՅՈՒՄՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3104, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Աբովյան փող. N 244
20	ՎԱՆԱՁՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պող. 59
21	ԱԲՈՎՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2207, ք. Աբովյան, Ինտերնացիոնալ փող. 1 շենք, թիվ 29-32 շինություն
22	ԱՐՏԱՇԱՏ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0701, ք. Արտաշատ, Աթարբեկյան փող. 135/3
23	ԱՐՄԱՎԻՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0901, ք. Արմավիր, Ջիվանու փող. 8
24	ՀՐԱԶԴԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2301, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապ. թ.2/3
25	ԷՋՄԻԱԾԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1101, ք. Էջմիածին, Մաշտոցի փող. 8 և Մաշտոցի փող. թիվ 8ա/28 խանութ
26	ՍԵՎԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1501, ք. Սևան, Նաիրյան փող. 141-3
27	ԹՈՒՄԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1701, ք. Ալավերդի, Թումանյան փող. 44 բանկ
28	ԱՇՏԱՐԱԿ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0201, ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապարակ N6 շենք
29	ՆԱԻՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2401, ք. Եղվարդ, Երևանյան փող. 10ա
30	ՄԱՐՏՈՒՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1401, ք. Մարտունի, Գ.Նժդեհի փող. 2ա
31	ՍՊԻՏԱԿ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1804, ք. Սպիտակ, Շահումյան 5

32	ԳՈՐԻՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3201, ք. Գորիս, Մաշտոցի փող. 4
33	ԱՐԱՐԱՏ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0602, ք. Արարատ, Շահումյան փող. 38
34	ԻՋԵՎԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 4001, ք. Իջևան, Անկախության փ. թիվ 1Բ
35	ՇԻՐԱԿ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3126, ք. Գյումրի, Պ. Սևակի փող., թիվ 2 շենք, թիվ 3 տարածք
36	ԵՂԵԳՆԱՁՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3601, ք. Եղեգնաձոր, Նարեկացի փող. թիվ18
37	ԳԱՎԱՌ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 1201, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ N10
38	ՀՐԱԶԴԱՆ-ՄԻԿՐՈ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 2302, ք. Հրազդան, Բաղրամյան պող. Անդրանիկի 140
39	ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0069, ք. Երև ան, Դրոյի 3
40	ՍԱԽԱՐՈՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ 0010, ք. Երևան, Նալբանդյան 48/1
41	ՆԱՆՈ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0001, ք. Երևան, Թումանյան 32 տարածք 37
42	ԿՈՄԻՏԱՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0033, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 3 շենք, 47 տարածք
43	ԵՐԵՎԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ,0026, ք. Երևան, Սմբատ զորավարի 11/1
44	ԿՈՏԱՅՔ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ,2205, ք. Աբովյան, Հատիսի փող. 1/80/8
45	ԿԱՊԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 3302, ք. Կապան, Շահումյան փող., 29/1,4,29/7
46	ԴԱՎԹԱՇԵՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0054, ք. Երևան, Դավթաշեն, Տիգրան Պետրոսյան փ. 44/2
47	ՄԱԼԱԹԻԱ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0004, ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Անդրանիկի փ. 10/1 և ՀՀ, 0004, ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Անդրանիկի փ. 141/1
48	ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0082, ք. Երևան, Կենտրոն Ծովակալ Իսակովի պողոտա 10
49	ԱՎԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0063, ք. Երևան, Ավան Մ. Խուդյակովի փողոց 177/7
50	ՌՈՍԻԱ-1 ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 16/4
51	ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0086, ք. Երևան, Շենգավիթ, Արտաշեսյան պողոտա 86/2
52	ՔԱՆԱՔԵՌ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0091, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն հ-ք, Զ. Քանաքեռցու փող. թիվ 131 հասցե
53	ՍԻԼԱՉԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ	ՀՀ, 0018, ք. Երևան, Կենտրոն, Նար-Դոսի փողոց 2 վարչական շենք

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի: Մասնաճյուղերին տրված լիազորությունները գործում են անժամկետ:

ե. բանկի բիզնեսի զարգացման մեջ տեղի ունեցած կարևոր դեպքերը՝ ըստ բանկի:

Բանկը (նախկին ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկ) Հայաստանի Հանրապետության պետական բանկերից առաջինն է վերակազմավորվել բաժնետիրական բանկի:

1991թ. փետրվարի 14-ի ՀՀ Մինիստրների խորհրդի №115 որոշմամբ ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական հանրապետական բանկի հիման վրա ստեղծվել է Հայաստանի Հանրապետության պետական ակցիոներական կոմերցիոն բանկը (Հայպետկոմբանկ):

1991թ. օգոստոսի 9-ի ՀՀ Մինիստրների խորհրդի №509 որոշմամբ բանկը վերակազմավորվել է Հայաստանի Հանրապետության պետական կոմերցիոն բանկ

(Հայպետկոմբանկ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գրանցվելով ՀՀ Կենտրոնական բանկում 1991թ. օգոստոսի 26-ին (գրանցում Թիվ 1):

1992թ. նոյեմբերի 16-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու №1 լիցենզիա:

1992թ. դեկտեմբերի 4-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր լիցենզիա №13:

1993թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ ԿԲ վարչության նսիտի որոշմամբ (արձանագրություն №40) Հայպետկոմբանկը վերագրանցվել է Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բաժնետիրական բանկի (Հայէկոնոմբանկ) (գրանցում՝ Թիվ 1/35)՝ ստանալով Թիվ 1/35 բանկային գործառնությունների իրականացման Արտոնագիր:

1994թ. հունվարի 21-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր լիցենզիա №13:

1995թ. ապրիլի 6-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է Թիվ 1 արտարժույթով գործառնություններ իրականացնելու Գլխավոր արտոնագիր:

1996թ. հոկտեմբերի 31-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

1998թ. հունիսի 8-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

2001թ. նոյեմբերի 14-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործունեության լիցենզիա Թիվ 1:

2002թ. Բանկի բաժնետոմսերը ցուցակվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի «B» հարթակում, կանոնադրական հիմնադրամը համալրվել է 300 մլն դրամով:

2003թ. Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 200 մլն դրամով:

2004թ. Բանկի ու Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD) միջև կնքվեց պայմանագիր, որով սկսվեց Բանկի կանոնադրական կապիտալում ՎԶԵԲ-ի մասնակցության գործընթացը, որի արդյունքում ՎԶԵԲ-ի մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կկազմի 25%+1 բաժնետոմս:

2005թ. Կանոնադրական հիմնադրամը համալրվել է 633.3 մլն դրամով:

2007թ. Փետրվարին Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ Բանկին շնորհեց ֆինանսական կայունության E+ և երկարաժամկետ ՀՀ դրամով ու արտարժույթով ավանդների B1 վարկանիշներ, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար): Ապրիլին, վերանայելով շնորհված վարկանիշները, Moody's Investors Service միջազգային վարկանիշային ընկերությունը Բանկին արժանացրել է ավելի բարձր՝ ֆինանսական կայունության D- և ՀՀ դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների Ba3 վարկանիշների, երկուսն էլ Stable Outlook-ով (կայուն հեռանկար):

2009թ. Բանկը դարձել է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի անդամ:

2011թ. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկն իրենց գործառույթներով հնարավոր առավելագույն ժամկետով (ևս երեք տարով) երկարաձգեց իր մասնակցությունը (25% +1 բաժնետոմս) Բանկի կանոնադրական կապիտալում: Բանկը դարձել է "VISA" միջազգային վճարահաշվարկային համակարգի անդամ:

2013թ. Բանկը ստացել է ISO/IEC 27001:2005 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագիր: «MoneyGram» վճարահաշվարկային համակարգը Բանկին շնորհեց «Գերազանցության որակ» երկարաժամկետ և արդյունավետ համագործակցության հավաստագիր: Գերմանական Commerzbank AG-ն Բանկին շնորհեց «Որակի գերազանցության» մրցանակ՝ 2013թ. միջազգային փոխանցումների բարձր որակ ապահովելու, ինչպես նաև անթերի և արագ իրականացնելու համար:

2014թ. Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում Բանկին շնորհեց «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակ:

2014 թվականի դեկտեմբերի 3-ին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ), պարոն Սարիբեկ Սուքիասյանը, պարոն Ռոբերտ Սուքիասյանը, պարոն Խաչատուր Սուքիասյանը եւ Բանկը կնքել են բաժնետոմսերի գնման պայմանագիր, որով ՎԶԵԲ-ը համաձայնել է վաճառել իր 233,335 սովորական բաժնետոմսերը հինգ հավասար մասնաբաժիններով (46,667 ամեն տրանշ) հինգ տարվա ընթացքում՝ սկսած 2014 թվականի դեկտեմբերից մինչև 2019-ի մարտի 2-ը:

2015 թ. Բանկը դարձել է արժեթղթերի հաշվարկային համակարգի անդամ: «MoneyGram» վճարահաշվարկային համակարգը Բանկին շնորհել է «Պրոֆեսիոնալիզմի և Հայաստանում փոխանցման ծառայությունների զարգացմանը նպաստելու համար» հավաստագիր: Բանկի և Ղազախստանի «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ի ղեկավարների միջև ստորագրվեց երկու բանկերի միացման հուշագիր՝ ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող «ԲՏԱ բանկ» ՓԲԸ-ն Բանկին միացնելու նպատակով:

2016թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 2,297,995 հազ. ՀՀ դրամով: ՀՀ ԿԲ որոշման համաձայն «ԲՏԱ Բանկ» ՓԲԸ-ն միացավ Բանկին, որի արդյունքում Բանկի կապիտալն ավելացավ 5,294,232 հազ. դրամով, իսկ մասնաճյուղային ցանցը՝ 6 մասնաճյուղով: Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում Բանկին շնորհել է «Հայաստանում Առաջատար Գործընկեր Բանկ» մրցանակը:

2017թ. Բանկի էմիսիոն եկամուտներից՝ 9,077,411,700 ՀՀ դրամ ուղղվեց կանոնադրական կապիտալի ավելացմանը, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 13,708,744,2 հազ. ՀՀ դրամ և դրա հաշվին 4,900 ՀՀ դրամի չափով ավելացավ մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը՝ 2,500 ՀՀ դրամից դառնալով 7,400 ՀՀ դրամ: Ասիական Զարգացման Բանկը Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում երրորդ տարին անընդմեջ Բանկին շնորհեց «Հայաստանում Առաջատար Գործընկեր Բանկ» մրցանակը: Բանկը ընդգրկվեց ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2018թ. համար հաստատած «Պետական պարտքի կառավարման գործակալների» ցանկում և 2018թ.-ից հանդես կգա որպես Պետական պարտքի կառավարման գործակալ:

2018թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 3,000,000.0 հազ. ՀՀ դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 16,708,744,200 ՀՀ դրամ: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի էմիսիոն եկամուտներից՝ 33,438,300 ՀՀ դրամ, չբաշխված շահույթից՝ 2,524,160,700 ՀՀ դրամ և Գլխավոր պահուստից՝ 3,000,000,000 ՀՀ դրամ ուղղվեց կանոնադրական կապիտալի ավելացմանը, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 22,266,343,2 հազ. ՀՀ դրամ և դրա հաշվին 3,000 ՀՀ դրամի չափով ավելացավ մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը՝ 7,400 ՀՀ դրամից դառնալով 10,400 ՀՀ դրամ:

2019թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 3,369,000.0 հազ. ՀՀ դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 25,635,343,200 ՀՀ դրամ: «Moody's Investors Service» միջազգային վարկանիշային ընկերությունը բարելավեց «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին շնորհած վարկանիշները՝ սահմանելով երկարաժամկետ գործընկերոջ ռիսկի վարկանիշը՝ **Ba3**, երկարաժամկետ/կարճաժամկետ ավանդի վարկանիշը՝ **B1/NP**, հեռանկարը՝ **կայուն**: Երևանում կայացած «Visa Recognation Award» մրցանակաբաշխության ժամանակ Բանկը «VISA» միջազգային վճարային համակարգի կողմից արժանացավ «Պրեմիում դասի քարտատեսակը խթանող լավագույն բանկ» մրցանակին (Contribution in Promoting VISA Premium Benefits):

2020թ. Բանկի Կանոնադրական կապիտալը (ներառյալ էմիսիոն եկամուտը) համալրվել է 320,320.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց

25,955,663,200 դրամ: Բանկն արժանացավ Ասիական Զարգացման Բանկի «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակին՝ առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում տարվա ընթացքում իրականացրած գործարքների համար: Բանկը «Asian Banking & Finance Awards 2020» ամենամյա մրցույթում արժանացավ ՀՀ «Տարվա կորպորատիվ և ներդրումային բանկ» մրցանակին:

2021թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 151,892.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 26,107,555,200 դրամ: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից 2021թ. արդյունքներով արժանացավ «Բաժնետոմսերի լավագույն թողարկող» մրցանակին:

2022թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 544,512.8 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը 31.03.2022թ. դրությամբ կազմել է 26,652,068,000 դրամ:

2023թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 1,480,172.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը 20.12.2023թ. դրությամբ կազմել է 28,132,239,680 դրամ: 2023 թվականի փետրվարի 1-ին «Fitch Ratings»-ը Բանկին շնորհել է շնորհել է «B» երկարաժամկետ արտարժույթով թողարկողի դեֆոլտի վարկանիշ (IDR)՝ կայուն հեռանկարով և «b» կենսունակության վարկանիշ (VR), իսկ փետրվարի 22-ին բարելավել է Բանկի վարկանշի հեռանկարը «Կայուն»-ից «Դրական»-ի և վերահաստատել արտարժույթով երկարաժամկետ թողարկողի դեֆոլտի B կարգի վարկանիշը (Long-Term Foreign-Currency Issuer Default Rating (IDR)): Իրականացվել է բանկի սովորական բաժնետոմսերի բաժանում՝ 1 բաժնետոմսը 5 բաժնետոմս համամասնությամբ (համապատասխանաբար անվանական արժեքը 10,400 դրամից դարձել է 2,080 դրամ): Ասիական Զարգացման Բանկի կողմից կազմակերպվող առևտրի ֆինանսավորման գծով իններորդ տարեկան մրցանակաբաշխության շրջանակում Բանկին շնորհվեց «2023թ. առաջատար գործընկեր բանկ Հայաստանում» մրցանակը: «Visa» միջազգային վճարահաշվարկային համակարգի կողմից Բանկին շնորհվեց «Բացառիկ պրոդուկտներ թողարկող» մրցանակը:

2024թ. Բանկի Կանոնադրական կապիտալը համալրվել է 1,407,095.0 հազ. դրամով, որի արդյունքում կանոնադրական կապիտալը 28.02.2024թ. դրությամբ կազմել է 29,539,334,720 դրամ: 2024 թվականի փետրվարին «Fitch Ratings» միջազգային վարկանշային գործակալությունը բարելավել է Բանկի արտարժույթով երկարաժամկետ թողարկողի դեֆոլտի վարկանիշը (Long-term Issuer Default Rating (IDR)) «B»–ից դարձնելով «B+»՝ կայուն հեռանկարով: Միաժամանակ բարելավվել է նաև Բանկի կենսունակության վարկանիշը (Viability Rating – VR)՝ «b»-ից «b+»-ի:

Սահմանված տեղաբաշխման ժամկետից շուտ՝ 04.03.2024թ., ավարտվել է 607,000 հատ սովորական բաժնետոմսերի (արժեթղթերի ընդհանուր ծավալը (անվանական՝ 2,080 դրամ, արժեքով)՝ 1,262,560,000 ՀՀ դրամ, արժեթղթերի ընդհանուր ծավալը (շուկայական՝ 5,410 դրամ, արժեքով)՝ 3,283,870,000 ՀՀ դրամ) տեղաբաշխման գործընթացը, և 3.28 մլրդ ՀՀ դրամ գումարը ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործընթացների իրականացման արդյունքում կարտացոլվի կապիտալում մինչև 2024թ. մայիս ամիսը:

Բանկին տրված լիցենզիաները և արտոնագրերն անժամկետ են:

2) Ներդրումները

ա. պատմական ֆինանսական ժամանակաշրջանի ընթացքում և դրանից հետո մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու պահը կատարված էական ներդրումների նկարագիրը, ներառյալ՝ ներդրումների ծավալը.

Չկան:

բ. այն էական ներդրումների նկարագիրը, որոնք ընթացքի մեջ են, ներառյալ՝ այդ ներդրումների տարածքային տեղաբաշխումը (ներքին, օտարերկրյա) և ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին).

Չկան:

գ. տեղեկատվություն բանկի ապագա էական այն ներդրումների մասին, որոնց կատարման ուղղությամբ բանկի կառավարման համապատասխան մարմինները ստանձնել են պարտավորություն, ինչպես նաև դրանց ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին):

Չկան:

4. ԲԻԶՆԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1) Հիմնական գործունեությունը

ա. բանկի գործառույթների և հիմնական գործունեության նկարագիրը և դրանց վրա ազդող հիմնական գործոնները՝ պատմական ֆինանսական ժամանակաշրջանում վաճառված ապրանքների կամ մատուցված ծառայությունների հիմնական տեսակները.

Հայէկոնոմբանկը հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի արդյունավետ զարգացող, օղակներից մեկը, որը վերջին քսանվեց տարիներին գործել է շահույթով: Նշվածը հատկանշական է, հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ընդհանուր իրավիճակը և բանկային համակարգում դրսևորված միտումները:

Բանկի համար առավել կարևոր գործունեությունը ֆինանսական միջնորդության՝ միջոցների ներգրավման և տեղաբաշխման, իրականացումն է, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ:

Հանդիսանալով ունիվերսալ բանկ, Հայէկոնոմբանկը գործունեություն է ծավալում բանկային ծառայությունների մատուցման բոլոր ոլորտներում: Բանկը իր կայուն զարգացող դիրքերն ունի թե արտարժութային, թե արժեթղթերի, թե միջբանկային շուկաներում: Որպես ունիվերսալ կառույց, բանկը ակտիվ գործունեություն է ծավալում թե վարկավորման, թե ծառայությունների մատուցման, թե փոխանցումների նոր գործիքների, թե պլաստիկ քարտերի սպասարկման ոլորտներում:

Բանկը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

ա/ ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ.

բ/ տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ.

գ/ տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ).

դ/ բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ.

ե/ մատուցել այլ վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները.

զ/ թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, նման այլ գործառնություններ կատարել.

է/ ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնել.

ը/ մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում).

թ/ գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի և ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

ժ/ գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ.

ժա/ իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժբ/ ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

ժգ/ մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ/ ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,

ժզ/ իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ,

ժէ/ իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ գործառնություններ:

Բանկը նշված գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

ՀՀ Կենտրոնական բանկի թույլտվությամբ Բանկը կարող է իրականացնել նաև այնպիսի գործունեություն կամ գործառնություններ, որոնք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ:

Նշված գործառնությունները Բանկը կատարում է պայմանագրերի հիման վրա, որոնցում սահմանվում են կողմերի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, տոկոսադրույքները, արտոնությունները, տույժերը, պարտավորությունների ապահովման ձևերը, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր և պատասխանող դատարանում:

Առանց ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 4.99 տոկոս և ավելին է,

բ/ մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15%-ը,

գ/ բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35%-ը :

Սույն կետով նախատեսվածը կարգավորվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով:

Բանկն իրավունք ունի թղթակցային հաշիվներ բացել այլ բանկերում:

Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի տոկոսադրույքները և միջնորդավճարների չափը:

Բանկը երաշխավորում է իր հաճախորդների և թղթակից բանկերի ավանդների, հաշիվների և գործառնությունների գաղտնիությունը և ամբողջականության պահպանումը:

Բանկում գտնվող հաճախորդների դրամական միջոցների (ներառյալ քաղաքացիների ավանդները) և այլ գույքի վրա կարող է կալանք դրվել և բռնագանձում տարածվել միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստորև ներկայացվում է պատմական ֆինանսական ժամանակաշրջանում վաճառված ապրանքների կամ մատուցված ծառայությունների հիմնական տեսակները.

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով, ինչպես նաև տեղաբաշխում է ՀՀ դրամով և արտարժույթով պարտատոմսեր:

Բանկը հաճախորդներին առաջարկում է ավանդներ՝ տարբերակված ըստ նպատակների, ժամկետների, տոկոսադրույքների և տոկոսների վճարման հաճախականության:

Վարկեր և միջոցների այլ տեղաբաշխումներ

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ առևտրային վարկերի տրամադրում՝ բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ վարկային գծերի, օվերդրաֆտների, երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների տրամադրում), գյուղատնտեսական վարկերի տրամադրում, բնակարանի ձեռքբերման, կառուցման և նորոգման հիփոթեքային վարկերի, ավտովարկերի, անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական վարկերի, պլաստիկ քարտերով վարկային գծերի, ապառիկ վարկերի, ինչպես նաև սպառողական այլ վարկերի տրամադրում:

Արտարժույթի և արժեթղթերի առքուվաճառք

Բանկը կատարում է արտարժույթի, ՀՀ պետական պարտատոմսերի առ ու վաճառքի գործարքներ:

Գանձապետարանի սպասարկում

Բանկն իրականացնում է ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի դրամարկղային սպասարկում և հանդիսանում է Պետական պարտքի կառավարման գործակալ:

Բանկային փոխանցումներ

Բանկը 1996թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային համակարգին:

31.03.2024թ. դրությամբ Բանկը թղթակցային հաշիվներ ունի տեղական և միջազգային 13 բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած արժույթով և վճարային գործիքով:

Հաշվի առնելով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների ծավալների աճը՝ Բանկն առանձնապես կարևորում է դրամական փոխանցումների համակարգերի կատարելագործումը և ընդլայնումը: Կարևորելով դրամական փոխանցումների համակարգի ընդլայնման դերը՝ Բանկն անդամակցում է հետևյալ միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերին. «MoneyGram», «Ria Money Transfers», «IntelExpress», «Golden Money Transfer» և «MoneyTun»՝ իր հաճախորդին տալով ընտրության լայն հնարավորություն:

Պլաստիկ Քարտեր

Պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում, որոնց թողարկման ու սպասարկման համակարգերի կատարելագործումը Բանկի համար հանդիսանում է զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետության քաղաքականությունը:

Հանդիսանալով “Արմենիան քարդ” (ԱրՔա) ընկերության բաժնետեր և համակարգի լիիրավ անդամ՝ Բանկը թողարկում է ArCa Classic, ArCa social բանկային վճարային քարտեր, և նվեր քարտեր:

2002 թվականի ընթացքում Բանկը դարձել է MasterCard վճարային համակարգի աֆֆիլացված անդամ: Բանկը թողարկում է MasterCard ARMECs Standard, MasterCard ARMECs Gold, MasterCard Standard, MasterCard Gold, քարտեր:

2011 թվականին Բանկը դարձել է VISA International վճարային համակարգի անդամ և թողարկում է VISA INFINITE, VISA PLATINUM, VISA GOLD, VISA CLASSIC, VISA DIGITAL, VISA GURU, VISA GURU TRAVEL, VISA AEB&TelCell քարտեր:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակեց վճարային քարտերի սպասարկման, տեխնիկական վերազինման և թարմացման աշխատանքները:

31.03.2024թ. դրությամբ Բանկի կողմից թողարկվում են և սպասարկվում Master, Visa և ArCa վճարային համակարգերի քարտեր:

Հանրային ծառայությունների դիմաց վճարների ընդունում

Հաճախորդներին վճարահաշվարկային ծառայությունների համալիր մատուցման նպատակով՝ Բանկը խթանում է հարկերի, տուրքերի, կոմունալ վճարների և այլ հանրային ծառայությունների դիմաց ֆիզիկական և իրավաբանական անձանցից վճարների ընդունումը:

Բանկն իր ծառայությունների մատուցումը կատարում է իր գլխավոր գրասենյակի, մասնաճյուղերի, բանկոմատների և ինքնասպասարկման տերմինալների, AEB Mobile/AEB Online-ի միջոցով:

բ. արդյո՞ք նախատեսվում է նոր ապրանքների արտադրություն կամ նոր ծառայությունների մատուցում: Այնքանով, որքանով գաղտնիք չէ, ներկայացնել այդ նոր ապրանքների կամ ծառայությունների զարգացման փուլը:

Բանկի արդյունավետ զարգացման կարևորագույն գրավականը նրա կողմից կատարվող գործառնությունների հստակ կանոնակարգումն ու օպտիմալացումն է, ինչպես նաև մատուցվող ծառայությունների բազմազանումը և սպասարկման որակի բարելավումը: Բանկի կողմից նոր ծառայությունների առաջարկը և մատուցումն իրականացվում է շուկայում սպառողների կողմից ներկայացված պահանջմունքի ուսումնասիրության հիման վրա: Բանկի նոր առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը տեղ է գտնում ինտերնետում՝ Բանկի տնային էջում, ինչպես նաև գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի սպասարկման սրահներում:

Մասնավորապես, նախատեսվում է ապահովել ֆինանսական բնույթի համալիր ծառայությունների մատուցում՝ ներառյալ տարբեր բնույթի խորհրդատվությունը: Օրինակ, բանկը, կատարելով ֆինանսական շուկաների վերլուծություն, խորհրդատվություն է մատուցում իր հաճախորդներին նշված բնագավառի վերաբերյալ՝ նպաստելով արդյունավետ ներդրումային գործունեությանը և այլն:

Բանկում մեծ ուշադրություն է դարձվում մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը՝ բարձրացնելով դրանց որակը և ձգտելով յուրաքանչյուր հաճախորդին մատուցել ծառայությունների համալիր փաթեթ: Մատուցվող ծառայությունների բազմազանման շնորհիվ նախատեսվում է ներգրավել հաճախորդներ տնտեսության առավել արդյունավետ զարգացող ճյուղերից՝ հարաբերությունները կառուցելով անհատական մոտեցման սկզբունքներով: Վճարահաշվարկային գործունեության կատարելագործման ուղղությամբ բանկում լուրջ աշխատանքներ են տարվում՝ նպատակ ունենալով դրանք կատարել միջազգային չափանիշներին համապատասխան որակով և ժամկետներում: Ընդլայնվելու են աշխատանքները ակրեդիտիվների և միջազգային վճարամիջոցների այլ ձևերի սպասարկման ակտիվացման ոլորտներում, հատկապես ՎԶԵԲ-ի հետ Trade Facility ծրագրի ներդրման, ՄՖԿ-ի հետ կնքած «Առևտրի խթանման և երաշխիքների

տրամադրման» և Ասիական Զարգացման Բանկի հետ կնքած արտաքին առևտրի ֆինանսավորման վարկային գծի տրամադրման պայմանագրերի արդյունքում:

Բանկը շարունակելու է թվային առաջատար տեխնոլոգիաների ներդրումը և շարունակական զարգացումը, որոնց համար պլանավորվում են անհրաժեշտ կապիտալ ներդրումներ, ինչը, արդյունքում, կբարձրացնի տեխնիկական հագեցվածությունը՝ համապատասխան հետևանքներով:

2) Հիմնական շուկաները

ա. թողարկողի արտադրանքների սպառման և ծառայությունների մատուցման հիմնական շուկաների նկարագիրը՝ ներկայացնելով ապրանքների և ծառայությունների յուրաքանչյուր խմբից ստացվող եկամուտները: Ներկայացնել նաև շուկաների տարածքային բաժանումը (ներքին, արտաքին, ըստ երկրների և այլն),

բ. եթե որևէ բացառիկ գործոն ազդել է թողարկողի հիմնական գործունեության կամ հիմնական շուկաների վրա, ապա ներկայացնել այդ փաստը.

Հայէկոնոմբանկը իր գործունեությունը ծավալում է ՀՀ ֆինանսաբանկային շուկայում, որի զարգացման միտումներն ուղղված են կորպորատիվ կառավարման սկզբունքների ներքո կայուն բանկային համակարգի ձևավորմանը, արդյունավետ դրամավարկային քաղաքականության վարման, կարգավորիչ նորմատիվային դաշտի սահմանման հիման վրա, ինչը արդյունքում կհանգեցնի միջազգային չափանիշներին մոտեցմանը, թե բանկային ծառայությունների մատուցման, թե կիրառվող տոկոսադրույքային քաղաքականության առումով:

Շուկան զարգանում է ազատ մրցակցության պայմաններում, ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականության շրջանակներում:

Հայէկոնոմբանկը, նշված շուկաներում, իր հաճախորդներին առաջարկում է բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ, ներառյալ ավանդավարկային, վճարահաշվարկային սպասարկումը:

Բանկը տրամադրում է տարբեր տեսակի վարկեր, օվերդրաֆտներ և այլն, գործունեություն է ծավալում ֆինանսական շուկայում, իրականացնելով արժեթղթերի և արտարժույթի առք ու վաճառք, կատարում է փոխանցումներ, տրամադրում և սպասարկում է պլաստիկ քարտեր:

Բանկային գործառնությունները կատարելիս, օգտվում է միջազգային վճարումների SWIFT համակարգից, միջազգային արագ դրամական փոխանցումների համակարգերից, ինչպես նաև Բլումբերգ համակարգերից և այլն:

Բանկը ծառայություններ է մատուցում, օրենսդրությամբ սահմանված կարգով, հաշվի առնելով տարիքային դասակարգումը, անկախ սոցիալական պատկանելիությունից և իրավական կարգավիճակից:

Հաշվետու, ինչպես և նախորդ երկու ֆինանսական տարիների ընթացքում բանկի եկամտի 80%-ից ավելին ապահովվել է տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների հաշվին՝ հիմնականում վարկային և արժեթղթերում ներդրումներից, արտարժութային գործառնություններից և մատուցված ծառայություններից:

2023թ. բանկը շարունակել է իր որդեգրած քաղաքականությունը հաճախորդների բնագավառում՝ պահպանելով փոխշահավետության սկզբունքը՝ հաճախորդներին առաջարկել բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ, մշտապես նորացնելով և բազմազանելով այն, բարելավելով ծառայությունների մատուցման որակը:

Հաշվետու տարում Բանկը շարունակեց ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ, ինչի շնորհիվ խորացվեց ու ընդլայնվեց

համագործակցության շրջանակները, գործող ծրագրերը, ինչպես նաև ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում:

2023թ. ընթացքում Բանկի և BlueOrchard Finance S.A. շվեյցարական ներդրումային ընկերության միջև կնքվեց միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանն ուղղված 5.0 մլն ԱՄՆ դոլար գումարով վարկային պայմանագիր, Բանկի և Շվեյցարական Symbiotics Investment Management SA ընկերության կողմից կառավարվող Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության Dual Return Fund S.I.C.A.V. ներդրումային ընկերության միջև կնքվեց միկրո ձեռնարկությունների ֆինանսավորմանն ուղղված 5.0 մլն. ԱՄՆ դոլար գումարով վարկային պայմանագիր:

Բանկն իր զարգացման ներկա փուլում կարևորում է համարժեք մրցունակության մակարդակի ապահովումը հետևյալ շուկայական հատվածներում.

- փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորում,
- խոշոր բիզնեսի վարկավորում,
- գյուղատնտեսական վարկավորում,
- սպառողական վարկավորում,
- բնակարանային հիփոթեք,
- միջազգային առևտրի սպասարկում՝ ներառյալ դրամական փոխանցումներ, ակրեդիտիվներ, երաշխիքներ,
- ավանդների ներգրավում (տարբերակված ըստ ժամկետների, արժույթների և տոկոսների վճարման հաճախականության),
- պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում,
- հանրային ծառայությունների վճարների սպասարկում,
- պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում,
- նոր թվային տեխնոլոգիաների ներդրման և շարունակական զարգացման միջոցով հաճախորդների բարձրակարգ սպասարկման իրականացում:

Առևտրային վարկերի տարամադրման և վճարահաշվարկային սպասարկման շուկայական հատվածում բանկերի միջև մրցակցությունը բավականաչափ կոշտ է, որի պարագայում Բանկի կողմից նախատեսվում է ապահովել ֆինանսական բնույթի համալիր ծառայությունների մատուցում՝ ներառյալ տարբեր բնույթի խորհրդատվությունը, որը Բանկի գործունեության ռազմավարական գերակայություններից է:

Բանկը, ելնելով միջոցների ներգրավման և տեղաբաշխման միտումներից ու գնահատվող հնարավորություններից, իր ռազմավարության թիրախներից դիտարկում է մանրածախ բանկային ծառայությունների մատուցումը, բանկային սպասարկումների և ծառայությունների մատչելիության ու հասանելիության ապահովումը սպառողների լայն շրջանակի համար, որի արդյունքում Բանկն իր ամուր դիրքը կհաստատի ՀՀ բանկային շուկայում:

Բանկը հետամուտ լինելով իր որդեգրած՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ հարաբերությունների խորացման և ընդլայնման քաղաքականությանը՝ շարունակելու է միջազգային ֆինանսական շուկաներից միջոցների ներգրավման որդեգրված ռազմավարությունը, որը նախատեսում է ակտիվ համագործակցություն հանրապետությունում միջազգային ֆինանսավարկային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ: Բանկը կշարունակի և կընդլայնի համագործակցությունը միջազգային ծրագրերի շրջանակներում՝ ՎԶԵԲ, ՄՖԿ, Գերմանա-հայկական հիմնադրամ (ԳՀՀ), Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի, Ասիական Զարգացման Բանկի, Հոլանդական զարգացման բանկի (FMO), «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC, SYMBIOTICS» SA, «MICRO, SMALL & MEDIUM ENTERPRISES

BONDS» S.A., INCOFIN CVBA ներդրումային ընկերությունների հետ: Բանակցություններ կվարվեն նաև միջազգային այլ կառույցների հետ՝ համագործակցության ակնկալիքով:

գ. բանկի մրցակցային դիրքի նկարագրությունը:

Բանկի մրցակցային առավելությունների շարքում հարկ է նշել հետևյալը.

♦ Բանկի կառավարման արդյունավետ համակարգը, որում հստակ ամրագրված են յուրաքանչյուր կազմակերպական միավորի գործառութային խնդիրները և որոշված են դրանց պատասխանատվության սահմանները:

♦ Ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգը, դրա հուսալիության բարձր աստիճանը, որը հնարավորություն ունի ժամանակին բացահայտելու առաջացող ռիսկերի բնույթը, դրանց հնարավոր ազդեցության մակարդակը և առաջարկելու դրանց չեզոքացման ուղիները:

♦ Կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգը, որի շրջանակներում ամրագրված են Բանկի Խորհրդի և Վարչության պաշտոնատար անձանց ֆիդուցիար պատասխանատվությունը:

♦ Բանկային նոր ինովացիոն ծառայությունների նպատակաուղղվածությունը և նմանատիպ ծրագրերի իրացման հաջողված փորձը: Բանկի մրցունակության բարձրացման առանցքային գործոններից է տեղեկատվական տեխնոլոգիաների անհրաժեշտ բաղադրիչների յուրացումը, ծառայությունների մատուցումը, տեխնոլոգիաների միջազգային չափորոշիչների և համաշխարհային լավագույն փորձի վրա կառուցումը, նոր թվային տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը, որի արդյունքում Բանկում մշակվում ու ներդրվում են ինովացիոն և արդյունավետ պրոդուկտներ:

♦ Արտաքին միջավայրի ազդակների արագ արձագանքման արդյունավետ համակարգը, մասնավորապես՝ տնտեսության իրական հատվածում ընթացող գործընթացների և բանկային սպասարկումները, ծառայությունների ոլորտում տոկոսադրույքների ու սակագների փոփոխությունների նկատմամբ համարժեք արձագանքումը: Այդ նպատակով՝ Բանկը մշտապես իրականացնում է մարքեթինգային ուսումնասիրություններ և հարցումներ, պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ հաճախորդների հետ: Դրա շնորհիվ Բանկը վարում է սակագնային և տոկոսադրույքային ճկուն քաղաքականություն և առաջարկում է շուկայում առավել մատչելի ու մրցունակ պայմաններ և սակագներ:

♦ Բանկի աշխարհագրության և մասնաճյուղային ցանցի ինտենսիվ զարգացումը երկրի բոլոր մարզերում: Ազդագրի ներկայացման պահի դրությամբ Բանկի մասնաճյուղերի թիվը կազմում է 53՝ մոտեցնելով Բանկի կողմից մատուցվող ծառայությունները հաճախորդների առավել լայն շրջանակի:

♦ Միջազգային ֆինանսական կառույցների հետ արդյունավետ համագործակցությունը: Բանկը համագործակցում է մի շարք կազմակերպությունների հետ, որոնց թվում են պատկանում՝ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը (ՎԶԵԲ), ՄՖԿ, Գերմանա-հայկական հիմնադրամը (ԳՀՀ), Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկը, Ասիական Զարգացման Բանկը, Հոլանդական զարգացման բանկի (FMO), «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերությունը, «SYMBIOTICS» SA, «MICRO, SMALL & MEDIUM ENTERPRISES BONDS» S.A. , INCOFIN CVBA ֆինանսական հաստատությունները և այդ շրջանակը առաջիկայում կընդլայնվի:

♦ Բանկի կառավարման բարձրագույն և միջին օղակներում բավարար ներուժ ու փորձ ունեցող կադրային պոտենցիալի առկայությունը, որն ունակ է լուծել Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով սահմանված խնդիրները:

♦ Բանկի կառավարման բոլոր օղակներում գործունեության բավարար կանոնակարգվածության աստիճանը:

♦ Բանկային ծառայությունների և սպասարկումների լայն սպեկտրը, Բանկի ուժեղ ու կայուն դիրքերը մանրածախ ծառայությունների ոլորտում, որոնց շնորհիվ Բանկը դինամիկ և հաստատուն ձևով ընդլայնում է ծառայությունների և սպասարկումների ծավալները:

♦ Բանկի կողմից հաճախորդների թիրախային խմբերի տարանջատումն ըստ բիզնեսի ոլորտների վարման առանձնահատկությունների ու քաղաքացիների շրջանում ըստ սոցիալական, աշխարհագրական, տարիքային և այլ չափորոշիչների, որի արդյունքում առաջարկվում է յուրաքանչյուր խմբին համարժեք նպատակային համալիր, բարձրորակ բանկային ծառայությունների շրջանակ:

♦ Անմիջապես հաճախորդների սպասարկման համար պատասխանատու աշխատակիցների վերապատրաստման ծրագրերը, որի շնորհիվ նաև բարելավվում է սպասարկման որակը և աճում հաճախորդների թվաքանակը:

♦ Բաժնետիրական ընկերության կարգավիճակում հանդես եկող «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի ձևավորված դրական վարկանիշը և աճող հեղինակությունը:

Ստորև ներկայացվում է որոշ հիմնական ցուցանիշների գծով 31.12.2023թ. դրությամբ Բանկի մասնաբաժինը շուկայում.

№	Ցուցանիշը	Մասնաբաժինը շուկայում /%/
1	Ընդհանուր ակտիվներ	5.09%
2	Վարկային ներդրումներ	5.93%
3	Ընդհանուր պարտավորություններ	5.27%
4	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	3.37%
5	Ընդհանուր կապիտալ	4.11%

5. ԲԱՆԿԻ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1) Եթե բանկը խմբի անդամ է, ապա համառոտ ներկայացնել խմբի կառուցվածքը և բանկի տեղը այդ խմբում,

Բանկը հանդիսանում է Սիլ Ֆինանսական Բազմաֆունկցիոնալ Խմբի անդամ, որի անդամ է հանդիսանում նաև «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն: Բանկը Սիլ Ֆինանսական Բազմաֆունկցիոնալ Խմբի պատասխանատու անձն է:

2) Ներկայացնել բանկի դուստր ընկերությունների ցանկը, ներառյալ անվանումը, հիմնադրման երկիրը, յուրաքանչյուր դուստր ընկերությունում բանկի մասնակցության չափը:

Բանկը դուստր ընկերություններ չունի:

6. ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1) Ներկայացնել տեղեկատվություն բանկի տրամադրության տակ գտնվող և մոտակայում պլանավորվող էական մեծություն կազմող հիմնական միջոցների (շենքեր, շինություններ, հողամաս, սարք, սարքավորում և այլն) վերաբերյալ, ներառյալ վարձակալած գույքը: Եթե որևէ հիմնական միջոց ընկերությանը սեփականության

իրավունքով չի պատկանում, կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակված է (մասնավորապես՝ եթե գրավ է դրված), ապա համառոտ ներկայացվում են այդ հիմնական միջոցի օգտագործման պայմանները և (կամ) օգտագործման սահմանափակումների բնույթը: Նշել նաև պլանավորվող էական մեծություն կազմող հիմնական միջոցների ֆինանսավորման աղբյուրները (ներքին, արտաքին): Հիմնական միջոցը համարվում է էական մեծություն կազմող, եթե դրա արժեքը գերազանցում է թողարկողի հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի 10 և ավելի տոկոսը:

ՉԿԱՆ

2) Նկարագրել արդյո՞ք հնարավոր են այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սահմանափակել բանկի կողմից հիմնական միջոցների օգտագործումը.

ՉԿԱՆ

7. ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ (ՊԱՍԻՎՆԵՐԸ)

1) տեղեկատվություն բանկի սեփական կապիտալի մասին և ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների մասին,

Բանկի պասիվները 31.12.2023թ. դրությամբ կազմել են 464,882.1 մլն. դրամ, որի 13.0%-ը կամ 60,446.0 մլն դրամը կազմում է սեփական կապիտալը, իսկ 87.0%-ը ընդամենը պարտավորությունները:

Սեփական կապիտալի 46.5%-ը կամ 28,132.2 մլն դրամը կազմել է կանոնադրական կապիտալը, 3.8%-ը կամ 2,265.1 մլն դրամը՝ էմիսիոն եկամուտը, 6.5%-ը կամ 3,952.0 մլն դրամը՝ գլխավոր պահուստը, 10.8%-ը կամ 6,517.3 մլն դրամը՝ վերագնահատման պահուստները և 32.4%-ը կամ 19,579.3 մլն դրամը՝ չբաշխված շահույթը:

Ընդամենը պարտավորությունների խոշորագույն հոդվածները հաճախորդների նկատմամբ պարտավորություններն են և բանկերից, ՀՀ ԿԲ-ից ու այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները, բանկի կողմից թողարկված արժեթղթերը, ստորադաս փոխառությունները, որոնք կազմել են ընդամենը պարտավորությունների համապատասխանաբար 45.4%-ը կամ 183,695.7մլն դրամ, 47.7%-ը կամ 192,805.9 մլն դրամ, 2.8%-ը կամ 11,295.3 մլն դրամ և 2.4%-ը կամ 9,679.5 մլն դրամ:

Բանկը իր եռամսյակային միջանկյալ և տարեկան հաշվետվությունները հրապարակում է բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am, **«Հաշվետվություններ»** բաժնում, որտեղից կարելի է սեփական կապիտալի և ընդամենը պարտավորությունների մասին առավել ընդգրկուն տեղեկատվություն ստանալ:

2) բանկի դրամական հոսքերի առաջացման աղբյուրները և գումարները, ինչպես նաև ազատ ոճով նկարագրվում են այդ դրամական հոսքերը,

Բանկի դրամական հոսքերը գոյանում են նրա հիմնական գործունեությունից, այն է վարկերի տրամադրում, ավանդների ներգրավում, արժեթղթերի առք ու վաճառք, արտարժույթի առք ու վաճառք, վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, փոխանցումներ և այլն:

Բանկի 2023թ. դրամական հոսքերի հիմնական գումարներն արտացոլված են ստորև.

հազ. դրամ

Անվանում	2022	2023*

Գործառնական գործունեությունից ստացված դրամական ներհոսք՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները	12,128,657	11,048,974
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,937,584)	8,838,243
Ներդրումային գործունեությունում (օգտագործված) /(գործունեությունից ստացված) զուտ դրամական միջոցներ	(6,753,943)	(13,254,672)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	22,719,268	6,167,600
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա	(8,346,000)	736,515
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	5,681,741	2,487,686
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ	63,399,890	69,081,631
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ	69,081,631	71,569,317

Չստուգված

Բանկը իր եռամսյակային միջանկյալ և տարեկան հաշվետվությունները հրապարակում է բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am, **«Հաշվետվություններ»** բաժնում, որտեղից կարելի է դրամական հոսքերի մասին առավել ընդգրկուն տեղեկատվություն ստանալ:

3) արդյո՞ք բանկն ունի փոխառություն ներգրավելու պահանջ,

Բանկային գործունեությունը իրենից ներկայացնում է ֆինանսական միջնորդություն՝ միջոցների ներգրավման և տեղաբաշխման իրականացում, ուստի կարելի է ասել, որ ցանկացած պարագայում բանկի համար միջոցների ներգրավումը հանդիսանում է առաջնային և հիմնական խնդիր:

4) կապիտալ ռեսուրսների օգտագործման այն սահմանափակումները, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի էապես ազդել բանկի գործունեության վրա:

ՉԿԱՆ

8. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար բանկի կողմից հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված քաղաքականությունը, ներառյալ՝ բանկի կողմից ֆինանսավորվող հետազոտական և զարգացման աշխատանքներին ուղղված ծախսերի մեծությունը: (կարող են նաև ներկայացվել այնպիսի հետազոտական և զարգացման աշխատանքներ, որոնք կապված չեն բանկի գործունեության հետ):

ՉԿԱՆ:

9. ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ

Բանկի գործունեության իրականացման հատուկ թույլտվությունների (լիցենզիաների) և արտոնագրերի վերաբերյալ տեղեկություններ՝ նշելով գործունեության համապատասխան տեսակները, տրման ամսաթվերը, գործողության ժամկետները.

1992թ. նոյեմբերի 16-ին բանկը ՀՀ ԿԲ-ից ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու №1 լիցենզիա, որն անժամկետ է:

10. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Բանկի մատուցած ծառայությունների ծավալների աճի կամ նվազման միտումները, դրանց ինքնարժեքի և վաճառքի գների միտումները վերջին հաշվետու ֆինանսական տարվա ավարտից մինչև ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար: Ներկայացվում են միայն այն միտումները, որոնք ըստ բանկի էական են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Նախորդ հաշվետու տարվա վերջի համեմատ, Բանկի կողմից մատուցված ծառայությունների ծավալների և ծառայությունների սակագների փոփոխությունները պայմանավորված են տնտեսության ներքին և արտաքին հատվածներում ընթացող փոփոխություններով, մրցակիցների կողմից համանման պորդուկտների գծով առաջարկվող սակագներով, ինչպես նաև Բանկի մրցակցային դիրքի ամրապնդման և առաջխաղացման հնարավորություններով:

Ողջամիտ ներդրողի ներդրումային որոշման կայացման նպատակով՝ Բանկը ներկայացնում է 2023թ. ակտիվապասիվային ցուցանիշների և շահույթի ծավալները, որոնք արտացոլում են Բանկի կառավարման մարմինների կողմից ռազմավարության իրականացման արդյունավետությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են Բանկի ակտիվապասիվային հիմնական ցուցանիշները և շահույթը.

(հազ. դրամ)

Միջոցների ներգրավում	31.12.2021	31.12.2022	31.12.2023	Աճ/նվազում 31.12.2023-31.12.2022	
				դրամ	%
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	165,658,474	185,332,374	192,805,944	7,473,570	4.0
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	135,948,859	156,197,592	183,695,686	27,498,094	17.6
Ստորադաս փոխառություն	3,605,469	3,971,329	9,679,494	5,708,165	143.7
Թողարկված պարտքային արժեթղթեր	6,107,897	8,517,115	11,295,283	2,778,168	32.6

(հազ. դրամ)

Միջոցների տեղաբաշխում	31.12.2021	31.12.2022	31.12.2023	Աճ/նվազում 31.12.2023-31.12.2022	
				դրամ	%
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	220,889,139	259,413,495	291,399,068	31,985,573	12.3
Ներդրումային արժեթղթեր	42,807,297	47,378,854	60,201,239	12,822,385	27.1

(հազ. դրամ)

	2021	2022	2023	Աճ/նվազում 2023-2022	
				դրամ	%
Շահույթ	2,956,439	7,111,817	4,719,986	-2,391,831	-33.6

Բացի վերը բերված ֆինանսական ցուցանիշները, Բանկը որպես հաշվետու թողարկող, իր արժեթղթերի սեփականատերերին է ներկայացնում նաև եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, որոնք տեղադրված են բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am՝ **«Սեփականատերեր»** բաժնում:

11. ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԿԱՄ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1) այն հիմնական սկզբունքների կամ վարկածների նկարագիրը, որոնց հիման վրա իրականացվել է շահույթի կանխատեսումը կամ գնահատումը: Շահույթի կանխատեսումը կամ գնահատումը պետք է համադրելի լինի բանկի պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հետ.

Սույն կետում նշված տեղեկությունները ընդամենը կանխատեսումներ են և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա:

2024թ. համար բանկը պլանավորել էր ստանալ 3,001.3 մլն. դրամի զուտ շահույթ: Շահույթի կանխատեսումը (պլանավորումը) իրականացնելիս բանկը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

1. Բանկի ակտիվների կայուն աճի ապահովում, հիմնականում եկամտաբեր ակտիվների՝ վարկերի և արժեթղթերի աճի հաշվին: Վարկային ներդրումների աճը ապահովվելու է նոր վարկատեսակների առաջարկի, տնտեսության նոր հեռանկարային ոլորտների վարկավորման, սպառողական և հիփոթեքային վարկավորման, միջազգային կառույցների հետ իրականացվող վարկային ծրագրերի բազմազանման և ավելացման հաշվին:
2. Բանկի պարտավորությունների, ըստ այդմ ցպահանջ և ժամկետային ռեսուրսների կայուն աճի ապահովում՝ միջազգային ծրագրերով և միջազգային կառույցներից նոր ռեսուրսների ներգրավում և ներքին շուկայից ներգրավված ռեսուրսների ծավալների կայուն աճի ապահովում:
3. Բանկի ռեսուրսների տեղաբաշխում բարձր եկամտաբերություն ունեցող ակտիվներում (վարկեր հաճախորդներին)՝ ընդունելի մակարդակի վրա պահելով բանկի ռիսկերը, պահպանելով բանկային գործունեությունը կարգավորող ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները:
4. Հեռանկարային հաճախորդների շրջանակի էական աճի ապահովում, ի հաշիվ մատուցվող ծառայությունների բազմազանման և տեխնոլոգիաների կատարելագործման, նորարար թվային տեխնոլոգիաների ներդրման և զարգացման, միջազգային չափանիշներով նոր բանկային գործիքների առաջարկի /նոր տեխնոլոգիաներով վարկեր, ավանդներ, վճարահաշվարկային ծառայություններ/:
5. Վերը նշվածների արդյունքում տոկոսային եկամուտների, մատուցվող ծառայություններից ստացվող միջնորդավճարների աճ:
6. Բանկի արդյունավետ տարածքային քաղաքականության վարում՝ ապահովելով նոր մասնաճյուղերի գործարկումը, գործող մասնաճյուղերի վերանորոգումը և վերազինումը, տեխնիկա-տեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիականացումը:

2) այն գործոնները, որոնց վրա բանկի կառավարման մարմինները ազդելու հնարավորություն ունեն և այն գործոնները, որոնց վրա ազդելու նման հնարավորությունը բացակայում է.

Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

1. Բանկի կողմից ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
2. Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
3. Բանկի տեխնիկա-տեխնոլոգիական և տեղեկատվական բազայի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
4. Կադրային քաղաքականություն, այդ թվում՝ բանկի անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման ծախսեր,
5. Նոր պրոդուկտների թողարկում,
6. Տարածքային քաղաքականություն,
7. Բանկի գործունեության ապահովման ծախսեր,
8. Նոր բանկային պրոդուկտների ներդրման ծախսեր,
9. Գովազդային գործընթաց և այլն:

Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

1. քաղաքական, տնտեսական ռիսկի գործոններ (բանկային ավանդների և վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ, արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ),
2. հարկային և օրենսդրական փոփոխության այլ ռիսկեր,
3. երկրի ֆինանսական շուկայի կայունության ռիսկ,
4. անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը) և այլն:

12. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

1) բանկի կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները.

Բանկի կառավարման մարմիններն են (ներկայացվում է ըստ կանոնադրության).

1. Բաժնետերերի ընդհանուր ժողովը, որը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է,
2. Բանկի խորհուրդը, որն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում,
3. Բանկի գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե վարչության նախագահն է,
4. Բանկի վարչությունը:

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացվում է ստորև.



Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասություններն են (ներկայացվում է ըստ կանոնադրության).

6.7. Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները՝

ա/ Բանկի Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ/ Բանկի վերակազմակերպումը.

գ/ Բանկի լուծարումը.

դ/ ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե/ Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Բանկի խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Բանկի խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ/ հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է/ խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ը/ Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի և վնասի բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

թ/ օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք չկիրառելու մասին որոշման ընդունումը.

ժ/ ընդհանուր ժողովի վարման կարգը,

ժա/ հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժբ/ օրենքով սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին):

Բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն օրենքով վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնին:

6.14. Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և կանոնադրությամբ վերապահված են ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:

6.22. Բանկի խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

ա/ Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.

բ/ ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստման աշխատանքների իրականացման ապահովումը.

գ/ Բանկի գործադիր մարմնի (վարչության) անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ/ Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե/ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ/ Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.

է/ շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

ը/ Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

թ/ ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժ/ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժա/ Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

ժբ/ Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

ժգ/ Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բախշումը.

ժդ/ Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ժե/ Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ/ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի ավելացումը.

ժէ/ Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,

ժը/ դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ ընկերություններին մասնակցությունը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում

ժթ/ Բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ի/ գույքի շուկայական արժեքի որոշումը օրենքով սահմանված կարգով,

իա/ օրենքով նախատեսված դեպքերում տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը

իբ/ Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 %-ի չափով),

իգ/ Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման և դադարեցման մասին որոշումների ընդունումը,

իդ/ Բանկի կողմից բաժնետերերի ժողովի հետ կապված տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի մասին, ներառյալ ծանուցման մամուլի միջոցի ընտրության որոշումը,

իե/ խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

իզ/ առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և մասնակցությունը,

իէ/ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասությունների իրականացումը:

Բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը կանոնադրությամբ վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Բանկի գործադիր մարմնին:

6.29. Բանկի գործադիր տնօրենը (Վարչության նախագահը), որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

6.30. Բանկի գործադիր տնօրենը (Վարչության նախագահ).

ա/ տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

բ/ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին,

գ/ Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

դ/ կատարում է Բանկի վարչության նախագահի տեղակալների և վարչության անդամների միջև պարտականությունների բաշխում,

ե/ լուծում է սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր, իր իրավասության շրջանակներում իրականացնում այլ գործառույթներ:

6.31. Բանկի վարչությունը կազմվում է գործադիր տնօրենից (Վարչության նախագահից), նրա տեղակալներից, գլխավոր հաշվապահից, ինչպես նաև Բանկի այլ պաշտոնատար անձանցից, որոնք նշանակվում են Բանկի խորհրդի կողմից:

6.32. Բանկի վարչությունը.

ա/ խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը.

բ/ ապահովում է ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի որոշումների կատարումը,

գ/ իրականացնում է Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը,

դ/ կազմակերպում է ընդհանուր ժողովի, Բանկի խորհրդի և իր կողմից ընդունված որոշումների կատարումը,

ե/ գումարում է իր նիստերը ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ,

զ/ իր իրավասության շրջանակներում սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, դրամարկղային սպասարկման, դրամի ու Բանկի այլ

արժեքների պահպանումը, հաշվառումն ու հաշվետվությունը և իրականացնում է դրանց վերահսկողությունը,

է/ սահմանում է ակտիվային ու պասիվային գործառնությունների գծով տոկոսադրույքների քաղաքականությունը,

ը/ վերահսկում է օրենսդրության պահպանումը Բանկում և նրա կառուցվածքային ստորաբաժանումներում,

թ/ նախապես քննարկում է վարչության կողմից Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի և Բանկի խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերը,

ժ/ քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, Բանկի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,

ժա/ հաստատում է բանկի աշխատողների և մյուս ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների իրավունքների ու պարտականությունների մասին հրահանգները,

ժբ/ կատարում է Բանկի պաշտոնատար անձանց նշանակում իր իրավասության շրջանակներում,

ժգ/ քննարկում է գործադիր տնօրենի (Վարչության նախագահի), վարչության անդամների և Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից վարչության քննարկմանը ներկայացված այլ հարցերը:

Այն հարցերը, որոնք օրենքով կամ կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են գործադիր տնօրենի (վարչության) իրավասությանը:

2) կառավարման մարմինների անդամների անունը, ազգանունը, բնակության վայրը, զբաղեցրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները, նրանցից յուրաքանչյուրի ծավալած գործունեությունը բանկի կազմից դուրս՝ ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին.

Տեղեկություններ բանկի կառավարման մարմինների վերաբերյալ.

Պաշտոնը	**Ա. Ա. Հ., ծննդյան ամսաթիվը, մասնագիտությունը, քաղաքացիությունը, հասցեն**	**Վերջին հինգ տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները**	**Իրավասություններ և պարտականություններ**
Բանկի խորհրդի նախագահ	Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի, ծնված 1965թ., ինժեներ-տնտեսագետ, տնտեսագիտության թեկնածու, Քաղաքացիությունը՝ ՀՀ, հասցե՝ ք.Երևան,Զավարյան 6,բ.1/ 5	1998թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի նախագահ:	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Բանկի խորհրդի անդամներ	Խաչատրյան Արամ Դավիթի, ծնված 1983թ., ինժեներ-տնտեսագետ, Քաղաքացիությունը՝ ՀՀ, հասցե՝ ք. Էջմիածին, Լոմոնոսով փ. տ. 36	10.07.2017-02.06.2023թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն 09.06.2023թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ, խորհրդի նախագահի տեղակալ	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
	Հայրապետյան Ռուբեն Աշոտի, ծնված 1980թ., տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Մխչյան փ. 25/3 տ.	30.06.2014թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ 29.06.2018-09.06.2023թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի նախագահի տեղակալ:	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
	Պետրոսյան Լուիզա Աշոտի, ծնված 1982թ., տնտեսագետ-մաթեմատիկոս, Քաղաքացիությունը՝ ՀՀ,	14.06.2013թ առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ, Խորհրդի Քարտուղար:	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ

	հասցե՝ ք. Երևան, Գր. Արծրունի 92-7		
	Պեր Ֆիշեր, ծնված 1949թ., տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ԳԴՀ, ք. Բրեմեն հասցե՝ Պալմենգաղթենշթաասսե 4, 60325 Ֆրանկֆուրտ Մայնի վրա	2003-2014թթ. Կոմերցբանկի, Ֆրանկֆուրտի գլխավոր գրասենյակի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, ԱՊՀ, Թուրքիայի, Բալթյան երկրների, Մոնղոլիայի ֆինանսական կազմակերպությունների վարչության ղեկավար, ավագ գործադիր տնօրեն 2003-2019թթ. հանդիսացել է Կոմերցբանկ Եվրասիա, Մոսկվա, խորհրդի անդամ 2003-2017թթ. հանդիսացել է Գերմանա-ուկրաինական համաժողովի անդամ, Գանձապետ 2007թ.-ից առ այսօր հանդիսանում է Գերմանա-ռուսական համաժողովի անդամ, Գանձապետ 2014-2017թթ. հանդիսացել է Գերմանա-թուրքմենական համաժողովի անդամ 2014թ.-ից առ այսօր հանդիսանում է Սենթրինվեստբանկ, Դոնի Ռոստով, ՌԴ խորհրդի անդամ, անկախ տնօրեն 2015-2019թթ. զբաղեցրել է ԵԱՀԿ եռակողմ կոնտակտային խմբի Տնտեսության և տնտեսական վերականգնման աշխատանքային խմբի համակարգողի պաշտոնը 2016-2019թթ. հանդիսացել է Բելառուսբանկ, Մինսկ, Բելառուսի Հանրապետություն խորհրդի անդամ, անկախ տնօրեն 29.06.2018թ. առ այսօր՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ:	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
	Սուվարյան Հրանտ Ռաֆիկի ծնված 1958թ., տնտեսագետ, Քաղաքացիությունը՝ ՀՀ, հասցե՝ ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ա. Տիգրանյան փ. տուն 17	2002թ.-20.05.2020թ.թ. ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության պետ 20.05.2020թ.-30.06.2020թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործադիր տնօրենի խորհրդական 30.06.2020թ.-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհրդի անդամ	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ

Բանկի խորհրդի անդամներ	**Պ Ա Շ Տ Ո Ն Ը**	
	բանկում	**վերջին հինգ տարում բանկից դուրս**
Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	Խորհրդի նախագահ	«ՍԻԼ-Կոնցեռն» ՍՊԸ Խորհրդի անդամ
Խաչատրյան Արամ Դավիթի	Խորհրդի նախագահի տեղակալ	-
Հայրապետյան Ռուբեն Աշոտի	Խորհրդի անդամ	-
Պետրոսյան Լուիզա Աշոտի	Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար	-
Պեր Ֆիշեր	Խորհրդի անդամ	Commerzbank Eurasija, Մոսկվա, Խորհրդի անդամ, Գերմանա-ռուսական համաժողովի անդամ, գանձապետ, Սենթրինվեստբանկ, Դոնի Ռոստով, ՌԴ խորհրդի անդամ, անկախ տնօրեն, ԵԱՀԿ եռակողմ կոնտակտային խմբի Տնտեսության և տնտեսական վերականգնման

		աշխատանքային խմբի համակարգող, Բելառուսբանկ, Մինսկ, Բելառուսի Հանրապետություն խորհրդի անդամ, անկախ տնօրեն
Սուվարյան Հրանտ Ռաֆիկի	Խորհրդի անդամ	2002թ.-20.05.2020թ. ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչության պետ

Պաշտոնը	**Ա. Հ. Ա., ծննդյան ամսաթիվը, մասնագիտությունը, քաղաքացիությունը, հասցեն**	**Վերջին հինգ տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները**	**Իրավասություններ և պարտականություններ**
Գործադիր տնօրեն (Վարչութ. Նախագա)	Առաքելյան Արտակ Արմենակի ծնված 1981թ., ՏԳԹ, տնտեսագետ, Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փող. 38շ. 3բն.	07.10.2016-14.06.2023թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ-Գանձապետ (Վարչության նախագահի տեղակալ), 15.06.2023թ-ից առ այսօր Վարչության նախագահ, գործադիր տնօրեն	Իրավասության՝ սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ Պարտականություններ՝ 1. տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները և գործարքներ է կատարում Բանկի անունից. 2. ներկայացնում է Բանկը ՀՀ-ում և արտասահմանում, 3.գործում է առանց լիազորագրի, 4.տալիս է լիազորագրեր, 5.սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային, 6.Խորհրդի հաստատմանն է ներկայացնում իր տեղակալների թեկնածությունները, 7.Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի Վարչության կանոնակարգը, 8.իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, 9.կատարում է Բանկի վարչության նախագահի տեղակալների և վարչության անդամների միջև պարտականությունների բաշխում, 10.օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին, 11.Բանկի աշխատակիցների նկատմամբ, համաձայն Խորհրդի հաստատած կարգի, կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ, 12. լուծում է Բանկի կանոնադրությամբ իրեն վերապահված այլ հարցեր:
Վարչության անդամներ	Հարությունյան Արտաշես Ենոքի ծնված 1983թ., տնտեսագետ-մաթեմատիկոս, Քաղաքացիությունը՝ ՀՀ	23.09.2013-14.06.2023թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Դիլինգ կենտրոն վարչության պետ 15.06.2023-30.09.2023 թ.թ.	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով

	հասցե՝ ք. Երևան, Ն. Տիգրանյան փ., 19/1 շենք, բն. 43	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ (Վարչության նախագահի տեղակալ) 01.10.2023թ.-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Ֆինանսական գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Բադալյան Ռուբեն Անատոլիի, ծնված 1979թ.,տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Նարեկացի 31շ. 23 բն.	07.10.2016թ-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Գործառնական գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Չիչյան Օնիկ Գևորգի, ծնված 1977թ., տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Նորք Մարաշ 11 փող. 75 տուն	01.06.2015թ.-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ (վարչության նախագահի տեղակալ)	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Մանրիկյան Աստղիկ Մեսրոպի, ծնված 1982թ., արևելագետ մագիստրոս, բիզնես վարչարարության մագիստրոս Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ Երևան, Տիգրան Մեծի 36դ-16	01.06.2015թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ (վարչության նախագահի տեղակալ):	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Արփինե Փիլոսյան ծնված 1983թ. տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Գալշոյան 12/12	31.10.2016-30.09.2023թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Տեխնոլոգիաների և անվտանգությա ն գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ) 01.10.2023թ.-առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Տեխնոլոգիաների գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Գալստյան Նոնա Կոլյայի, ծնված 1977թ., տնտեսագետ, Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Միքայելյան փող., 78 շենք, բն. 28	16.09.2004-14.06.2023թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ Գլխավոր հաշվապահի տեղակալ 15.06.2023թ.-ից առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ Գլխավոր հաշվապահի ժ/պ	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Ավետիսյան Հայկ Միշայի ծնված 1979թ., ՏԳԹ, տնտեսագետ-մաթեմատիկոս, Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Էջմիածին, Ռ. Եսայան փող. 23 տուն	03.02.2011-05.07.2023թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ 06.07.2023-19.09.2023թ.թ. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Ռիսկերի կառավարման վարչության պետ 20.09.2023թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Ռազմավարության և մեթոդաբանության վարչության պետ 07.02.2011թ. առ այսօր <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)

		վարչության անդամ, 21.01.2009թ.- առ այսօր «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, Խորհրդի անդամ:	
	Ջհանգիրյան Վրեժ Գագիկի ծնված 1980. Իրավաբան Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Երևան, Կ. Ուլնեցու փող. 16/1տուն	20.01.2015թ.-ից առ այսօր - <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ Իրավաբանական Վարչության պետ: 02.02.2015թ. առ այսօր <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ վարչության անդամ:	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)
	Բաբայան Կարեն Նորիկի ծնված 1984թ. տնտեսագետ Քաղաքացիությունը՝ ՀՀ հասցե՝ ք. Եղեգնաձոր, Լևոնյան նրբ., տուն 5	29.08.2007թ.-18.12.2019թ.թ. ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչություն, վերահսկող 19.12.2019-19.09.2023թ.թ. ՀՀ կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության վարչության Ֆինանսական համակարգերի վերլուծությունների բաժնի պետ 20.09.2023թ. առ այսօր «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Ռիսկերի կառավարման վարչության պետ 20.09.2023թ. առ այսօր <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ վարչության անդամ	Իրավասություններ և պարտականություններ՝ Ապահովում է Կանոնադրության 6.32 կետով սահմանված գործառույթների իրականացումը (տես Ծրագրային ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 1)

Բանկի վարչության անդամներ	**Պ Ա Շ Տ Ո Ն Ը**	
	բանկում	**վերջին հինգ տարում բանկից դուրս**
Առաքելյան Արտակ Արմենակի	Վարչության նախագահ, գործադիր տնօրեն	-
Հարությունյան Արտաշես Ենոքի	Ֆինանսական գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	
Բադալյան Ռուբեն Անատոլիի	Գործառնական գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	-
Չիլյան Օնիկ Գևորգի	Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	-
Մանրիկյան Աստղիկ Մեսրոպի	Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	-
Արփինե Փիլոսյան	Տեխնոլոգիաների գծով տնօրենի տեղակալ Վարչության նախագահի տեղակալ	-
Գալստյան Նոնա Կոլյայի	Գլխավոր հաշվապահի, Վարչության անդամի ժ/պ	-
Ավետիսյան Հայկ Միշայի	Ռազմավարության և մեթոդաբանության վարչության պետ Վարչության անդամ	21.01.2009թ.- առ այսօր «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, Խորհրդի անդամ
Ջհանգիրյան Վրեժ Գագիկի	Իրավաբանական վարչության պետ Վարչության անդամ	-
Բաբայան Կարեն Նորիկի	Ռիսկերի կառավարման վարչության պետ Վարչության անդամ	29.08.2007թ.-18.12.2019թ.թ. ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության վարչություն, վերահսկող 19.12.2019-19.09.2023թ.թ. ՀՀ կենտրոնական բանկ,

		Ֆինանսական կայունության վարչության Ֆինանսական համակարգերի վերլուծությունների բաժնի պետ

3) կառավարման մարմնի անդամների միջև ազգակցական կապը (արդյո՞ք նրանք միևնույն ընտանիքի անդամներ են, ազգակցական կապի բնույթը).

Կառավարման մարմինների միջև ազգակցական կապեր չկան:

4) կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամի մասին հետևյալը՝
ա. մասնագիտությունը (որակավորումը),
բ. ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում ո՞ր ընկերություններում կամ կազմակերպություններում և ինչպիսի՞ ղեկավար պաշտոններ է զբաղեցրել բանկի տվյալ կառավարման մարմնի անդամը: Այստեղ պետք չէ ներկայացնել բանկի դուստր ընկերություններում այդ անդամների զբաղեցրած ղեկավար պաշտոնները.

Տեղեկությունները ներկայացված են ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 2-ում:

գ. ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում խարդախության համար դատվածության մասին,

ՉԿԱ

դ. արդյո՞ք բանկի կառավարման մարմնի անդամները ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում որևէ առնչություն ունեցել են որևէ սնանկության, լուծարման կամ սնանկ ճանաչված անձի ակտիվների կառավարման գործընթացների հետ: Եթե այո, ապա տալ դրա նկարագիրը,

ՈՉ

ե. արդյո՞ք բանկի կառավարման մարմնի անդամները ազդագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 5 տարվա ընթացքում պատասխանատվության ենթարկվել են պետական որևէ մարմնի կամ կարգավորող (վերահսկող) մարմնի կողմից և արդյո՞ք նրանք դատարանի կողմից զրկվել են որևէ թողարկողի կառավարման մարմնի անդամի պաշտոն զբաղեցնելու իրավունքից: Եթե այո, ապա տալ դրա նկարագիրը,

ՈՉ

5) արդյո՞ք հնարավոր է շահերի բախում որպես բանկի կառավարման մարմնի անդամ բանկի նկատմամբ իր պարտականությունների և իր անձնական շահերի միջև: Եթե այո, ապա պարզ ձևով նկարագրել այդ: Շահերի բախման բացակայության դեպքում՝ նշել առանձին դրույթ այդ մասին,

Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազդագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:

6) կա՞ արդյոք որևէ պայմանավորվածություն խոշոր բաժնետերերի, հաճախորդների, մատակարարների կամ այլ անձանց հետ, համաձայն որի որևէ անձ ընտրվել կամ նշանակվել է բանկի կառավարման մարմնի անդամ: Եթե այո, ապա տալ դրա նկարագիրը:

ՈՉ

13. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ

1) բանկի կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի կողմից բանկից և նրա դուստր ընկերություններից որպես վարձատրություն և պարգևավճար ստացված գումարները՝ ներառյալ նրանց օգտին կատարված ցանկացած ձևով փոխհատուցումները (կուտակային կենսաթոշակային հատկացումները, ապահովագրական վճարները, բաժնետոմսերի ձեռքբերման օպցիոնները և այլն),

2) բանկի կողմից բանկի կառավարման մարմինների անդամների օգտին կատարված կենսաթոշակային վճարումները՝ ընդհանուր գումարով.

Պաշտոն	Անուն,ազգանուն,հայրանուն	2023թ. ընթացքում ստացած աշխատավարձ և դրան հավասարեցրած այլ վճարումներ
Խորհրդի նախագահ	Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	156,000,000
Խորհրդի նախագահի տեղակալ	Խաչատրյան Արամ Դավիթի	294,699,168
Խորհրդի անդամ	Հայրապետյան Ռուբեն Աշոտի	56,913,611
Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար	Պետրոսյան Լուիզա Աշոտի	55,788,240
Խորհրդի անդամ	Պեր Ֆիշեր	12,850,975
Խորհրդի անդամ	Սուվարյան Հրանտ Ռաֆիկի	27,978,658
Գործադիր տնօրեն	Առաքելյան Արտակ Արմենակի	84,626,523
Ֆինանսական գծով տնօրենի տեղակալ	Հարությունյան Արտաշես Ենոքի	45,878,655
Գործառնական գծով տնօրենի տեղակալ	Բադալյան Ռուբեն Անատոլիի	55,991,412
Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ	Չիչյան Օնիկ Գևորգի	58,582,162
Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ	Մանրիկյան Աստղիկ Մեսրոպի	55,041,168
Տեխնոլոգիաների գծով տնօրենի տեղակալ	Փիլոսյան Արփինե	54,960,918
Գլխավոր հաշվապահի ժ/պ	Գալստյան Նոնա Կոլյայի	36,782,436
Ռազմավարության և մեթոդաբանության վարչության պետ	Ավետիսյան Հայկ Միշայի	42,726,637
Իրավաբանական վարչության պետ	Ջհանգիրյան Վրեժ Գագիկի	42,640,953
Ռիսկերի կառավարման վարչության պետ	Բաբայան Կարեն Նորիկի	11,725,000

14. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1) կառավարման մարմինների յուրաքանչյուր անդամի՝ տվյալ պաշտոնում պաշտոնավարման սկիզբը և ավարտը.

Ներկայացված է ազդագրի Բաժին 3, կետ 12, ենթակետ 2-ում:

2) տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք կառավարման անդամները չունեն պայմանագրեր բանկի կամ նրա դուստր ընկերությունների հետ այն մասին, որ իրենց պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո պետք է ստանան պարգևավճար կամ լրավճար: Եթե նման պայմանագրեր առկա չեն, ապա առանձին դրույթով նշել դրանց բացակայության մասին,

Նման պայմանագրեր չկան:

3) առկայության դեպքում ներկայացնել բանկի աուդիտի կոմիտեի կամ աշխատավարձերի (վարձատրության) կոմիտեների մասին տեղեկատվություն, ներառյալ կոմիտեների անդամների անունը, ազգանունը և կոմիտեների իրավասությունները և պարտականությունները: Նման կոմիտեները կազմված են լինում բանկի կառավարման մարմինների անդամներից և ստեղծվում են կոնկրետ խնդիրների լուծման նպատակով,

Բանկում գործում են Աուդիտի հանձնաժողով, Կադրային քաղաքականության հանձնաժողով, Ռիսկերի հանձնաժողով, որոնք հանդիսանում են Բանկի խորհրդին կից խորհրդատվական մարմիններ, որոնք ստեղծվում են Բանկի Խորհրդի որոշմամբ:

««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ աուդիտի հանձնաժողովի» կանոնակարգի համաձայն.

- Հանձնաժողովի հիմնական նպատակն է Բանկի Խորհրդի աշխատանքների և նրա կողմից ընդունվող որոշումների արդյունավետության բարձրացումը, ներքին հսկողության համակարգի ուժեղացումը, ինչպես նաև Խորհրդի անդամների, Բանկի ղեկավարների, ներքին աուդիտի ստորաբաժանման, արտաքին աուդիտորի և ՀՀ կենտրոնական բանկի փոխգործակցության բարելավումը:
- Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝
  - Բանկի ներքին հսկողության գործառույթների իրականացման բարելավման վերաբերյալ Բանկի խորհրդին առաջարկների տրամադրումը:
  - Ներքին աուդիտի կողմից խորհրդին ներկայացված ստուգումների և հետստուգումային հաշվետվությունների ուսումնասիրումը:
  - Արտաքին աուդիտի աուդիտորական եզրակացութան (հաշվետվության և ղեկավարության նամակի) նախնական ուսումնասիրումը:
- Հանձնաժողովն իր խնդիրներին համապատասխան կատարում է հետևյալ գործառույթները.
  - Բանկի եռամսյակային և տարեկան (այդ թվում՝ աուդիտի կողմից հաստատված) հաշվետվությունների հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկությունների ներկայացումը:
  - Բանկի ներքին հսկողության, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության բարելավման վերաբերյալ խորհրդին առաջարկությունների ներկայացումը:
  - Բանկի խորհրդին առաջարկությունների ներկայացումը Բանկի արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ:
  - Տարեկան առնվազն մեկ անգամ արտաքին աուդիտորի հետ հանդիպումը:
  - Բանկի արտաքին աուդիտորի հաշվետվությունների քննարկումը և համապատասխան տեղեկատվության տրամադրումը խորհրդին:
  - Բանկի ներքին հսկողության համակարգին վերաբերող քաղաքականությունների (բացառությամբ ռիսկերի կառավարման քաղաքականության, կադրային քաղաքականության, աշխատակիցների վարձատրության բոնուսային համակարգին և խրախուսանքներին ու տույժերին վերաբերող

քաղաքականությունների) վերաբերյալ խորհրդին առաջարկությունների ներկայացումը:

- Ներքին իրավական ակտերի (բացառությամբ կադրային քաղաքականությանը, ռիսկերի կառավարմանը, աշխատակիցների վարձատրության բոնուսային համակարգին և խրախուսանքներին ու տույժերին վերաբերող ներքին իրավական ակտերի), Բանկի բյուջեի և հեռանկարային զարգացման ծրագրի մանրամասն ուսումնասիրումը, քննարկումը և խորհրդին առաջարկությունների ներկայացումը:
- Բանկի ներքին աուդիտի ստուգումների արդյունքների մասին և հետստուգումային հաշվետվությունների նախնական դիտարկումը և առաջարկությունների ներկայացումը խորհրդին:
- Ներքին աուդիտի ստորաբաժանման ամենամյա ստուգումների պլանի կատարողականի նախնական դիտարկումը և առաջարկությունների ներկայացումը խորհրդին:

Աուդիտի հանձնաժողովի անդամներն են.

Պաշտոն	**Անուն,ազգանուն,հայրանուն**
Խորհրդի անդամ, Աուդիտի հանձնաժողովի նախագահ	Սուվարյան Հրանտ Ռաֆիկի
Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար, Աուդիտի հանձնաժողովի քարտուղար	Պետրոսյան Լուիզա Աշոտի
Խորհրդի անդամ, Աուդիտի հանձնաժողովի անդամ	Հայրապետյան Ռուբեն Աշոտի
Խորհրդի անդամ, Աուդիտի հանձնաժողովի անդամ	Պեր Ֆիշեր

««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կադրային քաղաքականության հանձնաժողովի» կանոնակարգի համաձայն.

- Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝
  - Բանկի կառուցվածքի, Բանկի ստորաբաժանումների կառուցվածքի վերանայման, Բանկի որոշակի պաշտոնների թեկնածուների նշանակման վերաբերյալ առաջարկների քննարկումը:
  - Բանկի կադրային քաղաքականությանը, աշխատակիցների վարձատրության բոնուսային համակարգին և խրախուսանքներին ու տույժերին վերաբերող ներքին իրավական ակտերի քննարկումը:
- Հանձնաժողովն իր խնդիրներին համապատասխան կատարում է հետևյալ գործառույթները.
  - ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կադրային քաղաքականության (ներքին կարգապահական կանոններ)» կարգով սահմանված խորհրդի իրավասության պաշտոնների թեկնածուների հետ հարցազրույցների անցկացումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:
  - Բանկի կառուցվածքի, Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքի վերանայման վերաբերյալ առաջարկների քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:
  - Բանկի կադրային քաղաքականությանը, աշխատակիցների վարձատրության բոնուսային համակարգին և խրախուսանքներին ու տույժերին վերաբերող ներքին իրավական ակտերի քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

Կադրային քաղաքականության հանձնաժողովի անդամներն են.

Պաշտոն	Անուն,ազգանուն,հայրանուն
Խորհրդի անդամ, Կադրային քաղաքականության հանձնաժողովի նախագահ	Հայրապետյան Ռուբեն Աշոտի
Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար Կադրային քաղաքականության հանձնաժողովի քարտուղար	Պետրոսյան Լուիզա Աշոտի
Խորհրդի նախագահի տեղակալ, Կադրային քաղաքականության հանձնաժողովի անդամ	Խաչատրյան Արամ Դավիթի
Խորհրդի անդամ, Կադրային քաղաքականության հանձնաժողովի անդամ	Սուվարյան Հրանտ Ռաֆիկի

««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի հանձնաժողովի» կանոնակարգի համաձայն.

- Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝
  - Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման նկատմամբ հսկողության բարելավման (կատարելագործման) վերաբերյալ Բանկի խորհրդին առաջարկների տրամադրումը:
  - Բանկի ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկների քննարկումը:
  - Բանկի ռիսկերի կառավարմանը վերաբերող ներքին իրավական ակտերի քննարկումը:
- Հանձնաժողովն իր խնդիրներին համապատասխան կատարում է հետևյալ գործառույթները.
  - Բանկի ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, կենսագործունեության և շարունակական մոնիտորինգի արդյունավետության վերաբերյալ Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:
  - Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման նկատմամբ հսկողության բարելավման (կատարելագործման) վերաբերյալ Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:
  - Բանկի ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկների քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:
  - Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից ներկայացված ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվությունների քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:
  - Բանկի ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից տրված բացասական եզրակացությունների վերաբերյալ ներկայացված հաշվետվության քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:
  - Բանկի ռիսկերի կառավարմանը վերաբերող ներքին իրավական ակտերի քննարկումը և Բանկի խորհրդին խորհրդատվական բնույթի առաջարկների տրամադրումը:

Ռիսկերի հանձնաժողովի անդամներն են.

Պաշտոն	Անուն,ազգանուն,հայրանուն
Խորհրդի անդամ, Ռիսկերի հանձնաժողովի նախագահ	Պեր Ֆիշեր
Խորհրդի անդամ, խորհրդի քարտուղար Ռիսկերի հանձնաժողովի քարտուղար	Պետրոսյան Լուիզա Աշոտի
Խորհրդի նախագահի տեղակալ, Ռիսկերի հանձնաժողովի անդամ	Խաչատրյան Արամ Դավիթի
Խորհրդի անդամ, Ռիսկերի հանձնաժողովի անդամ	Հայրապետյան Ռուբեն Աշոտի

Բանկում այլ կոմիտեներ չկան:

4) նշել արդյո՞ք բանկը բավարարում է իր ստեղծման երկրում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին (նման սկզբունքների առկայության դեպքում):

Բանկը բավարարում է ՀՀ Կառավարության հաստատած կորպորատիվ կառավարման սկզբունքներին (կանոնագրքին) և Բանկի կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը տեղադրված է բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am՝ **<<Կորպորատիվ կառավարում>>** ենթաբաժնում:

15. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

1) պատմական ֆինանսական ժամանակաշրջանում ընդգրկված յուրաքանչյուր ֆինանսական տարվա կտրվածքով աշխատակիցների միջին տարեկան թվաքանակը կամ այդ թվաքանակը տարվա վերջի դրությամբ.

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանում Բանկի աշխատակիցների թվաքանակը հետևյալ է.

31.12.2021թ. դրությամբ՝ 912 հոգի
31.12.2022թ. դրությամբ՝ 939 հոգի
31.12.2023թ. դրությամբ՝ 986 հոգի

2) հնարավորինս թարմ տեղեկատվություն բանկի կառավարման մարմնի յուրաքանչյուր անդամին պատկանող՝ բանկի բաժնային արժեթղթերի և այդ արժեթղթերի նկատմամբ օպցիոնների առկայության մասին՝ նշելով նրանցից յուրաքանչյուրին պատկանող արժեթղթերի դասը, քանակը, տոկոսը ընդհանուրի մեջ և այլն,

Ա.Ա.Հ.	Պաշտոն	Մասնակցության չափը բանկի կանոնադրական կապիտալում
Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	Խորհրդի նախագահ	**արժեթղթերի դասը (տեսակը)**՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը**՝ 2,828,973 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ**՝ 25.40% **արժեթղթերի դասը (տեսակը)**՝ արտոնյալ բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը**՝ 211,905 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ**՝ 49.91%
Խաչատրյան Արամ Դավիթի	Խորհրդի նախագահի տեղակալ	**արժեթղթերի դասը (տեսակը)**՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը**՝ 2,120 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ**՝ 0.019%
Հայրապետյան Ռուբեն Աշոտի	Խորհրդի անդամ	**արժեթղթերի դասը (տեսակը)**՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը**՝ 690 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ**՝ 0.006%
Պետրոսյան Լուիզա Աշոտի	Խորհրդի անդամ, Խորհրդի քարտուղար	**արժեթղթերի դասը (տեսակը)**՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը**՝ 1,375 հատ

		տոկոսը ընդհանուրի մեջ՝ 0.012%
Պեր Ֆիշեր	Խորհրդի անդամ	-
Սուվարյան Հրանտ Ռաֆիկի	Խորհրդի անդամ	-
Առաքելյան Արտակ Արմենակի	Գործադիր տնօրեն, (Վարչության նախագահ)	**արժեթղթերի դասը (տեսակը)՝** սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը՝** 1,565 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ՝** 0.014%
Հարությունյան Արտաշես Ենոքի	Ֆինանսական գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	**արժեթղթերի դասը (տեսակը)՝** սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը՝** 1,045 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ՝** 0.009%
Բադալյան Ռուբեն Անատոլիի	Գործառնական գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	-
Չիչյան Օնիկ Գևորգի	Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	-
Մանրիկյան Աստղիկ Մեսրոպի	Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ (Վարչության նախագահի տեղակալ)	**արժեթղթերի դասը (տեսակը)՝** սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը՝** 1,565 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ՝** 0.014%
Փիլոսյան Արփինե	Տեխնոլոգիաների գծով տնօրենի տեղակալ Վարչության նախագահի տեղակալ	**արժեթղթերի դասը (տեսակը)՝** սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը՝** 985 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ՝** 0.009%
Գալստյան Նոնա Կոլյայի	Գլխավոր հաշվապահի, Վարչության անդամի ժ/պ	**արժեթղթերի դասը (տեսակը)՝** սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը՝** 325 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ՝** 0.003%
Ավետիսյան Հայկ Միշայի	Ռազմավարության և մեթոդաբանության վարչության պետ Վարչության անդամ	**արժեթղթերի դասը (տեսակը)՝** սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) **արժեթղթերի քանակը՝** 1,480 հատ **տոկոսը ընդհանուրի մեջ՝** 0.013%
Ջհանգիրյան Վրեժ Գագիկի	Իրավաբանական վարչության պետ Վարչության անդամ	-
Բաբայան Կարեն Նորիկի	Ռիսկերի կառավարման վարչության պետ Վարչության անդամ	-

3) նկարագրություն այն մասին, թե ինչ ծրագրեր են գործում՝ կապված աշխատակիցներին բանկի կապիտալում մասնակցության հնարավորություն ընձեռելու հետ:

Նման ծրագրեր չկան:

16. ԽՈՇՈՐ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ ԵՎ ՀՍԿՈՂ ԱՆՁԻՆՔ

1) այնքանով, որքանով հայտնի է բանկին, խոշոր բաժնետերերի (բացառությամբ թողարկողի կառավարման մարմինների անդամների) անունը, ազգանունը, նրանցից

յուրաքանչյուրի մասնակցության չափը: Եթե չկան խոշոր բաժնետերեր, ապա առանձին նշել այդ փաստը,

Բանկի խոշոր բաժնետերերն են.
Սուքիասյան Խաչատուր՝ մասնակցությունը սովորական բաժնետոմսերում՝ 13.55%, մասնակցությունը արտոնյալ բաժնետոմսերում՝ 23.55%
Սուքիասյան Էդուարդ՝ մասնակցությունը սովորական բաժնետոմսերում՝ 14.05%, մասնակցությունը արտոնյալ բաժնետոմսերում՝ 18.84%

2) տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք բոլոր խոշոր բաժնետերերին պատկանող բաժնետոմսերից յուրաքանաչյուրը տալիս է ձայնի միևնույն իրավունքը,

Բոլոր խոշոր բաժնետերերին պատկանող սովորական բաժնետոմսերից յուրաքանաչյուրը տալիս է ձայնի միևնույն իրավունքը:

3) այնքանով, որքանով հայտնի է բանկին, տեղեկատվություն այն մասին, թե արդյո՞ք բանկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գտնվում է հսկողության տակ: Եթե այո, ապա նշել հսկողների անվանումը (անունը, ազգանունը) և նույնականացման համար անհրաժեշտ այլ տեղեկատվություն, հսկողության բնույթը (ինչի հիման վրա է այդ անձը (անձինք) հսկում բանկին):

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն գտնվում է.

1. Սուքիասյանների ընտանիքի ուղղակի հսկողության տակ, քանի որ նրանք հանդիսանում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի սովորական բաժնետոմսերի 73.42%-ի, արտոնյալ բաժնետոմսերի 92.3%-ի սեփականատեր.

Սուքիասյան Սարիբեկ՝ մասնակցությունը սովորական բաժնետոմսերում՝ 25.40%, մասնակցությունը արտոնյալ բաժնետոմսերում՝ 49.91% (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),

Սուքիասյան Խաչատուր՝ մասնակցությունը սովորական բաժնետոմսերում՝ 13.55%, մասնակցությունը արտոնյալ բաժնետոմսերում՝ 23.55% (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),

Սուքիասյան Էդուարդ՝ մասնակցությունը սովորական բաժնետոմսերում՝ 14.05%, մասնակցությունը արտոնյալ բաժնետոմսերում՝ 18.84% (ք. Երևան, Զավարյան 6, բն. 1-5),

Այլ՝ մասնակցությունը սովորական բաժնետոմսերում՝ 20.42%

17. ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

Բանկի հետ կապված անձինք են համարվում Բանկի ղեկավարները, բանկի բաժնետերերը և "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքով սահմանված կարգով նրանց հետ կապված անձինք:

Բանկի ղեկավարներ են համարվում բանկի խորհրդի նախագահը, նրա տեղակալը և խորհրդի անդամները, գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին աուդիտի ղեկավարը, նրա անդամները, բանկի տնօրինության անդամները, ինչպես նաև բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ բանկի դեպարտամենտի, վարչության, բաժնի պետերը:

Բանկի հետ փոխկապակցված անձանց հետ գործարքները իրականացվել են շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Բանկի հետ կապված կողմերին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	**31/12/2023**	**31/12/2022**
Բանկի բաժնետեր	7,127,089	6,943,281
Հիմնական ղեկավար անձնակազմ	433,611	369,900
Ֆինանսական կազմակերպություն		
Ընդամենը	**7,560,700**	**7,313,181**
Տոկոսային եկամուտ	736,674	605,868

Բանկի հետ կապված կողմերից ներգրավված միջոցներ	**31/12/2023**	**31/12/2022**
Բանկի բաժնետեր	10,320,884	4,897,278
Հիմնական ղեկավար անձնակազմ	919,193	598,712
Ֆինանսական կազմակերպություն	259,260	227,716
Ընդամենը	**11,499,337**	**5,723,706**
Տոկոսային ծախս	533,694	200,180
Բանկի ղեկավարությանը վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	**31/12/2023**	**31/12/2022**
Բանկի խորհրդին	**434,532**	**312,985**
Աշխատավարձ	407,282	291,585
Պարգևատրում	27,250	21,400
Բանկի գործադիր մարմնին	**641,589**	**552,303**
Աշխատավարձ	469,089	510,703
Պարգևատրում	172,500	41,600
Բանկի ներքին աուդիտին	**124,840**	**126,537**
Աշխատավարձ	114,265	117,013
Պարգևատրում	10,575	9,524
Ընդամենը	**1,200,961**	**991,825**

18. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

1) Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացության բովանդակությունն ամբողջությամբ.

Ներկայացված են Ազդագրին կից հավելվածում:

2) Միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Եթե ազդագիրը գրանցման է ներկայացվում վերջին հաշվետու տարվա (որի համար ներկայացվել են անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվություններ) վերջին օրվանից սկսած 9 ամիս հետո, ապա ազդագրում ներկայացվում են միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (եռամսյակային կամ կիսամյակային՝ կախված թողարկողի ցանկությունից), որոնք ծածկում են տարվա սկզբից առնվազն 6 ամիս ժամանակաշրջան: Այս միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել առանց աուդիտորական եզրակացության:

31.12.2023թ. դրությամբ միջանկյալ հաշվետվությունները ներկայացված են Ազդագրին կից հավելվածում:

3) Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները.

Ազդագրում ներառված վերջին (ամենաթարմ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում թողարկողի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

(հազ. դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ		31.12.2023	31.03.24
1	Ընդհանուր ակտիվներ	464,882,112	471,424,247
2	Ընդհանուր պարտավորություններ	404,436,107	405,396,671
3	Սեփական կապիտալ	60,446,005	66,027,576
4	Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	6,742,138	2,197,031
5	Զուտ տոկոսային եկամուտ (տոկոսային եկամուտ-տոկոսային ծախս)	15,563,293	4,772,465

4) Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ներկայացվում է ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում թողարկողի ներգրավվածությամբ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական վարույթների նկարագիրը, որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա ունեցել են էական ազդեցություն.

31.12.2023թ. դրությամբ Բանկը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էական ազդել Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ ունեցել են էական ազդեցություն:

Բանկը որպես հաշվետու թողարկող, իր արժեթղթերի սեփականատերերին է ներկայացնում «Էական փաստերի և տեղեկությունների վերաբերյալ» հաշվետվություններ (վերոնշյալ տեղեկատվությունը բացահայտվել է նաև որպես «Էական փաստերի և տեղեկությունների վերաբերյալ» հաշվետվություն), որոնք տեղադրված են բանկի ինտերնետային կայքի՝ www.aeb.am՝ **«Սեփականատերեր»** բաժնում:

5) Հարկային արտոնությունները

Թողարկողի համար հատուկ հարկային արտոնություններ սահմանված չեն:

19. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1) Կանոնադրական կապիտալը
Տեղեկատվությունը 31.03.2024թ. դրությամբ.

ա. կանոնադրական կապիտալի մեծությունը՝ 29,539,334,720 դրամ,
բ. հայտարարված բաժնետոմսերի քանակը՝ 10,000,000 հատ սովորական բաժնետոմս, 228,479 հատ արտոնյալ բաժնետոմս

գ. թողարկված և լրիվ վճարված բաժնետոմսերի քանակը՝ 11,139,584 հատ սովորական բաժնետոմս, 424,600 հատ արտոնյալ բաժնետոմս, թողարկված, բայց ոչ լրիվ վճարված բաժնետոմսերի քանակը՝ 0,

դ. մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը՝ 2,080 ՀՀ դրամ, արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 15,000 ՀՀ դրամ,

ե. բանկին կամ նրա դուստր ընկերությանը պատկանող՝ բանկի թողարկած բաժնետոմսերի քանակը՝ 0:

2) Կանոնադրությունը

ա. բանկի նպատակը և գործունեության ոլորտը՝ նշելով թե բանկի կանոնադրության որ մասում կարելի է գտնել դրանք,

Բանկը ՀՀ կենտրոնական բանկից ստացած լիցենզիայի հիման վրա իրականացնում է բանկային գործունեություն և գործունեությունը շահույթ ստանալու նպատակ է հետապնդում:

Կանոնադրության կետ 1.5:

բ. օրենքի, ենթաօրենսդրական ակտերի և (կամ) կանոնադրության այն հոդվածները, որոնք կարգավորում են բանկի կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականություններ՝ ներկայացնելով դրանց համառոտ նկարագիրը,

Բանկի կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են կանոնադրության գլուխ 6-ով, որոնք ներկայացված են Ազդագրի Բաժին 3, կետ 12-ում, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Հոդված 21-Հոդված 21^{10}-ով:

գ. բանկի բաժնետոմսերի յուրաքանչյուր դասի սեփականատերերի իրավունքների և պարտականությունների նկարագիրը՝ ըստ կանոնադրության, ինչպես նաև այդ արժեթղթերի հետ կապված սահմանափակումները,

1. Բանկի կանոնադրական հիմնադրամի ձևավորմանը կարող են մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք:

2. Բանկի բաժնետերերը պարտավոր են.

ա/ չհրապարակել Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ,

բ/ բաժնետերերը կարող են կրել Բանկի կանոնադրությամբ նախատեսված և օրենքին ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտավորություններ,

գ/ ձեռնպահ մնալ գործունեության այն բոլոր տեսակներից, որոնք կարող են վնաս պատճառել Բանկին:

3. Բանկի յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի.

ա/ մասնակցել Բանկի ընդհանուր ժողովին վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,

բ/ մասնակցել Բանկի կառավարմանը,

գ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

դ/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,

ե/ ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձին,

զ/ հանդես գալ առաջարկություններով բաժնետերերի ընդհանուր ժողովում,

է/ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

ը/ հայցով դիմել դատարան Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքների ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

թ/ Բանկի լուծարման դեպքում ստանալ գույքի իր հասանելիք մասը,

ժ/ձեռք բերել իրեն պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունք, եթե՝

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին, և տվյալ բաժնետերը քվեարկել է Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չի մասնակցել.
- կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել է նշված բաժնետերի իրավունքները, և նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել այդ հարցի քվեարկությանը,

ժա/օգտվել օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

4. Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն՝

ա/ մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ օրենքով և բանկի կանոնադրությամբ սահմանված դեպքերում:

բ/ ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված չափով և կարգով

գ/ ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ օրենքով սահմանված ցանկացած տեղեկատվություն,

դ/ ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը Բանկի լուծարման դեպքում:

4.1. Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերն իրավունք ունեն մասնակցել Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին, եթե ժողովում քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցեր, կամ Բանկի կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը: Սույն ենթակետով սահմանված հարցերով ժողովին մասնակցությունը տեղաբաշխված մեկ արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

Արժեթղթերի հետ կապված սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ազդագրի Բաժին 2-ի կետ 3-ի «ը» ենթակետում:

դ. ինչ քայլեր է պետք ձեռնարկել բաժնետերերի իրավունքներում փոփոխություններ մտցնելու համար,

Բաժնետերերի իրավունքները սահմանված են կանոնադրության գլուխ 4-ով: Բաժնետերերի իրավունքներում փոփոխություններ մտցնելու համար պետք է ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկություն ներկայացնել հետևյալ կերպ.

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի.

1. Բանկի բաժնետոմսերի առնվազն 2%-ի ձայնի իրավունք ունեցող սեփականատերը, Բանկի ֆինանսական տարվա ավարտից 30 օրվա ընթացքում իրավունք ունի երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել ընկերության խորհրդի անդամության թեկնածուներ, ընդ որում՝ առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:

2. Օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցն առաջադրող բաժնետիրոջ անվանումը /անուն-ազգանունը/, նրան պատկանող բաժնետոմսերի քանակը:

3. Բանկի Խորհրդի անդամության թեկնածուի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, նշվում է կարգի 7.5.2. կետով պահանջվող տվյալները:

4. Բանկի Խորհուրդը քննարկում է ներկայացված առաջարկները և որոշում ընդունում 1 կետում նշված ժամկետը լրանալուց 15 օրվա ընթացքում:

5. Մերժման վերաբերյալ որոշում կարող է ընդունվել եթե ՝

- առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ կողմից խախտվել է վերը նշված 30 օր-յա ժամկետը,
- առաջարկ ներկայացրած բաժնետերը չի տնօրինում առնվազն 2% ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի քանակը,
- թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները չեն պարունակում սահման-ված անհրաժեշտ տվյալները,
- առաջարկը չի համապատասխանում գործող օրենսդրությանը:

6. Բանկի Խորհրդի հիմնավորված մերժման որոշումը ուղղվում է առաջարկ ներկա-յացրած բաժնետիրոջը՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում: Մերժման մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ե. հերթական և արտահերթ բաժնետերերի ժողովների հրավիրման կարգը, դրանց մասնակցելու կարգը,

Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է բանկի հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում, համաձայն բանկի բաժնետերերի ժողովի հաստատած ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի:

Բանկի բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող բաժնետերերի ընդհանուր ժողովները, որոնք հրավիրվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար՝ համարվում են արտահերթ: Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Բանկի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, գործադիր մարմնի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի**.**

1. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.
   - ✓ Բանկի տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ 1 բաժնետոմս 1 ձայն քվեարկության իրավունքով, ինչպես նաև անվանատերերը /հիմնավորող փաստաթղթերի ներկայացման դեպքում/,
   - ✓ Բանկի մասնակից չհանդիսացող Խորհրդի և Գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
   - ✓ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ,
   - ✓ Բանկի արտաքին աուդիտն իրականացնոց անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),
   - ✓ ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ,
   - ✓ հրավիրված անձինք, հյուրեր,
   - ✓ Արտոնյալ բաժնետոմս ունեցող բաժնետերերը՝ եթե ժողովում քննարկվում են Բանկի վերակազմակերպման կամ լուծարման հարցեր, կամ Բանկի կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը: Սույն ենթակետով սահմանված հարցերով ժողովին մասնակցությունը տեղաբաշխված մեկ արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

2. Բանկի Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ Բանկի ռեեստրի տվյալների հիման վրա /ամենամյա ռեեստր և հետագա ստացված պաշտոնական տեղեկանքներ/, Բանկի Խորհրդի կողմից հաստատված ամսաթվի դրությամբ: Ընդ որում, Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ երկու պահանջները.
   - ✓ այն չպետք է նախորդի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումն ընդունելու օրվան,
   - ✓ ցուցակը կազմելու օրվա և ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:

3. Բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է, ցուցակը կազմելու համար, այն կազմելու ամսաթվի դրությամբ տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակում նշվում են տվյալներ յուրաքանչյուր մասնակցի անվան /անվանման/, գտնվելու վայրի /հասցեի/ և նրան պատկանող բաժնետոմսերի քանակի մասին:

5. Վերը նշված Բանկի մասնակիցների ցուցակը ծանոթացման նպատակով պետք է տրամադրվի Բանկի այն մասնակիցներին, որոնք գրանցված են Բանկի մասնակիցների ռեեստրում: Բանկը, մասնակցի պահանջով, կարող է տալ տեղեկանք՝ ցուցակում նրա ընդգրկման մասին:

6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակի կազմման ընթացքում թույլ տրված

սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքների և շահերի վերականգնման նպատակով:

7. Բանկի Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերի Ծանուցումը հրապարակվում է ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ, «Առավոտ» օրաթերթում, Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.aeb.am, իսկ տարեկան ընդհանուր ժողովի դեպքում նաև ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.azdarar.am: Եթե տվյալ ժամանակամիջոցում նշված օրաթերթը լույս չի տեսնում, ապա բաժնետերերի ժողովի գումարման ծանուցումը հրապարակվում է խորհրդի որոշմամբ սահմանվող այլ օրաթերթում:

8. Բանկի բաժնետերերը և ժողովին մասնակցելու իրավունք ունեցող այլ անձինք ժողովի գումարման մասին ծանուցվում են համապատասխան գրավոր ծանուցմամբ փոստով ուղարկելու, էլեկտրոնային փոստով կամ առձեռն տրամադրելու միջոցով, ժողովի գումարումից առնվազն 21 օր առաջ:

9. Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը ներառում է՝

- ✓ Բանկի անվանումը և գտնվելու վայրը,
- ✓ ժողովի գումարման ամսաթիվը, ժամանակը և վայրը,
- ✓ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթիվը,
- ✓ ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը:

10. Բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը, որն ընդգրկում է.

- ✓ Բանկի տարեկան հաշվետվությունը,
- ✓ Բանկի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը,
- ✓ տեղեկություններ Բանկի Խորհրդի անդամների առաջադրվող թեկնածությունների վերաբերյալ, հետևյալ բնույթի.

ա/ Անուն Ազգանուն Հայրանուն, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը,

բ/ մասնագիտությունը և կրթությունը,

գ/ վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները,

դ/ տվյալ պաշտոնում ընտրվելու /նշանակվելու/ տարին, ամիսը, ամսաթիվը և պաշտոնից ազատվելու տարին, ամիսը, ամսաթիվը

ե/ տվյալ պաշտոնում վերընտրվելու քանակը

զ/ նրանց և նրա հետ փոխկապակցված անձանց պատկանող Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը

է/ տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ

ը/ փոխհարաբերությունների բնույթը տվյալ Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ

- ✓ տեղեկություններ Հաշվիչ հանձնաժողովի առաջադրվող թեկնածությունների մասին,
- ✓ Բանկի Կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ նախագիծը նոր խմբագրությամբ,
- ✓ օրակարգում ընդգրկված հարցերի հետ կապված այլ նյութեր,
- ✓ քվեաթերթիկը,
- ✓ օրենքով սահմանված այլ նյութեր /բաժնետերերի միավորման պայմանագրի պատճենը, առաջարկվող խորհրդի անդամի մասին, փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի խորհրդում առաջարկվող մասնակցի մասին (հեռակա քվեարկության դեպքում)/:

11. Բանկի կանոնադրական կապիտալում 10% մասնակցություն կազմելու նպատակով միավորված բաժնետերերի խմբի ստեղծման պայմանագիրը պետք է տրամադրվի Բանկին 10 կետի նյութերի կազմում ժողովի բոլոր մասնակիցներին դրա պատճենները տրամադրելու համար՝ ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Նշված Պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

- Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը,
- միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ.

ա/ Անուն Ազգանուն Հայրանուն, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը,

բ/ մասնագիտությունը և կրթությունը,

գ/ վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները,

դ/ նրան և նրա հետ փոխկապակցված անձանց պատկանող Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը,

ե/ տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ,

զ/ փոխհարաբերությունների բնույթը տվյալ Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ,

է/ միավորվող մասնակիցների հայեցողությամբ այլ տվյալներ:

12. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի մասին տեղեկատվությունը, պետք է տրամադրվեն Բանկին 10 կետի նյութերի կազմում ժողովի բոլոր մասնակիցներին դրա պատճենները տրամադրելու համար՝ ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Տարեկան ընդհանուր ժողովում փոքր բաժնետերերի ընդգրկումը Խորհրդի կազմում կատարվում է համաձայն Բանկի Կանոնադրության 6.20 ենթակետի պահանջների:

13. Ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս նույնպես, բաժնետերերին, քվեաթերթիկների և օրակարգի հետ մեկտեղ, տրամադրվում են անհրաժեշտ տեղեկությունները և նյութերը:

զ. օրենքի, ենթաօրենսդրական ակտերի և (կամ) կանոնադրության այն հոդվածները, որոնց հիման վրա պահանջվում է բանկի մոտ մասնակցություն ձեռք բերելիս բացահայտել դրա մասին տեղեկատվություն,

Բանկի մոտ մասնակցություն ձեռք բերելիս դրա մասին տեղեկատվության բացահայտում կանոնակարգվում է.

- «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 153-157 հոդվածներով, 169 հոդվածով
- «Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման և բացահայտման կարգը» Կանոնակարգ 4/15-ով,
- «Հաշվետու թողարկողի ղեկավարի, նրա և թողարկողի հետ փոխկապակցված անձանց կողմից իրենց հաշվին՝ թողարկողի բաժնետոմսերով, ածանցյալ գործիքներով կամ այդպիսի ածանցյալների հետ կապված այլ արժեթղթերով կնքված գործարքների վերաբերյալ Կենտրոնական բանկին ներկայացվող

հաշվետվություններում ներառվող տեղեկությունների կազմը, հաշվետվությունների ձևը և ներկայացման կարգը» Կանոնակարգ 4/16-ով:

է. կանոնադրության այն դրույթների նկարագիրը, որոնցով ավելի խիստ պահանջներ են սահմանվում, քան սահմանված է համապատասխան օրենքներով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

Չկան:

20. ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 2 տարվա ընթացքում բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող այն պայմանագրերի էական պայմանները, որոնց գինը գերազանցում է բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

Չկան:

21. ՓՈՐՁԱԳԵՏԻ, ԳՆԱՀԱՏՈՂԻ, ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԿԱՄ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑԻՑ ՎԵՐՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Փորձագետ կամ խորհրդատու, որի կարծիքը օգտագործվել է հայտարարագրում կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն՝ չկա:

22. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն այն մասին, որ ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում ներքոհիշյալ տեղեկատվությունը և փաստաթղթերը (կամ դրանց պատճեն) մշտապես մատչելի են հանրությանը.

1) Բանկի կանոնադրությունը,

2) Փորձագիտական եզրակացությունները կամ հաշվետվությունները, անկախ գնահատումները և վերլուծական նյութերը, որոնք պատրաստվել են բանկի պատվերով և որոնք կամ որոնց մի մասն օգտագործվել է ազդագրում.

Ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև որպես հաշվետու թողարկող, ներդրողների համար պատրաստվող տարեկան և միջանկյալ հաշվետվություն-վերլուծությունները, Էական փաստերի և տեղեկությունների վերաբերյալ հաշվետվությունները մշտապես մատչելի են հանրությանը ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի ինտերնետային կայքում՝ www.aeb.am, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխավոր գրասենյակ:

23. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ

Այն անձանց մասին տեղեկատվություն, որտեղ բանկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ունի ձայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոսի մասնակցություն՝ նշելով այդ անձանց անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը, բանկին պատկանող բաժնային արժեթղթերի քանակը և մասնակցության չափը:

Բանկն ուղղակիորեն ունի ձայնի իրավունք տվող 5 և ավելի տոկոսի մասնակցություն «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ում և «Ես եմ» ՓԲԸ-ում:

Անվանում՝ «Արմենիան Քարդ» փակ բաժնետիրական ընկերություն՝ ՓԲԸ,
Կազմակերպական-իրավական ձևը՝ փակ բաժնետրիրական ընկերություն,
Բանկի պատկանող բաժնային արժեթղթերի քանակը՝ 5 հատ սովորական բաժնետոմս,
Մասնակցության չափը՝ 6.25%
Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Գարեգին Նժդեհի 32/1:

Անվանում՝ «Ես եմ» փակ բաժնետիրական ընկերություն՝ ՓԲԸ,
Կազմակերպական-իրավական ձևը՝ փակ բաժնետրիրական ընկերություն,
Բանկի պատկանող բաժնային արժեթղթերի քանակը՝ 100,000 հատ սովորական բաժնետոմս,
Մասնակցության չափը՝ 8.34%
Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության պողոտա, 24/1:

Հավելված

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի համար անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, անկախ աուդիտորական եզրակացությունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	12
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	14
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	16

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ, դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և

ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

- *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 36.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային

ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից

պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

– Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Արմեն Հովհաննիսյանն է:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն/
Առաջադրանքի պատասխանատու

27 ապրիլի 2022թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2021	2020
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	27,099,448	25,846,673
Տոկոսային ծախսեր	6	(15,368,668)	(13,045,872)
Զուտ տոկոսային եկամուտներ		11,730,780	12,800,801
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	3,274,558	2,565,617
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(1,123,565)	(831,404)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		2,150,993	1,734,213
Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից		484,429	(709,484)
Զուտ արտարժութային եկամուտ	8	1,205,009	2,337,878
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից		129,895	2,220,878
Այլ եկամուտներ	9	528,640	359,619
Արժեզրկման ծախս	10	(1,840,266)	(2,277,136)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(5,112,281)	(5,017,239)
Հիմնական միջոցների մաշվածություն	21	(1,517,019)	(1,425,465)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	22	(138,825)	(94,055)
Այլ ծախսեր	12	(3,884,768)	(3,865,458)
Շահույթ մինչև հարկումը		3,736,587	6,064,552
Շահութահարկի գծով ծախս	13	(780,148)	(1,268,010)
Տարվա շահույթ		2,956,439	4,796,542

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2021	2020
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		-	7,724
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		-	7,724
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակած զուտ վնաս		(152,942)	(2,697,936)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		(209,518)	384,328
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		65,243	417,522
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով զուտ վնաս		(297,217)	(1,896,086)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		(297,217)	(1,888,362)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		2,659,222	2,908,180
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ	14	1.09	2.07

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 104-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	63,399,890	42,572,757
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16	5,053	16,538
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	9,497,133	13,755,753
Հակադարձ հետգնման պայմանագրեր	18	7,826,751	10,175,600
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	19	220,889,139	193,337,215
Ներդրումային արժեթղթեր	20	5,139,770	4,832,423
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	20	37,667,527	39,384,619
Հիմնական միջոցներ	21	12,694,277	12,804,374
Ոչ նյութական ակտիվներ	22	693,383	581,733
Այլ ակտիվներ	23	2,051,188	3,328,915
Ընդամենը՝ ակտիվներ		359,864,111	320,789,927
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	21,883	11,549
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	6,107,897	6,185,733
Հետգնման պայմանագրեր	18	34,576,952	38,125,044
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	25	131,081,522	115,700,441
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	135,948,859	112,495,410
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		247,266	790,950
Հետաձգված հարկային պարտավորություն	13	175,877	467,873
Ստորադաս փոխառություններ	27	3,605,469	1,311,068
Այլ պարտավորություններ	28	4,853,363	4,106,240
Ընդամենը՝ պարտավորություններ		316,619,088	279,194,308

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի, 2021թ.	31 դեկտեմբերի, 2020թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	26,107,555	25,955,663
Էմիսիոն եկամուտ		289,718	180,180
Գլխավոր պահուստ		3,481,000	3,275,000
Իրական արժեքի պահուստ		(361,148)	(63,931)
Այլ պահուստներ		3,214,025	3,319,815
Չբաշխված շահույթ		10,513,873	8,928,892
Ընդամենը՝ սեփական կապիտալ		43,245,023	41,595,619
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		359,864,111	320,789,927

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. ապրիլի 27-ին՝

Արամ Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Միքայել Պողոսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 104-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	25,955,663	180,180	3,275,000	(63,931)	3,319,815	8,928,892	41,595,619
Տարվա շահույթ	-	-	-	-	-	2,956,439	2,956,439
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(105,790)	105,790	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	(44,475)	-	-	(44,475)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ գումար	-	-	-	(108,467)	-	-	(108,467)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	(209,518)	-	-	(209,518)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	65,243	-	-	65,243
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(297,217)	(105,790)	3,062,229	2,659,222
Բաժնետիրական կապիտալի ավելացում	151,892	109,538	-	-	-	-	261,430
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(1,271,248)	(1,271,248)
Հատկացում պահուստին	-	-	206,000	-	-	(206,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	151,892	109,538	206,000	-	-	(1,477,248)	(1,009,818)
Հաշվեկշիռը 2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,107,555	289,718	3,481,000	(361,148)	3,214,025	10,513,873	43,245,023

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	25,635,343	-	3,105,000	1,832,155	3,409,549	5,475,662	39,457,709
Տարվա շահույթ	-	-	-	-	-	4,796,542	4,796,542
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(97,458)	97,458	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	(488,852)	-	-	(488,852)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ գումար	-	-	-	(2,209,084)	-	-	(2,209,084)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	384,328	-	-	384,328
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	417,522	7,724	-	425,246
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(1,896,086)	(89,734)	4,894,000	2,908,180
Բաժնետիրական կապիտալի ավելացում	320,320	180,180	-	-	-	-	500,500
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(1,270,770)	(1,270,770)
Հատկացում պահուստին	-	-	170,000	-	-	(170,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	320,320	180,180	170,000	-	-	(1,440,770)	(770,270)
Հաշվեկշիռը 2020թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,955,663	180,180	3,275,000	(63,931)	3,319,815	8,928,892	41,595,619

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 104-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2021	2020
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթը նախքան հարկումը	3,736,587	6,064,552
Ճշգրտումներ		
Մաշվածության մասհանումներ	1,517,019	1,425,465
Ամորտիզացիոն մասհանումներ	138,825	94,055
Հիմնական միջոցների արժեզրկում	29,537	-
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(99,963)	(4,655)
Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս	1,840,266	2,277,136
Նախկինում դուրս գրված վարկերի վերականգնում	(2,024,416)	(834,017)
Արտարժույթի փոխարկումից զուտ (օգուտ)/վնաս	605,876	(824,500)
Զուտ (օգուտ)/վնաս շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	(484,429)	709,484
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանանչումից	(129,895)	(2,220,878)
Ստացվելիք տոկոսներ	(198,353)	(75,274)
Վճարվելիք տոկոսներ	103,652	496,244
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	5,034,706	7,107,612
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	506,248	(716,264)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,264,372	1,449,591
Հակադարձ հետգնման պայմանագրեր	2,346,944	(4,048,770)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(34,669,421)	(7,858,758)
Այլ ակտիվներ	1,068,449	(3,556,642)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Հետգնման պայմանագրեր	(3,548,092)	12,483,844
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	27,954,487	(5,063,351)
Այլ պարտավորություններ	141,546	(290,478)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) մինչև շահութահարկը	2,099,239	(493,216)
Վճարված շահութահարկ	(1,550,585)	(896,630)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	548,654	(1,389,846)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2021թ.	2020թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(33,396,978)	(71,594,255)
Ներդրումային արժեթղթերի վաճառք	34,556,275	52,563,591
Հիմնական միջոցների առք	(1,153,541)	(1,238,234)
Հիմնական միջոցների վաճառք	236,081	47,447
Ոչ նյութական ակտիվների առք	(250,475)	(149,960)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(8,638)	(20,371,411)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի ավելացում	261,430	500,500
Կանխավճար բաժնետոմսերի թողարկման համար	1,000,019	261,430
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21,432,029	17,449,791
Թողարկած պարտքային արժեթղթերից մուտքեր	1,353,296	3,212,956
Թողարկած պարտքային արժեթղթերից ելքեր	(1,220,351)	(1,737,517)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(758,074)	(520,837)
Ստորադաս փոխառության ստացում	2,489,655	560,522
Ստորադաս փոխառության մարում	(89,886)	(41,830)
Վճարված շահաբաժիններ	(1,261,961)	(1,210,144)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	23,206,157	18,474,871
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	23,746,173	(3,286,386)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	42,572,757	44,050,205
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(2,080)	(2,692)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,916,960)	1,811,630
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 15)	63,399,890	42,572,757
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	26,901,095	25,771,399
Վճարված տոկոսներ	(15,265,016)	(12,354,633)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 104-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 1991 թվականին ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993թ. «Հայպետառբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995թ. Վերակազմավորվել է որպես բաց բաժնետիրական ընկերության՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 1 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորում և ավանդների ընդունումն է, (ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը), ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

2019թ. սեպտեմբերի 3-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալությունը հաստատել է Բանկի երկարաժամկետ գործընկերոջ ռիսկի՝ Ba3, երկարաժամկետ/կարճաժամկետ ավանդի վարկանիշ՝ B1/NP վարկանիշները: Բոլոր վարկանիշների գծով կանխատեսումը կայուն է:

2021թ. և 2020թ. գործում են 2019թ. սեպտեմբերի 3-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալության կողմից հաստատված վարկանիշերը:

Բանկն ունի 53 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Ամիրյան 23/1:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2020թ. աննկումից հետո Հայաստանի տնտեսությունը թևակոխել է կայուն վերականգնման փուլ: Ակնկալվում է, որ COVID-19-ի համավարակային իրավիճակի աստիճանական բարելավումը, Արցախի Հանրապետության վիճելի տարածքների շուրջ հրադադարի մասին համաձայնագիրը, ինչպես նաև պետական և մասնավոր ներդրումների ընդլայնումը կխթանեն 2022թ. աճը: Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված Կառավարության ջանքերը, ՓՄՁ-ների համար ֆինանսական հասանելիության ընդլայնումը, առաջնահերթ սոցիալական ծախսերի համար հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև կապիտալի շուկայի զարգացման ընդլայնված գործողությունների ծրագիրը նույնպես կարող են Հայաստանի տնտեսության կայունության և զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այնուամենայնիվ, ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ, հողի, շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:*(թողնել միայն բանկի համար կիրառելիները):*

- *COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ հունիսի 30-ից հետո (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),*
- *«Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև: *:(թողնել միայն բանկի համար կիրառելիները)*

- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»*
- *Փոփոխություններ ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրերում (Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում և ՖՀՄՍ 4-ում),*
- *«Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
- *«Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)*
- *Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
- *2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):*
- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),*
- *Մեկ գործարքի հետ կապված ակտիվների և պարտավորությունների հետաձգված հարկ;*

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է

ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի յաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4.4.6 ծանոթագրությունում:

Այլ տոկոսային եկամուտ

Այլ տոկոսային եկամտի հաշվարկում անվանական տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն արժեքի նկատմամբ գծային հիմունքով:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով

միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՄ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՄ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՄ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՄ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՄ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Զուտ օգուտը/(վնասը) իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և ֆինանսական պարտավորություններից

Զուտ օգուտը/(վնասը) իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և ֆինանսական պարտավորություններց ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը:

Զուտ արտարժութային եկամուտը

Զուտ արտարժութային եկամուտը ներառում է արտարժութային փոխարժեքային տարբերությունների բոլոր եկամուտները և ծախսերը նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտը կամ վնասը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման

օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2021թ. Դեկտեմբերի 31	2020թ. Դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	480.14	522.59
ՀՀ դրամ/1 Եվրո	542.61	641.11
ՀՀ դրամ/1 ՌՈՒԲ	6.42	7.02

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը և փոխատվությունները, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակայինօգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման պահանջները

բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			31 դեկտեմբերի 2020թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր						
Արտաժութային սվոփ պայմանագրեր	7,860,375	5,053	21,815	7,870,674	16,538	11,404
Այլ ածանցյալ գործիքներ	54,329	-	68	302,747	-	145
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		5,053	21,883		16,538	11,549

17 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	7,115,409	11,259,724
Դեպոնացված միջոցներ քարտերի քլիրինգային գործարքների իրականացման գծով	1,122,137	1,379,178
Վճարային համակարգերով ստացվելիք գումարներ	1,310,323	1,293,650
Բանկերում դեպոնացված այլ գումարներ	-	72,614
Ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա այլ գումարներ	7,385	2,350
	9,555,254	14,007,516
Արժեզրկումից պահուստներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	(58,121)	(251,763)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,497,133	13,755,753

Քարտերի քլիրինգային գործարքների գծով դեպոնացված միջոցները իրենցից ներկայացնում են ԱրՔա, Visa և Mastercard վճարային համակարգերով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդներ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021թ.		2020թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	251,763	251,763	48,815	48,815
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(193,642)	(193,642)	192,878	192,878
Վերականգնում	-	-	10,070	10,070
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,121	58,121	251,763	251,763

18 Հակադարձ հետգնման/հետգնման պայմանագրեր

Բանկն ունի գործարքներ հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրերով: Ռեպո համաձայնագրերով փոխատվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Բանկի կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի կողմից պարտավորությունների չկատարման (պարտազանցման դեպքում) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Բանկի սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն

իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ:

Հակադարձ հետգնման պայմանագրեր

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հակադարձ հետգնման պայմանագրեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրեր	7,935,596	10,309,207
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանգրեր	7,935,596	10,309,207
Արժեզրկումից պահուստներ	(108,845)	(133,607)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,826,751	10,175,600

Հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021		2020	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական արժեթղթեր	8,287,821	7,604,388	10,691,798	10,005,146
Ոչ պետական պարտատոմսեր	349,793	331,208	321,658	304,061
Ընդամենը	8,637,614	7,935,596	11,013,456	10,309,207

Հակադարձ հետգնման պայմանագրերով տրամադրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021թ.		2020թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	133,607	133,607	-	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(24,762)	(24,762)	133,607	133,607
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	108,845	108,845	133,607	133,607

Հետգնման պայմանագրեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	34,522,743	38,011,493
Հետգնման պայմանագրեր այլ ֆինանսական կազմակերպությունների հետ	54,209	113,551
Ընդամենը հետգնման պայմանագրեր	34,576,952	38,125,044

Հետգնման պայմանագրերով ներգրաված վարկերը ապահովված են Բանկի կողմից գրավադրված 22,867,966 հազար (2020թ.՝ 4,027,737 հազար ՀՀ դրամ) ՀՀ դրամ գումարով ամորտիզացված և 14,799,561 հազար ՀՀ դրամ (2020թ.՝ 35,356,882 հազար ՀՀ դրամ) գումարով իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ներդրումային արժեթղթերով: Տե՛ս ծանոթագրություն 20:

19 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			31 դեկտեմբերի 2020թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	29,270,243	(82,620)	29,187,623	20,342,364	(730,916)	19,611,448
Սպառողական վարկեր	55,159,634	(2,025,455)	53,134,179	68,059,743	(2,133,351)	65,926,392
	84,429,877	(2,108,075)	82,321,802	88,402,107	(2,864,267)	85,537,840
Առևտրային վարկեր						
Առևտուր	39,670,657	(184,643)	39,486,014	28,388,141	(112,967)	28,275,174
Արտադրություն	34,554,198	(319,585)	34,234,613	29,885,750	(315,343)	29,570,407
Շինարարություն	18,100,972	(291,441)	17,809,531	12,137,153	(24,324)	12,112,829
Գյուղատնտեսություն	23,371,532	(263,246)	23,108,286	9,941,518	(5,853)	9,935,665
Այլ ոլորտներ	24,137,511	(208,618)	23,928,893	27,960,041	(54,741)	27,905,300
	139,834,870	(1,267,533)	138,567,337	108,312,603	(513,228)	107,799,375
Ընդամենը	224,264,747	(3,375,608)	220,889,139	196,714,710	(3,377,495)	193,337,215

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել փոխատվության հանձնառության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավներ, որոնց հաշվեկշռային արժեքը կազմել է 328,006 հազար դրամ (2020թ.՝ 2,035,103 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում: Տե՛ս ծանոթագրություն 15:

2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի էական կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 50,482,607 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 22.5%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ կապակված անձանց (2020թ.՝ 37,836,151 հազար դրամ կամ 19.2%՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ կապակցված անձանց): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 363,493 հազար դրամ (2020թ.՝ 94,548 հազար դրամ):

2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների տրված վարկերը 15,353,198 հազար դրամ համախառն գումարով (2020թ.՝ 12,064,630 հազար դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը գրավադրված է ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի և 12,382,337 հազար դրամ համախառն գումարով (2020թ.՝ 7,653,987 հազար դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը՝ ՀՀ կենտրոնական բանկից ստացված վարկերի համար (տես ծանոթագրություն 25):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Հիփոթեքային և սպառողական վարկեր		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	2,864,267	802,371
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	241,342	2,561,286
Վերականգնում	137,119	75,208
Դուրսգրում տարվա ընթացքում	(1,134,653)	(574,598)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,108,075	2,864,267

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Առևտրային վարկեր		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	513,228	1,284,556
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	1,808,984	(1,051,697)
Վերականգնում	49,933	710,268
Դուրսգրում տարվա ընթացքում	(1,104,612)	(429,899)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,267,533	513,228

2021թ. և 2020թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերի գծով շարժը ըստ փուլերի հետևյալն է՝

Համախառն գումար	Մնացորդը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մարված կամ դուրսգրված վարկեր	2021թ. Տրամադրված նոր վարկեր	Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	193,972,027	147,206	(144,524)	(2,682)	(93,701,924)	121,993,930	222,264,033
Փուլ 2	1,389,394	(3,444,882)	3,446,195	(1,313)	(1,703,432)	410,662	96,624
Փուլ 3	1,353,289	(1,230,789)	(413,159)	1,643,948	(1,269,588)	1,820,389	1,904,090
Ընդամենը	196,714,710	(4,528,465)	2,888,512	1,639,953	(96,674,944)	124,224,981	224,264,747

Համախառն գումար	Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մարված կամ դուրսգրված վարկեր	2020թ. Տրամադրված նոր վարկեր	Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	176,241,915	-	(814,000)	(1,172,796)	(73,086,020)	92,802,928	193,972,027
Փուլ 2	143,237	814,000	-	(23,642)	(119,240)	575,039	1,389,394
Փուլ 3	1,808,388	1,172,796	23,642	-	(1,805,343)	153,806	1,353,289
Ընդամենը	178,193,540	1,986,796	(790,358)	(1,196,438)	(75,010,603)	93,531,773	196,714,710

2021թ. և 2020թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով շարժը ըստ փուլերի հետևյալն է՝

Ակնկալվող պարտքային կորուստներ	Մնացորդը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մարված կամ դուրսգրված վարկեր	2021թ. Տրամադրված նոր վարկեր	Մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	2,070,775	40,324	(38,921)	(1,403)	(1,643,870)	905,761	1,332,666
Փուլ 2	420,858	(18,337)	19,336	(999)	(67,785)	44,322	397,395
Փուլ 3	885,862	(25,025)	(237,005)	262,030	(216,176)	975,861	1,645,547
Ընդամենը	3,377,495	(3,038)	(256,590)	259,628	(1,927,831)	1,925,944	3,375,608

Ակնկալվող պարտքային կորուստներ	Մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Մարված կամ դուրսգրված վարկեր	2020թ. Տրամադրված նոր վարկեր	Մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փուլ 1	1,294,038	-	(7,059)	(11,966)	(844,944)	1,640,706	2,070,775
Փուլ 2	31,113	7,059	-	(4,131)	(26,878)	413,695	420,858
Փուլ 3	761,776	11,966	4,131	-	(759,848)	867,837	885,862
Ընդամենը	2,086,927	19,025	(2,928)	(16,097)	(1,631,670)	2,922,238	3,377,495

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի եւ տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 36.1.2 ծանոթագրությունում:

Ինչպես նշված է 33 ծանոթագրությունում, 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 35 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 36 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 32 ծանոթագրությունում:

20 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	210,849	-
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	603,448	524,792
Արժեզրկման գծով պահուստ	(12,938)	(9,224)
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	801,359	515,568
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	23,133,346	4,071,656
Արժեզրկման գծով պահուստ	(265,380)	(43,919)
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	22,867,966	4,027,737
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	23,669,325	4,543,305

Ամորտիզացված արժեքով չափվող՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021թ.		2020թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	53,143	53,143	2,195	2,195
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	225,175	225,175	50,948	50,948
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	278,318	278,318	53,143	53,143

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	5.7-10.4	2022-2047	9-9.3	2036-2047
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	9.3	2023	8.8	2021

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	4,225,515	3,557,090
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	-	647,844
Բաժնային գործիքներ	112,896	111,921
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	4,338,411	4,316,855
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	14,799,561	35,356,882
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	14,799,561	35,356,882
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19,137,972	39,673,737

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021թ.		2020թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	437,927	437,927	53,599	53,599
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(209,518)	(209,518)	384,328	384,328
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	228,409	228,409	437,927	437,927

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Բանկը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող (2020թ.՝ ոչինչ):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	2.9-12.5	2022-2050	4.5-13	2021-2050
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	-	-	4-8.4	2021

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերում ներառված բաժնային չգնանշվող արժեթղթերը ներկայացվում են ստորև.

Անվանումը	Գրանցման երկիրը	Վերահսկվող %		Հազար ՀՀ դրամ	
		2021	2020	2021	2020
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	1.25	1.25	82,500	82,500
ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ	Հայաստանի Հանրապետություն	3.68	3.68	23,255	23,255
SWIFT		-	-	7,141	6,166
				112,896	111,921

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

21 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Փոխադրա-միջոցներ	Համակար-գիչներ	Կապիտալ ներդրումներ վարձակալ-ված հիմնական միջոցներում	Այլ	Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք							
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	8,073,225	754,974	3,592,885	446,416	2,108,298	1,944,243	16,920,041
Ավելացում	344,823	214,183	245,157	242,524	191,547	373,329	1,611,563
Օտարում	(2,166)	(66,095)	(3,276)	(15,308)	-	(179,761)	(266,606)
Վերաչափում	-	-	-	-	-	398,822	398,822
Վերադասակարգում	-	-	623	-	(623)	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,415,882	903,062	3,835,389	673,632	2,299,222	2,536,633	18,663,820
Ավելացում	309,883	283,641	200,947	131,458	227,612	122,660	1,276,201
Օտարում	(44,103)	(178,770)	(559)	(114,560)	(6,424)	(9,733)	(354,149)
Վերաչափում	-	-	-	-	-	377,497	377,497
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,681,662	1,007,933	4,035,777	690,530	2,520,410	3,027,057	19,963,369
Կուտակված մաշվածություն							
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	208,842	337,256	2,149,756	113,588	1,264,039	584,314	4,657,795
Տարվա ծախս	227,198	89,959	328,056	13,078	177,294	589,880	1,425,465
Օտարում	-	(41,014)	-	(3,039)	-	(179,761)	(223,814)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	436,040	386,201	2,477,812	123,627	1,441,333	994,433	5,859,446
Տարվա ծախս	235,926	107,309	346,819	52,305	185,827	588,833	1,517,019
Արժեզրկում	-	29,537	-	-	-	-	29,537
Օտարում	-	(126,086)	(79)	(10,178)	(567)	-	(136,910)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	671,966	396,961	2,824,552	165,754	1,626,593	1,583,266	7,269,092
Հաշվեկշռային արժեք							
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,979,842	516,861	1,357,577	550,005	857,889	1,542,200	12,804,374
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,009,696	610,972	1,211,225	524,776	893,817	1,443,791	12,694,277

Ակտիվների վերագնահատում

Բանկի հողը և շենքերը ներկայացված են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի վերջին վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2019թ. հունվարին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 485,717 հազար դրամ գումարով: Հողի և շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Եթե հողը և շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 3,776,008 հազար դրամ (2020թ՝ 3,964,419 հազար դրամ):

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 662,175 հազար դրամ (2020թ. 773,010 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2020թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2020թ.՝ նույնպես):

22 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	Լիցենզիաներ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Մշակումից առաջացող ոչ նյութական ակտիվ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	417,215	301,286	30,550	60,000	809,051
Ավելացում	34,352	1,608	-	114,000	149,960
Վերադասակարգում	-	174,000	-	(174,000)	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	451,567	476,894	30,550	-	959,011
Ավելացում	165,891	84,584	-	-	250,475
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	617,458	561,478	30,550	-	1,209,486
Կուտակված ամորտիզացիա					
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	185,193	79,822	18,208	-	283,223
Մասհանումներ	55,431	35,579	3,045	-	94,055
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	240,624	115,401	21,253	-	377,278
Մասհանումներ	88,185	48,566	2,074	-	138,825
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	328,809	163,967	23,327	-	516,103
Հաշվեկշռային արժեք					
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	210,943	361,493	9,297	-	581,733
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	288,649	397,511	7,223	-	693,383

Պայմանագրային պարտավորություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2020թ.՝ նույնպես):

2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների:

2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 190,010 հազար դրամ (2020թ.՝ 142,670 հազար դրամ):

23 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Աշխատակիցներին տրված հատուցումներ	58,046	64,208
Ստացման ենթակա գումարներ	81,526	69,579
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(8,648)	(12,927)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	130,924	120,860
Բռնագանձված ակտիվներ	1,020,543	2,315,795
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր	500,858	507,416
Նյութեր	175,493	223,332
Թանկարժեք մետաղներ	443	443
Հարկերի կանխավճարներ	160,291	90,065
Այլ ակտիվներ	62,636	71,004
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	1,920,264	3,208,055
Ընդամենը այլ ակտիվներ	2,051,188	3,328,915

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021թ.		2020թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	12,927	12,927	12,860	12,860
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(32,077)	(32,077)	(25,735)	(25,735)
Դուրսգրում	-	-	(717)	(717)
Վերականգնում	27,798	27,798	26,519	26,519
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,648	8,648	12,927	12,927

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հողամաս	122,239	181,239
Շենքեր և շինություններ	898,304	2,134,556
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	1,020,543	2,315,795

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

24 Թողարկված պարտքային արժեթղթեր

2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Արժեքը մեկ պարտատոմսի դիմաց	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
29.01.2019	ԱՄՆ դոլար	100	21,000	5.25	29.01.2022	2,100,000
03.05.2019	ԱՄՆ դոլար	100	30,000	5.50	03.05.2022	3,000,000
03.05.2019	ՀՀ դրամ	10,000	100,000	10.25	03.05.2022	1,000,000,000
03.09.2020	ՀՀ դրամ	10,000	150,000	9.75	03.09.2023	1,500,000,000
03.09.2020	ԱՄՆ դոլար	100	22,000	5.00	03.09.2023	2,200,000

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը գնանշված են և ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2020թ. նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ նույնպես):

25 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարկեր ՀՀ կենտրոնական բանկից	21,563,144	9,443,156
Կանխավճարներ ՀՀ կառավարությունից	256,633	708,569
Ընդամենը վարկեր ՀՀ կենտրոնական բանկից և կառավարությունից	21,819,777	10,151,725
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	22,036,428	20,515,644
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	27,017,157	20,894,882
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	4,457,357	1,456,318
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	25,050	21,419
Այլ	141,628	106,082
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	53,677,620	42,994,345
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	55,584,125	62,554,371
Ընդամենը պարտավորությունների ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	131,081,522	115,700,441

ՀՀ ԿԲ-ից և ՀՀ Կառավարությունից ստացված վարկերը ներկայացնում են վարկեր ստացված գերմանա-հայկական հիմնադրամի «Մանր, փոքր և միջին բիզնեսի վարկային ծրագրի» և «Մանր, փոքր և միջին բիզնեսի էներգաարդյունավետության աջակցության» ֆինանսավորման շրջանակներում, «Վերականգնվող էներգետիկա», «Գյուղատնտեսության ոլորտի աջակցման» և «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրերի շրջանակներում ներգրավված միջոցները:
2021 և 2020թթ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդներն իրենցից ներկայացնում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ:
Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված բոլոր ավանդները ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը ունեն հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներ:

2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 15,353,198 հազար դրամ համախառն գումարով (2020թ.՝ 12,064,630 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի գրավով (տես ծանոթագրություն 19):

2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենտրոնական Բանկից ներգրավված վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 12,382,337 հազար դրամ համախառն գումարով (2020թ.՝ 7,653,987 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի գրավով (տես ծանոթագրություն 19):

2021թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար Բանկը չի ունեցել միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի կամ տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ նույնը):

2021 և 2020թթ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը, ներառյալ հաշվեգրված տոկոսները, կապիտալի և ֆինանսական որոշակի սահմանված պայմաններ ունեցող վարկերը, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Հազար ՀՀ դրամ

	Արժույթ	2021թ. Դեկտեմբերի 31			2020թ. Դեկտեմբերի 31		
		Մարմանը մնացած ժամկետ	Անվանական տոկոսադրույք, %	Հաշվեկշռային արժեք	Մարմանը մնացած ժամկետ	Անվանական տոկոսադրույք, %	Հաշվեկշռային արժեք
ՎԶԵԲ	ՀՀ դրամ	1 տարուց պակաս	9.12-9.68	3,341,144	1-2 տարի	6.39-7.46	5,564,684
Symbiotics SA	ՀՀ դրամ	1-2 տարի	8.32-11.75	2,414,985	1-3 տարի	7.79-11.67	4,963,491
ՎԶԵԲ	ԵՎՐՈ	-	-	-	1 տարուց պակաս	2.40	1,207,988
FMO	ԱՄՆ դոլար	2-3 տարի	3.5-5.43	12,216,957	3-4 տարի	3.5-5.43	15,646,118
DEG	ԱՄՆ դոլար	3 տարի	5.15	3,422,980	4 տարի	5.34	4,819,351
INCOFIN CVBA	ԱՄՆ դոլար	Մինչև 1 տարի	7.22	990,897	1-2 տարի	5.56-7.2	3,362,055
BSTDB	ԱՄՆ դոլար	2-3 տարի	3.16	4,810,692	4 տարի	3.31	5,275,296
GII	ԱՄՆ դոլար	-	-	-	1 տարուց պակաս	5.55	1,592,434
EFA	ԱՄՆ դոլար	-	-	-	1 տարուց պակաս	6.67	1,306,046
FMO	ԵՎՐՈ	3 տարի	3.16	2,713,422	4 տարի	3.16	3,200,290
ԲլյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	2 տարի	5.89	4,824,801	3 տարի	5.89	5,232,330
Ասիական զարգացման բանկ	ԱՄՆ դոլար	1-4 տարի	4.28-4.36	7,296,747	4 տարի	4.3	3,942,013
Ասիական զարգացման բանկ	ԱՄՆ դոլար	Մինչև 1 տարի	2.4-2.54	240,605	Մինչև 1 տարի	2-2.5	1,139,790
MSME BSA	ԱՄՆ դոլար	2-3 տարի	11.77	7,601,260	4 տարի	8.49	5,302,485
Microfinance Enhancement Facility S.A., SICAV-SIF	ԱՄՆ դոլար	3 տարի	5.55	2,427,128	-	-	-
Symbiotics SA	ԱՄՆ դոլար	3 տարի	5.55	2,430,746	-	-	-
Symbiotics SICAV II	ԱՄՆ դոլար	3 տարի	5.55	851,761	-	-	-
Ընդամենը				55,584,125			62,554,371

Բանկը պարտավոր է համապատասխանություն ապահովել վերոնշյալ փոխառու միջոցների գծով առկա ֆինանսական դրույթների հետ: Այդ դրույթները ներառում են սահմանված դրույքաչափերը, վարկ/կապիտալ հարաբերակցությունը և ֆինանսական գործունեությանն առնչվող մի շարք այլ տվյալներ: Բանկի կողմից չի արձանագրվել այս դրույթներից որևէ մեկի խախտում 2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ (2020թ.՝ նույնպես):

26 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	34,763,505	24,452,754
Ժամկետային ավանդներ	13,423,840	8,456,313
	48,187,345	32,909,067
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	23,288,301	22,002,903
Ժամկետային ավանդներ	64,473,213	57,583,440
	87,761,514	79,586,343
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	135,948,859	112,495,410

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ընթացիկ (ժամկետային) ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների գծով համապատասխանաբար 9,886,988 հազար դրամ գումարով (2020թ. 5,989,650 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ տաս հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը (ներառյալ փոխկապակցված անձինք, տես ծանոթ. 32) կազմում է 16,035,467 հազար դրամ (2020թ. 19,766,771 հազար դրամ) կամ հաճախորդների ավանդների ընդհանուր գումարի 11.8% (2020թ. 17.6%):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել իր հաճախորդների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ նույնպես):

27 Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Միջազգային ֆինանսական կազմակերպությունից ստացված ստորադաս փոխառություն	2,399,802	-
Ֆիզիկական անձից ստացված ստորադաս փոխառություն	722,878	786,808
Կապակցված կողմից ստացված ստորադաս փոխառություններ	482,789	524,260
Ընդամենը ստորադաս փոխառություն	3,605,469	1,311,068

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկային համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Բանկի

մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունից ստացված ստորադաս փոխառությունների մարման ժամկետ է սահմանված մինչև 2028թ.:

Ֆիզիկականական անձից ներգրաված ստորադաս փոխառությունների մարման ժամկետ է սահմանված մինչև 2026թ.:

Կապակցված կողմից ներգրաված ստորադաս փոխառությունների մարման ժամկետ է սահմանված մինչև 2027թ.:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ ոչինչ):

28 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Աշխատակիցներին վճարվելիք հատուցումներ	1,093,951	998,449
Անհատների նկատմամբ պարտավորություններ	293,851	369,197
Բաժնետոմսերի թողարկման գծով ստացված կանխավճարներ (ծանոթ. 29)	1,000,019	261,430
Վճարման ենթակա շահաբաժիններ	470,126	446,320
Վճարվելիք գումարներ	62,070	54,273
Վարձակալության գծով պարտավորություններ	1,572,752	1,674,091
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	4,492,769	3,803,760
Վճարման ենթակա հարկեր, բացի շահութահարկից	283,273	247,843
Պահուստներ*	77,321	54,637
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	360,594	302,480
Ընդամենը այլ պարտավորություններ	4,853,363	4,106,240

*Պահուստները ստեղծվել են ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով: Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերաբերյալ վերլուծությունը տե'ս ծանոթագրություն 30-ում:

Վարձակալության գծով պարտավորություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների (տե՛ս ծանոթագրություն 12)՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տես ծանոթագրություն 21):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները

կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (հունվարի 1-ի դրությամբ)	1,674,091	1,422,777
Ավելացում	122,660	373,329
Վերաչափում	377,497	398,822
Օտարում	(9,733)	-
Տոկոսի կուտակում	166,311	194,995
Վճարումներ	(758,074)	(715,832)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,572,752	1,674,091

2021թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 10.25% (2020թ.՝ 10.25%):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալաության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 36.3-ում:

29 Սեփական կապիտալ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված բաժնետիրական կապիտալը կազմել է 27,107,574 հազար դրամ, որից ամբողջությամբ վճարված և գրանցված կազմել է 26,107,555 հազար դրամ: Բաժնետոմսերի թողարկման գծով ստացված կանխավճարները հաշվառվում են 28 ծանոթագրությունում: Համաձայն Բանկի կանոնադրության, վճարված բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,897,938 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,400 դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 15,000 դրամ անվանական արժեքով:

Բանկի բաժնետերերն.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Սարիբեկ Սուքիասյան	7,526,270	28.83	7,467,198	28.77
Խաչատուր Սուքիասյան	4,638,533	17.77	4,638,533	17.87
Ռոբերտ Սուքիասյան	4,604,781	17.64	4,515,165	17.40
Էդուարդ Սուքիասյան	3,290,608	12.60	3,289,558	12.67
Այլ բաժնետերեր	6,047,363	23.16	6,045,209	23.29
	26,107,555	100	25,955,663	100

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2021թ. Բանկը համալրել է կանոնադրական կապիտալը՝թողարկելով է 151,892 հազար դրամի սովորական բաժնետոմսեր (2020թ.՝ 320,320 հազար դրամի արտոնյալ բաժնետոմսեր):

Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով: Արտոնյալ բաժնետոմսերը չունեն ձայնի իրավունք և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին ոչ պակաս, քան իրենց անվանական արժեքի 14% չափով՝ յուրաքանչյուր բաժնետոմսի համար:

Արտոնյալ և սովորական բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում 2021թ. հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է համապատասխանաբար 891,660 հազար դրամ և 379,588 հազար դրամ (2020թ.՝ 894,103 հազար դրամ և 376,667 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

30 Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Չօգտագործված վարկային գծեր	4,969,004	4,861,322
Տրամադրված երաշխիքներ	9,700,755	7,316,766
Ակրեդիտիվներ	209,146	-
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	14,878,905	12,178,088

Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստներում (տե՛ս ծանոթագրություն 19-ում):

Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները ներկայացվում են այլ պարտավորություններում, որոնց գծով վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Հազար ՀՀ դրամ	2021թ.		2020թ.	
	Փուլ 1		Փուլ 1	
Ֆինանսական երաշխավորություններ				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	54,637	54,637	25,808	25,808
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	22,684	22,684	28,829	28,829
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	77,321	77,321	54,637	54,637

Երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են «Այլ պարտավորություններում» (տե՛ս ծանոթագրություն 28-ում):

31 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների

մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Այնուամենայնիվ, 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկին սեփականության իրավունքով պատկանող գլխամասային շենքը և փոխադրամիջոցներն ապահովագրված են: Բանկն ունի նաև ապահովագրություն բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային, համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալի 76.84% (2020թ.՝ 76.71%) պատկանում է Սուքիասյաններին, որոնք հանդիսանում են Բանկի վերջնական վերահսկող:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2021		2020	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	4,743,737	289,095	2,971,445	127,519
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	2,140,407	474,134	2,529,959	430,447
Տարվա ընթացքում մարված վարկեր	(2,279,739)	(353,466)	(757,667)	(268,871)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	4,604,405	409,763	4,743,737	289,095
Արժեզրկումից պահուստ	(32,780)	(1,140)	(13,406)	(7,818)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,571,625	408,623	4,730,331	281,277
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	352,062	-	50,152	-
Տարվա ընթացքում տրամադրված	110,000	-	671,910	-
Տարվա ընթացքում մարված	(462,062)	-	(370,000)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	352,062	-
Արժեզրկումից պահուստ	-	-	(4,505)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	347,557	-
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	180,976	-	190,941	-
Տարվա ընթացքում ստացված	13,504,912	-	13,009,224	-
Տարվա ընթացքում վճարված	(13,476,591)	-	(13,019,189)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	209,297	-	180,976	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	791,688	664,407	810,839	811,491
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	21,136,405	2,941,696	16,121,399	2,478,728
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(19,505,584)	(2,920,181)	(16,140,550)	(2,625,812)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,422,509	685,922	791,688	664,407

Հազար ՀՀ դրամ	2021		2020	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Սկզբնական մնացորդներ				
Հունվարի 1-ի դրությամբ	524,260	-	-	-
Տարվա ընթացքում ստացված փոխառություններ	85,040	-	527,190	-
Տարվա ընթացքում վճարված փոխառություններ	(126,512)	-	(2,930)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	482,788	-	524,260	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	3,343	-	3,639
Տրամադրված երաշխիքներ	124,725	-	84,389	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	399,403	38,777	254,445	17,452
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	67,024	23,438	1,601	3,067
Վարկային կորուստների (ծախս)/հակադարձում	(19,374)	6,678	18,815	(5,795)
Գովազդային ծախսեր	53,400	-	53,400	-
Ապահովագրության գծով ծախսեր	146,133	-	151,183	-
Ֆինանսական վարձակալության գծով ծախսեր	375,701	-	397,173	-
Գործուղման ծախսեր	5,612	6,518	5,980	-
Այլ ծախսեր	44,085	3,950	100,499	-

Բանկի հետ կապված անձանց տարվա ընթացքում տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 20 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 5-16%:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Աշխատավարձ և պարգևատրումներ	760,697	701,703
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	760,697	701,703

33 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՝ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	63,399,890	-	63,399,890	63,399,890
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	9,497,133	-	9,497,133	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	7,826,751	-	7,826,751	7,826,751
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	220,134,417	-	220,134,417	220,889,139
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		21,940,527	-	21,940,527	23,669,325
Այլ ֆինանսական ակտիվներ	-	130,924	-	130,924	130,924
Ֆինանսական պարտավորություններ					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	6,150,215	-	6,150,215	6,107,897
Հետգնման պայմանագրեր	-	34,576,952	-	34,576,952	34,576,952
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	131,081,522	-	131,081,522	131,081,522
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	136,087,295	-	136,087,295	135,948,859
Ստորադաս փոխառություններ	-	3,715,745	-	3,715,745	3,605,469
Վարձակալության գծով պարտավորություններ	-	1,572,752	-	1,572,752	1,572,752
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	2,920,017	-	2,920,017	2,920,017

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	42,572,757	-	42,572,757	42,572,757
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	13,755,753	-	13,755,753	13,755,753
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	10,175,600	-	10,175,600	10,175,600
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	191,186,057	-	191,186,057	193,337,215
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	523,548	4,030,499	-	4,554,047	4,543,305
Այլ ֆինանսական ակտիվներ	-	120,860	-	120,860	120,860
Ֆինանսական պարտավորություններ					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	6,393,214	-	6,393,214	6,185,733
Հետգնման պայմանագրեր	-	38,125,044	-	38,125,044	38,125,044
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	112,472,584	-	112,472,584	115,700,441
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	111,316,767	-	111,316,767	112,495,410
Ստորադաս փոխառություններ	-	1,203,110	-	1,203,110	1,311,068
Վարձակալության գծով պարտավորություններ	-	1,674,091	-	1,674,091	1,674,091
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	2,129,669	-	2,129,669	2,129,669

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 5% մինչև 24% տարեկան (2020թ. 5% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը		19,137,972	-	19,137,972
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	5,053	-	5,053
Ընդամենը		19,143,025	-	19,143,025
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	21,883	-	21,883
Ընդամենը	-	21,883	-	21,883
Զուտ իրական արժեք		19,121,142	-	19,121,142

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը	647,844	39,025,893	-	39,673,737
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	16,538	-	16,538
Ընդամենը	647,844	39,042,431	-	39,690,275
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	11,549	-	11,549
Ընդամենը	-	11,549	-	11,549
Զուտ իրական արժեք	647,844	39,030,882	-	39,678,726

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, որպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը: Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային սվոպ պայմանագրերից:

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	8,681,662	8,681,662
Ընդամենը	-	-	8,681,662	8,681,662
Ջուտ իրական արժեք	-	-	8,681,662	8,681,662

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Հող և շենքեր	-	-	8,415,882	8,415,882
Ընդամենը	-	-	8,415,882	8,415,882
Ջուտ իրական արժեք	-	-	8,415,882	8,415,882

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների շարժը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հունվարի 1-ի դրությամբ	8,415,882	8,073,225
Ավելացում	309,883	344,823
Օտարում	(44,103)	(2,166)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,681,662	8,415,882
Ջուտ իրական արժեք	8,681,662	8,415,882

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 18)	7,826,751	-	7,826,751	7,826,751	-	-
Ընդամենը	7,826,751	-	7,826,751	7,826,751	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 18)	(34,576,952)	-	(34,576,952)	37,667,527	-	3,090,575
Ընդամենը	(34,576,952)	-	(34,576,952)	37,667,527	-	3,090,575

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 18)	10,175,600	-	10,175,600	-	10,175,600	-
Ընդամենը	10,175,600	-	10,175,600	-	10,175,600	-

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2020թ.		
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 18)	38,125,044	-	38,125,044	(39,384,619)	-	(1,259,575)
Ընդամենը	38,125,044	-	38,125,044	(39,384,619)	-	(1,259,575)

31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ Բանկի կողմից տրամադրված 113,546 հազ. ՀՀ դրամ վարկերը հաշվանցվել են ՀՀ կառավարության պարտավորությունների հետ, քանի որ Բանկը հանդիսանում է տվյալ վարկերի սպասարկման գործակալ և այդ վարկերը տրամադրվել են ՀՀ կառավարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ուղղված միջոցառումների շրջանակներում:

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 36.3-ում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաման-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաման-րագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	63,399,890	-	63,399,890	-	-	-	63,399,890
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	5,053	-	5,053	-	-	-	5,053
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,565,632	6,013,715	7,579,347	793,694	1,124,092	1,917,786	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր	7,778,250	48,501	7,826,751	-	-	-	7,826,751
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	6,257,682	50,388,925	56,646,607	94,672,629	69,569,903	164,242,532	220,889,139
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	14,799,561	543,145	15,342,706	1,778,257	2,017,009	3,795,266	19,137,972
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	22,867,966	10,460	22,878,426	667,512	123,387	790,899	23,669,325
Այլ ֆինանսական ակտիվներ	130,924	-	130,924	-	-	-	130,924
	116,804,958	57,004,746	173,809,704	97,912,092	72,834,391	170,746,483	344,556,187

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաման-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաման-րագումար	Ընդամենը
Պարտավորություններ							
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	21,883	-	21,883	-	-	-	21,883
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,016,045	5,091,852	6,107,897	-	-	-	6,107,897
Հետգնման պայմանագրեր	34,576,952	-	34,576,952	-	-	-	34,576,952
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,680,927	34,186,837	40,867,764	78,559,369	11,654,389	90,213,758	131,081,522
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	62,421,860	53,186,912	115,608,772	19,613,110	726,977	20,340,087	135,948,859
Ստորադաս փոխառություններ	-	28,358	28,358	720,273	2,856,838	3,577,111	3,605,469
Վարձակալության գծով պարտավորություններ	-	102,626	102,626	929,964	540,162	1,470,126	1,572,752
Այլ ֆինանսական պարտավորություններ	355,921	2,564,096	2,920,017	-	-	-	2,920,017
	105,073,588	95,160,681	200,234,269	99,822,716	15,778,366	115,601,082	315,835,351
Զուտ Դիրք	11,731,370	(38,155,935)	(26,424,565)	(1,910,624)	57,056,025	55,145,401	28,720,836
Կուտակված ճեղքվածք	11,731,370	(26,424,565)		(28,335,189)	28,720,836		

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2020թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահաշվարկում	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահաշվարկում	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	42,572,757	-	42,572,757	-	-	-	42,572,757
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16,538	-	16,538	-	-	-	16,538
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,752,016	7,563,308	12,315,324	14,731	1,425,698	1,440,429	13,755,753
Հակադարձ հետգնման պայմանագրեր	10,101,695	73,905	10,175,600	-	-	-	10,175,600
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	9,755,057	51,090,755	60,845,812	90,232,697	42,258,706	132,491,403	193,337,215
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	35,356,882	654,891	36,011,773	581,142	3,080,822	3,661,964	39,673,737
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	4,027,737	515,568	4,543,305	-	-	-	4,543,305
Այլ ֆինանսական ակտիվներ	62,856	58,004	120,860	-	-	-	120,860
	106,645,538	59,956,431	166,601,969	90,828,570	46,765,226	137,593,796	304,195,765
Պարտավորություններ							
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	11,549	-	11,549	-	-	-	11,549
Թողարկված պարտքային արժեթղթեր	101,191	-	101,191	6,084,542	-	6,084,542	6,185,733
Հետգնման պայմանագրեր	38,125,044	-	38,125,044	-	-	-	38,125,044
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,202,596	38,448,294	41,650,890	66,187,876	7,861,675	74,049,551	115,700,441
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	50,632,448	46,138,416	96,770,864	15,003,113	721,433	15,724,546	112,495,410
Ստորադաս փոխառություններ	4,433	-	4,433	-	1,306,635	1,306,635	1,311,068
Վարձակալության գծով պարտավորություններ	55,946	445,258	501,204	1,034,535	138,352	1,172,887	1,674,091
Այլ ֆինանսական պարտավորություններ	423,470	1,706,199	2,129,669	-	-	-	2,129,669
	92,556,677	86,738,167	179,294,844	88,310,066	10,028,095	98,338,161	277,633,005
Զուտ Դիրք	14,088,861	(26,781,736)	(12,692,875)	2,518,504	36,737,131	39,255,635	26,562,760
Կուտակված ճեղքվածք	14,088,861	(12,692,875)		(10,174,371)	26,562,760		

1-ից մինչև 12 ամիս ճեղքվածքը պայմանավորված է հաճախորդների ավանդների ժամկետներով, որոնք պարբերաբար երկարաձգվում են և Բանկը ունի հնարավորություն ամբողջությամբ մարելու դրանք պահանջելու դեպքում:

36 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Տնօրինության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային (արտարժութային) ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի անխափան իրականացման և վերահսկման համար: Վարչությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման խնդիրների լուծման համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունած համապատասխան որոշումների կատարումը:

Ռիսկերի կառավարման սփորաբաժանում

Ռիսկերի կառավարումն իրականացվում է «Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության» (ՌՌԿՎ) կողմից՝ ըստ Տնօրենների խորհրդի հաստատած քաղաքականության: ՌՌԿՎ կողմից գնահատվում, բացահայտվում, վերլուծվում և հեջավորվում են ռիսկերը՝

գործառնական ստորաբաժանումների հետ սերտ համագործակցության միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման հետ կապված գործընթացների ներդրման և իրականացման համար:

Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկերի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի ստուգման է ենթարկվում ներքին աուդիտի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում կառավարման համապատասխան մարմիններին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերի գնահատման մեթոդով հաշվի է առնվում ինչպես սպասվող կորուստը, որն իրենից ներկայացնում է գործունեության ընթացքում կորուստների հնարավոր միջին մակարդակ, այնպես էլ հնարավոր անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են սպասվող միջին մակարդակը գերազանցող կորուստներ: Բանկը նաև մոդելավորում է քիչ հավանական, սակայն պոտենցիալ էական ազդեցություն ունեցող «վատթարագույն դեպքերը»:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերն արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա:

Գործունեության առանձին տեսակների գծով ստացվող տեղեկատվությունն ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվության հիման վրա կազմված հաշվետվությունները պարունակում են տեղեկություններ վարկային ռիսկի չափի, վարկային ցուցանիշների կանխատեսվող մակարդակի, ռիսկի սահմանված սահմանաչափերի, դրանցից բացառությունների, VaR գնահատականի, իրացվելիության ցուցանիշների և ընդհանուր ռիսկի մակարդակի փոփոխության վերաբերյալ: Բանկի վարչությունը յուրաքանչյուր ամիս ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ըստ ոլորտների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար: Յուրաքանչյուր օր անց է կացվում ղեկավարության կարճատև խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկի մակարդակը, ներդրումները, իրացվելիությունը և ռիսկերին վերաբերող այլ ընթացիկ հարցեր:

Ռիսկի նվազեցում

Ռիսկերի նվազեցման գործընթացն իրենից ներկայացնում է ռիսկերի առաջացման հնարավորությունը, կամ դրա ազդեցությունը նվազեցնելու, կամ այդ երկու գործոնների մեղմման ուղղությամբ ձեռնարկվող լրացուցիչ միջոցառումների իրականացում: Իր ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում Բանկն օգտագործում է ածանցյալ և այլ գործիքներ: Բանկն ակտիվորեն օգտագործում է գրավի միջոցները՝ վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ (ավելի մանրամասն՝ տես ստորև):

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

36.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ՌԿՎ պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և Վարչությանը:

36.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված հանձնառությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վարկանիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 36.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2021թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	14,481,483	-	-	14,481,483
Ստանդարտ	48,951,210	-	-	48,951,210
Համախառն հաշվեկշռային արժեք	63,432,693	-	-	63,432,693
Արժեզրկումից պահուստ	(32,803)	-	-	(32,803)
Զուտ հաշվեկշռային արժեք	63,399,890	-	-	63,399,890

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	9,555,254	-	-	9,555,254
Համախառն հաշվեկշռային արժեք	9,555,254	-	-	9,555,254
Արժեզրկումից պահուստ	(58,121)	-	-	(58,121)
Զուտ հաշվեկշռային արժեք	9,497,133	-	-	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր				
Ստանդարտ	7,935,596	-	-	7,935,596
Համախառն հաշվեկշռային արժեք	7,935,596	-	-	7,935,596
Արժեզրկումից պահուստ	(108,845)	-	-	(108,845)
Զուտ հաշվեկշռային արժեք	7,826,751	-	-	7,826,751
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	79,549,913	-	-	79,549,913
Ստանդարտ	107,566	1,402,238	-	1,509,804
Ցածր	-	150,406	-	150,406
Չաշխատող	-	-	3,219,754	3,219,754
Համախառն հաշվեկշռային արժեք	79,657,479	1,552,644	3,219,754	84,429,877
Արժեզրկումից պահուստ	(522,894)	(91,980)	(1,493,201)	(2,108,075)
Զուտ հաշվեկշռային արժեք	79,134,585	1,460,664	1,726,553	82,321,802
Առևտրային վարկեր				
Բարձր	137,929,415	-	-	137,929,415
Ստանդարտ	1,468	1,539,360	-	1,540,828
Ցածր	-	36,343	-	36,343
Չաշխատող	-	-	328,284	328,284
Համախառն հաշվեկշռային արժեք	137,930,883	1,575,703	328,284	139,834,870
Արժեզրկումից պահուստ	(932,462)	(182,723)	(152,348)	(1,267,533)
Զուտ հաշվեկշռային արժեք	136,998,421	1,392,980	175,936	138,567,337
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	23,947,643	-	-	23,947,643
Համախառն հաշվեկշռային արժեք	23,947,643	-	-	23,947,643
Արժեզրկումից պահուստ	(278,318)	-	-	(278,318)
Զուտ հաշվեկշռային արժեք	23,669,325	-	-	23,669,325

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2021թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	19,137,972	-	-	19,137,972
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	19,137,972	-	-	19,137,972
Արժեզրկումից պահուստ	(228,409)	-	-	(228,409)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	139,572	-	-	139,572
Համախառն հաշվեկշռային արժեք	139,572	-	-	139,572
Արժեզրկումից պահուստ	(8,648)	-	-	(8,648)
Զուտ հաշվեկշռային արժեք	130,924	-	-	130,924
Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ				
Ստանդարտ	14,878,905	-	-	14,878,905
		-	-	
Արժեզրկումից պահուստ*	(77,321)	-	-	(77,321)

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2020թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	13,003,189	-	-	13,003,189
Ստանդարտ	29,600,291	-	-	29,600,291
Համախառն հաշվեկշռային արժեք	42,603,480	-	-	42,603,480
Արժեզրկումից պահուստ	(30,723)	-	-	(30,723)
Զուտ հաշվեկշռային արժեք	42,572,757	-	-	42,572,757
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	14,007,516	-	-	14,007,516
Համախառն հաշվեկշռային արժեք	14,007,516	-	-	14,007,516
Արժեզրկումից պահուստ	(251,763)	-	-	(251,763)
Զուտ հաշվեկշռային արժեք	13,755,753	-	-	13,755,753

Հազար ՀՀ դրամ

Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
				31 դեկտեմբերի 2020թ.
Հակադարձ հետգնման պայմանագրեր				
Ստանդարտ	10,309,207	-	-	10,309,207
Համախառն հաշվեկշռային արժեք	10,309,207	-	-	10,309,207
Արժեզրկումից պահուստ	(133,607)	-	-	(133,607)
Զուտ հաշվեկշռային արժեք	10,175,600	-	-	10,175,600
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	85,771,181	-	-	85,771,181
Ստանդարտ	358,277	323,407	-	681,684
Ցածր	-	894,967	-	894,967
Չաշխատող	-	-	1,054,275	1,054,275
Համախառն հաշվեկշռային արժեք	86,129,458	1,218,374	1,054,275	88,402,107
Արժեզրկումից պահուստ	(1,844,610)	(352,876)	(666,781)	(2,864,267)
Զուտ հաշվեկշռային արժեք	84,284,848	865,498	387,494	85,537,840
Առևտրային վարկեր				
Բարձր	107,828,642	-	-	107,828,642
Ստանդարտ	13,927	46,575	-	60,502
Ցածր	-	124,445	-	124,445
Չաշխատող	-	-	299,014	299,014
Համախառն հաշվեկշռային արժեք	107,842,569	171,020	299,014	108,312,603
Արժեզրկումից պահուստ	(226,167)	(67,980)	(219,081)	(513,228)
Զուտ հաշվեկշռային արժեք	107,616,402	103,040	79,933	107,799,375
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	4,596,448	-	-	4,596,448
Համախառն հաշվեկշռային արժեք	4,596,448	-	-	4,596,448
Արժեզրկումից պահուստ	(53,143)	-	-	(53,143)
Զուտ հաշվեկշռային արժեք	4,543,305	-	-	4,543,305
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	39,673,737	-	-	39,673,737
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	39,673,737	-	-	39,673,737
Արժեզրկումից պահուստ	(437,927)	-	-	(437,927)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	133,787	-	-	133,787
Համախառն հաշվեկշռային արժեք	133,787	-	-	133,787
Արժեզրկումից պահուստ	(12,927)	-	-	(12,927)
Զուտ հաշվեկշռային արժեք	120,860	-	-	120,860
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ				
Ստանդարտ	12,178,088	-	-	12,178,088
		-	-	
Արժեզրկումից պահուստ*	(54,637)	-	-	(54,637)

* Ներառում է միայն ֆինանսական երաշխիքների գծով պահուստը:

36.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս 4.4.6 ծանոթագրությունը):

Ռիսկերի կառավարման նպատակներով վարկային ռիսկերի գնահատումը բարդ է և պահանջում է մոդելների կիրառում, քանի որ շուկայական պայմաններով, ակնկալվող դրամական հոսքերով և ժամանակային փոփոխություններով պայմանավորված վարկային ռիսկը կարող է տարբերվել: Ակտիվների պորտֆելի վարկային ռիսկի գնահատումը պահանջում է հետագա գնահատումներ կատարել՝ կապված պարտազանցման, դրանից բխող կորուստների գործակիցների և գործընկերների միջև պարտազանցման կորելացիաների հավանականության հետ: Բանկը վարկային ռիսկը գնահատում է պարտազանցման տեղի ունենալու հավանականության (PD), կորուստը պարտազանցման դեպքում (LGD) և պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Սա մոտ է ECL-ի չափման նպատակով կիրառված մոտեցմանը՝ համաձայն ՖՀՄՄ 9-ի:

ՖՀՄՄ 9-ի համաձայն՝ Բանկն օգտագործում է արժեզրկման «եռափուլ» մոդել՝ վարկի սկզբնական ճանաչումից հետո որակի փոփոխությունների հիման վրա, որն ամփոփված է ստորև.

- Սկզբնական ճանաչման պահին վարկային տեսանկյունից չարժեզրկված ֆինանսական գործիքը դասակարգվում է «փուլ 1-ում», որի վարկային ռիսկը շարունակաբար վերահսկվում է Բանկի կողմից:
- Եթե սկզբնական ճանաչումից հետո հայտնաբերվում է վարկային ռիսկի զգալի աճը (SICR), ապա ֆինանսական գործիքը տեղափոխվում է «փուլ 2», սակայն դեռևս չի համարվում վարկային տեսանկյունից արժեզրկված:
- Եթե ֆինանսական գործիքը վարկային տեսանկյունից արժեզրկված է, ապա այն տեղափոխվում է «փուլ 3»:
- Փուլ 1-ում ֆինանսական գործիքների ECL-ը չափվում է առաջիկա 12 ամիսների ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների տվյալ մասին համարժեք գումարով, որոնք առաջանում են առաջիկա 12 ամիսների ընթացքում հնարավոր պարտազանցման

իրադարձությունների հետեւանքով: 2-րդ կամ 3-րդ փուլերում գործիքների ECL-ն չափվում է՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների վրա:
- ՖՀՄՍ 9-ի համաձայն, ECL-ի չափման համապարփակ հայեցակարգը պետք է հաշվի առնի նաև կանխատեսումներ:
- Ձեռք բերված կամ սկզբնապես վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվներն այն ակտիվներն են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Դրանց ECL-ն մշտապես չափվում է գործողության ողջ ընթացքի համար (փուլ 3):

ECL-ները կարող են չափվել կորուստների գծով պահուստների միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- Վարկի գործողության ողջ ընթացքում ECL, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի արժեզրկման իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Վարկի գործողության ողջ ընթացքում ECL, այսինքն՝ ECL, որն արդյունք է ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր պարտազանցման իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Լիարժեք ECL-ի դեպքում ֆինանսական գործիքի համար պահանջվում է կորուստների գծով պահուստներ, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Մնացած բոլոր այլ ֆինանսական գործիքների դեպքում ECL-ները չափվում են 12-ամսյա ECL-ին համարժեք գումարի չափով:

Չօգտագործված վարկային գծերի և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում ECL-ն չափվում է՝ հիմնվելով 100% «վարկային ռիսկի փոխարկման գործոնների» (Credit Conversion Factor) վրա:

Ֆինանսական հաստատություններից, միջբանկային ավանդներից և թղթակցային հաշիվներից ստացվան ենթակա գումարները, պարտքային գործիքներում ներդրումները ենթակա են արժեզրկման՝ հիմնվելով 12-ամսյա ECL-ի վրա: Հաճախորդների մասով պարտազանցման հավանականության և կորուստի պարտազանցման դեպքում հաշվարկները ստացվում են միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, Fitch, S & P) տրամադրած վարկային վարկանիշի վերաբերյալ տեղեկատվությունից:

Այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների համար նախատեսված պահուստը հաշվարկվում է անհատական հիմունքով՝ կիրառելով հաճախորդի վարկային կորստի պահուստի դրույքաչափը: Եթե հաճախորդը բանկում վարկային ռիսկ չի ունենում, ապա օգտագործվում են հաճախորդի վարկային վարկանիշը և համապատասխան պարտազանցման հավանականությունն ու կորուստը պարտազանցման դեպքում: Բացի այդ, գնահատվում է նաև դեբիտորական պարտքի ակնկալվող ռիսկը: Եվ վերջապես, պարտազանցման տեղի ունենալու հավանականությունները, կորուստները պարտազանցման դեպքում և ակնկալվող ժամանակահատվածը բազմապատկվում են՝ վարկային ակնկալվող պահուստը դեբիտորական պարտքերի համար հաշվարկելու համար:

Հաճախորդներին տրված վարկեր

Վարկառուների վարկային ռիսկերի գնահատման նպատակով Բանկը մշակել է ՖՀՄՍ 9-ի պահանջների վրա հիմնված մեթոդաբանությունը:

Ակնկալվող պարտքային կորուստները Բանկը չափում է անհատական, իսկ վարկային պորտֆելների դեպքում՝ հավաքական հիմունքով, որոնք համանման վարկային ռիսկի հատկանիշներ ունեն:

Անհատապես նշանակալի վարկային ռիսկը համարվում է այն վարկառուների կամ փոխկապակցված վարկառուների խումբը, որոնց ռիսկը գերազանցում է Բանկի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 0.3%: Բացի այն, նրանց պետք է վարկային ռիսկի զգալի աճի հատկանիշներ դրսևորեն, ինչպիսիք են ժամկետանց օրերի ավելացումը կամ զգալի ֆինանսական դժվարությունները:

Վարկառուի սպասվող ֆինանսական վիճակի վատթարացմամբ պայմանավորված Բանկի սուբյեկտիվ մոտեցմամբ վարկերը կարող են դասակարգվել ավելի խիստ փուլում, ինչպես նաև վերոնշյալ վարկառուների ֆինանսական վիճակի վատթարացման բացակայության դեպքում վարկերը կարող են վերադասակարգվել նախկին փուլում:

Վարկային ռիսկի զգալի աճը, կամ արժեզրկումից կորստի բացահայտման նպատակով Ռիսկերի կառավարման վարչությունը վերլուծում է վարկառուների իրացվելիության, վճարունակության, բիզնես գործունեության և ֆինանսական ռիսկերի առկայության, ժամկետանց, վերակազմակերպման, վարկային վարկանիշների և գրավադրումների իրական արժեքների մասին տեղեկատվությունը:

Անհատապես նշանակալի ռիսկերի ECL-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշների են դրսևորում, չափվում է անհատական հիմունքով: Անհատապես նշանակալի ռիսկերի ECL-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշներ չեն դրսևորում, չափվում են հավաքական հիմունքով:

Անհատական հիմունքով ECL-ի չափումը

Անհատապես գնահատված վարկերի համար ECL-ները չափվում են որպես պայմանագրով Բանկին տրվելիք դրամական միջոցների հոսքերի և բազմաթիվ ապագա տնտեսական սցենարների վերլուծման արդյունքում Բանկի կողմից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի տարբերության ներկա արժեք, որը զեղչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Բացի այդ, հաշվի են առնվում նաև վարկի գծով գրավադրված ցանկացած ակտիվների մարումը և իրացումը:

Բանկը, որպես կանոն, գնահատում է գրավի իրացման արժեքը՝ հիմք ընդունելով նախկին համանման գրավների փաստացի իրացման ժամկետները: Ընդհանուր մոտեցումը փոփոխվում է կախված առանձին դեպքերից, եթե այլ հանգամանքները ցույց են տալիս, որ հավաքագրման և գնահատման կրճատում կատարելու ընդհանուր ժամկետը ողջամիտ չեն:

Հավաքական հիմունքով ECL-ի չափումը

ECL-ի չափման հիմնական ելակետային տվյալները հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքն է՝

- Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD),
- Կորուստը պարտազանցման դեպքում (LGD),
- Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

Այս պարամետրերը հիմնականում ստացվում են ներքին օգտագործման վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից: Դրանք կարգավորվում են կանխատեսումների արտացոլման նպատակով:

Հավաքական գնահատումն իրականացվում է վարկառուի մակարդակով, այլ ոչ թե պայմանագրի մակարդակով:

Սեգմենտավորում

Հավաքական հիմունքով գնահատված վարկերը խմբավորված են ըստ իրենց վարկային ռիսկի հատկանիշների: Նման հատկանիշները ներառում են.

- Սեգմենտը/հատվածը
- Ժամկետանց օրերը
- Վերակազմակերպում
- Ապահովվածություն

ECL-ի՝ հավաքական հիմունքով գնահատման ենթակա պորտֆելները բաժանվում են 5 սեգմենտների կամ հատվածների. սպառողական, հիփոթեք, արտադրություն, գյուղատնտեսություն, այլ:

Պարտազանցման սահմանումը

ECL-ի սահմանման համար կարևոր է սահմանել պարտազանցումը: Վերջինիս սահմանումն իրենից ներկայացնում է ECL-ի չափի գնահատումը: Ստորև նշվածները Բանկը համարում է պարտազանցման իրադարձություն.

- Վարկառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց որևէ նյութական վարկային պարտավորություն Բանկին՝ հավաքական հիմունքով գնահատվող վարկերի պարագայում,
- Վարկառուի վարկը մեկից ավելի անգամ վերակազմակերպվել է,

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման ժամանակ Բանկը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները: Պարտազանցման գնահատման համար Բանկն օգտվում է տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներից, որոնք պատրաստվում են կազմակերպության ներսում, կամ ստացվում արտաքին աղբյուրներից:

Գնահատվող տեղեկությունը կախված է նաև բացահայտման կարևորությունից: Որակական ցուցանիշները, ինչպիսիք են վարկառուի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման մասին արտաքին աղբյուրից ստացված տեղեկությունները ծառայում են որպես վերլուծության կարևոր տվյալներ և օգտագործվում ECL-ի անհատական հիմունքով գնահատման համար վարկերի բացահայտման նպատակով, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը էականորեն զգալի շեմից ավելի բարձր է:

Վարկային ռիսկի նշանակալի աճ

Բանկը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները՝ գնահատելու դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճը: Վարկային ռիսկի նշանակալի աճի դեպքում Բանկը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում, այլ ոչ 12-ամսյա, ECL-ի վրա:

Ֆինանսական գործիքի՝ դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման ժամանակը Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ են և հիմնավորված: Վարկառու վարկային վարկանիշի զգալի վատթարացումը, գրավի արժեքի զգալի նվազումը կարող են համարվել վարկային ռիսկերի զգալի չափով ավելացման որակական ցուցանիշեր, որոնք օգտագործվում են ECL-ի անհատական հիմունքով գնահատման համար նախատեսված վարկերի բացահայտման համար, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը զգալիորեն բարձր է էականորեն նշանակալի շեմից:

Երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց, Բանկը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել և ակտիվը գտնվում է արժեզրկման մոդելի 2-րդ փուլում, այսինքն՝ կորուստների գծով պահուստները գնահատվում են գործողության ողջ ընթացքի ECL-ով:

Վերանայված վարկեր և կանխավճարներ

Վարկերը և կանխավճարները, ընդհանուր առմամբ, վերանայվում են հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում, կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում, վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Բանկն իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում, վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն ըստ էության կդիտվի որպես նոր վարկ:

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված՝ վերանայված վարկերի հաշվեկշռային արժեքը կազմել է 353,576 հազար ՀՀ դրամ և 1,691,913 հազար ՀՀ դրամ, համապատասխանաբար:

Պարտքազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

Յուրաքանչյուր խմբի համար PD-ի չափը որոշելու համար Բանկն օգտագործում է միգրացիայի մատրիցների մեթոդաբանություն, որը կիրառում է պատմական տվյալների, պարտավորությունների չկատարման և պարտազանցման փորձի վիճակագրական վերլուծությունները վարկերի գումարը հուսալիորեն գնահատելու համար, որոնք, ի վերջո, կարժեզրկվեն՝ մինչև հաշվեկշռային ամսաթիվը տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում: Համանման խմբի դիտարկման համար ընտրվել է հինգ տարվա ժամկետ՝ 2016 թվականի հունվարից մինչև 2021 թվականի դեկտեմբերը: Դիտարկվող ժամանակահատվածում պատրաստվեցին մեկամսյա միգրացիայի մատրիցները:

Միգրացիայի մատրիցներն օգտագործվում են հավաքական հիմունքով գնահատման յուրաքանչյուր խմբի պարտազանցման 12-ամսյա հավանականությունը հաշվարկելու համար: Դրանից ելնելով, հաշվարկվում են հետագա տարիների սահմանային PD-ները, մինչև սպառվի պորտֆելի մարման ժամկետը: PD-ի հաշվարկներ համար պարտազանցումը սահմանվել 90 օր ժամկետանց դեպքը: Դիտարկվող ժամանակահատվածում առնվազն մեկ անգամ արժեզրկված վարկառուն համարվում է արժեզրկված դիտարման ողջ մնացած ժամանակահատվածում:

Ժամկետային (Point in Time PDs) PD-ները հաշվարկելու համար Բանկը տարբեր մակրո սցենարների ներքո կիրառում է նաև կանխատեսումներ:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

Արժեզրկման մոդելի բաղադրիչներից մեկը պարտազանցման դեպքում կորստի չափն է, այսինքն՝ հաշվարկվում է պարտազանցման դեպքում կորուստը: Այն չափելու համար ըստ սեգմենտների արժեզրկված ռիսկերը նվազեցվում են գրավադրված դեպոզիտների և գրավադրված գույքի զեղչված իրացվելիության արժեքի չափով՝ կիրառելով հավաքագրման նախկին համանման գրավների փաստացի իրացման ժամկետները: Չապահովված ակտիվների LGD մոդելներում հաշվի են առնվում արժեզրկված ակտիվների մարման դրույքաչափերը: LGD-ները չափվում են սեգմենտի, այլ ոչ թե առանձին վարկառուի մակարդակով:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

EAD-ն պարտազանցման դեպքում ակնկալվող ռիսկն է: Բանկը EAD-ն ստանում է կոնտրագենտի համար ներկայացրած ընթացիկ/ներկա ռիսկից և ընթացիկ գումարի հնարավոր փոփոխություններից, որոնք նախատեսված են ամորտիզացիա ներառող պայմանագրով:

Ապագայամետ տեղեկատվություն

ECL-ի չափման ժամանակ Բանկն կանխատեսված տեղեկություններ է օգտագործում: Այդ տեղեկությունները ներառում են դրամավարկային քաղաքականություն սահմանող մարմինների կողմից հրապարակված տնտեսական տվյալները և կանխատեսվող տնտեսական ցուցանիշները: Պարտազանցման հավանականության որոշմանը մասնակցում են հետևյալ մակրոտնտեսական փոփոխականները. սպառողական գների համաթիվը, ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքը և ՌԴ ռուբլի-ՀՀ դրամ փոխարժեքը: Դրանք հանգեցնում են պարտազանցման տարբեր հավանականությունների: Այս տարբեր փոփոխականների համակողմանի վերլուծումը կամ կշռումը պարտազանցման միջին կշռված հավանականության հիմքն է կազմում, որն օգտագործվում է ECL-ի հաշվարկների համար: 12ամսյա ECL-ն (փուլ 1-ի վարկեր) չափվում է միայն 12 ամսվա PD-ով: Գործողության ամբողջ ընթացքի ECL-ն (փուլ 2-ի և 3-ի վարկեր) չափվում է բոլոր տարեկան սահմանային PD-ներով՝ մինչև վարկի մարման ժամկետի ավարտը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներն իրենց տարբեր սցենարների և կշիռների հետ միասին հրապարակվում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:

Ակնկալվող պարտքային կորուստների (ECL) հաշվարկ

Յուրաքանչյուր խմբի/սեգմենտի համար սահմանային PD-ն և LGD-ն որոշելուց հետո վարկային կորուստների գծով պահուստների վերջնական հաշվարկ է կատարվում: Այն կախված է խմբերի ռիսկի հատկանիշներից. փուլ 1-ի խմբերի համար (31-ից պակաս ժամկետանց օր) հաշվարկվում է 12-ամսյա ECL-ն, իսկ փուլեր 2-ի և 3-ի խմբերի համար (ավելի քան 90 օր ժամկետանց կամ վերակազմակերպված վարկեր) հաշվարկվում է ամբողջական ECL-ն: Վարկային պորտֆելի ECL-ի հաշվարկման արդյունքները հնարավորություն են տալիս տանալ հավաքական հիմունքով գնահատման 9 խմբերից յուրաքանչյուրի արժեզրկման միջին դրույքաչափը: Այս դրույքաչափերը կիրառվում են մինչև ամբողջ մոդելի հաջորդ հերթական վերահաշվարկ կատարելը վարկային կորուստների գծով պահուստներ ձևավորելու համար: Արժեզրկման մոդելի վերահաշվարկը մեկ անգամ կատարվել է 2020 թվականին, իսկ վերջինը կատարվել է 2021 թվականի դեկտեմբերին՝ վերջին հասանելի տվյալների հիման վրա:

36.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ				2021
	ՀՀ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	62,221,711	427,525	750,654	63,399,890
Աճանցյալ ֆինանսական ակտիվներ	-	5,053	-	5,053
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,247,970	1,569	247,594	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր	7,826,751	-	-	7,826,751
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	220,865,617	-	23,522	220,889,139
Ներդրումային արժեթղթեր				
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19,130,831	-	7,141	19,137,972
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	23,669,325	-	-	23,669,325
Այլ ֆինանսական ակտիվներ	130,924	-	-	130,924
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	343,093,129	434,147	1,028,911	344,556,187
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	299,659,102	859,328	3,677,335	304,195,765

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտքային ռիսկերը դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացած են ֆինանսական հատվածում, բացառությամբ վարկերի: Արդյունաբերության ճյուղայնության բաշխումը վարկերի համար տե՛ս ծանոթագրություն 19-ը:

36.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Անշարժ գույք	88,570,830	77,029,278
Երաշխիք	74,698,535	66,354,388
Ոսկյա զարդեր և ոսկյա այլ իրեր	16,825,161	14,974,520
Փոխադրամիջոցներ (մեքենաներ)	2,272,367	2,230,587
Դրամական միջոցներ	1,719,915	1,964,820
Պաշարներ	7,465,058	8,248,250
Սարքավորումներ	2,038,432	1,964,838
Այլ արժեթղթեր	10,310	244,143
Պետական արժեթղթեր	9,520	9,949
Այլ գրավ	17,590,714	12,303,862
Չապահովված վարկեր	13,063,905	11,390,075
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	224,264,747	196,714,710

2021 թ. դեկտեմբերի 31-ին հաճախորդներին տրամադրված վարկային ռիսկ պարունակող վարկերի և փոխատվությունների զուտ հաշվեկշռային արժեքը կազմել է 3,548,038 հազար դրամ (2020թ.՝ 1,353,289 հազար), իսկ այդ նույն վարկերի և փոխատվությունների դիմաց գրավի (հիմնականում արտադրական գույք) գումարը՝ 4,441,299 հազար դրամ (2020թ՝ 3,752,181 հազար դրամ):

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

36.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ

առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

36.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով եկամտաբերության կորի ենթադրվող փոփոխությունները:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021		
Արտարժույթ/Սցենար	**Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում**	**Զուտ տոկոսային եկամտի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**
ՀՀ դրամ	+1	-	(639,229)
ՀՀ դրամ	-1	-	707,112
Բազային	+/-0.13	-/+17,852	-
Միջին	+/-0.38	-/+52,257	-
Խիստ	+/-0.63	-/+86,661	-

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020		
Արտարժույթ	**Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում**	**Զուտ տոկոսային եկամտի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**
ՀՀ դրամ	+1	-	(1,591,263)
ՀՀ դրամ	-1	-	1,738,417
6 ամսյա և 1 ամյա LIBOR	+/-0.3	-/+87,629	-
EURO LIBOR	+/-0.2	-/+54,813	-
EUROIBOR	+/-0.1	-/+21,998	-

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

Հազար ՀՀ դրամ	2021			2020		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթ-ներով	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթ-ներով	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13.2	6.5	-	11.6	5.6	-
Հակադարձ հետգնման պայմանագրեր	9.1	2.8	-	6.0	3.5	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	13.3	8.8	16.0	13.6	8.7	16.0
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	8.2	-	-	7.8	5.2	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	7.9	9.3	-	9.1	8.8	-
Տոկոսաբեր պարտավորություններ						
Վարկեր ՀՀ կառավարությունից	6.8	-	-	7.5	-	-
Ֆինանսական հաստատություններից ներգրավված վարկեր	6.8	5.2	-	7.1	4.8	-
Ֆինանսական հաստատություններից ներգրավված ավանդներ	10.3	3.8	-	9.5	2.5	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	9.4	4.2	5.2	9.5	4.2	5.5
Հետգնման պայմանագրեր	8.3	-	-	5.7	-	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.2	5.4	-	10.3	5.4	-
Ստորադաս փոխառություն	8.1	-	-	7.4	-	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազամվարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված արտարժութային սվոպերի և որպես դրամական միջոցների հոսքերի հեջ օգտագործված արտարժույթի ֆորվարդների պայմանագրերի իրական արժեքի փոփոխմամբ և կապիտալի գործիքների հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			31 դեկտեմբերի 2020թ.		
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	10%	(2,160,428)	(2,160,428)	10%	(548,592)	(548,592)
Եվրո	10%	602,306	602,306	10%	687,880	687,880

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,553,520	28,994,421	851,949	63,399,890
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,963,342	6,344,176	189,615	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր	7,562,014	264,737	-	7,826,751
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	135,480,414	85,349,321	59,404	220,889,139
Ներդրումային արժեթղթեր				
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	18,594,827	543,145	-	19,137,972
- ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	23,077,881	591,444	-	23,669,325
Այլ ֆինանսական ակտիվներ	86,143	44,624	157	130,924
	221,318,141	122,131,868	1,101,125	344,551,134
Պարտավորություններ				
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,564,398	3,543,499	-	6,107,897
Հետգնման պայմանագրեր	34,576,952	-	-	34,576,952
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	73,590,093	55,165,931	2,325,498	131,081,522
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	75,951,766	57,921,173	2,075,920	135,948,859
Ստորադաս փոխառություններ	-	3,605,469	-	3,605,469
Վարձակալության գծով պարտավորություններ	1,572,752	-	-	1,572,752
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,562,837	356,786	394	2,920,017
Ընդամենը	190,818,798	120,592,858	4,401,812	315,813,468
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	-	(3,259,967)	3,243,137	(16,830)
Զուտ դիրք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,499,343	(1,720,957)	(57,550)	28,720,836
Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ 2021թ. դեկտեմբերի 31-ին	7,522,573	7,205,412	150,920	14,878,905

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	192,590,137	110,327,508	1,261,582	304,179,227
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	166,861,019	108,474,339	2,286,098	277,621,456
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	-	787,298	(782,309)	4,989
Զուտ դիրք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,729,118	2,640,467	(1,806,825)	26,562,760
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին	5,740,927	6,422,743	14,418	12,178,088

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

36.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2021, %	2020, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	23.17	21.15
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	116.23	119.82

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,053,018	2,763,175	2,690,378	-	6,506,571	6,107,897
Հետգնման պայմանագրեր	34,615,209	758	-	-	34,615,967	34,576,952
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,291,132	41,337,262	93,394,167	16,085,567	158,108,128	131,081,522
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	61,312,028	56,204,193	20,590,188	926,370	139,032,779	135,948,859
Ստորադաս փոխառություններ	22,670	281,501	1,823,529	3,390,597	5,518,297	3,605,469
Վարձակալության գծով պարտավորություններ	72,634	798,979	909,697	307,322	2,088,632	1,572,752
Այլ ֆինանսական պարտավորություններ	355,921	2,564,096	-	-	2,920,017	2,920,017
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	104,722,612	103,949,964	119,407,959	20,709,856	348,790,393	315,813,468

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ գործիքներ						
Ներհոսք	54,397	-	-	-	54,397	68
Արտահոսք	(54,329)	-	-	-	(54,329)	-
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	7,860,375	-	-	-	7,860,375	21,815
Արտահոսք	(7,877,137)	-	-	-	(7,877,137)	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	21,883	-	-	-	21,883	21,883
Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ	69,343	9,911,464	2,623,159	2,274,939	14,878,905	14,878,905

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Թողարկված պարտքային արժեթղթեր	138,379	-	6,084,542	-	6,222,921	6,185,733
Հետգնման պայմանագրեր	38,125,044	-	-	-	38,125,044	38,125,044
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,608,544	42,662,818	74,860,691	10,246,476	131,378,529	115,700,441
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	50,735,135	46,605,910	15,361,357	877,435	113,579,837	112,495,410
Ստորադաս փոխառություններ	12,331	88,193	384,365	1,353,167	1,838,056	1,311,068
Վարձակալության գծով պարտավորություններ	61,128	633,207	1,165,805	142,163	2,002,303	1,674,091
Այլ ֆինանսական պարտավորություններ	423,470	1,706,199	-	-	2,129,669	2,129,669
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	93,104,031	91,696,327	97,856,760	12,619,241	295,276,359	277,621,456

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ գործիքներ						
Ներհոսք	302,602	-	-	-	302,602	145
Արտահոսք	(302,747)	-	-	-	(302,747)	-
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	1,591,371	-	-	-	1,591,371	11,404
Արտահոսք	(1,602,775)	-	-	-	(1,602,775)	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	11,549	-	-	-	11,549	11,549
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ	598,943	7,041,181	3,413,143	1,124,821	12,178,088	12,178,088

36.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,

- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

37 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ստորադաս փոխառություններ	Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Վարձակալության գծով պարտավորություններ	Շահաբաժիններ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,452,356	719,787	91,923,477	1,422,777	385,694	98,904,091
Մուտքեր	3,212,956	560,522	6,389,548,038	194,995	-	6,393,516,511
Մարումներ	(1,737,517)	(41,830)	(6,372,098,247)	(715,832)	(1,210,144)	(6,375,803,570)
Արտարժութային փոխարկումներ	211,452	68,393	5,744,460	-	-	6,024,305
Այլ	46,486	4,196	582,713	772,151	1,270,770	2,676,316
Հաշվեկշռային արժեք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,185,733	1,311,068	115,700,441	1,674,091	446,320	125,317,653
Մուտքեր	1,353,296	2,489,655	1,098,245,277	-	-	1,102,088,228
Մարումներ	(1,220,351)	(89,886)	(1,076,813,248)	(758,074)	(1,247,442)	(1,080,129,001)
Արտարժութային փոխարկումներ	(313,656)	(106,145)	(6,050,948)	-	-	(6,470,749)
Այլ	102,875	777	-	656,735	1,271,248	2,031,635
Հաշվեկշռային արժեք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,107,897	3,605,469	131,081,522	1,572,752	470,126	142,837,766

«Այլ» տողում ներառված են նոր ձևավորված վարձակալության գծով պարտավորությունները և անկանխիկ շարժում հանդիսացող վարձակալության վերանայումները: Այն նաև ներառում է թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների, ստորադաս փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսները: Բանկը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

38 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ

միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները և ստորադաս փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հիմնական կապիտալ	39,309,165	36,191,459
Լրացուցիչ կապիտալ	6,316,046	4,997,271
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	45,625,211	41,188,730
Ռիսկով կշռված ակտիվներ	309,760,930	295,844,651
Կապիտալի համարժեքության նորմատիվ	14.73%	13.92%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել է 30,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

39 Սեգմենտային հաշվետվություններ

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՄ 8 'Գործառնական սեգմենտներ' ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

40 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

- 2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով համաշխարհային տնտեսության վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի դեմ: Արևմտյան ուժերը քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանը Հայաստանի գլխավոր առևտրատնտեսական գործընկերն է, ուստի ներկայումս կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

  Իրավիճակի անմիջական ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, սակայն ղեկավարության գնահատմամբ այն նշանակալի ազդեցություն չի ունենա Բանկի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա:
- 2022թ. Ֆիզիկական անձից և կապակցված կողմից ներգրաված ստորադաս փոխառությունների մարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2029թ.:

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2022թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	10
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	12
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	14
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	16

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 500 964
Ֆ.+ 374 10 500 961

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia
T + 374 10 500 964
F + 374 10 500 961

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետերերին.

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ, դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության

համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

- *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 36.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:
- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:

- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի

հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի

կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

– Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի պատասխանատուն, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Նաիրա Ուլունցն է:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Նաիրա Ուլունց
Աուդիտի պատասխանատու

27 ապրիլի, 2023թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2022	2021
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	32,690,014	27,099,448
Տոկոսային ծախսեր	6	(19,818,798)	(15,368,668)
Զուտ տոկոսային եկամուտներ		12,871,216	11,730,780
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	4,551,003	3,274,558
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(1,512,407)	(1,123,565)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		3,038,596	2,150,993
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից		374,451	484,429
Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	8	3,982,348	1,205,009
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից		30,818	129,895
Այլ եկամուտներ	9	494,070	528,640
Պարտքային կորուստների գծով ծախս	10	(245,905)	(1,840,266)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(5,776,068)	(5,112,281)
Հիմնական միջոցների մաշվածություն	21	(1,613,658)	(1,517,019)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	22	(182,116)	(138,825)
Այլ ծախսեր	12	(4,050,258)	(3,884,768)
Շահույթ մինչև հարկումը		8,923,494	3,736,587
Շահութահարկի գծով ծախս	13	(1,811,677)	(780,148)
Տարվա շահույթ		7,111,817	2,956,439

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2022	2021
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն		(1,084,519)	(44,475)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ		(21,343)	(108,467)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		48,146	(209,518)
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		190,389	65,243
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով զուտ վնաս		(867,327)	(297,217)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		(867,327)	(297,217)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		6,244,490	2,659,222
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ	14	3.21	1.09

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 108-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ։

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	69,081,631	63,399,890
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16	67	5,053
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	11,448,364	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր	18	6,381,390	7,826,751
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	19	259,413,495	220,889,139
Ներդրումային արժեթղթեր	20	4,125,187	5,139,770
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	20	43,253,667	37,667,527
Հիմնական միջոցներ	21	12,531,014	12,694,277
Ոչ նյութական ակտիվներ	22	811,161	693,383
Այլ ակտիվներ	23	2,293,742	2,051,188
Ընդամենը՝ ակտիվներ		409,339,718	359,864,111
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	1,083	21,883
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	8,517,115	6,107,897
Հետգնման պայմանագրեր	18	38,713,408	34,576,952
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	25	146,618,966	131,081,522
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	156,197,592	135,948,859
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		806,153	247,266
Հետաձգված հարկային պարտավորություն	13	177,446	175,877
Ստորադաս փոխառություններ	27	3,971,329	3,605,469
Այլ պարտավորություններ	28	5,226,329	4,853,363
Ընդամենը՝ պարտավորություններ		360,229,421	316,619,088

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի, 2022թ.	31 դեկտեմբերի, 2021թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	26,652,068	26,107,555
Էմիսիոն եկամուտ		745,223	289,718
Գլխավոր պահուստ		3,663,000	3,481,000
Իրական արժեքի պահուստ		(1,228,475)	(361,148)
Այլ պահուստներ		3,112,039	3,214,025
Չբաշխված շահույթ		16,166,442	10,513,873
Ընդամենը՝ սեփական կապիտալ		49,110,297	43,245,023
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		409,339,718	359,864,111

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2023թ. ապրիլի 27-ին՝

Արամ Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Միքայել Պողոսյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 108-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	26,107,555	289,718	3,481,000	(361,148)	3,214,025	10,513,873	43,245,023
Տարվա շահույթ	-	-	-	-	-	7,111,817	7,111,817
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(101,986)	101,986	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	(1,084,519)	-	-	(1,084,519)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(21,343)	-	-	(21,343)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	48,146	-	-	48,146
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	190,389	-	-	190,389
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(867,327)	(101,986)	7,213,803	6,244,490
Բաժնետիրական կապիտալի ավելացում	544,513	455,505	-	-	-	-	1,000,018
Հատկացում պահուստին	-	-	182,000	-	-	(182,000)	-
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(1,379,234)	(1,379,234)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	544,513	455,505	182,000	-	-	(1,561,234)	(379,216)
Հաշվեկշիռը 2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,652,068	745,223	3,663,000	(1,228,475)	3,112,039	16,166,442	49,110,297

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	25,955,663	180,180	3,275,000	(63,931)	3,319,815	8,928,892	41,595,619
Տարվա շահույթ	-	-	-	-	-	2,956,439	2,956,439
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(105,790)	105,790	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	(44,475)	-	-	(44,475)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(108,467)	-	-	(108,467)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	(209,518)	-	-	(209,518)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	65,243	-	-	65,243
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(297,217)	(105,790)	3,062,229	2,659,222
Բաժնետիրական կապիտալի ավելացում	151,892	109,538	-	-	-	-	261,430
Շահաբաժիններ բաժնետերերին	-	-	-	-	-	(1,271,248)	(1,271,248)
Հատկացում պահուստին	-	-	206,000	-	-	(206,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	151,892	109,538	206,000	-	-	(1,477,248)	(1,009,818)
Հաշվեկշիռը 2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,107,555	289,718	3,481,000	(361,148)	3,214,025	10,513,873	43,245,023

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 108-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2022	2021
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթը նախքան հարկումը	8,923,494	3,736,587
Ճշգրտումներ		
Մաշվածության մասհանումներ	1,613,658	1,517,019
Ամորտիզացիոն մասհանումներ	182,116	138,825
Հիմնական միջոցների արժեզրկում	-	29,537
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	(38,542)	(99,963)
Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս	245,905	1,840,266
Նախկինում դուրս գրված վարկերի (վերականգնում)/դուրս գրում	15,237	(2,024,416)
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	809,484	605,876
Զուտ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	(374,451)	(484,429)
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից	(30,818)	(129,895)
Ստացվելիք տոկոսներ	(450,394)	(198,353)
Վճարվելիք տոկոսներ	1,248,205	103,652
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	12,143,894	5,034,706
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	474,661	506,248
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(4,023,750)	3,264,372
Հակադարձ հետգնման պայմանագրեր	1,335,923	2,346,944
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(55,862,360)	(34,669,421)
Այլ ակտիվներ	(532,120)	1,068,449
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Հետգնման պայմանագրեր	4,591,803	(3,548,092)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	31,769,453	27,954,487
Այլ պարտավորություններ	84,698	141,546
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) մինչև շահութահարկը	(10,017,798)	2,099,239
Վճարված շահութահարկ	(1,060,832)	(1,550,585)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(11,078,630)	548,654

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2022թ.	2021թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(46,446,705)	(33,396,978)
Ներդրումային արժեթղթերի վաճառք	40,798,970	34,556,275
Հիմնական միջոցների առք	(932,603)	(1,153,541)
Հիմնական միջոցների վաճառք	126,289	236,081
Ոչ նյութական ակտիվների առք	(299,894)	(250,475)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(6,753,943)	(8,638)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,000,018	261,430
Կանխավճար բաժնետոմսերի թողարկման համար	1,000,022	1,000,019
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	28,494,093	21,432,029
Թողարկած պարտքային արժեթղթերից մուտքեր	7,315,960	1,353,296
Թողարկած պարտքային արժեթղթերից ելքեր	(4,362,786)	(1,220,351)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(809,687)	(758,074)
Ստորադաս փոխառության ստացում	901,918	2,489,655
Ստորադաս փոխառության մարում	(329,948)	(89,886)
Վճարված շահաբաժիններ	(1,349,276)	(1,261,961)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	31,860,314	23,206,157
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	14,027,741	23,746,173
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	63,399,890	42,572,757
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(18,452)	(2,080)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(8,327,548)	(2,916,960)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 15)	69,081,631	63,399,890
Լրացուցիչ տեղեկատվություն		
Ստացված տոկոսներ	32,239,620	26,901,095
Վճարված տոկոսներ	(18,570,593)	(15,265,016)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 16-ից մինչև 108-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 1991 թվականին ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993թ. «Հայպետառբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995թ. Վերակազմավորվել է որպես բաց բաժնետիրական ընկերության՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 1 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորում և ավանդների ընդունումն է, (ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը), ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

2019թ. սեպտեմբերի 3-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալությունը հաստատել է Բանկի երկարաժամկետ գործընկերոջ ռիսկի՝ Ba3, երկարաժամկետ/կարճաժամկետ ավանդի վարկանիշ՝ B1/NP վարկանիշները: Բոլոր վարկանիշների գծով կանխատեսումը կայուն է:

2022թ. և 2021թ. գործում են 2019թ. սեպտեմբերի 3-ին «Մուդիս Ինվեսթորս Սերվիս» միջազգային գործակալության կողմից հաստատված վարկանիշերը:

Բանկն ունի 53 մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Ամիրյան 23/1:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի աշխատակիցների թիվը կազմում էր 824 (2021թ-ին՝ 829):

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2022թ. փետրվարից շարունակվող ռուս-ուկրաինական պատերազմը էական ազդեցություն է ունեցել ինչպես հակամարտող երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության վրա: Շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ հայտարարել են Ռուսաստանի՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ կազմակերպությունների և անհատների դեմ տնտեսական խիստ պատժամիջոցների մասին: Պատերազմը դեռ շարունակվում է, բայց արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և այլ երկրներում:

Ուկրանիան և Ռուսաստանը հանդիսանում են Հայաստանի կարևոր առևտրային գործընկերներ, և Հայաստանի գործարար միջավայրը անմասն չի մնացել այս ազդեցությունից: Հատկանշական է, որ Հայաստանում պատերազմի արդյունքում 2022 թվականին նկատվել է որոշակի տնտեսական ակտիվություն՝ պայմանավորված օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքով: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանում բիզնես շահեր ունենալու, հիմնելու կամ տնօրինելու իրավունքի սահմանափակումներ չկան: Բիզնեսի գրանցման ընթացակարգերը հիմնականում պարզ են: Օտարերկրյա քաղաքացիների սպասարկման արդյունքում 2022թ. Հայաստանի բանկերն

արձանագրել են միջնորդական գործունեությունից եկամտի զգալի աճ: Ըստ ՀՀ ԿԲ և միջազգային ֆինանսական կազմակերպությունների տվյալների՝ 2022թ-ին Հայաստանում ՀՆԱ-ի աճը կազմել մոտ 13%:

Քանի որ ռազմական գործողությունները դեռ չեն դադարել, անհնար է արժանահավատորեն գնահատել դրա վերջնական ազդեցությունը Հայաստանի գործարար միջավայրի վրա:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Բանկի ղեկավարությունը, շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ, հողի, շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
- *«Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)*
- *«Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր» (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
- *2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):*

Որպես ՖՀՄՍ ստանդարտների 2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումների մաս՝ ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9-ի փոփոխություն: Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք Բանկը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները նշանակալիորեն տարբերվում են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն վարկառուի և վարկատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ վարկառուի, կամ վարկատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Բանկը փոփոխությունը կիրառում է 2022թ-ի ֆինանսական պարտավորությունների նկատմամբ:

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- *ՖՀՄՍ 17 «Ապահովագրության պայմանագրեր»*
- *Փոփոխություններ ՖՀՄՍ 17 Ապահովագրական պայմանագրերում (ՖՀՄՍ 17 և ՖՀՄՍ 4 փոփոխություններ),*
- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՍ 1 փոփոխություններ),*
- *Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություններ),*
- *Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում (ՖՀՄՍ 16 փոփոխություններ),*
- *Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1 փոփոխություններ)*
  Մեկ գործարքի հետ կապված ակտիվների և պարտավորությունների հետաձգված հարկ:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի յաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռսբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.19 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.18 ծանոթագրությունում:

4.20 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով հասարակ բաժնետոմսերի գծով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին ոչ պակաս, քան իրենց անվանական արժեքի 14% չափով՝ յուրաքանչյուր բաժնետոմսի համար:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.21 Սեգմենտների ներկայացում

ՖՀՄՍ 8-ի համաձայն՝ Բանկի գործառնությունները առանձնացված չեն գործառնական սեգմենտների և ամբողջական բիզնես միավոր են: Բանկի գործառնությունների վերաբերյալ որոշումներ կայացնող գլխավոր մարմինը որոշումներ է կայացնում համատեղ արդյունքների հիման վրա, և ոչ մի օպերացիոն սեգմենտ չի հանվում ընդհանուր գործառնություններից: Բանկի ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետության տարածքում: Բանկի եկամուտը բխում է հայկական աղբյուրներից:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

5.1 Դատողություններ

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս 4.4.2 ծանոթագրությունը):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբորող չափանիշների սահմանում

Բանկը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

5.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տե՛ս ծանոթագրություն 33):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները

մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս ծանոթագրություն 36.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս ծանոթագրություն 31:

6 Զուտ տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	27,475,483	22,335,758
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	554,764	731,109
Հակադարձ հետգնման պայմանագրեր	792,412	590,228
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	1,927,796	1,569,948
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,857,650	1,781,708
Այլ տոկոսային եկամուտներ	81,909	90,697
Ընդամենը տոկոսային եկամուտ	32,690,014	27,099,448

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ հաճախորդներից	5,888,787	4,726,760
Ավանդներ և մնացորդներ բանկերում	7,419,000	5,877,711
Հետգնման պայմանագրեր	2,550,967	2,117,079
Ստորադաս փոխառություն	349,962	90,628
Վարկեր ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից	1,729,724	965,853
Վարկեր միջազգային ֆինանսական հաստատություններից	1,285,292	975,202
Թողարկված պարտքային արժեթղթեր	430,111	433,600
Վարձակալության գծով պարտավորություններ	151,359	166,311
Այլ տոկոսային ծախսեր	13,596	15,524
Ընդամենը տոկոսային ծախս	19,818,798	15,368,668
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	12,871,216	11,730,780

7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Հաշվարկային փոխանցումների վճար	1,852,430	1,406,268
Կանխիկացման գործառնություններ	509,467	300,660
Վճարային քարտերով գործառնություններ	2,018,762	1,434,583
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	167,772	132,490
Այլ կոմիսիոն եկամուտներ	2,572	557
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4,551,003	3,274,558
Վճարային քարտերով գործառնություններ	971,579	768,545
Վարկերի ներգրավման ծախսեր	97,484	61,408
Հաշվարկային գործառնությունների վճար	139,282	127,107
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	40,095	68,291
Կանխիկացման գործառնություններ	227,855	70,659
Թղթակցային հաշիվների սպասարկման վճար	16,615	12,947
Այլ կոմիսիոն ծախսեր	19,497	14,608
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	1,512,407	1,123,565

8 Զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտ	4,791,832	1,810,885
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	(809,484)	(605,876)
Ընդամենը զուտ եկամուտ արտարժութային գործառնություններից	3,982,348	1,205,009

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Ստացված տույժեր և տուգանքներ	332,205	355,087
Այլ եկամուտ	161,865	173,553
Ընդամենը այլ եկամուտներ	494,070	528,640

10 Պարտքային կորուստների գծով ծախս/(ծախսի հակադարձում)

Հազար ՀՀ դրամ		2022			
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	18,452	-	-	18,452
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	18,184	-	-	18,184
Հակադարձ հետգնման պայմանագրեր	18	(23,818)	-	-	(23,818)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	19	246,314	478,666	(506,889)	218,091
Ներդրումային արժեթղթեր	20	39,870	-	-	39,870
Այլ ակտիվներ	23	(50,939)	-	-	(50,939)
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ	30	26,065	-	-	26,065
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/(ծախսի հակադարձում)		274,128	478,666	(506,889)	245,905

Հազար ՀՀ դրամ					2021
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	2,080	-	-	2,080
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	(193,642)	-	-	(193,642)
Հակադարձ հետգնման պայմանագրեր	18	(24,762)	-	-	(24,762)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	19	(612,383)	110,437	2,552,272	2,050,326
Ներդրումային արժեթղթեր	20	15,657	-	-	15,657
Այլ ակտիվներ	23	(32,077)	-	-	(32,077)
Փոխատվության հանձնառություններ և Ֆինանսական երաշխավորություններ	30	22,684	-	-	22,684
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախս/(ծախսի հակադարձում)		(822,443)	110,437	2,552,272	1,840,266

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	5,737,902	5,067,672
Անձնակազմի ուսուցման և այլ ծախսեր	38,166	44,609
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	5,776,068	5,112,281

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսեր	1,097,086	1,014,877
Բարեգործական ծախսեր	168,003	35,000
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	298,611	517,582
Ինկասացիոն ծառայությունների գծով ծախսեր	346,064	345,000
Անվտանգության գծով ծախսեր	332,192	368,156
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	386,479	355,936
VISA անդամակցության և քարտերի թողարկման ծախսեր	333,803	272,052
Վճարումներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	230,421	211,428
Ապահովագրության գծով ծախսեր	153,310	142,078
Գրասենյակային ծախսեր	259,812	143,994
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	118,655	111,942
Գործուղման ծախսեր	44,991	21,818
Խորհրդատվական և մասնագիտական ծառայությունների ծախսեր	27,718	46,560
Հիմնական միջոցների արժեզրկման ծախս	-	29,537
Կարճաժամկետ և փոքրարժեք ակտիվների վարձակալության ծախսեր	-	7,905
Այլ գործառնական ծախսեր	253,113	260,903
Ընդամենը այլ ծախսեր	4,050,258	3,884,768

13 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,560,858	1,006,901
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	58,861	-
Հետաձգված հարկի գծով ծախս/(փոխհատուցում)	191,958	(226,753)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,811,677	780,148

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2021թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2022	Արդյունավետ դրույքաչափ (%)	2021	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	8,923,494		3,736,587	
Շահութահարկ՝	1,606,229	18	672,586	18
Չհարկվող եկամուտ շահույթի և վնասի միջոցով ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումից	(57,051)	(1)	(68,395)	(2)
Չնվազեցվող ծախսեր	57,931	1	66,921	2
Արտարժույթի բացասական փոխարժեքային տարբերություն	145,707	2	109,058	3
Այլ չհարկվող եկամուտ և արտոնություններ	-	-	(22)	-
Նախորդ տարվան վերաբերվող չնվազեցվող ծախսեր	58,861	1	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,811,677	21	780,148	21

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	1 հունվարի 2022	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2022 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	217,341	29,694	-	247,035	247,035	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	47,482	26,385	-	73,867	73,867	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	78,131	(277,082)	-	(198,951)	-	(198,951)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,872	2,196	-	6,068	6,068	-
Ներդրումային արժեթղթեր	168,327	7,565	190,389	366,281	366,281	-
Պայմանական պարտավորություններ	(10,764)	451	-	(10,313)	-	(10,313)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,960	(4,758)	-	9,202	9,202	-
Հիմնական միջոցներ	(694,226)	23,591	-	(670,635)	-	(670,635)
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(175,877)	(191,958)	190,389	(177,446)	702,453	(879,899)

Հազար ՀՀ դրամ	1 հունվարի 2021	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2021 Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Հաշվեգրված ծախսեր և այլ պարտավորություններ	94,518	122,823	-	217,341	217,341	-
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	47,482	-	47,482	47,482	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	40,957	37,174	-	78,131	78,131	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(1,392)	5,264	-	3,872	3,872	-
Ներդրումային արժեթղթեր	100,544	2,540	65,243	168,327	168,327	-
Պայմանական պարտավորություններ	(12,086)	1,322	-	(10,764)	-	(10,764)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	26,805	(12,845)	-	13,960	13,960	-
Հիմնական միջոցներ	(717,219)	22,993	-	(694,226)	-	(694,226)
Հետաձգված հարկային ակտիվ/ (պարտավորություն)	(467,873)	226,753	65,243	(175,877)	529,113	(704,990)

14 Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Տարվա շահույթ	7,111,817	2,956,439
Հաշվարկված շահաբաժիններ արտոնյալ բաժնետոմսերի գծով	(891,660)	(891,660)
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող զուտ շահույթ	6,220,157	2,064,779
Շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվ (հատ)	1,936,058	1,897,938
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը	3.21	1.09

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Թղթակցային հաշիվներ բանկերում	1,754,509	1,266,129
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	52,069,393	47,685,081
Կանխիկ դրամական միջոցներ	15,308,984	14,481,483
	69,132,886	63,432,693
Արժեզրկումից պահուստներ	(51,255)	(32,803)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	69,081,631	63,399,890

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային միջոցների 4%-ի չափով և արտարժույթով ներգրաված միջոցների 18%-ի չափով: Բանկերը արտարժույթով ներգրաված միջոցների 6%-ը պահուստավորում են ՀՀ դրամով և 12%-ը՝ արտարժույթով:

ՀՀ դրամով պահվող պահուստները ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ: Պահուստները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 26,404,957 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18,640,831 հազար դրամ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,556,794 հազար դրամ գումարով (89%) թղթակցային հաշիվները կենտրոնացված են 3 բանկերում (2021թ. 777,682 հազար դրամ (61%)):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	32,803	32,803	30,723	30,723
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	18,452	18,452	2,080	2,080
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	51,255	51,255	32,803	32,803

2022թ. Ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկի մարում գրավների տրամադրման միջոցով 264,464 հազար դրամ գումարով (2021թ.՝ 328,006 հազար դրամ) (Ծանոթ. 19):

16 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բանկը կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով՝հիմնականում առևտրային նպատակներով: Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			31 դեկտեմբերի 2021թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր						
Արտաժութային սվոփ պայմանագրեր	-	-	-	7,860,375	5,053	21,815
Այլ ածանցյալ գործիքներ	268,405	67	1,083	54,329	-	68
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ		67	1,083		5,053	21,883

17 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	8,231,863	7,115,409
Դեպոնացված միջոցներ քարտերի քլիրինգային գործարքների իրականացման գծով	1,180,278	1,122,137
Վճարային համակարգերով ստացվելիք գումարներ	2,047,606	1,310,323
Ֆինանսական կազմակերպություններից ստացման ենթակա այլ գումարներ	64,922	7,385
	11,524,669	9,555,254
Արժեզրկումից պահուստներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	(76,305)	(58,121)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,448,364	9,497,133

Քարտերի քլիրինգային գործարքների գծով դեպոնացված միջոցները իրենցից ներկայացնում են ԱրՔա, Visa և Mastercard վճարային համակարգերով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդներ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	58,121	58,121	251,763	251,763
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	18,184	18,184	(193,642)	(193,642)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	76,305	76,305	58,121	58,121

18 Հակադարձ հետգնման/հետգնման պայմանագրեր

Բանկն ունի գործարքներ հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրերով: Ռեպո համաձայնագրերով փոխատվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Բանկի կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի կողմից պարտավորությունների չկատարման (պարտազանցման դեպքում) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Բանկի սահմանմամբ այդ արժեթղթերի գծով բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Բանկը հանդես է գալիս որպես միջնորդ:

Հակադարձ հետգնման պայմանագրեր

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի հակադարձ հետգնման պայմանագրեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված հակադարձ հետգնման համաձայնագրեր	6,466,417	7,935,596
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանգրեր	6,466,417	7,935,596
Արժեզրկումից պահուստներ	(85,027)	(108,845)
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,381,390	7,826,751

Հակադարձ հետգնման համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022		2021	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական արժեթղթեր	6,365,340	6,050,267	8,287,821	7,604,388
Ոչ պետական պարտատոմսեր	438,673	416,150	349,793	331,208
Ընդամենը	6,804,013	6,466,417	8,637,614	7,935,596

Հակադարձ հետգնման պայմանագրերով տրամադրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	108,845	108,845	133,607	133,607
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(23,818)	(23,818)	(24,762)	(24,762)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	85,027	85,027	108,845	108,845

Հետգնման պայմանագրեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	21,025,586	34,522,743
Հետգնման պայմանագրեր այլ ֆինանսական կազմակերպությունների հետ	17,687,822	54,209
Ընդամենը հետգնման պայմանագրեր	38,713,408	34,576,952

Հետգնման պայմանագրերով ներգրաված վարկերը ապահովված են Բանկի կողմից գրավադրված 22,920,893 հազար (2021թ.՝ 22,867,966 հազար ՀՀ դրամ) ՀՀ դրամ գումարով ամորտիզացված և 20,332,774 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 14,799,561 հազար ՀՀ դրամ) գումարով իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող ներդրումային արժեթղթերով: Տե՛ս ծանոթագրություն 20:

19 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			31 դեկտեմբերի 2021թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	38,159,721	(115,105)	38,044,616	29,270,243	(82,620)	29,187,623
Սպառողական վարկեր	58,160,405	(1,933,418)	56,226,987	55,159,634	(2,025,455)	53,134,179
	96,320,126	(2,048,523)	94,271,603	84,429,877	(2,108,075)	82,321,802
Առևտրային վարկեր						
Առևտուր	47,595,662	(209,583)	47,386,079	39,670,657	(184,643)	39,486,014
Արտադրություն	38,812,899	(361,862)	38,451,037	34,554,198	(319,585)	34,234,613
Շինարարություն	23,358,190	(163,277)	23,194,913	18,100,972	(291,441)	17,809,531
Գյուղատնտեսություն	29,227,458	(525,097)	28,702,361	23,371,532	(263,246)	23,108,286
Այլ ոլորտներ	27,657,980	(250,478)	27,407,502	24,137,511	(208,618)	23,928,893
	166,652,189	(1,510,297)	165,141,892	139,834,870	(1,267,533)	138,567,337
Ընդամենը	262,972,315	(3,558,820)	259,413,495	224,264,747	(3,375,608)	220,889,139

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել փոխատվության հանձնառության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավներ, որոնց հաշվեկշռային արժեքը կազմել է 264,464 հազար դրամ (2021թ.՝ 328,006 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում: Տե՛ս ծանոթագրություն 15:

2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի էական կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 56,349,626 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 21.4%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ կապակված անձանց (2021թ.՝ 50,482,607 հազար դրամ կամ 22.5%՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ կապակցված անձանց): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 477,050 հազար դրամ (2021թ.՝ 363,493 հազար դրամ):

2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների տրված վարկերը 19,550,845 հազար դրամ համախառն գումարով (2021թ.՝ 15,353,198 հազար դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը գրավադրված է ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի և 23,673,518 հազար դրամ համախառն գումարով (2021թ.՝ 12,382,337 հազար դրամ) վարկերի ստացման պահանջի իրավունքը՝ ՀՀ կենտրոնական բանկից միջազգային ծրագրերի շրջանակներում ստացված վարկերի համար (տես ծանոթագրություն 25):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ				2022
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	79,657,479	1,552,644	3,219,754	84,429,877
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	74,850,191	781,108	149,509	75,780,808
Մարված ակտիվներ	(60,793,650)	(1,108,522)	(460,902)	(62,363,074)
- փոխանցում Փուլ 1	920,063	(915,201)	(4,862)	-
- փոխանցում Փուլ 2	(1,826,900)	1,826,984	(84)	-
- փոխանցում Փուլ 3	(693,992)	(111,088)	805,080	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(381,269)	28,193	(582,947)	(936,023)
Վերականգնում	-	-	257,098	257,098
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(848,560)	(848,560)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	91,731,922	2,054,118	2,534,086	96,320,126

Հազար ՀՀ դրամ				2022
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	137,930,883	1,575,703	328,284	139,834,870
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	286,216,272	488,469	36,823	286,741,564
Մարված ակտիվներ	(250,488,681)	(525,867)	(61,375)	(251,075,923)
- փոխանցում Փուլ 1	1,490,936	(1,490,936)	-	-
- փոխանցում Փուլ 2	(171,884)	171,884	-	-
- փոխանցում Փուլ 3	(78,627)	(55,847)	134,474	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	(8,986,223)	285,517	(704,199)	(9,404,905)
Վերականգնում	-	-	731,482	731,482
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(174,899)	(174,899)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	165,912,676	448,923	290,590	166,652,189

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	86,129,457	1,218,375	1,054,275	88,402,107
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	51,027,727	464,073	1,832,947	53,324,747
Մարված ակտիվներ	(56,924,670)	(585,791)	(358,679)	(57,869,140)
- փոխանցում Փուլ 1	146,947	(144,265)	(2,682)	-
- փոխանցում Փուլ 2	(1,384,352)	1,385,665	(1,313)	-
- փոխանցում Փուլ 3	(1,552,023)	(591,463)	2,143,486	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	2,214,393	(193,950)	(450,745)	1,569,698
Վերականգնում	-	-	137,118	137,118
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,134,653)	(1,134,653)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	79,657,479	1,552,644	3,219,754	84,429,877

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	107,842,569	171,020	299,014	108,312,603
Սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	220,971,411	29,817	30,006	221,031,234
Մարված ակտիվներ	(200,148,458)	(375,343)	(53,398)	(200,577,199)
- փոխանցում Փուլ 1	259	(259)	-	-
- փոխանցում Փուլ 2	(2,060,530)	2,060,530	-	-
- փոխանցում Փուլ 3	(1,132,287)	(134,378)	1,266,665	-
Ակտիվի զուտ փոփոխություն տոկոսների և արտարժույթի վերագնահատումից	12,457,919	(175,684)	(159,323)	12,122,912
Վերականգնում	-	-	49,932	49,932
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,104,612)	(1,104,612)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	137,930,883	1,575,703	328,284	139,834,870

2022թ. և 2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով շարժը ըստ փուլերի հետևյալն է՝

Հազար ՀՀ դրամ				2022
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	522,895	91,980	1,493,200	2,108,075
- փոխանցում Փուլ 1	13,011	(12,709)	(302)	-
- փոխանցում Փուլ 2	(16,971)	17,024	(53)	-
- փոխանցում Փուլ 3	(10,723)	(23,946)	34,669	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(276,328)	194,332	39,424	(42,572)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	411,969	122,265	40,248	574,482
Վերականգնում	-	-	257,098	257,098
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(848,560)	(848,560)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	643,853	388,946	1,015,724	2,048,523

Հազար ՀՀ դրամ				2022
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	932,463	182,723	152,347	1,267,533
- փոխանցում Փուլ 1	155,417	(155,417)	-	-
- փոխանցում Փուլ 2	(1,190)	1,190	-	-
- փոխանցում Փուլ 3	(720)	(14,848)	15,568	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(563,589)	33,280	(600,564)	(1,130,873)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	674,262	128,789	14,003	817,054
Վերականգնում	-	-	731,482	731,482
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(174,899)	(174,899)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,196,643	175,717	137,937	1,510,297

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,844,612	352,876	666,781	2,864,269
- փոխանցում Փուլ 1	40,315	(38,912)	(1,403)	-
- փոխանցում Փուլ 2	(11,969)	12,968	(999)	-
- փոխանցում Փուլ 3	(23,030)	(177,102)	200,132	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(1,608,595)	(95,275)	662,229	(1,041,641)
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	281,562	37,425	963,995	1,282,982
Վերականգնում	-	-	137,118	137,118
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,134,653)	(1,134,653)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	522,895	91,980	1,493,200	2,108,075

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	226,167	67,980	219,081	513,228
- փոխանցում Փուլ 1	9	(9)	-	-
- փոխանցում Փուլ 2	(6,368)	6,368	-	-
- փոխանցում Փուլ 3	(1,995)	(59,903)	61,898	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	89,207	161,312	913,316	1,163,835
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում սկզբնավորված կամ ձեռք բերված նոր ակտիվների գծով	625,443	6,975	12,732	645,150
Վերականգնում	-	-	49,932	49,932
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,104,612)	(1,104,612)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	932,463	182,723	152,347	1,267,533

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի եւ տնտեսական պայմանների

վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 36.1.2 ծանոթագրությունում:

Ինչպես նշված է 33 ծանոթագրությունում, 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 35 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 36 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 32 ծանոթագրությունում:

20 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	443,770	210,849
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	494,646	603,448
Արժեզրկման գծով պահուստ	(13,351)	(12,938)
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	925,065	801,359
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	23,177,584	23,133,346
Արժեզրկման գծով պահուստ	(256,691)	(265,380)
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	22,920,893	22,867,966
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	23,845,958	23,669,325

Ամորտիզացված արժեքով չափվող՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	278,318	278,318	53,143	53,143
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(8,276)	(8,276)	225,175	225,175
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	270,042	270,042	278,318	278,318

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.		31 դեկտեմբերի 2021թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	3.81-12.61	2024-2047	5.7-10.4	2022-2047
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	9.3	2023	9.3	2023

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	3,088,204	4,225,515
Բաժնային գործիքներ	111,918	112,896
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	3,200,122	4,338,411

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	20,332,774	14,799,561
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	20,332,774	14,799,561
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	23,532,896	19,137,972

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	228,409	228,409	437,927	437,927
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	48,146	48,146	(209,518)	(209,518)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	276,555	276,555	228,409	228,409

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ.

Բանկը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող (2021թ.՝ ոչինչ):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.		31 դեկտեմբերի 2021թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	2.54-10.5	2023-2050	2.9-12.5	2022-2050

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերում ներառված բաժնային չգնանշվող արժեթղթերը ներկայացվում են ստորև.

Անվանումը	Գրանցման երկիրը	Վերահսկվող %		Հազար ՀՀ դրամ	
		2022	2021	2022	2021
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	6.25	6.25	82,500	82,500
ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ	Հայաստանի Հանրապետություն	4.58	4.58	23,255	23,255
SWIFT		-	-	6,163	7,141
				111,918	112,896

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

21 Հիմնական միջոցներ

	Հող և շենքեր	Փոխադրա-միջոցներ	Համակար-գիչներ	Կապիտալ ներդրումներ վարձակալ-ված հիմնական միջոցներում	Այլ	Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք կամ վերագնահատված արժեք							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	8,415,882	903,062	3,835,389	673,632	2,299,222	2,536,633	18,663,820
Ավելացում	309,883	283,641	200,947	131,458	227,612	122,660	1,276,201
Օտարում	(44,103)	(178,770)	(559)	(114,560)	(6,424)	(9,733)	(354,149)
Վերաչափում	-	-	-	-	-	377,497	377,497
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,681,662	1,007,933	4,035,777	690,530	2,520,410	3,027,057	19,963,369
Ավելացում	80,337	228,083	328,003	131,034	165,146	40,130	972,733
Օտարում	(37,671)	(50,419)	(617)	-	-	(43,790)	(132,497)
Վերաչափում	-	-	-	-	-	565,409	565,409
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,724,328	1,185,597	4,363,163	821,564	2,685,556	3,588,806	21,369,014

	Հող և շենքեր	Փոխադրա-միջոցներ	Համակար-գիչներ	Կապիտալ ներդրումներ վարձակալ-ված հիմնական միջոցներում	Այլ	Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ Հող և շենքեր	Ընդամենը
Կուտակված մաշվածություն							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	436,040	386,201	2,477,812	123,627	1,441,333	994,433	5,859,446
Տարվա ծախս	235,926	107,309	346,819	52,305	185,827	588,833	1,517,019
Արժեզրկում	-	29,537	-	-	-	-	29,537
Օտարում	-	(126,086)	(79)	(10,178)	(567)	-	(136,910)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	671,966	396,961	2,824,552	165,754	1,626,593	1,583,266	7,269,092
Տարվա ծախս	239,225	124,342	349,902	58,729	194,305	647,155	1,613,658
Օտարում	(1,098)	(42,419)	(511)	-	-	(722)	(44,750)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	910,093	478,884	3,173,943	224,483	1,820,898	2,229,699	8,838,000
Հաշվեկշռային արժեք							
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,009,696	610,972	1,211,225	524,776	893,817	1,443,791	12,694,277
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,814,235	706,713	1,189,220	597,081	864,658	1,359,107	12,531,014

Ակտիվների վերագնահատում

Բանկի հողը և շենքերը ներկայացված են վերագնահատված արժեքով: Հողի և շենքերի վերջին վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից 2019թ. հունվարին՝ կիրառելով համեմատական վաճառքների մեթոդը, որի արդյունքում առաջացել է վերագնահատումից հաշվեկշռային արժեքի զուտ աճ 485,717 հազար դրամ գումարով: Հողի և շենքերի իրական արժեքի գնահատման համար ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Եթե հողը և շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր՝ 3,648,936 հազար դրամ (2021թ՝ 3,776,008 հազար դրամ):

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի համար: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 696,321 հազար դրամ (2021թ. 662,175 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2021թ.՝ նույնպես):

Պայմանագրային պարտավորություններ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցներում ներդրումներ կատարելու նպատակով (2021թ.՝ նույնպես):

22 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Լիցենզիաներ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	451,567	476,894	30,550	959,011
Ավելացում	165,891	84,584	-	250,475
Վերադասակարգում	-	-	-	
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	617,458	561,478	30,550	1,209,486
Ավելացում	127,954	169,509	2,431	299,894
Օտարում	(31,798)	-	-	(31,798)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	713,614	730,987	32,981	1,477,582

Հազար ՀՀ դրամ	Լիցենզիաներ	Համակարգչային ծրագրեր	Այլ	Ընդամենը
Կուտակված ամորտիզացիա				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	240,624	115,401	21,253	377,278
Մասհանումներ	88,185	48,566	2,074	138,825
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	328,809	163,967	23,327	516,103
Մասհանումներ	124,998	55,082	2,036	182,116
Օտարում	(31,798)	-	-	(31,798)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	422,009	219,049	25,363	666,421
Հաշվեկշռային արժեք				
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	288,649	397,511	7,223	693,383
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	291,605	511,938	7,618	811,161

Պայմանագրային պարտավորություններ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվներում ներդրումներ կատարելու նպատակով (2021թ.՝ նույնպես):

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվների (2021թ.՝ նույնպես):

2022թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 258,914 հազար դրամ (2021թ.՝ 190,010 հազար դրամ):

23 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Աշխատակիցներին տրված հատուցումներ	27,690	58,046
Ստացման ենթակա գումարներ	185,173	81,526
Արժեզրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(7,825)	(8,648)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	205,038	130,924
Բռնագանձված ակտիվներ	1,193,115	1,020,543
Կանխավճարներ և այլ դեբիտորական պարտքեր	261,904	500,858
Նյութեր	327,451	175,493
Թանկարժեք մետաղներ	443	443
Հարկերի կանխավճարներ	180,817	160,291
Այլ ակտիվներ	124,974	62,636
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	2,088,704	1,920,264
Ընդամենը այլ ակտիվներ	2,293,742	2,051,188

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Փուլ 1	Ընդամենը	Փուլ 1	Ընդամենը
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	8,648	8,648	12,927	12,927
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(50,939)	(50,939)	(32,077)	(32,077)
Դուրսգրում	(67)	(67)	-	-
Վերականգնում	50,183	50,183	27,798	27,798
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,825	7,825	8,648	8,648

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Հողամաս	96,539	122,239
Շենքեր և շինություններ	1,096,576	898,304
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	1,193,115	1,020,543

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

24 Թողարկված պարտքային արժեթղթեր

2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Արժեքը մեկ պարտատոմսի դիմաց	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
03.10.2022	ՀՀ դրամ	10,000	58,870	11.00	03.10.2025	588,700,000
03.10.2022	ԱՄՆ դոլար	100	49,880	5.00	03.10.2025	4,988,000
04.05.2022	ԱՄՆ դոլար	100	50,000	5.25	04.05.2025	5,000,000
04.05.2022	ՀՀ դրամ	10,000	150,000	10.50	04.05.2025	1,500,000,000
03.09.2020	ՀՀ դրամ	10,000	150,000	9.75	03.09.2023	1,500,000,000
03.09.2020	ԱՄՆ դոլար	100	22,000	5.00	03.09.2023	2,200,000

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը գնանշված են և ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2021թ. նույնպես):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2021թ.՝ նույնպես):

25 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Վարկեր ՀՀ կենտրոնական բանկից	27,027,381	21,563,144
Կանխավճարներ ՀՀ կառավարությունից	41,181	256,633
Ընդամենը վարկեր ՀՀ կենտրոնական բանկից և կառավարությունից	27,068,562	21,819,777
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	25,012,816	22,036,428
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	28,751,030	27,017,157
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	5,994,544	4,457,357
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	18,299	25,050
Այլ	199,687	141,628
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	59,976,376	53,677,620
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	59,574,028	55,584,125
Ընդամենը պարտավորությունների ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	146,618,966	131,081,522

ՀՀ ԿԲ-ից և ՀՀ Կառավարությունից ստացված վարկերը ներկայացնում են վարկեր ստացված գերմանա-հայկական հիմնադրամի «Մանր, փոքր և միջին բիզնեսի վարկային ծրագրի» և «Մանր, փոքր և միջին բիզնեսի էներգաարդյունավետության աջակցության» ֆինանսավորման շրջանակներում, «Վերականգնվող էներգետիկա», «Գյուղատնտեսության ոլորտի աջակցման» և «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրերի շրջանակներում ներգրաված միջոցները:

2022 և 2021թթ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը և ավանդներն իրենցից ներկայացնում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և ավանդներ:

Ֆինանսական կազմակերպություններից ներգրաված բոլոր ավանդները ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը ունեն հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներ:

2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 19,550,845 հազար դրամ համախառն գումարով (2021թ.՝ 15,353,198 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի գրավով (տես ծանոթագրություն 19):

2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենտրոնական Բանկից ներգրաված վարկերը ապահովված են հաճախորդներին տրված 23,673,518 հազար դրամ համախառն գումարով (2021թ.՝ 12,382,337 հազար դրամ) վարկերի նկատմամբ պահանջի իրավունքի գրավով (տես ծանոթագրություն 19):

2022թ. Դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար Բանկը չի ունեցել միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի կամ տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2021թ.՝ նույնը):

2022 և 2021թթ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերը, ներառյալ հաշվեգրված տոկոսները, կապիտալի և ֆինանսական որոշակի սահմանված պայմաններ ունեցող վարկերը, ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Հազար ՀՀ դրամ

	Արժույթ	2022թ. դեկտեմբերի 31			2021թ. դեկտեմբերի 31		
		Մարմանը մնացած ժամկետ	Անվանական տոկոսադրույք, %	Հաշվեկշռային արժեք	Մարմանը մնացած ժամկետ	Անվանական տոկոսադրույք, %	Հաշվեկշռային արժեք
Dual Return Fund S.I.C.A.V	ԱՄՆ դոլար	2 տարի	5.56	2,000,025	-	-	-
AFD-PROPARCO	ԱՄՆ դոլար	6 տարի	6.37	3,964,227	-	-	-
ResponsAbility Global Micro and SME Finance Fund	ԱՄՆ դոլար	3 տարի	5.17	5,967,801	-	-	-
Covid-19 Emerging and Frontier Markets MSME Support Fund SCSp SICAV-RAIF	ԱՄՆ դոլար	4 տարի	5.89	1,974,245	-	-	-
ՎՋԵԲ	ՀՀ դրամ	3 տարի	11.69-12.47	3,952,237	1 տարուց պակաս	9.12-9.68	3,341,144
Symbiotics SA	ՀՀ դրամ	1 տարուց պակաս	8.32-15.34	1,660,894	1-2 տարի	8.32-11.75	2,414,985
FMO	ԱՄՆ դոլար	1-3 տարի	3.50-5.43	6,940,947	2-3 տարի	3.5-5.43	12,216,957
DEG	ԱՄՆ դոլար	2 տարի	8.06	2,034,530	3 տարի	5.15	3,422,980
INCOFIN CVBA	ԱՄՆ դոլար	1-4 տարի	6.32-7.22	6,349,080	Մինչև 1 տարի	7.22	990,897
BSTDB	ԱՄՆ դոլար	1-2 տարի	6.53	2,643,774	2-3 տարի	3.16	4,810,692
FMO	ԵՎՐՈ	2-3 տարի	3.16	1,754,182	3 տարի	3.16	2,713,422
ԲլյուՕրչարդ Մայքրոֆայնենս հիմնադրամ ՍՊԸ	ԱՄՆ դոլար	4 տարի	5.89	5,937,804	2 տարի	5.89	4,824,801
Ասիական զարգացման բանկ	ԱՄՆ դոլար	2-3 տարի	4.29-4.37	5,565,735	1-4 տարի	4.28-4.36	7,296,747
Ասիական զարգացման բանկ	ԱՄՆ դոլար	-	-	-	Մինչև 1 տարի	2.4-2.54	240,605
MSME BSA	ԱՄՆ դոլար	1-2 տարի	15.13	6,132,136	2-3 տարի	11.77	7,601,260
Microfinance Enhancement Facility S.A., SICAV-SIF	ԱՄՆ դոլար	2 տարի	5.55	1,995,555	3 տարի	5.55	2,427,128
Symbiotics SA	ԱՄՆ դոլար	-	-	-	3 տարի	5.55	2,430,746
Symbiotics SICAV II	ԱՄՆ դոլար	2 տարի	5.56	700,856	3 տարի	5.55	851,761
Ընդամենը				59,574,028			55,584,125

Բանկը պարտավոր է համապատասխանություն ապահովել վերոնշյալ փոխառու միջոցների գծով առկա ֆինանսական կովենանտների հետ: Այդ կովենանտները ներառում են սահմանված դրույքաչափերը, վարկ/կապիտալ հարաբերակցությունը և ֆինանսական գործունեությանն առնչվող մի շարք այլ տեղեկատվություն: Բանկի կողմից չի արձանագրվել այս դրույթներից որևէ մեկի խախտում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2021թ.՝ նույնպես):

26 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	47,944,563	34,763,505
Ժամկետային ավանդներ	15,683,389	13,423,840
	63,627,952	48,187,345
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	31,005,538	23,288,301
Ժամկետային ավանդներ	61,564,102	64,473,213
	92,569,640	87,761,514
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	156,197,592	135,948,859

Ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ընթացիկ (ժամկետային) ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների գծով համապատասխանաբար 8,799,759 հազար դրամ գումարով (2021թ. 9,886,988 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ տաս հաճախորդների ավանդների ընդհանուր գումարը (ներառյալ փոխկապակցված անձինք, տես ծանոթ. 32) կազմում է 39,617,556 հազար դրամ (2021թ. 16,035,467 հազար դրամ) կամ հաճախորդների ավանդների ընդհանուր գումարի 25.4% (2021թ. 11.8%):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի ունեցել իր հաճախորդների նկատմամբ պարտավորությունների մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2021թ.՝ նույնպես):

27 Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Միջազգային ֆինանսական կազմակերպությունից ստացված ստորադաս փոխառություն	1,971,498	2,399,802
Ֆիզիկական անձից ստացված ստորադաս փոխառություն	592,516	722,878
Կապակցված կողմից ստացված ստորադաս փոխառություններ	1,407,315	482,789
Ընդամենը ստորադաս փոխառություն	3,971,329	3,605,469

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկային համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունից ստացված ստորադաս փոխառությունների մարման ժամկետ է սահմանված մինչև 2028թ.:

Ֆիզիկականական անձից ներգրավված ստորադաս փոխառությունների մարման ժամկետ է սահմանված մինչև 2029թ.:

Կապակցված կողմից ներգրավված ստորադաս փոխառությունների մարման ժամկետ է սահմանված մինչև 2029թ.:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2021թ.՝ ոչինչ):

28 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Աշխատակիցներին վճարվելիք հատուցումներ	1,281,163	1,093,951
Անհատների նկատմամբ պարտավորություններ	468,650	293,851
Բաժնետոմսերի թողարկման գծով ստացված կանխավճարներ (ծանոթ. 29)	1,000,022	1,000,019
Վճարման ենթակա շահաբաժիններ	500,084	470,126
Վճարվելիք գումարներ	57,710	62,070
Վարձակալության գծով պարտավորություններ	1,475,813	1,572,752
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	4,783,442	4,492,769
Վճարման ենթակա հարկեր, բացի շահութահարկից	339,501	283,273
Պահուստներ*	103,386	77,321
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	442,887	360,594
Ընդամենը այլ պարտավորություններ	5,226,329	4,853,363

*Պահուստները ստեղծվել են ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով: Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերաբերյալ վերլուծությունը տե՛ս ծանոթագրություն 30-ում:

Վարձակալության գծով պարտավորություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել մասնաճյուղերի համար: Բացառությամբ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա կարճաժամկետ վարձակալությունների և հիմքում ընկած փոքրարժեք ակտիվների վարձակալությունների (տե՛ս ծանոթագրություն 12)՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Բանկը դասակարգում է իր օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սեփական հիմնական միջոցների դասակարգմանը համահունչ (տես ծանոթագրություն 21):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվը անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (հունվարի 1-ի դրությամբ)	1,572,752	1,674,091
Ավելացում	40,130	122,660
Վերաչափում	565,409	377,497
Դադարեցում	(44,150)	(9,733)
Տոկոսի կուտակում	151,359	166,311
Վճարումներ	(809,687)	(758,074)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,475,813	1,572,752

2022թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 10.25% (2021թ.՝ 10.25%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են պայմանագրի առարկա հանդիսացող համապատասխան ակտիվներով: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալաության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 36.3-ում:

29 Սեփական կապիտալ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հայտարարված բաժնետիրական կապիտալը կազմել է 27,652,090 հազար դրամ, որից ամբողջությամբ վճարված և գրանցված կազմել է 26,652,068 հազար դրամ: Բաժնետոմսերի թողարկման գծով ստացված կանխավճարները հաշվառվում են 28 ծանոթագրությունում: Համաձայն Բանկի կանոնադրության, վճարված բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,950,295 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,400 դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 15,000 դրամ անվանական արժեքով:

Բանկի բաժնետերերն.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.		31 դեկտեմբերի 2021թ.	
	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրա-կան կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Սարիբեկ Սուքիասյան	9,646,907	36.20	7,526,270	28.83
Խաչատուր Սուքիասյան	4,638,533	17.40	4,638,533	17.77
Ռոբերտ Սուքիասյան	52,000	0.20	4,604,781	17.64
Էդուարդ Սուքիասյան	3,299,146	12.38	3,290,608	12.60
ՋՈՒԼ Բետալիգունգս ԱԳ	1,427,171	5.35	-	-
Այլ բաժնետերեր	7,588,311	28.47	6,047,363	23.16
	26,652,068	100	26,107,555	100

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

2022թ. Բանկը համալրել է կանոնադրական կապիտալը՝ թողարկելով է 544,513 հազար դրամի սովորական բաժնետոմսեր (2021թ.՝ 151,892 հազար դրամի սովորական բաժնետոմսեր):

Բանկի բաժնետիրական կապիտալի ավելացումը իրականացվել է բաժնետերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժին և բաշխել շահույթը ՀՀ դրամով: Արտոնյալ բաժնետոմսերը չունեն ձայնի իրավունք և ունեն երաշխավորված տարեկան շահաբաժին ոչ պակաս, քան իրենց անվանական արժեքի 14% չափով՝ յուրաքանչյուր բաժնետոմսի համար:

Արտոնյալ և սովորական բաժնետոմսերի գծով ֆինանսական հաշվետվություններում 2022թ. հայտարարված և վճարված շահաբաժինների գումարը կազմում է համապատասխանաբար 891,660 հազար դրամ և 487,574 հազար դրամ (2021թ. ՝ 891,660 հազար դրամ և 379,588 հազար դրամ):

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ

պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

30 Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Չօգտագործված վարկային գծեր	5,864,608	4,969,004
Տրամադրված երաշխիքներ	11,399,125	9,700,755
Ակրեդիտիվներ	-	209,146
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	17,263,733	14,878,905

Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների պահուստներում (տե՛ս ծանոթագրություն 19-ում):

Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները ներկայացվում են այլ պարտավորություններում, որոնց գծով վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Հազար ՀՀ դրամ	2022թ.		2021թ.	
	Փուլ 1		Փուլ 1	
Ֆինանսական երաշխավորություններ				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	77,321	77,321	54,637	54,637
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	26,065	26,065	22,684	22,684
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	103,386	103,386	77,321	77,321

Երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են «Այլ պարտավորություններում» (տե՛ս ծանոթագրություն 28-ում):

31 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Այնուամենայնիվ, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Բանկին սեփականության իրավունքով պատկանող գլխամասային շենքը և փոխադրամիջոցներն ապահովագրված են: Բանկն ունի նաև ապահովագրություն բանկային ընդհանուր պարտավորվածությունների, էլեկտրոնային, համակարգչային հանցագործությունների և մասնագիտական պատասխանատվության համար: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար

անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի ուղղակի նշանակալից մասնակից է հանդիսանում Սուքիասյանների ընտանիքը, որոնք և հանդիսանում են Բանկի վերջնական վերահսկող:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2022		2021	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	4,604,405	409,763	4,743,737	289,095
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	3,706,457	431,670	2,140,407	474,134
Տարվա ընթացքում մարված վարկեր	(1,415,055)	(423,221)	(2,279,739)	(353,466)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	6,895,807	418,212	4,604,405	409,763
Արժեզրկումից պահուստ	(49,878)	(1,199)	(32,780)	(1,140)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,845,929	417,013	4,571,625	408,623
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	352,062	-
Տարվա ընթացքում տրամադրված	-	-	110,000	-
Տարվա ընթացքում մարված	-	-	(462,062)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-

Հազար ՀՀ դրամ	2022		2021	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	209,297	-	180,976	-
Տարվա ընթացքում ստացված	14,056,011	-	13,504,912	-
Տարվա ընթացքում վճարված	(14,037,592)	-	(13,476,591)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	227,716	-	209,297	-
Պարտավորություններ համախորդների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	2,422,509	685,922	791,688	664,407
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	33,550,320	3,084,584	21,136,405	2,941,696
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(32,482,866)	(3,171,794)	(19,505,584)	(2,920,181)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,489,963	598,712	2,422,509	685,922
Ստորադաս փոխառություններ				
Հունվարի 1-ի դրությամբ	482,788	-	524,260	-
Տարվա ընթացքում ստացված փոխառություններ	1,129,620	-	85,040	-
Տարվա ընթացքում վճարված փոխառություններ	(205,093)	-	(126,512)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,407,315	-	482,788	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	103,993	-	3,343
Տրամադրված երաշխիքներ	258,929	-	124,725	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	562,902	42,966	399,403	38,777
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	177,029	23,151	67,024	23,438
(Պարտքային կորուստների գծով ծախս)/ծախսի հակադարձում	(17,098)	(59)	(19,374)	6,678
Գովազդային ծախսեր	53,400	-	53,400	-
Ապահովագրության գծով ծախսեր	153,310	-	146,133	-
Ֆինանսական վարձակալության գծով ծախսեր	381,001	-	375,701	-
Գործուղման ծախսեր	10,504	20,305	5,612	6,518
Այլ ծախսեր	236,129	24,343	44,085	3,950

Բանկի հետ կապված անձանց տարվա ընթացքում տրամադրված վարկերը վճարման են ենթակա 1-ից 19 տարիների ընթացքում և դրանց տոկոսադրույքը կազմում է 5-16%:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2022	2021
Աշխատավարձ և պարգևատրումներ	907,309	760,697
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	907,309	760,697

33 Իրական արժեքի չափումը

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՝ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	69,081,631	-	69,081,631	69,081,631
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	11,448,364	-	11,448,364	11,448,364
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	6,381,390	-	6,381,390	6,381,390
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	258,549,644	-	258,549,644	259,413,495
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		20,712,075	-	20,712,075	23,845,958
Այլ ֆինանսական ակտիվներ	-	205,038	-	205,038	205,038

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	8,509,513	-	8,509,513	8,517,115
Հետգնման պայմանագրեր	-	38,713,408	-	38,713,408	38,713,408
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	146,618,966	-	146,618,966	146,618,966
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	157,923,167	-	157,923,167	156,197,592
Ստորադաս փոխառություններ	-	4,117,995	-	4,117,995	3,971,329
Վարձակալության գծով պարտավորություններ	-	1,475,813	-	1,475,813	1,475,813
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	3,307,629	-	3,307,629	3,307,629

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	63,399,890	-	63,399,890	63,399,890
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	9,497,133	-	9,497,133	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր	-	7,826,751	-	7,826,751	7,826,751
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	-	220,134,417	-	220,134,417	220,889,139
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		21,940,527	-	21,940,527	23,669,325
Այլ ֆինանսական ակտիվներ	-	130,924	-	130,924	130,924
Ֆինանսական պարտավորություններ					
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	6,150,215	-	6,150,215	6,107,897
Հետգնման պայմանագրեր	-	34,576,952	-	34,576,952	34,576,952
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	131,081,522	-	131,081,522	131,081,522
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	136,087,295	-	136,087,295	135,948,859
Ստորադաս փոխառություններ	-	3,715,745	-	3,715,745	3,605,469
Վարձակալության գծով պարտավորություններ	-	1,572,752	-	1,572,752	1,572,752
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	2,920,017	-	2,920,017	2,920,017

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 4% մինչև 24% տարեկան (2021թ. 5% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Ֆիքսված և չգնանշվող տոկոսադրույքներով փոխառությունների գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր պարտքային գործիքների տոկոսադրույքներով:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերի գնահատված իրական արժեքը սահմանվում է, ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Պետական պարտատոմսեր	-	23,420,978	-	23,420,978
Բաժնային գործիքներ	-	-	111,918	111,918
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	67	-	67
Ընդամենը	-	23,421,045	111,918	23,532,963
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	1,083	-	1,083
Ընդամենը	-	1,083	-	1,083
Զուտ իրական արժեք	-	23,419,962	111,918	23,531,880

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ				
Պետական պարտատոմսեր	-	19,025,076	-	19,025,076
Բաժնային գործիքներ	-	-	112,896	112,896
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	5,053	-	5,053
Ընդամենը	-	19,030,129	112,896	19,143,025
Ֆինանսական պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	21,883	-	21,883
Ընդամենը	-	21,883	-	21,883
Զուտ իրական արժեք		19,008,246	112,896	19,121,142

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, որպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը: Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային սվոպ պայմանագրերից:

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում են վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

Հողը և շենքերը վերագնահատվել են 2019 թվականի հունվարին:

Նշանակալի չդիտարկվող ներդրումը՝ վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները նյութապես ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ

համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.					
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 18)	6,446,417	-	6,446,417	-	6,804,013	357,596
Ընդամենը	6,446,417	-	6,446,417	-	6,804,013	357,596
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 18, 20)	38,713,408	-	38,713,408	43,510,358		(4,796,950)
Ընդամենը	38,713,408	-	38,713,408	43,510,358		(4,796,950)

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
				Ֆինանսական գործիքներ	Ստացված ոչ դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 18)	7,935,596	-	7,935,596	-	8,637,614	702,018
Ընդամենը	7,935,596	-	7,935,596	-	8,637,614	702,018
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրեր (Ծանոթ. 18, 20)	34,576,952	-	34,576,952	37,932,907	-	(3,355,955)
Ընդամենը	34,576,952	-	34,576,952	37,932,907	-	(3,355,955)

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ Բանկի կողմից տրամադրված 27,764 հազ. ՀՀ դրամ վարկերը հաշվանցվել են ՀՀ կառավարության պարտավորությունների հետ, քանի որ Բանկը հանդիսանում է տվյալ վարկերի սպասարկման գործակալ և այդ վարկերը տրամադրվել են ՀՀ կառավարության կողմից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ուղղված միջոցառումների շրջանակներում:

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 36.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	69,081,631	-	69,081,631	-	-	-	69,081,631
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	67	-	67	-	-	-	67
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,982,800	4,118,406	10,101,206	166,880	1,180,278	1,347,158	11,448,364
Հակադարձ հետգնման պայմանագրեր	6,381,390	-	6,381,390	-	-	-	6,381,390
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	7,539,245	54,644,337	62,183,582	119,739,149	77,490,764	197,229,913	259,413,495
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	20,738,437	20,738,437	570,016	2,224,443	2,794,459	23,532,896
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	232,799	23,613,159	23,845,958	-	-	-	23,845,958
Այլ ֆինանսական ակտիվներ	202,168	2,399	204,567	471	-	471	205,038
	89,420,100	103,116,738	192,536,838	120,476,516	80,895,485	201,372,001	393,908,839

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
Պարտավորություններ							
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,083	-	1,083	-	-	-	1,083
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,497,438	2,497,438	6,019,677	-	6,019,677	8,517,115
Հետգնման պայմանագրեր	38,713,408	-	38,713,408	-	-	-	38,713,408
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,641,880	44,008,970	54,650,850	77,760,726	14,207,390	91,968,116	146,618,966
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	84,521,339	57,748,053	142,269,392	13,358,298	569,902	13,928,200	156,197,592
Ստորադաս փոխառություններ	15,923	18,974	34,897	-	3,936,432	3,936,432	3,971,329
Վարձակալության գծով պարտավորություններ	2,124	227,114	229,238	807,523	439,052	1,246,575	1,475,813
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,264,136	43,493	3,307,629	-	-	-	3,307,629
	137,159,893	104,544,042	241,703,935	97,946,224	19,152,776	117,099,000	358,802,935
Զուտ Դիրք	(47,739,793)	(1,427,304)	(49,167,097)	22,530,292	61,742,709	84,273,001	35,105,904
Կուտակված ճեղքվածք	(47,739,793)	(49,167,097)		(26,636,805)	35,105,904		

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	63,399,890	-	63,399,890	-	-	-	63,399,890
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	5,053	-	5,053	-	-	-	5,053
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,565,632	6,013,715	7,579,347	793,694	1,124,092	1,917,786	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր	7,778,250	48,501	7,826,751	-	-	-	7,826,751
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	6,257,682	50,388,925	56,646,607	94,672,629	69,569,903	164,242,532	220,889,139
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	14,799,561	543,145	15,342,706	1,778,257	2,017,009	3,795,266	19,137,972
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	22,867,966	10,460	22,878,426	667,512	123,387	790,899	23,669,325
Այլ ֆինանսական ակտիվներ	130,924	-	130,924	-	-	-	130,924
	116,804,958	57,004,746	173,809,704	97,912,092	72,834,391	170,746,483	344,556,187

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահան-րագումար	Ընդամենը
Պարտավորություններ							
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	21,883	-	21,883	-	-	-	21,883
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,016,045	5,091,852	6,107,897	-	-	-	6,107,897
Հետգնման պայմանագրեր	34,576,952	-	34,576,952	-	-	-	34,576,952
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,680,927	34,186,837	40,867,764	78,559,369	11,654,389	90,213,758	131,081,522
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	62,421,860	53,186,912	115,608,772	19,613,110	726,977	20,340,087	135,948,859
Ստորադաս փոխառություններ	-	28,358	28,358	720,273	2,856,838	3,577,111	3,605,469
Վարձակալության գծով պարտավորություններ	-	102,626	102,626	929,964	540,162	1,470,126	1,572,752
Այլ ֆինանսական պարտավորություններ	355,921	2,564,096	2,920,017	-	-	-	2,920,017
	105,073,588	95,160,681	200,234,269	99,822,716	15,778,366	115,601,082	315,835,351
Զուտ Դիրք	11,731,370	(38,155,935)	(26,424,565)	(1,910,624)	57,056,025	55,145,401	28,720,836
Կուտակված ճեղքվածք	11,731,370	(26,424,565)		(28,335,189)	28,720,836		

1-ից մինչև 12 ամիս ճեղքվածքը պայմանավորված է հաճախորդների ավանդների ժամկետներով, որոնք պարբերաբար երկարաձգվում են և Բանկը ունի հնարավորություն ամբողջությամբ մարելու դրանք պահանջելու դեպքում:

36 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ

առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Տնօրինության խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար: Խորհուրդը տրամադրում է սկզբունքներ ռիսկի ամբողջական կառավարման համար, ինչպես նաև քաղաքականություն՝ հատուկ բնագավառների վերաբերյալ, ինչպիսիք են փոխարժեքային (արտարժութային) ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը:

Վարչություն

Վարչությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի անխափան իրականացման և վերահսկման համար: Վարչությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման ռազմավարության, սկզբունքների, հայեցակարգերի, քաղաքականության և սահմանների մշակման ու կիրառման համար: Այն պատասխանատու է ռիսկերի կառավարման խնդիրների լուծման համար և վերահսկում է դրանց նկատմամբ ընդունած համապատասխան որոշումների կատարումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարումն իրականացվում է «Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության» (ՌՌԿՎ) կողմից՝ ըստ Տնօրենների խորհրդի հաստատած քաղաքականության: ՌՌԿՎ կողմից գնահատվում, բացահայտվում, վերլուծվում և հեջավորվում են ռիսկերը՝ գործառնական ստորաբաժանումների հետ սերտ համագործակցության միջոցով: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է ռիսկերի կառավարման սկզբունքների վերահսկման, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի համար, ինչպես նաև ռիսկերի կառավարման հետ կապված գործընթացների ներդրման և իրականացման համար:

Ներքին աուդիտ

Ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկերի կառավարման անկախ գնահատման և հսկողության ընդհանուր միջավայրի համար: Բանկի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի ստուգման է ենթարկվում ներքին աուդիտի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում կառավարման համապատասխան մարմիններին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերի գնահատման մեթոդով հաշվի է առնվում ինչպես սպասվող կորուստը, որն իրենից ներկայացնում է գործունեության ընթացքում կորուստների հնարավոր միջին

մակարդակ, այնպես էլ հնարավոր անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են սպասվող միջին մակարդակը գերազանցող կորուստներ: Բանկը նաև մոդելավորում է քիչ հավանական, սակայն պոտենցիալ էական ազդեցություն ունեցող «վատթարագույն դեպքերը»:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերն արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին ոլորտների վրա:

Գործունեության առանձին տեսակների գծով ստացվող տեղեկատվությունն ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվության հիման վրա կազմված հաշվետվությունները պարունակում են տեղեկություններ վարկային ռիսկի չափի, վարկային ցուցանիշների կանխատեսվող մակարդակի, ռիսկի սահմանված սահմանաչափերի, դրանցից բացառությունների, VaR գնահատականի, իրացվելիության ցուցանիշների և ընդհանուր ռիսկի մակարդակի փոփոխության վերաբերյալ: Բանկի վարչությունը յուրաքանչյուր ամիս ստանում է ռիսկերի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ըստ ոլորտների, հաճախորդների և աշխարհագրական շրջանների, որը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկատվությունը Բանկի ռիսկերի գնահատման և համապատասխան որոշումների կայացման համար: Յուրաքանչյուր օր անց է կացվում ղեկավարության կարճատև խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում Բանկի այլ աշխատակիցների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են սահմանված սահմանաչափերի պահպանումը, վերլուծվում է ռիսկի մակարդակը, ներդրումները, իրացվելիությունը և ռիսկերին վերաբերող այլ ընթացիկ հարցեր:

Ռիսկի նվազեցում

Ռիսկերի նվազեցման գործընթացն իրենից ներկայացնում է ռիսկերի առաջացման հնարավորությունը, կամ դրա ազդեցությունը նվազեցնելու, կամ այդ երկու գործոնների մեղմման ուղղությամբ ձեռնարկվող լրացուցիչ միջոցառումների իրականացում: Իր ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում Բանկն օգտագործում է ածանցյալ և այլ գործիքներ: Բանկն ակտիվորեն օգտագործում է գրավի միջոցները՝ վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ (ավելի մանրամասն՝ տես ստորև):

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

36.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների

տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ՌԿՎ պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին և Վարչությանը:

36.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված հանձնառությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 36.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	15,308,984	-	-	15,308,984
Ստանդարտ	53,823,902	-	-	53,823,902
Համախառն հաշվեկշռային արժեք	69,132,886	-	-	69,132,886
Արժեզրկումից պահուստ	(51,225)	-	-	(51,225)
Զուտ հաշվեկշռային արժեք	69,081,631	-	-	69,081,631
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	11,524,669	-	-	11,524,669
Համախառն հաշվեկշռային արժեք	11,524,669	-	-	11,524,669
Արժեզրկումից պահուստ	(76,305)	-	-	(76,305)
Զուտ հաշվեկշռային արժեք	11,448,364	-	-	11,448,364
Հակադարձ հետգնման պայմանագրեր				
Ստանդարտ	6,466,417	-	-	6,466,417
Համախառն հաշվեկշռային արժեք	6,466,417	-	-	6,466,417
Արժեզրկումից պահուստ	(85,027)	-	-	(85,027)
Զուտ հաշվեկշռային արժեք	6,381,390	-	-	6,381,390

Հազար ՀՀ դրամ

Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
				31 դեկտեմբերի 2022թ.
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	91,653,105	-	-	91,653,105
Ստանդարտ	78,817	1,916,313	-	1,995,130
Ցածր	-	137,805	-	137,805
Չաշխատող	-	-	2,534,086	2,534,086
Համախառն հաշվեկշռային արժեք	91,731,922	2,054,118	2,534,086	96,320,126
Արժեզրկումից պահուստ	(643,853)	(388,946)	(1,015,724)	(2,048,523)
Զուտ հաշվեկշռային արժեք	91,088,069	1,665,172	1,518,362	94,271,603
Առևտրային վարկեր				
Բարձր	165,887,310	-	-	165,887,310
Ստանդարտ	25,366	357,319	-	382,685
Ցածր	-	91,604	-	91,604
Չաշխատող	-	-	290,590	290,590
Համախառն հաշվեկշռային արժեք	165,912,676	448,923	290,590	166,652,189
Արժեզրկումից պահուստ	(1,196,643)	(175,717)	(137,937)	(1,510,297)
Զուտ հաշվեկշռային արժեք	164,716,033	273,206	152,653	165,141,892
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	24,116,000	-	-	24,116,000
Համախառն հաշվեկշռային արժեք	24,116,000	-	-	24,116,000
Արժեզրկումից պահուստ	(270,042)	-	-	(270,042)
Զուտ հաշվեկշռային արժեք	23,845,958	-	-	23,845,958
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	23,532,896			23,532,896
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	23,532,896			23,532,896
Արժեզրկումից պահուստ	(276,555)	-	-	(276,555)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	212,863	-	-	212,863
Համախառն հաշվեկշռային արժեք	212,863	-	-	212,863
Արժեզրկումից պահուստ	(7,825)	-	-	(7,825)
Զուտ հաշվեկշռային արժեք	205,038	-	-	205,038

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2022թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ				
Ստանդարտ	17,263,733	-	-	17,263,733
Համախառն հաշվեկշռային արժեք	17,263,733	-	-	17,263,733
Արժեզրկումից պահուստ*	(103,386)	-	-	(103,386)

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2021թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Բարձր	14,481,483	-	-	14,481,483
Ստանդարտ	48,951,210	-	-	48,951,210
Համախառն հաշվեկշռային արժեք	63,432,693	-	-	63,432,693
Արժեզրկումից պահուստ	(32,803)	-	-	(32,803)
Զուտ հաշվեկշռային արժեք	63,399,890	-	-	63,399,890
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	9,555,254	-	-	9,555,254
Համախառն հաշվեկշռային արժեք	9,555,254	-	-	9,555,254
Արժեզրկումից պահուստ	(58,121)	-	-	(58,121)
Զուտ հաշվեկշռային արժեք	9,497,133	-	-	9,497,133
Հակադարձ հետգնման պայմանագրեր				
Ստանդարտ	7,935,596	-	-	7,935,596
Համախառն հաշվեկշռային արժեք	7,935,596	-	-	7,935,596
Արժեզրկումից պահուստ	(108,845)	-	-	(108,845)
Զուտ հաշվեկշռային արժեք	7,826,751	-	-	7,826,751
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	79,549,913	-	-	79,549,913
Ստանդարտ	107,566	1,402,238	-	1,509,804
Ցածր	-	150,406	-	150,406
Չաշխատող	-	-	3,219,754	3,219,754
Համախառն հաշվեկշռային արժեք	79,657,479	1,552,644	3,219,754	84,429,877
Արժեզրկումից պահուստ	(522,895)	(91,980)	(1,493,200)	(2,108,075)
Զուտ հաշվեկշռային արժեք	79,134,584	1,460,664	1,726,554	82,321,802

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Բարձր	137,929,415	-	-	137,929,415
Ստանդարտ	1,468	1,539,360	-	1,540,828
Ցածր	-	36,343	-	36,343
Չաշխատող	-	-	328,284	328,284
Համախառն հաշվեկշռային արժեք	137,930,883	1,575,703	328,284	139,834,870
Արժեզրկումից պահուստ	(932,463)	(182,723)	(152,347)	(1,267,533)
Զուտ հաշվեկշռային արժեք	136,998,420	1,392,980	175,937	138,567,337
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	23,947,643	-	-	23,947,643
Համախառն հաշվեկշռային արժեք	23,947,643	-	-	23,947,643
Արժեզրկումից պահուստ	(278,318)	-	-	(278,318)
Զուտ հաշվեկշռային արժեք	23,669,325	-	-	23,669,325
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	19,137,972	-	-	19,137,972
Հաշվեկշռային արժեք (իրական արժեք)	19,137,972	-	-	19,137,972
Արժեզրկումից պահուստ	(228,409)	-	-	(228,409)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	139,572	-	-	139,572
Համախառն հաշվեկշռային արժեք	139,572	-	-	139,572
Արժեզրկումից պահուստ	(8,648)	-	-	(8,648)
Զուտ հաշվեկշռային արժեք	130,924	-	-	130,924
Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ				
Ստանդարտ	14,878,905	-	-	14,878,905
Համախառն հաշվեկշռային արժեք	14,878,905	-	-	14,878,905
Արժեզրկումից պահուստ*	(77,321)	-	-	(77,321)

* Ներառում է միայն ֆինանսական երաշխիքների գծով պահուստը (տես ծանոթագրություն 30)։

36.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս 4.4.6 ծանոթագրությունը):

Ռիսկերի կառավարման նպատակներով վարկային ռիսկերի գնահատումը բարդ է և պահանջում է մոդելների կիրառում, քանի որ շուկայական պայմաններով, ակնկալվող դրամական հոսքերով և ժամանակային փոփոխություններով պայմանավորված վարկային ռիսկը կարող է տարբերվել: Ակտիվների պորտֆելի վարկային ռիսկի գնահատումը պահանջում է հետագա գնահատումներ կատարել՝ կապված պարտազանցման, դրանից բխող կորուստների գործակիցների և գործընկերների միջև պարտազանցման կորելացիաների հավանականության հետ: Բանկը վարկային ռիսկը գնահատում է պարտազանցման տեղի ունենալու հավանականության (PD), կորուստը պարտազանցման դեպքում (LGD) և պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Սա մոտ է ECL-ի չափման նպատակով կիրառված մոտեցմանը՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ Բանկն օգտագործում է արժեզրկման «եռափուլ» մոդել՝ վարկի սկզբնական ճանաչումից հետո որակի փոփոխությունների հիման վրա, որն ամփոփված է ստորև.

- Սկզբնական ճանաչման պահին վարկային տեսանկյունից չարժեզրկված ֆինանսական գործիքը դասակարգվում է «փուլ 1-ում», որի վարկային ռիսկը շարունակաբար վերահսկվում է Բանկի կողմից:
- Եթե սկզբնական ճանաչումից հետո հայտնաբերվում է վարկային ռիսկի զգալի աճը (SICR), ապա ֆինանսական գործիքը տեղափոխվում է «փուլ 2», սակայն դեռևս չի համարվում վարկային տեսանկյունից արժեզրկված:
- Եթե ֆինանսական գործիքը վարկային տեսանկյունից արժեզրկված է, ապա այն տեղափոխվում է «փուլ 3»:
- Փուլ 1-ում ֆինանսական գործիքների ECL-ը չափվում է առաջիկա 12 ամիսների ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների տվյալ մասին համարժեք գումարով, որոնք առաջանում են առաջիկա 12 ամիսների ընթացքում հնարավոր պարտազանցման իրադարձությունների հետեւանքով: 2-րդ կամ 3-րդ փուլերում գործիքների ECL-ն չափվում է՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների վրա:
- ՖՀՄՍ 9-ի համաձայն, ECL-ի չափման համապարփակ հայեցակարգը պետք է հաշվի առնի նաև կանխատեսումներ:
- Ձեռք բերված կամ սկզբնապես վարկային տեսանկյունից արժեզրկված ֆինանսական ակտիվներն այն ակտիվներն են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Դրանց ECL-ն մշտապես չափվում է գործողության ողջ ընթացքի համար (փուլ 3):

ECL-ները կարող են չափվել կորուստների գծով պահուստների միջոցով՝ ստորև նշվածների համարժեք գումարի չափով՝

- Վարկի գործողության ողջ ընթացքում ECL, որոնք արդյունք են ֆինանսական գործիքի արժեզրկման իրադարձությունների, և որոնք կարող են տեղի ունենալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 12 ամիսների ընթացքում (ինչպես նշված է փուլ 1-ում), կամ
- Վարկի գործողության ողջ ընթացքում ECL, այսինքն՝ ECL, որն արդյունք է ֆինանսական գործիքի գործողության ընթացքում հնարավոր պարտազանցման իրադարձությունների (ինչպես նշված է փուլ 2-ում և 3-ում):

Լիարժեք ECL-ի դեպքում ֆինանսական գործիքի համար պահանջվում է կորուստների գծով պահուստներ, եթե այդ ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչումից հետո: Մնացած բոլոր այլ ֆինանսական գործիքների դեպքում ECL-ները չափվում են 12-ամսյա ECL-ին համարժեք գումարի չափով:

Չօգտագործված վարկային գծերի և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում ECL-ն չափվում է՝ հիմնվելով 100% «վարկային ռիսկի փոխարկման գործոնների» (Credit Conversion Factor) վրա:

Ֆինանսական հաստատություններից, միջբանկային ավանդներից և թղթակցային հաշիվներից ստացվան ենթակա գումարները, պարտքային գործիքներում ներդրումները ենթակա են արժեզրկման՝ հիմնվելով 12-ամսյա ECL-ի վրա: Հաճախորդների մասով պարտազանցման հավանականության և կորուստի պարտազանցման դեպքում հաշվարկները ստացվում են միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, Fitch, S & P) տրամադրած վարկային վարկանիշի վերաբերյալ տեղեկատվությունից:

Այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների համար նախատեսված պահուստը հաշվարկվում է անհատական հիմունքով՝ կիրառելով հաճախորդի վարկային կորստի պահուստի դրույքաչափը: Եթե հաճախորդը բանկում վարկային ռիսկ չի ունենում, ապա օգտագործվում են հաճախորդի վարկային վարկանիշը և համապատասխան պարտազանցման հավանականությունն ու կորուստը պարտազանցման դեպքում: Բացի այդ, գնահատվում է նաև դեբիտորական պարտքի ակնկալվող ռիսկը: Եվ վերջապես, պարտազանցման տեղի ունենալու հավանականությունները, կորուստները պարտազանցման դեպքում և ակնկալվող ժամանակահատվածը բազմապատկվում են՝ վարկային ակնկալվող պահուստը դեբիտորական պարտքերի համար հաշվարկելու համար:

Հաճախորդներին տրված վարկեր

Վարկառուների վարկային ռիսկերի գնահատման նպատակով Բանկը մշակել է ՖՀՄՍ 9-ի պահանջների վրա հիմնված մեթոդաբանությունը:

Ակնկալվող պարտքային կորուստները Բանկը չափում է անհատական, իսկ վարկային պորտֆելների դեպքում՝ հավաքական հիմունքով, որոնք համանման վարկային ռիսկի հատկանիշներ ունեն:

Անհատապես նշանակալի վարկային ռիսկը համարվում է այն վարկառուների կամ փոխկապակցված վարկառուների խումբը, որոնց ռիսկը գերազանցում է Բանկի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 0.3%: Բացի այն, նրանց պետք է վարկային ռիսկի զգալի աճի հատկանիշներ դրսևորեն, ինչպիսիք են ժամկետանց օրերի ավելացումը կամ զգալի ֆինանսական դժվարությունները:

Վարկառուի սպասվող ֆինանսական վիճակի վատթարացմամբ պայմանավորված Բանկի սուբյեկտիվ մոտեցմամբ վարկերը կարող են դասակարգվել ավելի խիստ փուլում, ինչպես նաև վերոնշյալ վարկառուների ֆինանսական վիճակի վատթարացման բացակայության դեպքում վարկերը կարող են վերադասակարգվել նախկին փուլում:

Վարկային ռիսկի զգալի աճը, կամ արժեզրկումից կորստի բացահայտման նպատակով Ռիսկերի կառավարման վարչությունը վերլուծում է վարկառուների իրացվելիության, վճարունակության, բիզնես գործունեության և ֆինանսական ռիսկերի առկայության, ժամկետանց, վերակազմակերպման, վարկային վարկանիշների և գրավադրումների իրական արժեքների մասին տեղեկատվությունը:

Անհատապես նշանակալի ռիսկերի ECL-ն, որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշների են դրսևորում, չափվում է անհատական հիմունքով: Անհատապես նշանակալի ռիսկերի ECL-ն,

որոնք վարկային ռիսկի գալի աճի հատկանիշներ չեն դրսևորում, չափվում են հավաքական հիմունքով։

Անհատական հիմունքով ECL-ի չափումը

Անհատապես գնահատված վարկերի համար ECL-ները չափվում են որպես պայմանագրով Բանկին տրվելիք դրամական միջոցների հոսքերի և բազմաթիվ ապագա տնտեսական սցենարների վերլուծման արդյունքում Բանկի կողմից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի տարբերության ներկա արժեք, որը զեղչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով։ Բացի այդ, հաշվի են առնվում նաև վարկի գծով գրավադրված ցանկացած ակտիվների մարումը և իրացումը։

Բանկը, որպես կանոն, գնահատում է գրավի իրացման արժեքը՝ հիմք ընդունելով նախկին համանման գրավների փաստացի իրացման ժամկետները։ Ընդհանուր մոտեցումը փոփոխվում է կախված առանձին դեպքերից, եթե այլ հանգամանքները ցույց են տալիս, որ հավաքագրման և գնահատման կրճատում կատարելու ընդհանուր ժամկետը ողջամիտ չեն։

Հավաքական հիմունքով ECL-ի չափումը

ECL-ի չափման հիմնական ելակետային տվյալները հետևյալ փոփոխականների ժամկետային կառուցվածքն է՝

- Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD),
- Կորուստը պարտազանցման դեպքում (LGD),
- Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

Այս պարամետրերը հիմնականում ստացվում են ներքին օգտագործման վիճակագրական մոդելներից և այլ պատմական տվյալներից։ Դրանք կարգավորվում են կանխատեսումների արտացոլման նպատակով։

Հավաքական գնահատումն իրականացվում է վարկառուի մակարդակով, այլ ոչ թե պայմանագրի մակարդակով։

Սեգմենտավորում

Հավաքական հիմունքով գնահատված վարկերը խմբավորված են ըստ իրենց վարկային ռիսկի հատկանիշների։ Նման հատկանիշները ներառում են.

- Սեգմենտը/հատվածը
- Ժամկետանց օրերը
- Վերակազմակերպում
- Ապահովվածություն

ECL-ի՝ հավաքական հիմունքով գնահատման ենթակա պորտֆելները բաժանվում են 5 սեգմենտների կամ հատվածների. սպառողական, հիփոթեք, արտադրություն, գյուղատնտեսություն, այլ։

Պարտազանցման սահմանումը

ECL-ի սահմանման համար կարևոր է սահմանել պարտազանցումը։ Վերջինիս սահմանումն իրենից ներկայացնում է ECL-ի չափի գնահատումը։ Ստորև նշվածները Բանկը համարում է պարտազանցման իրադարձություն.

- Վարկառուն ունի ավելի քան 90 օր ժամկետանց որևէ նյութական վարկային պարտավորություն Բանկին՝ հավաքական հիմունքով գնահատվող վարկերի պարագայում,
- Վարկառուի վարկը մեկից ավելի անգամ վերակազմակերպվել է,

Վարկառուի՝ իր վարկային պարտավորությունների չկատարման հավանականության գնահատման ժամանակ Բանկը հաշվի է առնում որակական և քանակական ցուցանիշները: Պարտազանցման գնահատման համար Բանկն օգտվում է տեղեկատվության բազմաթիվ աղբյուրներից, որոնք պատրաստվում են կազմակերպության ներսում, կամ ստացվում արտաքին աղբյուրներից:

Գնահատվող տեղեկությունը կախված է նաև բացահայտման կարևորությունից: Որակական ցուցանիշները, ինչպիսիք են վարկառուի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման մասին արտաքին աղբյուրից ստացված տեղեկությունները ծառայում են որպես վերլուծության կարևոր տվյալներ և օգտագործվում ECL-ի անհատական հիմունքով գնահատման համար վարկերի բացահայտման նպատակով, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը էականորեն զգալի շեմից ավելի բարձր է:

Վարկային ռիսկի նշանակալի աճ

Բանկը վերահսկում է արժեզրկման պահանջներին ենթակա բոլոր ֆինանսական ակտիվները՝ գնահատելու դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճը: Վարկային ռիսկի նշանակալի աճի դեպքում Բանկը կչափի կորուստների գծով պահուստները՝ հիմնվելով գործողության ողջ ընթացքում, այլ ոչ 12-ամսյա, ECL-ի վրա:

Ֆինանսական գործիքի՝ դրանց սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի նշանակալի աճի գնահատման ժամանակը Բանկը հաշվի է առնում որակական և քանակական տեղեկությունները, որոնք ողջամիտ են և հիմնավորված: Վարկառու վարկային վարկանիշի զգալի վատթարացումը, գրավի արժեքի զգալի նվազումը կարող են համարվել վարկային ռիսկերի զգալի չափով ավելացման որակական ցուցանիշեր, որոնք օգտագործվում են ECL-ի անհատական հիմունքով գնահատման համար նախատեսված վարկերի բացահայտման համար, եթե վարկառուի ներկայացրած ռիսկը զգալիորեն բարձր է էականորեն նշանակալի շեմից:

Երբ ակտիվը դառնում է 30 օր ժամկետանց, Բանկը համարում է, որ վարկային ռիսկի զգալի աճ է տեղի ունեցել և ակտիվը գտնվում է արժեզրկման մոդելի 2-րդ փուլում, այսինքն՝ կորուստների գծով պահուստները գնահատվում են գործողության ողջ ընթացքի ECL-ով:

Վերանայված վարկեր և կանխավճարներ

Վարկերը և կանխավճարները, ընդհանուր առմամբ, վերանայվում են հաճախորդների հետ շարունակական փոխհարաբերությունների շրջանակներում, կամ վարկառուի դրության անբարենպաստ փոփոխության արդյունքում: Վերջինի դեպքում, վերանայումը կարող է հանգեցնել մարման ժամկետի կամ մարման ժամանակացույցի երկարաձգման, համաձայն որի, Բանկն իրապես անբարենպաստ վիճակում գտնվող վարկառուներին առաջարկում է զեղչային տոկոսադրույքներ: Արդյունքում՝ տվյալ ակտիվը շարունակում է մնալ ժամկետանց և անհատապես արժեզրկված, ընդ որում՝ տոկոսի և մայր գումարի վճարումը թույլ չի տալիս վերականգնել ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը: Այլ դեպքերում, վերանայումը կհանգեցնի նոր պայմանագրի ստորագրման, որն ըստ էության կդիտվի որպես նոր վարկ:

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված՝ վերանայված վարկերի հաշվեկշռային արժեքը կազմել է 1,128,416 հազար ՀՀ դրամ և 353,576 հազար ՀՀ դրամ, համապատասխանաբար:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

Յուրաքանչյուր խմբի համար PD-ի չափը որոշելու համար Բանկն օգտագործում է միգրացիայի մատրիցների մեթոդաբանություն, որը կիրառում է պատմական տվյալների, պարտավորությունների չկատարման և պարտազանցման փորձի վիճակագրական վերլուծությունները վարկերի գումարը հուսալիորեն գնահատելու համար, որոնք, ի վերջո, կարժեզրկվեն՝ մինչև հաշվեկշռային ամսաթիվը տեղի ունեցած իրադարձությունների

արդյունքում: Համանման խմբի դիտարկման համար ընտրվել է հինգ տարվա ժամկետ՝ 2017 թվականի հունվարից մինչև 2022 թվականի դեկտեմբերը: Դիտարկվող ժամանակահատվածում պատրաստվեցին մեկամսյա միգրացիայի մատրիցները:

Միգրացիայի մատրիցներն օգտագործվում են հավաքական հիմունքով գնահատման յուրաքանչյուր խմբի պարտազանցման 12-ամսյա հավանականությունը հաշվարկելու համար: Դրանից ելնելով, հաշվարկվում են հետագա տարիների սահմանային PD-ները, մինչև սպառվի պորտֆելի մարման ժամկետը: PD-ի հաշվարկներ համար պարտազանցումը սահմանվել 90 օր ժամկետանց դեպքը: Դիտարկվող ժամանակահատվածում առնվազն մեկ անգամ արժեզրկված վարկառուն համարվում է արժեզրկված դիտարման ողջ մնացած ժամանակահատվածում:

Ժամկետային (Point in Time PDs) PD-ները հաշվարկելու համար Բանկը տարբեր մակրո սցենարների ներքո կիրառում է նաև կանխատեսումներ:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

Արժեզրկման մոդելի բաղադրիչներից մեկը պարտազանցման դեպքում կորստի չափն է, այսինքն՝ հաշվարկվում է պարտազանցման դեպքում կորուստը: Այն չափելու համար ըստ սեգմենտների արժեզրկված ռիսկերը նվազեցվում են գրավադրված դեպոզիտների և գրավադրված գույքի զեղչված իրացվելիության արժեքի չափով՝ կիրառելով հավաքագրման նախկին համանման գրավների փաստացի իրացման ժամկետները: Չապահովված ակտիվների LGD մոդելներում հաշվի են առնվում արժեզրկված ակտիվների մարման դրույքաչափերը: LGD-ները չափվում են սեգմենտի, այլ ոչ թե առանձին վարկառուի մակարդակով:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

EAD-ն պարտազանցման դեպքում ակնկալվող ռիսկն է: Բանկը EAD-ն ստանում է կոնտրագենտի համար ներկայացրած ընթացիկ/ներկա ռիսկից և ընթացիկ գումարի հնարավոր փոփոխություններից, որոնք նախատեսված են ամորտիզացիա ներառող պայմանագրով:

Ապագայամետ տեղեկատվություն

ECL-ի չափման ժամանակ Բանկն կանխատեսված տեղեկություններ է օգտագործում: Այդ տեղեկությունները ներառում են դրամավարկային քաղաքականություն սահմանող մարմինների կողմից հրապարակված տնտեսական տվյալները և կանխատեսվող տնտեսական ցուցանիշները: Պարտազանցման հավանականության որոշմանը մասնակցում են հետևյալ մակրոտնտեսական փոփոխականները. սպառողական գների համաթիվը, ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ փոխարժեքը և ՌԴ ռուբլի-ՀՀ դրամ փոխարժեքը: Դրանք հանգեցնում են պարտազանցման տարբեր հավանականությունների: Այս տարբեր փոփոխականների համակողմանի վերլուծումը կամ կշռումը պարտազանցման միջին կշռված հավանականության հիմքն է կազմում, որն օգտագործվում է ECL-ի հաշվարկների համար: 12ամսյա ECL-ն (փուլ 1-ի վարկեր) չափվում է միայն 12 ամսվա PD-ով: Գործողության ամբողջ ընթացքի ECL-ն (փուլ 2-ի և 3-ի վարկեր) չափվում է բոլոր տարեկան սահմանային PD-ներով՝ մինչև վարկի մարման ժամկետի ավարտը:

Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներն իրենց տարբեր սցենարների և կշիռների հետ միասին հրապարակվում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից:

Ակնկալվող պարտքային կորուստների (ECL) հաշվարկ

Յուրաքանչյուր խմբի/սեգմենտի համար սահմանային PD-ն և LGD-ն որոշելուց հետո վարկային կորուստների գծով պահուստների վերջնական հաշվարկ է կատարվում: Այն կախված է խմբերի ռիսկի հատկանիշներից. փուլ 1-ի խմբերի համար (31-ից պակաս ժամկետանց օր) հաշվարկվում է 12-ամսյա ECL-ն, իսկ փուլեր 2-ի և 3-ի խմբերի համար (ավելի քան 90 օր ժամկետանց կամ վերակազմակերպված վարկեր) հաշվարկվում է ամբողջական ECL-ն: Վարկային պորտֆելի ECL-ի հաշվարկման արդյունքները հնարավորություն են տալիս տանալ հավաքական հիմունքով

գնահատման 9 խմբերից յուրաքանչյուրի արժեզրկման միջին դրույքաչափը: Այս դրույքաչափերը կիրառվում են մինչև ամբողջ մոդելի հաջորդ հերթական վերահաշվարկ կատարելը վարկային կորուստների գծով պահուստներ ձևավորելու համար: Արժեզրկման մոդելի վերահաշվարկը մեկ անգամ կատարվել է 2021 թվականին, իսկ վերջինը կատարվել է 2022 թվականի դեկտեմբերին՝ վերջին հասանելի տվյալների հիման վրա:

36.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ	2022			
	ՀՀ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	ՏՀԶԿ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	67,359,494	89,015	1,633,122	69,081,631
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	-	67	67
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,055,753	199,584	4,193,027	11,448,364
Հակադարձ հետգնման պայմանագրեր	6,381,390	-	-	6,381,390
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	259,413,495	-	-	259,413,495
Ներդրումային արժեթղթեր				
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	23,526,733	-	6,163	23,532,896
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	23,845,958	-	-	23,845,958
Այլ ֆինանսական ակտիվներ	204,394	-	644	205,038
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	387,787,217	288,599	5,833,023	393,908,839
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	343,093,129	434,147	1,028,911	344,556,187

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտքային ռիսկերը դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի կենտրոնացած են ֆինանսական հատվածում, բացառությամբ վարկերի: Արդյունաբերության ճյուղայնության բաշխումը վարկերի համար տե՛ս ծանոթագրություն 19-ը:

36.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևյալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի և փոխատվությունների արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկեր և փոխատվություններից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Անշարժ գույք	105,074,753	88,570,830
Երաշխիք	82,581,403	74,698,535
Ոսկյա զարդեր և ոսկյա այլ իրեր	15,642,548	16,825,161
Փոխադրամիջոցներ (մեքենաներ)	2,284,747	2,272,367
Դրամական միջոցներ	2,652,823	1,719,915
Պաշարներ	5,606,914	7,465,058
Սարքավորումներ	3,484,666	2,038,432
Այլ արժեթղթեր	13,535	10,310
Պետական արժեթղթեր	3,119	9,520
Այլ գրավ	29,743,699	17,590,714
Չապահովված վարկեր	15,884,108	13,063,905
Ընդամենը վարկեր և փոխատվություններ (համախառն)	262,972,315	224,264,747

2022 թ. դեկտեմբերի 31-ին հաճախորդներին տրամադրված վարկային ռիսկ պարունակող վարկերի և փոխատվությունների զուտ հաշվեկշռային արժեքը կազմել է 2,820,824 հազար դրամ (2021թ.՝ 3,548,038 հազար), իսկ այդ նույն վարկերի և փոխատվությունների դիմաց գրավի (հիմնականում արտադրական գույք) գումարը՝ 3,723,771 հազար դրամ (2021թ՝ 4,441,299 հազար դրամ):

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

36.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

36.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով եկամտաբերության կորի ենթադրվող փոփոխությունները:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022		
Արտարժույթ/Սցենար	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն
ՀՀ դրամ	+1	-	(722,652)
ՀՀ դրամ	-1	-	785,079
Բազային	+/-0.96	129,757	-
Միջին	+/-1.21	163,522	-
Խիստ	+/-1.46	197,344	-

Հազար ՀՀ դրամ

Արտարժույթ/Սցենար	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն
		31 դեկտեմբերի 2021	
ՀՀ դրամ	+1	-	(639,229)
ՀՀ դրամ	-1	-	707,112
Բազային	+/-0.13	-/+17,852	-
Միջին	+/-0.38	-/+52,257	-
Խիստ	+/-0.63	-/+86,661	-

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

Հազար ՀՀ դրամ

	2022			2021		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթ-ներով	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթ-ներով	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13.1	6.9	-	13.2	6.5	-
Հակադարձ հետգնման պայմանագրեր	12.2	6.0	-	9.1	2.8	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	13.7	9.0	16.7	13.3	8.8	16.0
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	8.2	7.2	-	8.2	-	-
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	7.8	9.3	-	7.9	9.3	-

Հազար ՀՀ դրամ	2022			2021		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլարով, Եվրոյով և այլ ազատ փոխարկելի արտարժույթներով	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր պարտավորություններ						
Վարկեր ՀՀ կառավարությունից	6.8	-	-	6.8	-	-
Ֆինանսական հաստատություններից ներգրաված վարկեր	6.8	3.0	-	6.8	5.2	-
Ֆինանսական հաստատություններից ներգրաված ավանդներ	11.1	3.7	-	10.3	3.8	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	9.6	4.1	5.0	9.4	4.2	5.2
Հետգնման պայմանագրեր	10.9	-	-	8.3	-	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	10.5	5.2	-	10.2	5.4	-
Ստորադաս փոխառություն	14.9	7.9	-	8.1	-	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազամվարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված արտարժութային սվոպերի և որպես դրամական միջոցների հոսքերի հեջ օգտագործված արտարժույթի ֆորվարդների պայմանագրերի իրական արժեքի փոփոխմամբ և կապիտալի գործիքների հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			31 դեկտեմբերի 2021թ.		
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	10%	(560,050)	(560,050)	10%	(2,160,428)	(2,160,428)
Եվրո	10%	(5,992)	(5,992)	10%	602,306	602,306

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,780,188	38,093,337	2,208,106	69,081,631
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	3,284,973	8,163,391	-	11,448,364
Հակադարձ հետգնման պայմանագրեր	5,240,316	1,141,074	-	6,381,390
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	179,623,106	79,763,941	26,448	259,413,495
Ներդրումային արժեթղթեր				
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	23,127,233	405,663	-	23,532,896
- ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	23,361,151	484,807	-	23,845,958
Այլ ֆինանսական ակտիվներ	176,735	28,036	267	205,038
	263,593,702	128,080,249	2,234,821	393,908,772

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Պարտավորություններ				
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,665,840	4,851,275	-	8,517,115
Հետգնման պայմանագրեր	38,713,408	-	-	38,713,408
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	88,251,126	58,349,634	18,206	146,618,966
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	91,390,244	62,514,257	2,293,091	156,197,592
Ստորադաս փոխառություններ	1,011,837	2,959,492	-	3,971,329
Վարձակալության գծով պարտավորություններ	1,475,813	-	-	1,475,813
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,182,164	81,075	44,390	3,307,629
Ընդամենը	227,690,432	128,755,733	2,355,687	358,801,852
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	78,362	(79,378)	-	(1,016)
Զուտ դիրք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	35,981,632	(754,862)	(120,866)	35,105,904
Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ 2022թ. դեկտեմբերի 31-ին	10,565,744	6,550,687	147,302	17,263,733
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	221,318,141	122,131,868	1,101,125	344,551,134
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	190,818,798	120,592,858	4,401,812	315,813,468
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	-	(3,259,967)	3,243,137	(16,830)
Զուտ դիրք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,499,343	(1,720,957)	(57,550)	28,720,836
Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ 2021թ. դեկտեմբերի 31-ին	7,522,573	7,205,412	150,920	14,878,905

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀՋԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

36.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2022, %	2021, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	22.39	23.17
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	89.59	116.23

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2022թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Թողարկված պարտքային արժեթղթեր	50,406	2,999,115	6,655,747	-	9,705,268	8,517,115
Հետգնման պայմանագրեր	38,777,491	-	-	-	38,777,491	38,713,408
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,555,216	52,246,037	95,835,267	19,617,629	179,254,149	146,618,966
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	86,259,968	60,662,203	13,987,474	722,349	161,631,994	156,197,592
Ստորադաս փոխառություններ	22,670	281,501	1,823,529	3,390,597	5,518,297	3,971,329
Վարձակալության գծով պարտավորություններ	55,299	519,257	895,992	220,928	1,691,476	1,475,813
Այլ ֆինանսական պարտավորություններ	3,264,136	43,493	-	-	3,307,629	3,307,629
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	139,985,186	116,751,606	119,198,009	23,951,503	399,886,304	358,801,852
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ գործիքներ						
Ներհոսք	269,488	-	-	-	269,488	1,083
Արտահոսք	(268,405)	-	-	-	(268,405)	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	1,083	-	-	-	1,083	1,083
Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ	204,508	8,213,362	5,469,067	3,376,796	17,263,733	17,263,733

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը համախառն արտահոսք	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,053,018	2,763,175	2,690,378	-	6,506,571	6,107,897
Հետգնման պայմանագրեր	34,615,209	758	-	-	34,615,967	34,576,952
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,291,132	41,337,262	93,394,167	16,085,567	158,108,128	131,081,522
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	61,312,028	56,204,193	20,590,188	926,370	139,032,779	135,948,859
Ստորադաս փոխառություններ	22,670	281,501	1,823,529	3,390,597	5,518,297	3,605,469
Վարձակալության գծով պարտավորություններ	72,634	798,979	909,697	307,322	2,088,632	1,572,752
Այլ ֆինանսական պարտավորություններ	355,921	2,564,096	-	-	2,920,017	2,920,017
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	104,722,612	103,949,964	119,407,959	20,709,856	348,790,393	315,813,468
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ գործիքներ						
Ներհոսք	54,397	-	-	-	54,397	68
Արտահոսք	(54,329)	-	-	-	(54,329)	-
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	7,860,375	-	-	-	7,860,375	21,815
Արտահոսք	(7,877,137)	-	-	-	(7,877,137)	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	21,883	-	-	-	21,883	21,883
Փոխատվության հանձնառություններ, ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ	69,343	9,911,464	2,623,159	2,274,939	14,878,905	14,878,905

36.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի գործադիր մարմինը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

37 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համաձրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ստորադաս փոխառություններ	Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	Վարձակալության գծով պարտավորություններ	Շահաբաժիններ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,185,733	1,311,068	115,700,441	1,674,091	446,320	125,317,653
Մուտքեր	1,353,296	2,489,655	1,098,245,277	-	-	1,102,088,228
Մարումներ	(1,220,351)	(89,886)	(1,076,813,248)	(758,074)	(1,247,442)	(1,080,129,001)
Արտարժութային փոխարկումներ	(313,656)	(106,145)	(6,050,948)	-	-	(6,470,749)
Այլ	102,875	777	-	656,735	1,271,248	2,031,635
Հաշվեկշռային արժեք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,107,897	3,605,469	131,081,522	1,572,752	470,126	142,837,766
Մուտքեր	7,315,960	901,918	1,660,462,922	-	-	1,668,680,800
Մարումներ	(4,362,786)	(329,948)	(1,631,968,829)	(809,687)	(1,349,276)	(1,638,820,526)
Արտարժութային փոխարկումներ	(572,665)	(216,823)	(13,493,829)	-	-	(14,283,317)
Այլ	28,709	10,713	537,180	712,748	1,379,234	2,668,584
Հաշվեկշռային արժեք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,517,115	3,971,329	146,618,966	1,475,813	500,084	161,083,307

«Այլ» տողում ներառված են նոր ձևավորված վարձակալության գծով պարտավորությունները և անկանխիկ շարժում հանդիսացող վարձակալության վերանայումները: Այն նաև ներառում է թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների, ստորադաս փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսները: Բանկը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

38 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է

ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները և ստորադաս փոխառությունը:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Հիմնական կապիտալ	45,344,802	39,309,165
Լրացուցիչ կապիտալ	5,613,600	6,316,046
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	50,958,402	45,625,211
Ռիսկով կշռված ակտիվներ	354,221,999	309,760,930
Կապիտալի համարժեքության նորմատիվ	14.39%	14.73%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել է 30,000,000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

39 Սեգմենտային հաշվետվություններ

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեգմենտ ըստ ՖՀՄՍ 8՝Գործառնական սեգմենտներ՝ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

Բանկի ոչ ընթացիկ ակտիվները հիմնականում գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

40 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

2023 թվականի փետրվարի 22-ին Fitch Ratings-ը բարելավել է Բանկի վարկանշի հեռանկարը «Կայուն»-ից «Դրական»-ի և վերահաստատել արտարժույթով երկարաժամկետ թողարկողի դեֆոլտի B կարգի վարկանիշը (Long-Term Foreign-Currency Issuer Default Rating (IDR)):

2023 թվականի փետրվարի 1-ին Fitch Ratings-ը Բանկին վերահաստատել է արտարժույթով թողարկողի դեֆոլտի «B» երկարաժամկետ վարկանիշը (IDR)՝ կայուն հեռանկարով և «b» կենսունակության վարկանիշը (VR):

2023 թվականի փետրվարի 1-ին Moody's Investors Service-ը («Moody's») բարելավել է Բանկի տեղական արժույթով և արտարժույթով բանկերի ավանդների երկարաժամկետ B1 վարկանիշները և փոխել այդ վարկանիշների կանխատեսումը՝ բացասականից դեպի կայուն:

Միաժամանակ Moody's-ը հաստատել է Բանկի b1 Baseline Credit Assessment (BCA) և ճշգրտված BCA, Not Prime (NP) կարճաժամկետ տեղական և արտարժույթով բանկային ավանդների վարկանիշները, Բանկի Ba3/NP երկարաժամկետ և կարճաժամկետ տեղական արժույթով և արտարժույթով Կոնտրագենտի Ռիսկի վարկանիշները (CRRs) և Ba3(cr)/NP(cr) երկարաժամկետ և կարճաժամկետ Կոնտրագենտի ռիսկի գնահատումները (CR Assessments):

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի 2007
թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն
որոշմամբ հաստատված հավելված 5

ARMECONOMBANK

2023Թ. IV -ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ

Ք.ԵՐԵՎԱՆ, ԱՄԻՐՅԱՆ ՓՈՂ. 23 /1

Ծանոթագրություն 1. "Իրավական դաշտ և կորպորատիվ կառավարում"

Իրավական դաշտ.

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 1991 թվականին ԽՍՀՄ Բնակտնտեսբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993թ.. "Հայպետառբանկ" ՓԲԸ) հիման վրա և 1995թ. վերակազմավորվել է որպես բաց բաժնետիրական ընկերության՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 1 արտոնագրային համարով:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 31 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 22 մասնաճյուղերը՝ ՀՀ տարբեր մարզերում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Ամիրյան 23/1:

Բանկի հիմնական գործունեությունը.

Հանդիսանալով ունիվերսալ ֆինանսավարկային կառույց՝ "ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ իր հաճախորդներին առաջարկում է բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ: Բանկի ակտիվային գործառնությունների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային գործունեությանը: Բանկը վարկավորում է երկրի տնտեսության համարյա բոլոր ճյուղերը՝ պայմանավորված ներկայացվող ծրագրի ռիսկայնությամբ եւ հեռանկարով: Բանկն ակտիվ գործունեություն է ծավալել միջազգային վարկավորման ծրագրերով վարկավորման ուղղությամբ: Բանկը տրամադրում է ինչպես առևտրային, այնպես էլ սպառողական, հիփոթեքային վարկեր:

Գործարար միջավայրը

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ, կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ:

Միջազգային տնտեսական ճգնաժամը հանգեցրեց ՀՀ համախառն ներքին արդյունքի, ինչպես նաև արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ:

Կորպորատիվ կառավարում

Բանկի կառավարման մարմիններն են՝ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ որպես բանկի կառավարման բարձրագույն մարմին, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը և Գործադիր տնօրենը:

Բանկի խորհրդի կառուցվածքը և կազմը

Բանկի Խորհրդի նախագահ

Ս. Սուքիասյան

Բանկի Խորհրդի անդամներ

Արամ Խաչատրյան

Ռուբեն Հայրապետյան

Լուիզա Պետրոսյան

Հրանտ Սուվարյան

Պեր Ֆիշեր

Բանկի տնօրինության կառուցվածքը և կազմը

Գործադիր տնօրեն	Ա. Առաքելյան
Գործադիր տնօրենի տեղակալ	Ռ. Բադալյան
Գործադիր տնօրենի տեղակալ	Օ. Չիչյան
Գործադիր տնօրենի տեղակալ	Ա. Հարությունյան
Գործադիր տնօրենի տեղակալ	Ա. Մանրիկյան

AEB ARMECONOMBANK

Գործադիր տնօրենի տեղակալ	Ա. Փիլոսյան
Գլխավոր հաշվապահի ժ/պ	Ն. Գալստյան
Ռիսկերի կառավարման վարչության պետ	Կ. Բաբայան
Ռազմավարության և Մեթոդաբանության վարչության պետ	Հ. Ավետիսյան
Իրավաբանական վարչության պետ	Վ. Ջհանգիրյան

Բանկի սեփականության կառուցվածքը և բաժնետերերի/մասնակիցների քանակը հաշվետու ժամանակաշրջանի վերջում

Բանկի կանոնադրական կապիտալը 31.12.2023թ. դրությամբ կազմում է 28,132,240 հազ. ՀՀ դրամ: Այն ներառում է 10,463,096 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով և 424,600 արտոնյալ բաժնետոմս, յուրաքանչյուրը 15,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Նշանակալից մասնակիցներ

Սուքիասյան Սարիբեկ Ալբերտի	30.59%
Սուքիասյան Խաչատուր Ալբերտի	14.42%
Սուքիասյան Էդուարդ Ալբերտի	10.26%

Բանկի ղեկավարների վարձատրության քաղաքականությունը

Բանկում ղեկավարների վարձատրության հատուկ քաղաքականություն չի կիրառվում: Ղեկավար անձանց վարձատրությունը կատարվում է խորհրդի կողմից հաստատված հաստիքացուցակի հիման վրա:

Բանկի արտաքին աուդիտին վճարները

Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Բանկի խորհրդի ներկայացմամբ, իսկ արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը հաստատվում է Բանկի խորհրդի կողմից:

Ծանոթագրություն 2. "Հաշվապահական քաղաքականությունը"

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում և ներկայացվում են համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտերի և վերջինի պատրաստման և ներկայացման սկզբունքների, ստանդարտների կիրառման ուղեցույցների և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերի: Ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: Ֆինանսական հաշվետվությունների առումով հաշվետու տարի է համարվում հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

Բանկում ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության) պատրաստվում են հաշվեգրման սկզբունքին համապատասխան:

Եկամուտների և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես "տոկոսային եկամուտ" և "տոկոսային ծախս"՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օվերդրաֆտների, օվերնայթների, վարկային գծերի, թղթակցային հաշիվների, բանկային հաշիվների, ցպահանջ ավանդների դիմաց տոկոսների հաշվեգրումն իրականացվում է գծային եղանակով, եթե Բանկը չի կարող կանխատեսել այդ ակտիվների ապագա դրամական հոսքերը: Արժեզրկված վարկերի տոկոսների հաշվեգրումը չի դադարեցվում: Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ

ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Բանկի տույժերի և տուգանքների գծով ստացվելիք գումարները հաշվեգրվում են եկամուտներին յուրաքանչյուր օր: Հաշվեգրվող գումարի չափի հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը:

Բանկի կողմից տույժերի և տուգանքների գծով վճարվելիք գումարները ծախս են ճանաչվում յուրաքանչյուր օր՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը:

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Այլ եկամուտներն ու ծախսերը, մասնավորապես՝ վարձավճարները, գովազդային, շենքի պահպանման, տեխնիկական սպասարկման պարտավորությունները, ինչպես նաև փոխադրամիջոցների օգտագործած վառելիքի ծախսային պարտավորությունները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը կամ նախորդ ժամանակաշրջանի վճարումները: Ընդ որում, ոչ տոկոսային ծախսերի գծով, հաշվեգրումները ամսական մինչև 10,000 դրամ կազմելու դեպքում կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը, իսկ 10,000 դրամից ավելի դեպքում՝ օրական: Բանկը աշխատակիցների արձակուրդային վճարների գծով ծախսերի կուտակումը կատարում է յուրաքանչյուր օր:

Հիմնական միջոցների (այդ թվում՝ ֆինանսական վարձակալությամբ ստացված), վարձակալված հիմնական միջոցներին ուղղված կապիտալ ներդրումների և ոչ նյութական ակտիվների գծով ամորտիզացիոն հատկացումներն սույն Քաղաքականությամբ սահմանված չափերով իրականացվում են յուրաքանչյուր օր և ճշգրտվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են հաշվեգրման սկզբունքի համաձայն՝ դրանց հայտարարման պահին:

Արտարժութային գործառնությունների հաշվառում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են՝ կիրառելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ միջին փոխարժեքը: Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ կամ ծախս: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով, փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով:

Արտարժույթի առքի և վաճառքի փոխարժեքները սահմանվում են հաշվի առնելով ՀՀ միջբանկային շուկայում ձևավորված փոխարժեքների մեծությունը, առաջարկի և պահանջարկի ծավալները ՀՀ տարածքում, այլ գործոններ (շուկայի ուսումնասիրության հիման վրա կատարված կանխատեսումներ, ֆորս-մաժորային պայմաններ և այլն): Արտարժույթի փոխարժեքները սահմանելիս նշված գործոններից բացի, հիմք են ընդունվում նաև տվյալ պահին արտարժույթի միջազգային շուկայում ձևավորված այլ համակարգերում արտացոլված փոխարժեքները:

Հարկային հաշվառում

Շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի, պարտադիր կուտակային կենսաթոշակային վճարումների գծով հաշվառումը տարվում է ՀՀ հարկային օրենսգրքին համապատասխան:

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն՝ յուրաքանչյուր օրվա համար հաշվեգրվում է շահութահարկի պարտավորությունը հարկային շահույթի նկատմամբ (հաշվի առած "Հարկային օրենսգրքի" համաձայն եկամուտներից չնվազեցվող ծախսերը) և յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա դրությամբ այն ճշգրտվում է:

Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում: Հետաձգված հարկը ճանաչվում է յուրաքանչյուր եռամսյակի վերջին աշխատանքային օրը:

Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, երբ Բանկը՝

- ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարների հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք.
- մտադիր է կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ.
- հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն

հարկային մարմնի կողմից յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկի կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի (մուտքագրումը) և կամ արտահոսքի (ելքագրումը) ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով, Բանկի կողմից ընդունված դրամարկղային գործառնությունները կանոնակարգող կարգով, ինչպես նաև այլ կարգերով և իրավական ակտերով նախատեսված և պատշաճորեն կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է անուղղակի մեթոդով:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ կենտրոնական բանկում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9 <<Ֆինանսական գործիքներ>> ստանդարտն ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 1-ին և կիրառելի է այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Բանկը կիրառել է նոր ստանդարտը՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը հաշվետու տարվա սկզբի չբաշխված շահույթում և առանց համեմատական տեղեկատվությունը վերահաշվարկելու:

Ճանաչում.:

Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները կամ վաճառքները հաշվառվում են գործարքի ամսաթվի դրությամբ:

Դասակարգում և չափում.

ՖՀՄՍ 9-ի համաձայն բոլոր պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման չափանիշին, սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման չափանիշին համապատասխանող պարտքային ֆինանսական ակտիվների համար սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգումն որոշվում է բիզնես մոդելի հիման վրա, որի համաձայն այդ գործիքները կառավարվում են .

- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական

հոսքերը ստանալու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով,

- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու և վաճառքի նպատակով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով,
- այլ նպատակով պահվող գործիքները, ներառյալ առևտրային ֆինանսական ակտիվները, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ բաժնային ֆինանսական ակտիվները պետք է դասակարգվեն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշում է կայացվել, առանց հետագայում վերանայելու իրավունքի, դրանք դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող: Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային գործիքներից ողջ իրացված և չիրացված շահույթն ու վնասը, բացառությամբ շահաբաժինների, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, առանց շահույթում կամ վնասում հետագա վերադասակարգման:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են, որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասակարգված ֆինանսական պարտավորությունների:

Այն ակտիվները, որոնք մինչև ստանդարտի ընդունվելը չափվել են իրական արժեքով, ստանդարտի կիրառումից հետո շարունակվել են չափվել իրական արժեքով:

Պարտքային արժեթղթերը, որոնք 31.12.2017թ. դրությամբ դասակարգված են եղել որպես վաճառքի համար մատչելի, ՖՀՄՍ 9-ով կդասակարգվեն իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող, քանի որ Բանկը ակնկալում է ոչ միայն այդ ակտիվները պահել պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու համար, այլ նաև համեմատաբար հաճախակիորեն իրականացնել էական գումարով վաճառքներ:

Բանկը կարող է արժեթղթերի պորտֆելի մի մասը Բանկի Վարչության որոշման հիման վրա դասակարգել որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ:

Քանի որ վարկերը բավարարել են բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման չափանիշին, դրանք նոր ստանդարտի կիրառումից հետո կշարունակվեն չափվել ամորտիզացված արժեքով:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս.

Ֆինանսական ակտիվներից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, դրանց տոկոսագումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է կապիտալում՝ այլ

համապարփակ ֆինանսական արդյունքներում, մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում:

- Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ որում Բանկը չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, օպցիոնները: Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումն իրականացվում է ածանցյալ պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում, և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Բանկի կողմից տրամադրվում են ֆինանսական և ոչ ֆինանսական երաշխիքներ:

Ֆինանսական երաշխիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական երաշխիքները չափվում են հետևյալ նշվածներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստից և սկզբնապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Ոչ ֆինանսական երաշխիքները (եթե պարունակում են ապահովագրական ռիսկ) հաշվառվում են որպես փոխատվության հանձնառություններ՝ կիրառելով ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ ստանդարտի արժեզրկման պահանջները, քանի որ պայմանագրերում առկա են իրավաբանորեն ամրագրված այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով, որպես ապահովագրված կորուստների ուղղակի արդյունք, ճշգրտվում են "Պրինցիպալի"՝ ապահովադրի, կողմից թողարկողին՝ Բանկին, ապագա վճարումները:

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրերը Բանկի կողմից օգտագործվում են իր առևտրային գործունեության և դրամական միջոցների ընթացիկ կառավարման շրջանակներում: Նշված պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործառնություններ:

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի հաշվետվությունում, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածներում

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի արժեթղթեր, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածներում:

Հետգնման պայմանագրով ձեռքբերված արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ հոդվածներում:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են համապատասխան հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում:

Վարձակալություն

Վարձակալության պայմանագրով որոշակի փոխհատուցման դիմաց վարձակալին է փոխանցվում ակտիվի օգտագործման իրավունքը համաձայնեցված ժամկետի ընթացքում: Բանկի կողմից հաշվառումն իրականացվում է համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Բանկը վարձակալության ժամկետի սկզբում ճանաչում է օգտագործման իրավունքով ստացված ակտիվը և ապագա վարձավճարների գծով համապատասխան պարտավորությունը հաշվեկշռում (բացառություն են կազմում կարճաժամկետ վարձակալությունը և ցածրարժեք ակտիվների վարձակալությունը):

Օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որն իր մեջ ներառում է՝

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական արժեքը, արդեն կատարված վճարումները՝ նվազեցնելով ստացված զեղչերը,
- վարձակալի կողմից իրականացված՝ գործարքի գծով սկզբնական ուղղակի ծախսումները,
- ակտիվի ապատեղակայման, տեղափոխման, վերականգնման աշխատանքների հետ կապված ծախսումները:

Օգտագործման իրավունքով ստացված ակտիվի սկզբնական արժեքի մեջ չեն ներառվում վարձակալված ակտիվի բարելավման գծով ծախսումները:

AEB ARMECONOMBANK

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այդ ամսաթվի դրությամբ չվճարված ապագա վարձակալական վճարների ներկա արժեքով՝ կիրառելով վարձակալի կողմից լրացուցիչ փոխառու միջոցներ ներգրավելու միջին տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորությունը հավասար է հետևյալ բաղադրիչների հանրագումարի ներկա արժեքին՝

- ֆիքսված վճարումներ վարձակալության ժամկետում,
- ինդեքսից կամ գործակցից կախված փոփոխական վճարումներ վարձակալության ժամկետում,
- երաշխավորված մնացորդային արժեք կամ ձեռքբերման սպասվող գին, եթե կա նման օպցիա և դրա իրագործումը գրեթե հաստատ է,
- վաղաժամկետ դադարեցման տույժ, եթե դա հաշվի է առնվել վարձակալության ժամկետը որոշելիս:

Սկզբնական ճանաչումից հետո օգտագործման իրավունքով ստացված ակտիվը պետք է չափվի սկզբնական արժեքով՝

- նվազեցնելով կուտակված մաշվածությունը, որը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի վարձակալության ժամկետի ընթացքում,
- ճշգրտելով պայմանագրային պարտավորությունների վերանայումից առաջացած տարբերությունների չափով:

Վարձակալության մեկնարկից հետո վարձակալության գծով պարտավորությունը չափվում է՝

- ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսի արտացոլման համար,
- նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ վճարված վարձակալական վճարների արտացոլման համար,
- վերագնահատելով հաշվեկշռային արժեքը՝ պայմանագրային պայմանների փոփոխության արտացոլման համար:

Ստանդարտի ընդունումը հանգեցրել է Բանկի կողմից նախկին բոլոր գործառնական վարձակալությունների հետ կապված (բացառությամբ որպես ցածրարժեք դասակարգված կամ 12 ամսից պակաս մնացորդային վարձակալության ժամկետ ունեցող) օգտագործման իրավունքով ակտիվների և դրա հետ կապված վարձակալության գծով պարտավորությունների ճանաչմանը:

Նոր ստանդարտը կիրառվել է՝ օգտագործելով առաջընթաց մոտեցումը: Բանկը որոշել է օգտագործման իրավունքով ակտիվի արժեքի մեջ չներառել նախնական ուղղակի ծախսումները այն գործառնական վարձակալության պայմանագրերի համար, որոնք գործել են ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառման ամսաթվին (2019 թվականի հունվարի 1-ին): Այս ամսաթվի դրությամբ օգտագործման իրավունքով ակտիվները Բանկը չափում է մնացորդային վարձակալական վճարների ներկա արժեքով, որը զեղչված է՝ օգտագործելով սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ լրացուցիչ փոխառու միջոցների ներգրավման տոկոսադրույքը՝ բացառելով ցանկացած կանխավճարային կամ հաշվեգրված վարձակալության վճարները, որոնք գոյություն ունեն անցման ամսաթվին:

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

Բանկը ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը իրականացնում է ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն և Բանկի խորհրդի կողմից հաստատված ""ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման" կանոնակարգով:

Հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ կատարվում են պահուստների ճշգրտումներ համաձայն ՖՀՄՍ-ների:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝

Վարկային պորտֆելի պահուստի ձևավորումը ենթադրում է վարկային ռիսկի գնահատում՝ վարկային պորտֆելի ենթապորտֆելների ժամանակային շարքերի վարքագծի և դրանց վրա ազդող մակրոտնտեսական գործոնների հիման վրա: Գնահատականների տրման համար կիրառվում է "staging" (վարկերի դասակարգումը ըստ ժամկետանց օրերի):

Յուրաքանչյուր ենթապորտֆելի պահուստի չափը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

ՊԱՀՈՒՍ = ՄՆԱՑՈՐԴ * EAD * PD * LGD

որտեղ՝

ՄՆԱՑՈՐԴ - տվյալ վարկային ենթապորտֆելի մնացորդային գումարը,

EAD – (exposure-at-default) գործակից, որի միջոցով ճշգրտվում է ենթապորտֆելի մնացորդային արժեքը,

PD – (probability of default) հավանականություն, թե տվյալ ենթապորտֆելի որ մասն է հակված դեֆոլտի, որտեղ դեֆոլտը համարժեք է 90+ օր ժամկետանց օրերին,

LGD – (loss-given-default) վնասի բերված արժեք՝ ըստ էֆֆեկտիվ տոկոսադրույքի, երբ վարկը դառնում է դեֆոլտ:

Հաշվարկվում են EAD30 և EAD90 գործակիցներ համապատասխանաբար Stage 1 և Stage 2 դասում գտնվող վարկերի համար՝ ըստ առանձնացված ենթապորտֆելների:

Վարկերի պահուստի գնահատականի հաշվարկման համար առանձնացվում են PD12Month և PDLifetime համապատասխանաբար Stage 1 և Stage 2 դասում գտնվող վարկերի համար:

Պետական պարտատոմսերի պորտֆելի պահուստի ձևավորումը կատարվում է հաշվի առնելով Moody’s վարկանշային գործակալության կողմից Հայաստանին տրված PD և LGD գործակիցները:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով: Արտարժույթով ձեռք բերված ոչ նյութական ակտիվները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող միջին փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը որոշվում է համաձայն ՖՀՄՍ 38-ի "Ոչ նյութական ակտիվ"՝ ակտիվի մշակման փուլում, եթե հնարավոր է ցուցադրել ներստեղծված ակտիվի համապատասխանությունը ՖՀՄՍ-ով առաջադրված պայմաններին: Ներստեղծված համակարգչային ծրագրերի սկզբնական արժեքը որոշվում է ակտիվի ճանաչման չափանիշներին համապատասխան:

Ոչ նյութական ակտիվի միավորի վերագրումը ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (օրինակ՝ համակարգչային ծրագրեր, լիցենզիաներ և վստահագրեր, հեղինակային իրավունքներ և այլն) իրականացվում է Գլխավոր հաշվապահի մեթոդական ցուցումների հիման վրա՝ ելնելով տվյալ միավորի օգտագործման նշանակությունից և նպատակից:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է ՖՀՄՍ-ով սահմանված ծախսերը: Ընդ որում, սկզբնական արժեքում կարող են ներառվել միայն այն ծախսումները, որոնք կատարվել են այն հաշվետու եռամսյակում, որի ընթացքում ճանաչվում է տվյալ ակտիվը:

Ոչ նյութական ակտիվի վրա կատարված հետագա ծախսումները, որոնք համաձայն ՖՀՄՍ-ի պահանջների կարող են ավելացվել ոչ նյութական ակտիվի արժեքին, հաշվառվում են որպես կապիտալ ներդրումներ և ավելացվում են տվյալ ակտիվի արժեքին Բանկի Վարչության որոշմամբ:

Ոչ նյութական ակտիվների յուրաքանչյուր միավորի ամուրտիզացիայի ժամկետը որոշում է Բանկը՝ ելնելով ՖՀՄՍ-ով սահմանված չափանիշներից: Մասնավորապես, ներստեղծված համակարգչային ծրագրերի ամուրտիզացիայի ժամկետը որոշելու համար հաշվի է առնվում շուկայում տվյալ պահին առկա նմանատիպ նպատակային նշանակություն ունեցող ծրագրերի օգտակար ծառայության ժամկետի մասին տեղեկատվությունը, Բանկում նախկինում գործող նմանատիպ ծրագրերի փաստացի օգտակար ծառայության ժամկետը, ՖՀՄՍ-ով նախատեսված այլ չափանիշներ:

Ոչ նյութական ակտիվների ամուրտիզացիայի գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է ամուրտիզացիայի հաշվարկման գծային մեթոդը:

Ոչ նյութական ակտիվների ամուրտիզացիայի ժամանակաշրջանը և ամուրտիզացիայի հաշվարկման մեթոդը սահմանվում է ՖՀՄՍ-ի համաձայն, կնքված պայմանագրի գործողության ժամկետում, իսկ այդ ժամկետի բացակայության կամ դրա որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվը ենթակա չէ ամուրտիզացիայի: Ամուրտիզացիայի հաշվարկման մեթոդի փոփոխությունն իրականացվում է Բանկի Խորհրդի կողմից սույն Քաղաքականության մեջ համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով:

Ոչ նյութական ակտիվների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են Բանկի Խորհրդի որոշման հիման վրա:

Ֆինանսական հաշվետվություններում ներստեղծված ոչ նյութական ակտիվների վերաբերյալ ՖՀՄՍ-ով պահանջվող տեղեկատվության բացահայտումն իրականացվում է առանձին:

Ոչ նյութական ակտիվների ամուրտիզացիան հաշվարկվում է "Հարկային օրենսգրքի" համաձայն: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն տարեկան տոկոսադրույքը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ ՀՀ դրամով, բացառությամբ շենքերի, որոնք հաշվառվում են վերագնահատված արժեքով: Արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակվող միջին փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում:

Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներառյալ ԱԱՀ-ի գումարները, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Բանկին ետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից:

Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի հաշվառման նպատակով՝ արժեքի չափումը, ճանաչումը, հետագա ծախսումները, վերագնահատումները և դուրսգրումները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Բանկի ներքին ակտերով:

Հիմնական միջոցների միավորի վերագրումը ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանով և հաշվային պլանի կիրառման հրահանգով սահմանված այս կամ այն դասին (օրինակ՝ գույք և գրասենյակային սարքավորումներ, կապի և հաղորդակցման միջոցներ, հաշվողական, համակարգչային և ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, փոխադրամիջոցներ և այլն) իրականացվում է գլխավոր հաշվապահի մեթոդական ցուցումների հիման վրա՝ ելնելով տվյալ միավորի օգտագործման ժամկետից, նշանակությունից և նպատակից:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: 2018թ. հունվարի 1-ից Բանկը սահմանում է հետևյալ օգտակար ծառայության ժամկետները՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տարեկան տոկոսադրույք (%)
Շենքեր, շինություններ	50	2
Համակարգիչներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ՝ կապի միջոցներ, UPS մարտկոցներ, բանկոմատներ, գույք-գրասենյակային սարքավորումներ և այլն	8	12.5
Այլ համակարգչային տեխնիկա՝ տպող բազմաֆունկցիոնալ սարքեր (պրինտեր, սկաներ, պատճենահանող սարքեր), POS տերմինալներ, մոդեմներ	3	33.3
Ցանցային սարքեր	5	20
Մինչև 50,000 դրամ արժողությամբ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	մինչև տվյալ տարվա ավարտը	

Մինչև 2013թ-ի հունվարի 1-ը շահագործման մեջ եղած հիմնական միջոցների մաշվածությունը, կապված օգտակար ծառայությունների ժամկետների վերանայման հետ, հաշվարկվում է հետևյալ կերպ. հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը (սկզբնական արժեքից հանած կուտակված մաշվածությունը) բաշխվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդով՝ նոր սահմանված օգտակար ծառայության մնացորդային ժամկետում: Վերջինս իրենից ներկայացնում է 2013թ-ի հունվարի 1-ից սահմանվող օգտակար ծառայության ժամկետի և շահագործման անցնելու ամսաթվից մինչև 2013թ. հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի տարբերություն:

01.01.2013թ.-ից հետո ձեռքբերված հիմնական միջոցների համար սահմանվում է մնացորդային արժեք, որը կազմում է նրանց սկզբնական արժեքի 0.1%-ը, սակայն ոչ ավել 20 000 դրամ, բացառությամբ շենքերի և փոխադրամիջոցների, որոնց մնացորդային արժեքը սահմանվում է նրանց սկզբնական արժեքի 1%-ի չափով:

Մինչև 01.01.2013թ. ձեռքբերված հիմնական միջոցների համար սահմանվում է մնացորդային արժեք, որը կազմում է նրանց հաշվեկշռային արժեքի 0.1%-ը, սակայն ոչ ավել

20 000 դրամ, բացառությամբ շենքերի և փոխադրամիջոցների, որոնց մնացորդային արժեքը սահմանվում է նրանց հաշվեկշռային արժեքի 1%-ի չափով :

Հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվում է "Հարկային օրենսգրքի" համաձայն: Հիմնական միջոցների տվյալ խմբի ամորտիզացիոն տարեկան տոկոսադրույքը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

Հողի համար մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Բանկի հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման (ֆինանսական տարվա ընթացքում 25%) դեպքում դրանք վերագնահատվում են Բանկի Խորհրդի որոշման հիման վրա: Վերագնահատումն իրականացվում է համապատասխան լիցենզիա ունեցող անկախ կազմակերպության կողմից: Վերագնահատման արդյունքները Բանկի հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են ՖՀՄՍ-ով սահմանված կարգով: Վերագնահատման արդյունքում առաջացած աճը հաշվեգրվում է չբաշխված շահույթին Բանկի կողմից ակտիվն օգտագործելու ընթացքում՝ մաշվածության հաշվարկմանը զուգընթաց: Ընդ որում, հաշվեգրվող գումարի մեծությունը որոշվում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությամբ: Վերագնահատման արդյունքում առաջացած աճի հաշվեգրումը չբաշխված շահույթին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի արտացոլվում:

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում: Վարձակալված շենքերի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով 20 տարվա ընթացքում:

Բանկի հիմնական միջոցներում կապիտալ ներդրումների գծով ձևավորված ակտիվները չեն ամորտիզացվում:

Պաշարներ

Բանկի պաշարները ընդգրկում են՝

- արագամաշ առարկաները,
- ապրանքները, ներառյալ գրավի բռնագանձման արդյունքում Բանկի սեփականությանն անցած ապրանքները,
- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք պետք է օգտագործվեն Բանկի գործունեության ընթացքում:

Արագամաշ առարկաներին են վերաբերում այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքի որոշման ժամանակ Բանկը ընդունում և կիրառում է "Առաջինը մուտք՝ առաջինը ելք" ԱՄԱԵ (ՖԻՖՈ) բանաձևը: ԱՄԱԵ (ՖԻՖՈ) բանաձևը ենթադրում է, որ պաշարների միավորները, որոնք գնվել են առաջինը, ելքագրվում են առաջինը և, հետևաբար միավորները, որոնք մնում են պաշարներում հաշվետու ժամանակաշրջանի վերջում, վերջին գնվածներն են: Արագամաշ առարկաների արժեքը ծախսագրվում է շահագործման հանձնելու պահին:

Հաշվարկներ բանկի և մասնաճյուղերի միջև

Բանկի գլխավոր գրասենյակի և նրա մասնաճյուղերի փոխադարձ հաշիվները համադրվում են յուրաքանչյուր օր՝ ծրագրային եղանակով ստացվող հաշվետվության միջոցով: Համադրման արդյունքում հայտնաբերված սխալներն ուղղվում են տվյալ օրվա ընթացքում:

Հաշվապահական հաշվեկշիռ կազմելիս Բանկի գլխավոր գրասենյակի և նրա մասնաճյուղերի միջև հաշվարկների հաշիվները պարտադիր զրոյացվում են:

Բանկի գլխավոր գրասենյակի և մասնաճյուղերի միջև հաշվարկների հաշիվները ենթակա են փակման շաբաթական կտրվածքով:

Բաժնետիրական կապիտալ և հետ գնված բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը ներառված են սեփական (ընդհանուր) կապիտալում: Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժինները արտացոլվում են սեփական կապիտալում այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են: Ընթացիկ տարվան վերաբերվող շահաբաժինները, որոնց վճարումը հայտարարվել է հաշվեկշռի ամսաթվից հետո, բացահայտվում են հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող իրադարձությունների ծանոթագրությունում: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը հաշվարկվում է բաժնտոմսերի տիրապետողներին վերագրվող տվյալ

ժամանակաշրջանի զուտ շահույթը հարաբերելով տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին:

Որոշակի դեպքերում և համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի Բանկը կարող է հետ գնել իր բաժնետոմսերը: Այս դեպքում վճարված փոխհատուցումը նվազեցվում է սեփական (ընդհանուր) կապիտալից և ներկայացվում է որպես հետգնված բաժնետոմսեր մինչև վերջինների իրացումը: Նշված բաժնետոմսերը հետագայում վաճառվելու դեպքում ստացված ցանկացած փոխհատուցումը ներառվում է սեփական (ընդհանուր) կապիտալում:

Ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես արտոնյալ բաժնետոմսերի գծով էմիսիոն եկամուտ:

Ներգրավված միջոցներ

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են Կառավարության և Կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում, երբ դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է դառնում:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Բանկը օրենսդրությամբ նախատեսված դեպքերում պատրաստում է համախմբված ֆինանսական հաշվետվություններ ՖՀՄՍ-ի և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված "Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող համախմբված հաշվետվությունների կազմման կարգ"-ի համաձայն:

Սեգմենտային հաշվետվություններ

Բանկն օգտագործում է բիզնես-սեգմենտների (ըստ ֆիզիկական անձանց, կազմակերպություններին և մատուցվող բանկային ներդրումային ծառայությունների) տեղեկատվությունը որպես առաջնային ներկայացման ձև: Աշխարհագրական սեգմենտները հանդիսանում են երկրորդային ներկայացման ձև:

Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ զտված գործարքի հետ կապված ծախսումներով : Հետագայում թողարկված պարտքային արժեթղթերը չափվում են ամորտիզացված արժեքով և ցանկացած տարբերություն, որը առաջանում է ստացված զուտ փոխհատուցման և մարվող գումարների միջև, արտացոլվում է եկամուտների և ծախսերի հաշվետվությունում տվյալ արժեթղթերի շրջանառության ժամանակահատվածում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Համադրելի տեղեկատվություն

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվում են՝ ընթացիկ տարվա հետ համադրելիության ապահովման նպատակով:

Հաշվապահական հաշվառման ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Ֆինանսական տարվա վերջին աշխատանքային օրվա վիճակով կազմված հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, եթե անհրաժեշտություն է առաջանում կատարելու համապատասխան ճշգրտումներ՝ նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված հաշվապահական հաշվեկշռի մեջ, կատարվում են հետևյալ դեպքերում՝ Բանկի սեփական ուժերով էական սխալներ հայտնաբերելու դեպքում, էական սխալներ, որոնք հայտաբերվել են աուդիտորական կազմակերպության կողմից և հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Բանկի սեփական ուժերով էական սխալներ հայտնաբերելու դեպքում, եթե էական սխալի գումարը կախված է տվյալ գործարքի կամ հոդվածի չափից և բնույթից, և հաշվեկշռում արտացոլված ցուցանիշները էական չեն փոփոխվելու, և եթե այդ տեղեկատվության չբացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված հաշվապահական հաշվեկշռի մեջ փոփոխու թյուններ չեն կատարվում:

Եթե Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունները սահմանված կարգով հրապարակելուց հետո առաջանում կամ հայտնաբերվում են էական սխալներ, ապա նման

դեպքերում ճշգրտումներ չեն կատարվում և համարվում է, որ նման տեղեկատվության վերաներկայացումն անիրագործելի է:

AEB
ARMECONOMBANK

Միջանկյալ Հաշվետվություն
Ֆինանսական վիճակի մասին
31 Դեկտեմբեր 2023թ.
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող. 23 /1

Հազ. դրամ

	Անվանում	Ծանո-թագրու-թյուններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված)
1	**Ակտիվներ**			
1.1	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	71,569,317	69,081,631
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամներ		396,358	443
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	5,926,882	11,448,430
1.4	Հակադարձ հետգնման պայմանագրեր	14.1	12,464,832	6,381,390
1.5	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	15	788	
1.5.1	Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	18	8,570,306	925,066
1.6	Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	16	291,399,068	259,413,495
1.7	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	17	14,975,902	3,200,122
1.7.1	Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	17.1	36,655,031	43,253,667
1.9	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ		2,963,269	1,193,115
1.10	Հիմնական միջոցներ	20	15,391,456	10,574,826
1.10.	Ոչ նյութական ակտիվներ	20	1,054,183	811,161
1.10.	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	20.1	1,875,558	1,956,188
1.12	Այլ ակտիվներ	21	1,639,162	1,100,184
	Ընդամենը՝ ակտիվներ		**464,882,112**	**409,339,718**
2	**Պարտավորություններ**			
2.1	Պարտավորություն բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	73,185,058	59,976,376
2.2	Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ		48,335,375	59,574,028
2.3	ՀՀ Կենտրոնական Բանկից և ՀՀ կառավարությունից ստացված վարկեր	22.2	37,158,136	27,068,562
2.4	Հետգնման պայմանագրեր	22.3	34,127,375	38,713,408
2.5	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	183,695,686	156,197,592
2.6	Ստորադաս փոխառություն	23.1	9,679,494	3,971,329
2.7	Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		1,119,763	806,153
2.8	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	11,295,283	8,517,115
2.9	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություն	25	13,477	1,083
2.10	Վճարվելիք գումարներ	26	601,085	557,794
2.11	Հետաձգված հարկային պարտավորություններ	11	1,185,308	177,446
2.12	Պահուստներ	30	19,270	103,386
2.13	Վարձակալության գծով պարտավորություններ	40	1,426,082	1,475,813
2.14	Այլ պարտավորություններ	27	2,594,715	3,089,336
	Ընդամենը՝ պարտավորություններ		**404,436,107**	**360,229,421**
3	**Կապիտալ**			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	28,132,240	26,652,068
3.2	Էմիսիոն եկամուտ		2,265,076	745,223
3.3	**Պահուստներ՝**			
3.3.1	Գլխավոր պահուստ		3,952,000	3,663,000
3.3.2	Իրական արժեքի պահուստ		(379,023)	(1,228,475)
3.3.3	Այլ պահուստներ		6,896,366	3,112,039
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		19,579,346	16,166,442
	Ընդամենը՝ կապիտալ		**60,446,005**	**49,110,297**
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**464,882,112**	**409,339,718**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Առաքելյան

Գլխավոր հաշվապահի ժ/պ Ն.Գալստյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2024թ հունվար 12

Միջանկյալ Հաշվետվություն
Ֆինանսական արդյունքների մասին
31 Դեկտեմբեր 2023թ.
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ, Ք.Երևան, Ամիրյան 23/1

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրություն	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան (չստուգված)	Հաշվետու ժամանակաշրջան (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան (չստուգված)	Նախորդ ժամանակաշրջան (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	10,698,497	39,155,700	8,883,051	32,690,280
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(6,518,753)	(23,592,407)	(5,311,514)	(19,818,798)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**4,179,744**	**15,563,293**	**3,571,536**	**12,871,481**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	1,629,914	5,956,776	1,371,389	4,556,256
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(560,588)	(2,090,915)	(418,600)	(1,512,409)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**1,069,326**	**3,865,861**	**952,790**	**3,043,848**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	805,194	2,568,056	1,210,670	4,386,847
Այլ գործառնական եկամուտներ	6	210,822	667,819	115,444	489,327
Գործառնական եկամուտներ		**6,265,086**	**22,665,029**	**5,850,440**	**20,791,503**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(2,973,737)	(1,728,701)	(419,769)	(245,905)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(2,575,935)	(9,741,615)	(2,170,199)	(8,444,235)
Այլ գործառնական ծախսեր	9	(1,552,740)	(4,452,575)	(881,972)	(3,177,869)
Գործառնական շահույթ		**(837,326)**	**6,742,138**	**2,378,500**	**8,923,494**
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**(837,326)**	**6,742,138**	**2,378,500**	**8,923,494**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(552,750)	(2,022,152)	(637,401)	(1,811,677)
Ժամանակաշրջանի շահույթ		**(1,390,076)**	**4,719,986**	**1,741,100**	**7,111,817**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Առաքելյան

Գլխավոր հաշվապահի ժ/պ Ն.Գալստյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2024թ հունվար 12

Միջանկյալ հաշվետվություն
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
31 Դեկտեմբեր 2023թ.
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ, Ք.Երևան, Ամիրյան 23/1

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրություն	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան (չստուգված)	Հաշվետու ժամանակաշրջան (չստուգված)	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ	Նախորդ ժամանակաշրջան (ստուգված)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ		(478,152)	1,145,010	(138,652)	(1,105,862)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկում հարկումից հետո		(4,931)	(89,455)	(1,781)	39,479
Ոչ ընթացիկ ակտիվների գծով օգուտներ հարկումից հետո		0	3,958,162		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ վերագնահատումների գծով շահութահարկ		86,067	(206,102)	24,957	199,055
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		**(397,016)**	**4,807,616**	**(115,476)**	**(867,328)**
Համապարփակ ֆինանսական արդյունք		(1,787,092)	9,527,602	1,625,624	6,244,489

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) **Ա. Առաքելյան**

Գլխավոր հաշվապահի ժ/պ **Ն.Գալստյան**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2024թ հունվար 12

Միջանկյալ Հաշվետվություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
31 Դեկտեմբեր 2023թ.

"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող.23 /1

Հազ. դրամ

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջան		Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Չբաշխված շահույթ/վնաս	Ընդամենը	Ընդամենը կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Չուտ գումարը							
Հոդվածներ	1	3	4	5	7	9	10	12	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)									
Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01/01/2022 (ստուգված)	26,107,555	26,107,555	289,718	3,481,000	(361,148)	3,214,025	10,513,873	43,245,023	43,245,023
Վերահաշվարկված մնացորդը	26,107,555	26,107,555	289,718	3,481,000	(361,148)	3,214,025	10,513,873	43,245,023	43,245,023
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	544,513	544,513	455,505	-	-	-	-	1,000,018	1,000,018
Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	544,513	544,513	455,505	-	-	-		1,000,018	1,000,018
Համապարփակ եկամուտ		-	-	-	(867,327)		7,111,816	6,244,489	6,244,489
Շահութաբաժիններ		-	-	-		-	(1,379,233)	(1,379,233)	(1,379,233)
Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	182,000	-	(101,986)	(80,014)	-	-
Մասհանումներ գլխավոր պահուստին				182,000			(182,000)	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում		-				(101,986)	101,986	-	-
Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31/12/2022(ստուգված)	26,652,068	26,652,068	745,223	3,663,000	(1,228,475)	3,112,039	16,166,442	49,110,297	49,110,297
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)									
Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01/01/2023(ստուգված)	26,652,068	26,652,068	745,223	3,663,000	(1,228,475)	3,112,039	16,166,442	49,110,297	49,110,297
Վերահաշվարկված մնացորդը	26,652,068	26,652,068	745,223	3,663,000	- 1,228,475	3,112,039	16,166,442	49,110,297	49,110,297
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	1,480,172	1,480,172	1,519,852	-	-	-	-	3,000,024	3,000,024
Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	1,480,172	1,480,172	1,519,852	-	-	-		3,000,024	3,000,024
Համապարփակ եկամուտ		-	-		849,453	3,958,162	4,719,986	9,527,601	9,527,601
Շահութաբաժիններ		-	-	-		-	(1,191,917)	(1,191,917)	(1,191,917)
Ներքին շարժեր, այդ թվում՝	-	-	-	289,000	-	(173,835)	(115,165)	-	-
Մասհանումներ գլխավոր պահուստին				289,000			(289,000)	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում		-				(173,835)	173,835	-	-
Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31/12/2023(ստուգված)	28,132,240	28,132,240	2,265,075	3,952,000	(379,022)	6,896,366	19,579,346	60,446,005	60,446,005

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) **Ա. Առաքելյան**

Գլխավոր հաշվապահի ժ/պ **Ն.Գալստյան**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 2024թ հունվար 12

Միջանկյալ Հաշվետվություն
Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ
31 Դեկտեմբեր 2023թ.
"ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ" ԲԲԸ ք.Երևան, Ամիրյան փող. 23 /1

Հազ.դրամ

Անվանում	Ծանոթագրության համար	Հաշվետու ժամանակաշրջան (չստուգված)	Նախորդ ժամանակաշրջան (ստուգված)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Տարվա շահույթ		4,719,987	7,111,817
Ճշգրտումներ՝			
Շահութահարկի գծով ծախս		2,022,152	1,811,677
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից օգուտ/վնաս		1,728,701	245,905
Մաշվածություն, ամորտիզացիա,արժեզրկում		2,159,011	1,795,774
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/վնաս		(629)	(38,542)
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ		304,028	809,484
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ զուտ օգուտ		(124,348)	(374,451)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ զուտ օգուտ		(12,847)	(30,818)
Ստացվելիք տոկոսներ		(816,462)	(450,394)
Վճարվելիք տոկոսներ		1,069,381	1,248,205
Գործառնական գործունեությունից ստացված դրամական ներհոսք՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները		**11,048,974**	**12,128,657**
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ			
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Պահանջներ ֆինանսական կազմակերպություններից		5,731,113	(4,023,750)
Հակադարձ հետգնման պայմանագրեր		(6,014,400)	1,335,923
Հաճախորդներին տրված վարկեր		(32,329,061)	(55,847,123)
Այլ ակտիվներ		(760,622)	(57,459)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		12,267,688	9,141,046
Հետգնման պայմանագրեր		(4,603,522)	4,591,803
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		25,733,000	31,769,453
Այլ պարտավորություններ		(462,947)	84,698
Գործառնական գործունեությունում օգտագործված դրամական միջոցներ՝ նախքան հարկումը		**10,610,223**	**(876,752)**
Վճարված շահութահարկ		(1,771,979)	(1,060,832)
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		**8,838,243**	**(1,937,584)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ներդրումային արժեթղթերի նվազում/ավելացում		(11,773,126)	(5,647,735)
Հիմնական միջոցների ձեռքբերում		(1,108,418)	(932,603)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		99,763	126,289
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(472,891)	(299,894)
Ներդրումային գործունեությունում (օգտագործված) /(գործունեությունից ստացված) զուտ դրամական միջոցներ		**(13,254,672)**	**(6,753,943)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
ՀՀ Կենտրոնական բանկից և ՀՀ կառավարությունից վարկերի ստացում		9,801,177	5,276,549
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերից մուտքեր/մարումներ		(12,336,025)	14,076,498
Ստորադաս փոխառությունից մուտքեր/մարումներ		5,404,280	571,970
Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ավելացում/նվազում		2,464,920	2,953,174
Բաժնետոմսերի թողարկման համար ստացված կանխավճար		168	1,000,022
Բաժնետիրական կապիտալի ավելացում		3,000,025	1,000,018
Պարտավորություններ վարձակալության գծով		(1,016,127)	(809,687)
Վճարված շահաբաժիններ		(1,150,819)	(1,349,276)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**6,167,600**	**22,719,268**
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա		736,515	(8,346,000)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**2,487,686**	**5,681,741**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ	13_2	**69,081,631**	**63,399,890**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ	13_2	**71,569,317**	**69,081,631**

Վարչության նախագահ (Գործադիր տնօրեն) Ա. Առաքելյան

Գլխավոր հաշվապահի ժ/պ Ն. Գալստյան

Ծանոթագրություն 3. "Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներ"

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	01/10/2023-31/12/2023	01/01/2023-31/12/2023	01/10/2022-31/12/2022	01/01/2022-31/12/2022
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	142,909	684,387	156,167	640,412
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	8,985,015	33,073,706	7,458,155	27,389,330
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	1,281,445	4,444,208	1,050,748	3,785,448
Տոկոսային եկամուտ "Ռեպո" պայմանագրից	268,963	874,826	197,631	792,412
Այլ տոկոսային եկամուտ	20,165	78,573	20,350	82,676
Ընդամենը	**10.698.497**	**39.155.700**	**8.883.051**	**32.690.278**
Տոկոսային և նմանատիպ ծախսեր				
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	3,118,488	11,542,507	2,715,372	10,433,340
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ոսթաձին հաշիվների դիմաց	2,356,733	7,628,290	1,514,828	5,888,788
Տոկոսային ծախսեր "Ռեպո" պայմանագրերի դիմաց	572,486	2,886,840	807,651	2,550,967
Տոկոսային ծախսեր ստորադաս փոխառությունների դիմաց	247,538	649,867	92,998	349,962
Տոկոսային ծախսեր կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց	184,846	727,079	141,526	430,111
Տոկոսային ծախսեր վարձակալական պայմանագրերի գծով	38,660	157,659	39,027	151,359
Տոկոսային ծախսեր ածանցյալ գործիքներից ռեզիդենտ բանկերի գծով				13,596
Այլ տոկոսային ծախսեր	2	165	113	674
Ընդամենը	**6.518.753**	**23.592.407**	**5.311.515**	**19.818.797**
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**4,179,744**	**15,563,293**	**3,571,536**	**12,871,481**

Ծանոթագրություն 4. "Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր"

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	01/10/2023-31/12/2023	01/01/2023-31/12/2023	01/10/2022-31/12/2022	01/01/2022-31/12/2022
Դրամառնոսային գործառնություններից	107,739	343,760	112,653	507,538
Հաշվարկային ծառայություններից	1,159,163	4,398,198	1,069,379	3,447,331
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից	80,314	289,702	52,162	169,361
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	2,977	7,477	334	6,359
Վճարային քարտերի սպասարկումից	53,567	195,616	48,825	177,215
Այլ կոմիսիոն վճարներ	226,154	722,023	88,036	248,452
Ընդամենը	**1.629.914**	**5.956.776**	**1.371.389**	**4.556.256**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր				
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	(7,134)	(756)	3,711	16,615
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	433,144	1,640,112	293,190	971,579
Երաշխիքների, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնությունների, հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով վճարներ	7,100	24,082	7,083	40,095
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	51,162	132,556	71,638	227,855
Այլ կոմիսիոն վճարներ	76,316	294,921	42,977	256,264
Ընդամենը	**560,588**	**2,090,915**	**418,599**	**1,512,408**
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**1.069.326**	**3.865.861**	**952.790**	**3.043.848**

Ծանոթագրություն 5. "Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ"

Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	01/10/2023-31/12/2023	01/01/2023-31/12/2023	01/10/2022-31/12/2022	01/01/2022-31/12/2022
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝	106,057	129,042	-	56,734
բաժնետոմսերից				
պարտքային արժեթղթերից				
-ածանցյալներից	106,057	129,042	-	56,734
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ			-	316,951
Ընդամենը	**106,057**	**129,042**	**-**	**373,685**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումներից				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝	71,490	126,513	10,862	85,650
պարտքային արժեթղթերից	71,490	126,513	10,862	85,650
-ածանցյալներից				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(12,552)	(95,851)	(3,553)	(54,834)
Ընդամենը	**58,938**	**30,662**	**7,309**	**30,816**
Արտարժութային գործառնություններից				
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	872,269	2,685,570	1,194,765	4,791,830
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	(258,878)	(304,026)	8,596	(809,484)
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	12,755	12,755		
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	14,053	14,053	-	
Ընդամենը	**640,199**	**2,408,352**	**1,203,361**	**3,982,346**
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	**805,194**	**2,568,056**	**1,210,670**	**4,386,847**

Ծանոթագրություն 6. "Այլ գործառնական եկամուտ"

Այլ գործառնական եկամուտ	01/10/2023-31/12/2023	01/01/2023-31/12/2023	01/10/2022-31/12/2022	01/01/2022-31/12/2022
Եկամուտներ ստացված տուժողից և տուգանքներից	176,128	450,095	92,253	332,205
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից	(47,708)	629	3,909	38,542
Այլ եկամուտներ*	82,402	217,095	19,282	118,580
Ընդամենը	**210,822**	**667,819**	**115,444**	**489,327**

Այլ եկամուտներ* տողում արտացոլված են քաղվածքների, չեկային և ավանդային գրքույկների, տեղեկանքների տրամադրումից և այնպիսի տարաբնույթ ծառայություններից գանձվող գումարները, որոնց համար հատուկ եկամտային հաշիվներ նախատեսված չեն:

Ծանոթագրություն 7. "Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ"

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ(Ծանոթագրություն 13)	**01/10/2023-31/12/2023**	**01/01/2023-31/12/2023**	**01/10/2022-31/12/2022**	**01/01/2022-31/12/2022**
Սկզբնական մնացորդ	20,205	51,255	53,378	32,803
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	10,732	(20,318)	(2,123)	18,452
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ				
Պահուստի օգտագործում				
Վերջնական մնացորդ	**30,937**	**30,937**	**51,255**	**51,255**
Բանկերի և Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով (Ծանոթագրություն 14)	**01/10/2023-31/12/2023**	**01/01/2023-31/12/2023**	**01/10/2022-31/12/2022**	**01/01/2022-31/12/2022**
Սկզբնական մնացորդ	66,546	76,305	183,245	58,121
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	(11,833)	(21,592)	(106,940)	18,184
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ				
Պահուստի օգտագործում				
Վերջնական մնացորդ	**54,713**	**54,713**	**76,305**	**76,305**
Հաճախորդներին տրված վարկերի, փոխատվությունների գծով (Ծանոթագրություն 16)	**01/10/2023-31/12/2023**	**01/01/2023-31/12/2023**	**01/10/2022-31/12/2022**	**01/01/2022-31/12/2022**
Սկզբնական մնացորդ	2,535,326	3,558,820	3,686,192	3,375,608
Պահուստին կատարված զուտ մասհանումներ*	2,743,035	1,939,225	427,356	176,182
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	600,517	1,145,572	26,540	1,030,489
Պահուստի օգտագործում	(258,116)	(1,022,855)	(581,268)	(1,023,459)
Վերջնական մնացորդ	**5,620,762**	**5,620,762**	**3,558,820**	**3,558,820**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	**01/10/2023-31/12/2023**	**01/01/2023-31/12/2023**	**01/10/2022-31/12/2022**	**01/01/2022-31/12/2022**
Սկզբնական մնացորդ	108,825	276,555	178,092	228,409
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	58,639	(109,091)	98,463	48,146
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ				
Պահուստի օգտագործում				
Վերջնական մնացորդ	**167,464**	**167,464**	**276,555**	**276,555**
Այլ ակտիվների գծով (Ծանոթագրություն 21)	**01/10/2023-31/12/2023**	**01/01/2023-31/12/2023**	**01/10/2022-31/12/2022**	**01/01/2022-31/12/2022**
Սկզբնական մնացորդ	11,281	7,822	7,826	8,648
Պահուստին կատարված զուտ մասհանումներ	6,700	3,120	(131)	(32,849)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ	(6,338)	816	159	32,090
Պահուստի օգտագործում	(29)	(144)	(32)	(67)
Վերջնական մնացորդ	**11,614**	**11,614**	**7,822**	**7,822**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվների գծով	**01/10/2023-31/12/2023**	**01/01/2023-31/12/2023**	**01/10/2022-31/12/2022**	**01/01/2022-31/12/2022**
